ISSN 1829-4596

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1(22)

ԵՐԵՎԱՆ 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
## (ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

# THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
## (A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

# ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
## (СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

1 (22)

ՄԵՍՐՈՊ ՄՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
219

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
219

ԵՐԵՎԱՆ
2021

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ**

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Ա.Ա. Խառատյան, Հ.Կ. Սուքիասյան, Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Մուրադյան, Վ.Ս. Սարգսյան (պատ. քարտուղար)

**Редакционная коллегия**

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель председателя), А.А. Харатян, А.К. Сукиасян, А.И. Шахназарян, А.Г. Мурадян, В.С. Саргсян (отв. секретарь)

**Editorial board**

A.A. Melkonyan (Chairman of the Board), K.H. Khachatryan (Deputy Chairman of the Board), A.A. Kharatyan, H.K. Sukiasyan, A.I. Shahnazaryan, H.Gh. Muradyan, V.S. Sargsyan (Executive Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական պարբերականի հերթական՝ 1 (22) համարում, զետեղված են 2021 թ. ապրիլի 26-ին ՀՀ Գորիս քաղաքում կայացած «Լեռնահայաստան – 100» հանրապետական գիտաժողովի (համակարգող՝ Գ. Ս. Ստեփանյան) զեկուցումները և նյութերը:

ISSN 1829-4596

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021

# ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆ – 100

**ԱՇՈՏ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ**
***ԳԱԱ պատմության ինստիտուտ,***
***պ.գ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս***

# ՍՅՈՒՆԻՔԸ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

***Բանալի բառեր՝*** Սյունիք, պետականություն, սղնախներ, մելիքություններ, Ինքնավար Սյունիք, Լեռնահայաստան:

Հայ ժողովրդի հինգհազարամյա պետականության պատմության մեջ պատմական Հայաստանի յուրաքանչյուր տարածաշրջան իր ուրույն տեղն ու դերն է ունեցել: Որոշ պատմափուլերում՝ հատկապես համահայկական պետականության բացակայության շրջանում, Հայաստանի առանձին նահանգներ, անգամ գավառներ ու լեռնային համայնքներ իրենց վրա են վերցրել գոնե երկրի մեկ հատվածում մեր ժողովրդի ինքնիշխան ապրելու այնքան անհրաժեշտ գործառույթը: Ավելին, երբեմն այդօրինակ պետական կազմավորումները՝ իբրև ինքնատիպ հենասյուներ, լուրջ նախադրյալներ են ստեղծել համահայկական պետականության վերականգնման ու ամրապնդման համար: Արևմտյան Հայաստանում այդպիսի կազմավորումներ կարելի է մատնանշել Մոկսում, Մուշ-Սասունում, Շատախում, Համշենում, Կիլիկիայի տարածաշրջանում՝ Զեյթունում, Մարաշում, Հաճնում և այլուր:

Արևելյան Հայաստանում հայոց պետականությունը շարունակաբար պահպանած երկրամասերի մեջ, անտարակույս, առանձնանում են Սյունիքն ու Արցախը[1]: Պատահական չէ, որ 11-րդ դարի կեսերին հայոց կենտրոնական թագավորության կործանումից հետո այս երկու նահանգն էլ ինչպես ուշ միջնադարում, այնպես էլ նոր ու նորագույն դարաշրջաններում, շնորհիվ զանազան թշնամիների դեմ տեղի հայության անդուլ ու հերոսական պայքարի, թեկուզև որոշակի տարածքի վրա ու ժամանակահատվածում, վերածվել են հայկական պետականության յուրահատուկ կղզյակների, հաստատել անկախ պետություն ունենալու հայ ժողովրդի անկոտրում կամքը:

Փորձենք հայոց պետականության ընդհանուր շղթայի մեջ կարևորել Սյունիքի դերը: Անկասկած, հատկապես միջնադարյան Հայաստանում երկրի ներքին ինքնիշխանության յուրահատուկ դրսևորում է եղել նախարարական (նաև՝ տանուտիրական) համակարգը, որը տեղերում ապահովել է հայ իշխանական դասի հարաբերական ինքնուրույնությունը կենտրոնական իշխանությունից: Վերջինիս թուլացման կամ առավել ևս՝ բացակայության դեպքում տեղական ինքնիշխան մարմինները փոխարինել են կենտրոնական իշխանությանը՝ ինչ-որ իմաստով պահպանելով պետականության անընդհատականությունը: Այդպիսի խնդիրներ դարերի ընթացքում լուծել են Մեծ Հայքի թագավորության նախարարական համակարգում հատուկ կարգավիճակ ունեցած Սյունյաց նախարարները:

---

[1] Հայոց պետականության պատմության մեջ Արցախի ունեցած դերի մասին տե՛ս **Մելքոնյան Ա.**, Արցախը հայոց պետականության պատմության հոլովույթում. Արցախը հայոց պետականության համար պայքարի քառուղիներում, միջազգային գիտաժողով, 2018 թ. փետրվարի 23: Զեկուցումների ժողովածու, Երևան, 2018, էջ 44–73:

Մասնագետ-պատմաբանների կարծիքով Մեծ Հայքի իններորդ նահանգ Սյունիքն իր կարգավիճակով նախապես չի տարբերվել թագավորության մյուս աշխարհներից: Այն Ք.ա. 3–2-րդ հազարամյակներում մաս է կազմել Արատտա, Արմանում, Էթիունի պետական կազմավորումներին, ապա՝ Ք.ա. առաջին հազարամյակում եղել է Վանի (Արարատյան), Երվանդունյաց ու Արտաշեսյան թագավորությունների կազմում: Վաղ միջնադարում, պայմանավորված ավատատիրական հարաբերությունների արմատավորմամբ, հայ նախարարական դասի տնտեսական ու ռազմական ազդեցության ուժեղացմամբ, հայ Արշակունիները հարկ են համարել ի թիվս մի քանի նախարարական տոհմերի, հատուկ առանձնաշնորհումներով օժտել նաև Սյունիներին, որոնք Մովսես Խորենացու վկայությամբ դեռ առասպելական Վաղարշակ թագավորի օրոք աչքի էին ընկել արքունիքին հավատարմորեն ծառայելու շնորհով, որի համար ստացել էին պետության արևելյան նահանգների կուսակալի ու զորքերի հրամանատարի պաշտոնները:

Տրդատ Գ Արշակունին 314 թ. ոչ միայն հողեր շնորհեց Սյունի տոհմի առաջնորդ Անդովկ Ա-ին, այլև ճանաչեց իր թագավորության կազմում ինքնուրույն իշխանություն ունենալու նրա իրավունքը: Ըստ «Զորանամակի» Սյունիները ամենամեծ հեծյալ զորք՝ 19400 զինվոր ունեցող նախարարներն էին[2]: Նրանք արքունիքում արքային ամենամոտ կանգնած պաշտոնյաներից

---

[2] Բաբկեն Հարությունյանի կարծիքով՝ այդ հեծյալների թվում հաշվված են նաև Սյունի իշխանների մարզպան եղած ժամանակ 15 հազար տանուտիրական զորքերը. իսկ զուտ Սյունիքի զորքը կազմել է 4400 հեծյալ: Ի դեպ, մյուս սահմանակալ նախարարների՝ Աղձնիքի և Գուգարքի բդեշխների հեծելազորը ևս բաղկացած է եղել գրեթե նույնքան հեծյալներից, համապատասխանաբար՝ 4000 և 4500 (Հայոց պատմություն, հ. II, գիրք առաջին, Երևան, 2018, էջ 402):

էին: Պատահական չէ, որ նրանց տրված էր հատուկ արծաթե գահի վրա նստելու (այստեղից էլ նրանց գահերեց իշխան կոչվելու պարագան), մարգարտյա վարսակալ, վարազագիր մատանի, ոսկյա մական, ազնվական ծագումը մատնանշող կարմիր գույնի կոշիկներ կրելու իրավունք և այլն: Իշխանության կենտրոնը նախապես Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքն էր, ապա՝ Սյունի (այժմ՝ Սիսիան) ավանը, ավելի ուշ՝ Կապան քաղաքը:

Սյունի նախարարները հաճախ պաշտոնական պատվիրակությունների կազմում մասնակցում էին արտասահմանյան ուղևորությունների: 303 թ. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրման նպատակով Կեսարիա մեկնած պատվիրակների մեջ էր Սյունիքի իշխանության հիմնադիր Անդովկ Սյունին: Վերջինիս որդին՝ Վաղինակ Ա-ն Խոսրով Կոտակի գահակալության տարիներին դարձել էր արքայի ամենավստահելի անձանցից մեկը: Նրա օգնությամբ հաջողվում է ճնշել Աղձնիքի Բակուր բդեշխի խռովությունը: Դավաճան բդեշխին պատժելուց հետո Հայոց արքան կազմակերպում է Վաղինակի ամուսնությունը Բակուրի դստեր հետ և այդ ճանապարհով Աղձնիքի բդեշխի պաշտոնը փոխանցում Սյունիներին, որոնք այն զբաղեցնում են ժառանգաբար՝ գրեթե մինչև Արշակունիների անկումը: Նշանակում է, որ Սյունիներին էր հանձնված Մեծ Հայքի ոչ միայն արևելյան, այլ նաև հարավարևմտյան սահմանների հսկողությունը:

Արշակունիների արքունիքում Սյունիներն իրենց դիրքերն ավելի են ամրապնդում Վաղինակի եղբոր՝ Անդովկ Բ-ի օրոք (339–385 թթ.), հատկապես այն բանից հետո, երբ Արշակ Բ-ն ամուսնանում է նրա դստեր՝ Փառանձեմի հետ: Ներսես Մեծ կաթողիկոսի կողմից Սյունիքին տրվում է նաև հոգևոր-եկեղեցական բարձր կարգավիճակ՝ մետրոպոլիտություն ունենալու իրա-

վունք: Սյունիքում հաջորդաբար իշխում են Անդովկ Բ-ի որդիները՝ Բաբիկն ու Վաղինակ Բ-ն: Վերջին իշխանը Բաբիկի որդին էր՝ Վասակ Սյունին (413–451 թթ.), որին Արշակունիների հարստության անկումից քիչ անց, վիճակվում է դառնալ Հայոց մարզպան, այսինքն՝ Հայաստանի գլխավոր պաշտոնյան, այն էլ բավական լայն լիազորություններով: Հանգամանորեն չանդրադառնալով Վասակի կերպարին և գնահատականներ չտալով նրա գործունեությանը, միայն նշենք, որ ժամանակի պատմիչների վկայությամբ նա 450–451 թթ. հակապարսկական ազատագրական պատերազմի սկզբնական փուլում գլխավորել է հայ ժողովրդի պայքարը, անգամ հորդորել սպարապետ Վարդան Մամիկոնյանին՝ չլքելու ապստամբների շարքերը, հանգամանքներ, որոնք հիմք են տվել մեծանուն պատմաբաններ Անտոն Գարագաշյանին, Նիկողայոս Ադոնցին, Հրանտ Արմենին և այլոց վերանայելու պատմաբանների մոտեցումները ավանդաբար նրան դավաճան ներկայացնելու հարցում[3]:

Արշակունիների անկմանը զուգընթաց նկատելիորեն թուլանում է նաև Սյունյաց իշխանությունը: Սակայն 6–7-րդ դարերի պարսկաբյուզանդական մրցակցության և 7–8-րդ դարերի արաբական արշավանքների ժամանակաշրջանում Սյունիքի հայությունը շարունակում է ակտիվ պայքարը օտար տիրապետության թոթափման ու երկրամասի ինքնիշխանության վերականգնման ուղղությամբ:

610 թ. Քրիստոսի խաչափայտը վերադարձնելու համար պարսից արքա Խոսրով Փարվեզի դեմ պայքարում բյուզանդա-

---

[3] Տե՛ս **Վանյան Խ.**, Վասակ Սյունիի պատմական գնահատության շուրջը, Հայկական ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, 1965, թիվ 1, էջ 41–68: **Адонц Н.**, Марзпан Васак перед судом историков, СПб., 1904:

կան կայսր Հերակլեսին աջակցողների թվում աղբյուրներում հիշատակվում է Սյունյաց Բյուրեղ իշխանուհին: 821 թ. Սյունիքի վրա հարձակում գործած Ատրպատականի Խուրամյանների առաջնորդ Բաբեկի դեմ պայքարը գլխավորում է Վասակ Գ Սյունին (780–821 թթ.): Արաբների մոտ ծառայության անցած ազգությամբ թուրք զորավար Բուղայի զորքերը 852–853 թթ. կատաղի դիմադրության են հանդիպում ինչպես Սյունիքում, այնպես էլ Արցախում:

9-րդ դարից սկսվում է Սյունյաց իշխանական տան նոր վերելքը: Սյունիները Հայոց թագավորության վերականգնման համար պայքարը ղեկավարող Բագրատունիների կողքին էին: Նրանք մասնակցել են 875 թ. Գևորգ Գառնեցի կաթողիկոսի հրավիրած ժողովին, որի նպատակը Արաբական խալիֆայությունից Աշոտ Բագրատունի իշխանաց-իշխանի համար թագ ստանալն էր: Այդ ժամանակաշրջանում Սյունիների իշխանական տոհմը կարողանում է իր ազդեցությունը տարածել Վայոց ձորի և Գեղարքունիքի վրա, այդ գավառներում իշխանությունը հանձնել իրենց տոհմից սերված իշխաններին: Շուտով Սյունյաց իշխանները նահանգում ամրապնդում են նաև իրենց հոգևոր-եկեղեցական ինքնուրույնությունը. 906 թ. մեծ հանդիսավորությամբ օծվում է Տաթևի վանքը: Արարողությանը մասնակից են դառնում Վասպուրականի իշխան (908 թվականից՝ թագավոր) Գագիկ Արծրունին, Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Աղվանքի կաթողիկոս Սիմեոնը, Արցախի իշխան Եսային, Գարդմանի տեր Սահակ Սևադան և ուրիշներ:

Նորաստեղծ Բագրատունյաց թագավորությանը վիճակված չէր պահպանել երկրի միասնականությունը: 10-րդ դարի սկզբին Սյունիքի և Վասպուրականի իշխանական տների միջև Նախճա-

վանի պատկանելության շուրջ վեճ է ծագում: Սմբատ Ա Բագրատունին (890–914 թթ.), չկամենալով Սյունիներին տրամադրել իր դեմ, խնդիրը լուծում է նրանց օգտին՝ հույս ունենալով, որ իր քրոջ որդին՝ Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին ըմբռնումով կմոտենա իր այդ քայլին: Սակայն Գագիկը, հավատալով՝ Հայոց թագը ստանալու վերաբերյալ Ատրպատականի Սաջյան ամիրա Յուսուֆի խոստումներին, Վասպուրականը հռչակում է ինքնուրույն թագավորություն: Ամբողջ 10-րդ դարի ընթացքում շարունակվում է Բագրատունյաց թագավորության մասնատման գործընթացը. հռչակվում են Կարսի (963 թ.) և Տաշիր-Զորագետի (978 թ.) թագավորությունները: Ցավոք, շուտով, թեպետ և ամենավերջինը, պառակտման ուղին է բռնում նաև Սյունիքը:

987 թ. Սյունիքի գահերեց իշխան Սմբատն իր երկրամասը հռչակում է ինքնուրույն թագավորություն[4]: Սյունյաց տոհմի տարեգիր Ստեփանոս Օրբելյանն այդ քայլն արդարացնում է հետևյալ պատճառաբանությամբ: Այդ ինչու Բագրատունիներից սերվածները կարող են լինել թագավոր, իսկ մենք, որ նույնպես սերում ենք Հայկ նահապետից՝ ոչ: «Արդ առաջին թագաւորեաց ի Սիսական աշխարհս արին և քաջն,-գրում է պատմիչը,- հզօր և բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Սահակայ...»[5]: Սմբատ թագավորը մահանում է 998 թ. և ամփոփվում Տաթևի վանքում: Նրան փոխարինում է որդին՝ Վասակ Ա-ն (998–1040 թթ.), որի

---

[4] Սյունյաց (նաև՝ Կապանի, Բաղաց) թագավորության ընդարձակ սահմանների մասին տե՛ս **Հակոբյան Թ.**, Սյունիքի թագավորությունը պատմա-աշխարհագրական առումով, Երևան, 1968, էջ 57–72: Սյունիքի թագավորության պատմությունը մանրամասն տե՛ս **Григорян Г.**, Очерки истории Сюника IX–XV вв., Ереван, 1990:

[5] **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1959, էջ 317:

դուստրը՝ Կատրանիդեն ամուսնանում է Բագրատունյաց ամենանշանավոր արքայի՝ Գագիկ Ա-ի հետ: Կատրանիդեն իր մոր՝ Շահանդուխտի և սկեսուրի՝ Խոսրովանույշի օրինակով զբաղվում է եկեղեցաշինությամբ: 1001 թ. Անիում ավարտվում է նրա նախաձեռնությամբ սկսված Կաթողիկե մայր տաճարի շինարարությունը: Գագիկ Ա Բագրատունին, ընդառաջ գնալով իր խնամի Վասակ Սյունու և կնոջ՝ Կատրանիդեի խնդրանքներին, վերականգնում է Սյունիքի մետրոպոլիտությունը, որը վերացվել էր Անանիա Մոկացի կաթողիկոսի կողմից 960-ական թվականներին: Մետրոպոլիտության հոգևոր իշխանությունը տարածվում էր նաև Նախճավանի, Ջուղայի, Երնջակի, Ճահուկի և այլ գավառների վրա: Այն ուներ առանձին միաբանություն, որոշ տվյալներով՝ շուրջ հազար միաբաններով: Հայտնի է, որ թագավորության տարածքում հաշվվող շուրջ հազար գյուղերի մի մասը պատկանում էր Տաթևի վանքին: Եկեղեցական-մշակութային խոշոր կենտրոնի էր վերածվել Վահանավանքը[6]:

Ուշագրավ է, որ վերջին Սյունի թագավորները, չունենալով արու զավակներ, հետզհետե իրենց գահը փոխանցում են Արցախի իշխաններին, որոնց հետ ունեին սերտ ազգակցական կապեր: Գանձակի ամիրայության կողմից 1170 թ. Սյունիքի վերջին դիմադրական ամրոցի՝ Բաղաբերդի գրավումից հետո Մայր հայրենիքում կործանվում է հայկական վերջին թագավորությունը: Վերջին գահակալը Հասան Խաչենցին էր (1166–1170 թթ.):

Թագավորության անկումով Սյունիքում չի վերանում պետականությունը: Ներքին ինքնիշխանության որոշակի կարգավիճակով 13-րդ դարի առաջին տասնամյակներից երկրամասը

---

[6] Վահանավանքի մասին տե՛ս **Գրիգորյան Գ.Մ.**, Վահանավանք (պատմա-հնագիտական ուսումնասիրություն), Երևան, 2007:

շարունակում են կառավարել Հաքարյաններին ենթակա Օրբելյան և Պռոշյան իշխանական տների ներկայացուցիչները:

16-րդ դարից սկսած Արցախում, Սյունիքում և Արևելյան Հայաստանի լեռնային մի շարք այլ շրջաններում ստեղծվում են հայ զինականների պաշտպանական ճամբարներ՝ սղնախներ: Վերջիններիս հիմքի վրա հայ իշխանական տների շառավիղները ձևավորում են հայկական կիսանկախ պետական նոր կազմավորումներ՝ մելիքություններ: Հիշենք, որ *մելիք* բառը արաբական ծագում ունի, որ նշանակում է թագավոր: Սյունիքի մելիքությունները կարևոր դերակատարություն են ունենում 16–18-րդ դարերի հայ ազատագրական պայքարի ծավալման գործում: 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին այդ պայքարի առաջամարտիկներից է դառնում տեղի մելիքական տոհմերից սերած ազգային գործիչ Իսրայել Օրին: 1722–1730 թթ. Սյունիքում ազատագրական պայքարի գլուխ կանգնում են Վրաստանից ժամանած Դավիթ Բեկն ու Մխիթար սպարապետը: Վրաց Վախթանգ Զ թագավորը «եւ ետ զԴաւուիթ Պէկն, որ ի յազգէն Հայոց, երկու հազար արեամբ, եւ զիշխանութիւն ետ նմա զզօրս գումարել եւ պահել զերկիրն Ղափանցւոց»[7]:

Դավիթ բեկի քաջերը կարողանում են Սյունյաց լեռնաշխարհը մաքրել քոչվոր նվաճողներից, ազատագրել տեղի մի շարք նշանավոր ամրոցներ ու բնակավայրեր (Շինուհայր, Զեյվա, Լևազ, Որոտան, Մեղրի): Կարևորելով Դավիթ Բեկի զինուժի դերը ախոյան թուրքերի դեմ պայքարում՝ 1724 թ. Պարսից շահ Թահմասպ Բ-ն պաշտոնապես ճանաչում է Սյունիքի իշխանության անկախությունը: Շուտով հայկական իշխանության դեմ

---

[7] Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», Վենետիկ-Ս.Ղազար, 1978, էջ 121:

պայքար է սկսում Օսմանյան կայսրությունը[8]: Հալիձորը դառնում է սյունեցիների դիմադրական մարտերի կենտրոնը:

1728 թ. Դավիթ Բեկի մահվանից հետո սյունեցիների պայքարի գլուխ կանգնում է Մխիթար սպարապետը: 1730 թ. Օրդուբադ կատարած հաղթական արշավանքից Խնձորեսկ վերադառնալիս նա դավադրաբար սպանվում է: Այդ մասին պատմիչը գրում է. «իւրոց զօրացն հարեալ թոփով սպանին, եւ վաղվաղակի Հայոցն հատեալ զգլուխ նորա՝ տարին առ փաշայն Թաւրիզու. եւ նա ըստ արժանեացն հատոյց նոցա, հատանելով զգլուխ անզգամացն, եւ ասէ Զի արդ իշխեցիք զայդպիսի քաջ այր սպանանել ի զուր տարապարտուց»[9]:

Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի գլխավորած հերոսական կռիվներն անհետևանք չեն մնում: 1918 թ. Անդրանիկ Օզանյանը, 1919 թ.՝ Արսեն Շահմազյանն ու Գարեգին Նժդեհը նրանց պայքարը շարունակում են թուրք-թաթարների ու բոլշևիկների դեմ՝ կարողանալով Սյունիքը պահել աննվաճ: 1920 թ. դեկտեմբերի 25-ին, երբ Երևանում խորհրդային կարգեր հաստատած համայնավարները մայրաքաղաքում զբաղված էին կոմունիստական շաբաթօրյակ կազմակերպելով, Նժդեհի գլխավորությամբ Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան առաջին համագումարը երկրամասը հռչակում է «Ինքնավար Սյունիք», որը համազանգեզուրյան երկրորդ համագումարում՝ 1921 թ. ապրիլի 27-ին՝ վերանվանվում է «Լեռնահայաստան»[10]: Նույն թվականի հունիսի 1-ին Լեռնահայաստանը պաշտոնա-

---

[8] Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 46–48:

[9] Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Դաւիանցւոց», էջ 142:

[10] «Ինքնավար Սյունիքի» և «Լեռնահայաստանի» մասին մանրամասն տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, նույնի՝ Զանգեզուրի հերոսամարտը 1917–1920 թթ., Երևան, 2009:

պես իրեն հայտարարում է «Հայաստանի Հանրապետություն», որին վիճակվում է մինչև հուլիսի կեսերը տարածաշրջանում լինելու վերջին ոչ խորհրդային, անկախ պետական կազմավորումը: Շնորհիվ Զանգեզուրի հերոսամարտի երկրամասը փրկվում է Ադրբեջանին բռնակցվելու թուրք-թաթարական հեռանկարից և մնում Խորհրդային Հայաստանի կազմում:

Կասկածից վեր է, որ նշելով Լեռնահայաստանի հռչակման 100-ամյա փառապանծ հոբելյանը, ստեղծված ներկա աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում մենք լիովին գիտակցում ենք պատմությունից ճիշտ դասեր քաղելու հրամայականը և մեր անկախ պետականության պահպանման համար Արցախ և Սյունիք աշխարհների կենսական անհրաժեշտությունը:

**Ашот А. Мелконян,** *Институт истории НАН РА, д.и.н., профессор, академик НАН РА,* **Сюник в контексте армянской государственности (исторический очерк).**

Каждый регион исторической Армении имеет свое уникальное место и роль в истории пятитысячелетней государственности армянского народа. На некоторых исторических этапах, особенно в условиях отсутствия общеармянской государственности, отдельным образованиям, горным общинам приходилось брать на себя важную функцию сохранения государственности на отдельных частях Армянского нагорья. Несомненно, Сюник и Арцах выделялись среди территорий, неизменно сохранявших армянскую государственность в Восточной Армении. Неслучайно, что после распада центрально-армянского царства в середине XI века эти два региона, как в позднем средневековье, так и

в новое время оставались островками армянской государственности.

С XVI века оборонительные лагеря армянских военных формирований – сигнахи, были созданы в Арцахе, Сюнике и ряде других горных районов Восточной Армении. На основе сигнахов армянские княжеские дома сформировали новые армянские полунезависимые государственные образования - меликства. В конце 17 века и в начале 18 века Исраэль Ори, национальный деятель из местной знати, становится одним из лидеров этой борьбы. В 1722–1730 гг. Давид Бек и Мхитар Спарапет возглавляют освободительную борьбу в Сюнике. Иранский царь Тахмасп II в 1724 г. с целью привлечения армянских военных сил в борьбу против Османской империи официально признает Сюникское княжество Давида Бека.

В 1918 г. Андраник Озанян, в 1919 г. Арсен Шахмазян и Гарегин Нжде в Сюнике продолжают борьбу против турок-татар и большевиков. Более того, после советизации большей части Восточной Армении 25 декабря 1920 года в Татевском монастыре на первом общезангезурском сьезде во главе с Г. Нжде, провозглашается независимость «Автономного Сюника» («Ինքնավար Սյունիք»). 27 апреля 1921 г. это последнее антисоветское государственное образование Закавказья переименовывается в «Горную Армению» («Լեռնահայաստան») и продолжает свое существование до середины июля того же года. Благодаря сюникской освободительной борьбе армянскому народу удается провалить пантюркистский план захвата Сюника Азербайджаном и столь важный стратегический регион оставить в составе Армении.

**Ashot A. Melkonyan,** *Institute of History of the NAS RA, Doctor of Sciences in History, Professor, Academician of the NAS RA,* **Syunik in the context of the Armenian statehood (historical overview).**

Each region of historical Armenia has its own unique place and played its main role in the history of the five thousand-year-old statehood of the Armenian people. At some historical stages, particularly in the absence of the pan-Armenian statehood, individual entities, mountain communities had to take on an important function of preserving statehood in certain parts of the Armenian Highland. Undoubtedly, Syunik and Artsakh stood out among the territories that invariably retained Armenian statehood in Eastern Armenia. It is no coincidence that after the collapse of the Central Armenian Kingdom in the mid 11th century, these two regions, both in the Late Middle Ages and in New Times, remained "islands" of the Armenian statehood.

Since the 16th century, defensive camps of Armenian military formations called *"the sghnakhs"* were created in Artsakh, Syunik and in few other mountainous regions of Eastern Armenia. On the basis of the sghnakhs, the Armenian princely houses formed new Armenian semi-independent state entities – the *Melikdoms.* At the end of the 17th – beginning of the 18th century, Israel Ori, a national figure from the local nobility, became one of the leaders of this struggle. In 1722–1730 David Bek and Mkhitar Sparapet lead the liberation struggle in Syunik. In 1724, in order to attract Armenian military forces in the struggle against the Ottoman Empire the Persian ruler Tahmasp II officially recognizes the Syunik principality of David Bek. In 1918 Andranik Ozanyan, and

then in 1919 Arsen Shahmazyan and Garegin Nzhdeh in Syunik continue the struggle against the Tatar Turks and the Bolsheviks. Moreover, after the Sovietization of most of Eastern Armenia on December 25, 1920, the independence of the "Autonomous Syunik" was proclaimed in Tatev Monastery on the first all-Zangezur congress headed by Garegin Nzhdeh. On April 27, 1921, this last anti-Soviet state entity of Transcaucasia was renamed "Mountainous Armenia" and continued to exist until mid July of the same year. Thanks to the Syunik liberation struggle, the Armenian people manage to fail the pan-Turkist plan to capture Syunik by Azerbaijan and leave such an important strategic region as part of Armenia.

ԿԱՐԵՆ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
*ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր*

# ՌԱԶՄԱԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԱՄԱՐ 1920–1921 ԹԹ.

***Բանալի բառեր՝*** Հայաստանի Հանրապետություն, քեմալական Թուրքիա, Անգլիա, Խորհրդային Ռուսաստան, Խորհրդային Ադրբեջան, Խորհրդային Հայաստան, Զանգեզուր, Լեռնահայաստան, դիվանագիտական պայքար, ռազմական գործողություններ, խորհրդայնացում:

1917 թվականին Ռուսաստանյան կայսրության փլուզումից, 1918 թ. գարնանը Ռուսաստանից Անդրկովկասի անկախացումից հետո թուրք-ադրբեջանական ոտնձգությունները հայկական մի շարք տարածքների, այդ թվում՝ Սյունիք-Զանգեզուրի նկատմամբ առավել վտանգավոր և սանձարձակ դարձան: Պանթուրքիզմի գաղափարախոսները աչալուրջ էին, նրանք գտնում էին, որ տարածաշրջանից Ռուսաստանի հեռացումով նոր հեռանկարներ են բացվում «Մեծ Թուրանի» գաղափարը գործնականում իրականացնելու, դրա ճանապարհին մխրճված «հայկական սեպը» վերացնելու համար: Այդ ռազմատենչ ծրագիրը կարող էր ողբերգական իրականություն դառնալ, եթե Թուրքիան իր դաշնակիցներով հաղթանակած դուրս գար Առաջին համաշխարհային պատերազմից: Բարեբախտաբար, Քառյակ դաշինքը պարտություն կրեց և 1918 թ. հոկտեմբերի 30–ին կնքված Մուդրոսի զինադադարով Թուրքիան ստիպված էր հեռացնել իր

զորքերը տարածաշրջանից, այդ թվում՝ Զանգեզուր-Ղարաբաղից: Այստեղ հաստատվեց հաղթանակած Անտանտը, մասնավորապես Անգլիան: Ցավոք, անգլիական ներկայությունը որևէ դրական բան չէր խոստանում Զանգեզուր-Ղարաբաղի հայությանը: 1918 թ. նոյեմբերին անգլիացի գեներալ Թոմսոնը դարձավ Բաքվի գեներալ-նահանգապետ, և անմիջապես բացահայտվեցին տարածաշրջանում անգլիական շահերը և ադրբեջանամետ քաղաքականությունը, պայմանավորված Բաքվի նավթի շահութաբեր գործոնով[1]: Շատ շուտով, 1919 թ. հունվարին, Բրիտանական զինվորական ներկայացուցչությունը Զանգեզուրի և Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետ նշանակեց իր հայատյացությամբ հայտնի Խոսրով բեկ Սուլթանովին, ինչն ամբողջությամբ տեղավորվում է վերը նշվածի տրամաբանության մեջ: Ակնհայտ է, և այդ մասին են վկայում փաստերը, որ տարածաշրջանում անգլիական վերահսկողության ամրապնդման և երկարաժամկետ հաստատվելու դեպքում՝ Զանգեզուրը, նաև՝ Ղարաբաղը, տրվելու էին Ադրբեջանին: Բարեբախտաբար դա ևս տեղի չունեցավ և մինչև 1920 թ. գարնան կեսերը Զանգեզուրի համար հայ–ադրբեջանական պայքարում, որն ուղեկցվում էր մերթընդմերթ ընթացող ռազմական թեժ գործողություններով, հաջողությունը, կարծես, հայկական կողմինն էր: Դրա վկայությունն է ապրիլի 22-ին Գորիսում մեծ հանդիսավորությամբ անցկացված բանակային զորահանդեսը:

Իրադրությունը տարածաշրջանում կտրուկ փոխվեց պայմանավորված Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի առաջխաղացմամբ և 1920 թ. ապրիլի վերջերին Ադրբեջանի

---

[1] Տարածաշրջանում Անգլիայի վարած քաղաքականության մասին մանրամասն տե՛ս **Ասլյան Ա.**, Մեծ Բրիտանիայի հակահայ քաղաքականությունը Ղարաբաղի

խորհրդայնացումով: Դրանից անմիջապես հետո 11-րդ բանակի ռազմաքաղաքական ղեկավարությունը շտապում է վերջնագրեր ներկայացնել Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորամիավորումները դուրս բերելու պահանջով[2]: Խնդիր էր դրվում կարմիրբանակային զորամասերի սրընթաց առաջխաղացմամբ խորհրդայնացնել նաև Հայաստանը: Սակայն հարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ի որոշման մեջ նշվեց տրամագծորեն հակառակի մասին. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, մեզ վրա չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ (Հայաստանը - Կ.Խ.) անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը[3]:

Սակայն դա բնավ չէր վերաբերվում բոլշևիկների համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևան առանցքին: Ղարաբաղի հայությունը մայիսի 25-ին ընդունեց պարտադրված խորհրդայնացումը՝ դրանով իսկ դառնալով տարածաշրջանում հայկական տարածքներից առաջին խորհրդայնացված շրջանը: Շուտով խորհրդային զորքերը ռազմակալեցին նաև Զանգեզուրն ու Նախիջևանը: Խորհրդային զինագրավումն ուղեկցվում էր կարմիր զորամասերի և թուրք-ադրբեջանցիների կողմից Զանգեզուրի հայ բնակչության նկատմամբ պարբերաբար գործադրվող բռնություններով և թալանով: Այսպիսով, հակառակ իր կամքին, Հայաստանը փաստացի ներքաշվում էր Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հետ չհայտարարված պատերազմ: Եթե նկատի ունենանք, որ նման իրավիճակ էր հասունանում նաև

---

հարցում (1918–1920 թթ.) և արդի վիճակը, ՊԲՀ. 2021, թիվ 2, էջ 88–111:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274:

քեմալական Թուրքիայի հետ, որն իր ռազմական ներխուժման սպառնալիքի տակ էր պահում Հայաստանի արևմտյան սահմանները, ապա պարզ է դառնում, որ 1920 թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր օրհասական դրության մեջ, վտանգված էին նրա անկախությունն ու անվտանգությունը:

Տարածաշրջանում խորհրդային ներկայության պայմաններում հայկական երկրամասերի խնդիրը տեղափոխվեց հայ-ռուս-ադրբեջանա-թուրքական ռազմադիվանագիտական հարաբերությունների և հակամարտության ոլորտ:

Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ Մոսկվայում 1920 թ. մայիսից սկսված հայ-ռուսական բանակցություններում խորհրդային պատվիրակությունը, հանձին ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինի և նրա տեղակալ Լևոն Կարախանի, պատրաստակամություն է հայտնում կնքել պայմանագիր և բարեկամական ամուր հարաբերություններ հաստատել երկու պետությունների միջև: Ռուս-հայկական բանակցությունների հաջող ընթացքի և ավարտի վրա բացասական ազդեցություն էին գործում Բաքվից և Անկարայից, և դա հասկանալի էր. քննարկվում էր Զանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի հարցը: Ինչպես հայկական պատվիրակության ղեկավար Լ. Շանթն է 1920 թ. հուլիսի 1-ին հաղորդում Հայաստանի կառավարությանը, բանակցությունների դժվարությունը կապված է հենց հայ-ադրբեջանական սահմանի որոշման հարցի հետ[4]:

Բանակցությունների ընթացքում Բաքվի վարած բացահայտ հակահայ քաղաքականության մասին տեղեկանում ենք Ադրբե-

---

[3] ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու 1, գ. 2, թ. 43:

ջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի 1920 թ. հուլիսի 31-ի՝ ՀՀ արտգործնախարարին ուղղված զեկուցագրից. «Ադրբեջանի ներկայիս քաղաքականության գլխավոր ուշադրությունն ուղղված է այն թույլ և հեռավոր հնարավորության վրա, որ հայ-ռուսական բանակցությունների արդյունքում Զանգեզուրը և Ղարաբաղը կարող են անցնել Հայաստանին: Այդ պատճառով են ոտքի հանվում ամբողջ հեղկոմը, թաթար ակտիվիստները, հայ կոմունիստների մեծ մասը, որոնք գնդակոծում են Մոսկվան հատուկ պատվիրակություններով, հայտագրերով և այլն: Այս դիվանագիտությունն էլ ստիպեց արագացնել Զանգեզուրի գրավումը (խորհրդային զորքերի կողմից – Կ.Խ.)»[5]:

1920 թ. հունիսի վերջերին ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրո ուղղված զեկուցագրում Բաքվի հակահայ քաղաքականության մասին անթաքույց վրդովմունքով արտահայտվում է նաև Գ. Չիչերինը. «Բաքվի ընկերներն իրենց գործողություններով խափանում են փոխզիջումները, մերժում են Հայաստանի հետ համաձայնություն կնքելու Կենտկոմի պահանջը»: Հունիսի 29-ի հերթական նամակում տեղեկացնելով ՌՍԴԽՀ ժողկոմխորհի նախագահ Վլադիմիր Լենինին, որ Բաքուն Խորհրդային Ռուսաստանի իշխանություններից պահանջում է գրավել Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, Շարուր-Դարալագյազը, Օրդուբադը և Ջուլֆան՝ Ադրբեջանին «նվիրաբերելու համար», Գ. Չիչերինը ներկայացնում է իր գնահատականները. «Նշված գործողությունների իրականացումը ռուսական զորամիավորումների միջոցով հնարավոր չէ», «Արևելքում մեր քաղաքականության համար ճա-

---

[4] Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992, էջ 519:

կատագրական սխալ կլիներ, եթե մենք սկսենք հենվել մեկ ազգային տարրի վրա ընդդեմ մյուս ազգային տարրի»[6]:

Ռուս-հայկական բանակցությունները Մոսկվայում որևէ արդյունք չտալով ընդհատվեցին: Հայաստանի իշխանությունների հետ կապեր հաստատելու նպատակով տարածաշրջան է գործուղվում ՀՀ-ում Խորհրդային Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ նշանակված Բորիս Լեգրանը: Բանակցությունների արդյունքում 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվում է համաձայնագիր, որով Ռուսաստանը «ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունն ու լիակատար ինքնուրույնությունը», իսկ Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը հայտարարվում են «վիճելի տարածքներ», մնալով խորհրդային զորքերի զինագրավման տակ[7]:

Խորհրդային ուժերի կողմից Զանգեզուրում գործադրվող բռնությունները չէին դադարում, ուստի 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին երկրամասի մի շարք գյուղերում, ինչպես նաև Կապանում և Սիսիանում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորությամբ բռնկվեցին հակախորհրդային նոր ապստամբություններ: Գարեգին Նժդեհը, որը բոլշևիկների կողմից հուլիսի սկզբին Գորիս ներխուժելուց հետո ստիպված էր իր փոքրաթիվ ուժերով քաշվել Խուստուփ, հոկտեմբերի կեսերին գլխավորեց համազանգեզուրյան ապստամբությունը: Նոյեմբերի 14-ին նա վերջնագիր է ներկայացնում Կարմիր բանակի հրամանատարությանը, պահանջում դադարեցնել բռնությունները և հե-

---

[5] Նույն տեղում, էջ 557:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 509, 515–518:

ռանալ Զանգեզուրից: Ապստամբներին ճնշելու կարմիրբանակային ստորաբաժանումների վերջին փորձերը հաջողություն չունեցան և նոյեմբերի 21-ին ապստամբները ազատագրեցին Գորիս կենտրոնը: Մինչև Հայաստանի խորհրդայնացումը կարմիր զորքերից ազատագրվեց ամբողջ Զանգեզուրը, երկրամասը կառավարելու համար Գ. Նժդեհի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ:

Թերահավատորեն վերաբերվելով ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի և 11-րդ կարմիր բանակի ռազմհեղխորհրդի անդամ Գ. (Սերգո) Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի՝ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս համարելու մասին» որոշմանը[8], ինչպես նաև այն փաստին, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը նույնպես ճանաչել էր նախկին «Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը» Հայաստանի կազմում[9], դեկտեմբերի 25-ին Սյունիքի Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարում երկրամասը հռչակվում է ինքնավար՝ քանի դեռ քաղաքական իրադրությունը հնարավորություն չի ընձեռի ՀՀ-ին միանալու համար: Սյունիք–Զանգեզուրի սպարապետ նշանակվեց Գարեգին Նժդեհը:

---

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 574–575:

[8] Կոմունիստ, Երևան, 7 դեկտեմբերի, 1920, թիվ 2:

[9] **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղայան Գ.**, Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920–1930-ական թվականներին, Երևան, 2020, էջ 34–35:

Զանգեզուրի անկախությունը լրջորեն անհանգստացնում էր խորհրդային իշխանություններին: 1921 թ. հունվարի 23-ին Գ. Օրջոնիկիձեն Բաքվից հեռագրում է Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ կենտկոմ, պատճենը՝ Վ. Լենինին, Լ. Տրոցկուն և Ի. Ստալինին, որ զանգեզուրցիներին Թավրիզից աջակցում են անգլիացիները, «որոնք պատրաստվում են հարվածել մեզ դաշնակների օգնությամբ՝ Զանգեզուրի միջոցով»: Օրջոնիկիձեն հուշում է, որ Դրոյի (Դրաստամատ Կանայան) հետ հանգամանալից զրույցից հետո ինքը համոզվել է, որ «եթե անգամ հաջողվի Հայաստանի համար թուրքերից կորզել 1914 թ. սահմանները (ինչը հազիվ թե հաջողվի), ապա այդ դեպքում էլ Զանգեզուրը մնալու է հակահեղափոխության հենադաշտ»: Օրջոնիկիձեն Զանգեզուրը ռազմական ճանապարհով խորհրդայնացնելու կողմնակից էր, սակայն Մոսկվային հայտնում է, որ «ճանապարհների անանցանելի լինելու պատճառով Ադրբեջանի կողմից ռազմական գործողություններ ձեռնարկել Զանգեզուրի դեմ ներկայումս անհնար է»[10]:

1921 թ. ձմռանը 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը փորձում է բանակցությունների միջոցով հասնել Զանգեզուրի խորհրդայնացմանը: Այդ նպատակով փետրվարի 2-ին Գ. Նժդեհի մոտ Գորիս դիվանագիտական առաքելությամբ ժամանում է 11-րդ կարմիր բանակի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների միացյալ պատվիրակությունը՝ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ: Բանակցությունները սկսելուց առաջ Վարդանյանը Նժդեհին է փոխանցում նրան հասցեագրված Դրոյի նամակը: 1921 թ. հունվարի 21-ին Բաքվում գրված այդ նամակում Դրոն նշում էր, որ հարկավոր է ընդունել խորհր-

[10] ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու 1, գ. 3, թ. 12:

դայնացման առաջարկը, նա վստահեցնում էր, որ Մոսկվայում նախատեսված խորհրդա–թուրքական կոնֆերանսը «կապացուցի, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը»[11]: Ավաղ, Դրոն չէր կարող կռահել, թե ինչպիսի տարածքային կորուստներ է կրելու Հայաստանը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական «դավադիր գործարքով»: Մյուս կողմից՝ հարկ է փաստել նաև, որ խորհրդային կողմին հաջողվեց դիմակայել թուրք-ադրբեջանական նկրտումներին Զանգեզուրի հարցում և այն դուրս թողնել կոնֆերանսի օրակարգից: Նշենք, որ խորհրդաթուրքական կոնֆերանսին նշանակված թուրքական պատվիրակությունը դեպի Մոսկվա ճանապարհին Կարսից ժամանել էր Բաքու և այստեղ բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ ունեցել Ադրբեջանի ղեկավարության հետ: Դրանց արդյունքում մշակվեցին թուրք-ադրբեջանական համատեղ գործողությունների ծրագրեր՝ հայկական տարածքների հարցում Մոսկվայի վրա ճնշումներ գործադրելու նպատակով:

Նժդեհը չէր կիսում Դրոյի լավատեսական հույսերը, նա մերժում է ինչպես նրա, այնպես էլ խորհրդային պատվիրակության առաջարկությունը՝ երկրամասի խորհրդայնացումն ընդունելու մասին: Բանակցությունների ընթացքում Նժդեհը շեշտում է, որ դեմ չի Զանգեզուրի խորհրդայնացմանը, եթե խորհրդային իշխանությունը ոչ թե խոսքով, այլ գործնականում ապացուցի իր արդար և բարի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Հերքելով «Անտանտի հետ իր համագործակցության մասին» խորհրդային կողմի մեղադրանքները, Նժդեհը Զանգեզուրի խորհրդայնացման հետևյալ նախապայմաններն է առաջ քա-

[11] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 29:

շում. հեռացնել քեմալական զորքերը Հայաստանի զինագրաված շրջաններից, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը փաստացի միացնել Հայաստանին, ազատել հայ մտավորականներին խորհրդային բանտերից: Այդ մասին է նշվում նաև 11-րդ կարմիր բանակի հրամանատար Ա. Գեկկերին և Գ. Չիչերինին ուղղված Նժդեհի և Սյունիքի կառավարության նամակներում: Դրանք խորհրդային պատվիրակությանն է փոխանցում կառավարության նախագահ Գեդեոն Տեր-Մինասյանը: Խորհրդային Ռուսաստանի իշխանություններից և Կարմիր բանակի հրամանատարությունից պահանջվում է հանգիստ թողնել Զանգեզուրը և զանգեզուրցիներին, քանի որ «Արևելքի Ձեր քաղաքականությամբ Հայաստան կոչված երկիրը կատարյալ դժոխքի եք վերածել»[12]:

Գիտակցելով, որ հաջողության չհասնելով բանակցություններում Կարմիր բանակի հրամանատարությունը ձգտելու է ռազմական գործողությունների միջոցով խորհրդայնացնել Զանգեզուրը, երկրամասի անվտանգությունն ապահովելու նպատակով 1921 թ. փետրվարի 16-ին Նժդեհի զինակից Յապոնի (Հ. Պարոնյան) զորաջոկատը գրավում է Դարալագյազը (Վայոց ձոր): Կարմիր բանակի զորամասերը լուրջ դիմադրություն ցույց չտվեցին, իսկ մոտ 400 կարմիրբանակայիններ գերի հանձնվեցին. Դարալագյազը հռչակվեց Զանգեզուրի անբաժան մաս: Զանգեզուրում մեծ ոգևորություն առաջացրեց նաև Երևանում փետրվարյան ապստամբության հաղթանակի լուրը. ակնկալվում էր խորհրդային ուժերի հետ պայքարում ազատագրել նրանց տիրապետության ներքո գտնվող տարածքները և միանալ Հայրենիքի փրկության կոմիտեի զինված ուժերին: Այդ նպատակով

[12] Նույն տեղում, թ. 32–34:

մարտի 5-ին Յապոնի ջոկատը ազատագրեց Նոր-Բայազետը (Գավառ), սակայն հետագա առաջխաղացումը ձախողվեց:

Ապրիլի սկզբին հակախորհրդային ապստամբությունը ճնշելուց, Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանությունը տապալելուց և Հայաստանի կենտրոնական շրջաններում խորհրդային իշխանությունը վերականգնելուց հետո Կարմիր բանակը շարունակեց ապստամբների հետապնդումը և ապրիլի 15-ին գրավեց Դարալագյազը: Մղելով համառ մարտեր, Յապոնի ջոկատը նահանջում է դեպի Գորիս:

1921 թ. ապրիլի 16-ին հրապարակվում է Կարմիր բանակի Երևանյան խմբավորման հրամանատար Մ. Վելիկանովի հրամանն ուղղված կարմիր զորքերի մարտիկներին: Հրամայվում է շարունակել դաշնակների հետապնդումն ու ջախջախումը և կարճ ժամանակում դուրս գալ Զանգեզուրի սահմաններին: Նշենք, որ ապրիլի կեսերին 11-րդ բանակի զորամասերին հաջողվեց ճնշել նաև Նժդեհի զինակից Թևանի (Ստեփանյան) ղեկավարած ապստամբությունը Ղարաբաղում, Թևանի ջոկատը նույնպես նահանջում է դեպի Զանգեզուր:

Այսպիսով, Վրաստանի խորհրդայնացումից և Հայաստանում փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո 1921 թ. գարնանը Զանգեզուրը մնացել էր հակախորհրդային պայքարի և անկախության միակ կղզյակը ամբողջ Անդրկովկասում, իր վրա սևեռել բոլշևիկների ողջ ուշադրությունը և ռազմական ներուժը:

Ստեղծված նոր իրադրության հրամայականով Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 2-րդ համագումարը ապրիլի 27-ին ինքնավար Սյունիքը հռչակում է «Լեռնահայաստան» և վարչապետ նշանակում Գ. Նժդեհին, որը պարգևատրվում է

«Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով: Շատ չանցած, հունիսի 1-ին, Լեռնահայաստանը վերանվանվում է «Հայաստանի Հանրապետություն», վարչապետ է նշանակվում Զանգեզուր անցած Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը, Գ. Նժդեհը պահպանում է զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնները: «Ազատ Լեռնահայաստանի գոյության» անհրաժեշտությունը Գ. Նժդեհը բացատրում է հետևյալով. որոշակի ժամանակ էր պետք 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Զանգեզուր նահանջած երևանյան գաղթականներին, մտավորականներին ու զինվորներին Իրան անցնելու համար:

1921 թ. մայիսի սկզբին Կարմիր բանակը դադարեցնում է ապրիլյան հարձակումը, Զանգեզուրի խորհրդայնացման խնդիրը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելու համար որոշվում է վերստին սկսել բանակցություններ: Դա տեղի ունեցավ Հայաստան ժամանած և ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի ու ռազմգործժողկոմի պաշտոնները ստանձնած Ալեքսանդր Մյասնիկյանի համառ ջանքերի շնորհիվ: Սակայն, մայիսի 12-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում խորհրդային (ՀՍԽՀ ներկայացուցիչ՝ Արտաշես Կարինյան, Կարմիր բանակի՝ Վ. Մելնիկով) և Լեռնահայաստանի (Գ. Տեր-Մինասյան, Մ. Մինասյան և Լ. Մինասյան) պատվիրակությունների միջև բանակցությունները նույնպես ավարտվում են առանց դրական արդյունքի, այդ մասին մայիսի 23-ին Ա. Մյասնիկյանը տեղեկացնում է Ա. Գեկկերին[13]:

Հերթական բանակցությունների ձախողումը ստիպում է ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյին վճռական քայլերի դիմել Զանգեզուրը խորհրդայնացնելու նպատակով: Բյուրոյի կողմից 1921 թ.

---

[13] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1435, ց. 1, գ. 42, թ. 1:

հունիսի 3-ին ընդունված՝ «Զանգեզուրը հակահեղափոխականներից մաքրելու մասին» որոշման մեջ նշվում է. «1. Զանգեզուրը լիկվիդացնել հունիսի վերջին: 2. Անմիջապես անցնել ռազմական գործողությունների նախապատրաստմանը: 3. Դրա հետ մեկտեղ հանձնարարել Հայաստանի կառավարությանը Հռչակագիր ուղարկել Զանգեզուր: 4. Միջոցներ ձեռնարկել Մեղրին անմիջապես գրավելու համար»[14]: Կատարելով որոշման 3-րդ կետը, ՀՍԽՀ կառավարությունը հունիսի 13-ին ևս մեկ անգամ դիմում է Զանգեզուրի կառավարությանը՝ պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումը ընդունելու կոչով: Հռչակագրում նշվում է նաև, որ Զանգեզուրը, նաև՝ Ղարաբաղը, լինելու են Խորհրդային Հայաստանի կազմում[15]:

11-րդ բանակի Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Վելիկանովը 1921 թ. հունիսի 18-ին ապստամբությունը ճնշելու մասին հերթական հրամանն է արձակում: Դեռևս հունիսի 6-ին, ի կատարումն Կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշումների, նման հրաման էր արձակել նաև Ադրբեջանում տեղակայված Կարմիր բանակի Կովկասյան առանձին բանակի հրամանատարությունը: Այսպիսով, Կարմիր բանակը Զանգեզուրի վրա հարձակվելու էր ինչպես արևմուտքից, այնպես էլ արևելքից: Հունիսի 20-ին հարձակումը սկսվում է, Կարմիր բանակը հունիսի 30-ին մտնում է Սիսիան: Վերջինիս անկումից հետո Գ. Նժդեհը որոշում է դադարեցնել պայքարը և Գորիսից նահանջում դեպի Կապան, պատգամելով գորիսցիներին՝ չդիմադրել հայ-ռուսական կարմիր զորքերին և անխնա լինել՝ եթե հարձակում ձեռնարկեն ադրբեջանական ջոկատները:

---

[14] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 13:
[15] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 26:

Հուլիսի 2-ին Գորիս են մտնում Կարմիր բանակի Կովկասյան առանձին բանակի և Երևանյան խմբավորման զորամասերը, հուլիսի 7-ին նրանք արդեն Կապանում էին. ապստամբական ուժերը Նժդեհի գլխավորությամբ նախօրոք նահանջել էին դեպի Մեղրի: 1921 թ. հուլիսի 13-ին Կարմիր բանակի զորամասերը մտնում են Մեղրի, Զանգեզուրի խորհրդայնացման գործընթացն այդպիսով ավարտված էր:

Հայաստանում գտնվելու վերջին օրերին Նժդեհը դիմում է հղում Հայհեղկոմին. մի շարք պահանջների և մաղթանքների հետ մեկտեղ (որպեսզի հայ ժողովուրդն այլևս չապստամբի խորհրդային իշխանության դեմ), նա շեշտում է, որ ադրբեջանցիները չպետք է մտնեն Զանգեզուր, վերջինս, նաև՝ Ղարաբաղը, մեկընդմիշտ պետք է լինեն Հայաստանի կազմում: Զգուշացնելով, որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, այլ կվերադառնա՝ եթե «Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը», Նժդեհը թողնում է Հայաստանի սահմանները և փոքրաթիվ ուժերով անցնում Արաքսի իրանական ափը[16]:

Հայ ժողովրդի մեծ զավակ Գարեգին Նժդեհի և նրա զինակիցների գլխավորությամբ զանգեզուրցիների անհավասար, սակայն հերոսական պայքարը, ինչպես նաև ՀՍԽՀ կառավարության ղեկավար Ալեքսանդր Մյասնիկյանի վճռական դիրքորոշումը նպաստեցին, որպեսզի ռազմավարական առումով բացառիկ նշանակություն ունեցող հայկական Զանգեզուրի մեծ մասը կազմի Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, հակա-

---

[16] Տե՛ս **Գևորգյան Վ.,** Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921). Երևան. 1991, էջ 173–175:

ռակ դեպքում՝ նրան կարող էր սպառնալ Նախիջևանի կամ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը:

**Карен Г. Хачатрян,** *Институт истории НАН РА, д.и.н., профессор,* **Военно-дипломатическая борьба за Зангезур в 1920–1921 гг.**

После расспада Российской империи в 1917 г. и ухода России из Закавказья Турция и Азербайджан развернули захватнические действия в отношении приграничных армянских территорий, в том числе Зангезура (Сюник). В 1918–1920 гг. в острой военно-дипломатической борьбе Республике Армения удалось отстоять край в своем составе, а после советизации республики в конце 1920 г. Зангезур сохранял свою самостоятельность. Несмотря на неоднократные заверения советской власти, что после советизации край останется в составе Советской Армении, зангезурцы во главе с национальным героем Гарегином Нжде и его соратниками продолжили борьбу. С весны 1921 г. руководство Советской Армении во главе с Александром Мясникяном многократно пыталось решить вопрос советизации Зангезура мирным дипломатическим путем, однако успеха не имело. С середины июня части Красной Армии начали широкомасштабное наступление на Зангезур, которое принесло окончательный успех, край был полностью советизирован и большая ее часть осталась за Советской Армением. В этом успехе велика роль двух выдающихся деятелей армянского народа – Гарегина Нжде и Александра Мясникяна.

**Karen H. Khachatryan,** *Institute of History of the NAS RA, Doctor of Sciences in History, Professor,* **The military-diplomatic struggle for Zangezur in 1920–1921.**

After the collapse of the Russian Empire in 1917 and Russia's withdrawal from Transcaucasia, Turkey and Azerbaijan launched aggressive actions against the Armenian border territories, including Zangezur (Syunik). In 1918–1920 in the acute military-diplomatic struggle, the Republic of Armenia managed to defend the region in its composition, and after the Sovietization of the republic at the end of 1920, Zangezur retained its independence. Despite the repeated assurances of the Soviet authorities that after Sovietization the region will remain part of Soviet Armenia, the residents of Zangezur, led by the national hero Garegin Nzhdeh and his associates, continued to fight. Since the spring of 1921, the leadership of Soviet Armenia, headed by Alexander Myasnikyan, had repeatedly tried to resolve the issue of Sovietization of Zangezur by peaceful diplomatic means, but it was not successful. Since mid-June, the Red Army units launched a large-scale offensive on Zangezur, which brought final success, the region was completely Sovietized and most of it remained within Soviet Armenia. The role of two outstanding figures of the Armenian people – Garegin Nzhdeh and Alexander Myasnikyan, is great in this success.

**ՎԱՀՐԱՄ Ռ. ԲԱԼԱՅԱՆ**
***ԱրՊՀ, պ.գ.դ., պրոֆեսոր***

# ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑԸ

***Բանալի բառեր՝*** Պետականություն, Հայաստան, Արցախ, Սյունիք, Գարեգին Նժդեհ, Դրո, Ղարաբաղ, պայքար, Թուրքիա, Ադրբեջան:

Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելով՝ Թուրքիան զրկվեց դարերի ընթացքում նվաճած բավականաչափ ընդարձակ տարածքներից: Այդ ժամանակներից սկսած առայսօր Թուրքիայի կառավարող շրջանները պանթյուրքիզմի մեջ են տեսնում երբեմնի աշխարհածավալ կայսրության վերածննդի հնարավորությունը: Դրան հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր, որ Թուրքիան էթնիկ սահման ունենար Այսրկովկասի և Իրանի թյուրքալեզու ժողովուրդների հետ:

Վերոհիշյալ խնդիրները լուծելու համար Բարձր դուռը նպատակ էր դրել Արևելյան Այսրկովկասում ձևավորել թուրքական նոր պետություն և երկրորդ՝ վերացնել Թուրքիայի ու նոր ստեղծվելիք Ադրբեջանի միջև գոյություն ունեցած «հայկական սեպը»:

1918 թ. մայիսի 28-ին «Մուսավաթ» կուսակցությունը նախկին Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների տարածքում հռչակում է Ադրբեջան պետության անկախությունը:

Նորահայտ այդ հանրապետությունն այսպես է բնութագրել ռուս գեներալ Անտոն Դենիկինը. «Ամեն ինչ ադրբեջանական հանրապետությունում արհեստական էր ,- գրել էր ռուս գեներալը,- իսկական չէր, սկսած նրա անունից, որը վերցված էր Պարսկաստանի համանուն նահանգներից մեկի անունից: Տարածքը նույնպես արհեստական էր, կազմված լեզգիական Զաքաթալայից, հայ-թաթարական Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներից, ռուսական Մուղանից: Այդ ամենը միավորված է թուրքական քաղաքականության արդյունքում, որը պետք է դառնա Կովկասում պանթյուրքիզի և պանիսլամիզմի դրոշակակիրը»[1]:

Եվ այսպես, աշխարհի քարտեզի վրա գծվում էր մի նոր պետություն, որի հիմքում դրված չէին ոչ պատմականության, ոչ էլ էթնիկական պատկանելության սկզբունքները: Նորաթուխ այդ երկիրը սկսեց հավակնել Հայաստանի բաղկացուցիչ մաս հանդիսացող Արցախին ու Զանգեզուրին:

1918–1921 թվականների ընթացքում մուսավաթական, այնուհետև խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Թուրքիայի աջակցությամբ Արցախում և Սյունիքում իրականացրած էթնիկ զտումների միջոցով փորձում էր պանթուրքիստական ծրագրերի իրագործումը գործնական հունի մեջ դնել:

Այդ ամենի բարձրակետը դարձան Շուշիի 1920 թ. մարտի 23-ի և դրան հաջորդած մի քանի օրերի ընթացքում իրականացված ջարդերը, որոնց արդյունքում քաղաքի տաս հազարից ավելի խաղաղ բնակչությունն ամենադաժան ձևով ոչնչացվեց:

Արցախահայության հետ վերջնական հաշվեհարդար տեսնելու և ՀՀ իշխանությունների ուշադրությունը շեղելու նպատա-

---

[1] **Բալայան Վ.** Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Մտեփանակերտ, 2012, էջ 79–80:

կով մուսավաթական Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ գործողություններ էին ձեռնարկել նաև Սյունիքի դեմ: Սյունիքի պաշտպանները անհավասար գոտեմարտում կանգնեցրին հակառակորդի առաջխաղացումը և մարտի 25–26-ին, անցնելով հակահարձակման, նրան հետ շպրտեցին մինչև Մասխուդլի և վերականգնեցին կապը Արցախի հետ[2]:

Հայասպան այդ ծրագրի մասին է խոսում նաև Խոսրով Բեկ Սուլթանովի ռուսերեն և թուրքերեն լեզուներով գրված հրամանագիրը, որտեղ մասնավորապես ասված է. «Հրամայում եմ հէնց այժմ, գրութիւնս ստանալուն պէս հօգալ բարձրացնելու թնդանօթները Քիրս և գրաւել Չիրխշլուի սարը, այտեղից կատարել հետախուզութիւն դէպի Տումի, Խծաբերտ և Զանախչի, ուսումնասիրել բոլոր անցքերը, որպէսզի մարտի 25-ին այդ հայկական գիւղերը ջնջւեն աշխարհի երեսից և այդպիսով մեծ վիհ բացւի Ղարաբաղի և Զանգեզուրի միջև, կտրւի երկու հատվածների հայերի կապը»[3]:

Որոշ հանգամանքների, մասնավորապես հայ ժողովրդի տոկունության շնորհիվ Սուլթանովի հրամանը ի կատար չածվեց:

1920 թ. մարտի կեսերին Մուստաֆա Քեմալը մի պատվիրակություն է ուղարկում Ադրբեջան՝ համոզելու «Մուսավաթ»-ի ղեկավարներին՝ սերտ հարաբերություններ ստեղծել բոլշևիկների հետ և, անգամ անհրաժեշտության դեպքում, խորհրդայնացնել երկիրը: Բանակցությունների արդյունքում, 1920 թ. ապրիլի 15-ին, Ադրբեջանի խորհրդայնացումից երկու շաբաթ առաջ, Ադրբեջանի զինվորական նախարարի օգնական Ալի աղա Շիխ-

---

[2] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV. գիրք առաջին, Երևան, 2010, էջ 200:
[3] ՀՃԴ ԿԱ, թթ. 1649, գ. 3, էջ 15 բ:

լինսկին և թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան Էրզրումում, ի լրումն 1919 թ. նոյեմբերի 29-ին Ստամբուլում կնքված թուրք-ադրբեջանական գաղտնի համաձայնագրի, ստորագրեցին նոր պայմանագիր:

Արձանագրության 15-րդ հոդվածում ասված էր. «Ադրբեջանի կառավարությունը խոստանում է շարունակել նպաստել խորհրդային Ռուսաստանի և «Անատոլիայի ու Ռումերիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» միջև իրականացնելու մերձեցում: Անհրաժեշտ եղած պարագայում ինքն էլ պիտի յարի այդ միութեան»[4]: Իսկ 7-րդ հոդվածում արձանագրված էր, որ Թուրքիան և Ադրբեջանը Հայաստանի դեմ պատերազմի ժամանակ գործելու են որպես միացյալ բանակ[5]:

Ինչպես մուսավաթական, այնպես էլ բոլշևիկյան Ադրբեջանի ղեկավարներին սարսափեցնում էր արցախահայության պետականության գոյության փաստը: Նրանք գիտակցում էին, որ հայոց երկու պետությունները և, մասնավորապես Լեռնային Ղարաբաղը, նախ և առաջ հնարավորություն չեն տալիս տարածաշրջանում արհեստականորեն ձևավորել թուրքական երկրորդ պետությունը և, երկրորդ՝ ապագայում անվերադարձ կթաղվի երկու թուրքական երկրների միավորման պանթուրքիստական ծրագիրը:

Վերոհիշյալ զարգացումների խորապատկերի վրա տեսանելի է ՀՀ կառավարության մտահոգությունը: Հանրապետության օրվա իշխանությունները քաջ գիտակցում էին, որ առանց Արցախի հայկական պետականության պահպանման, ոչ միայն անհնարին էր երաշխավորել Հայոց արևելից նահանգների հա-

---

[4] **Վրացյան Ս.,** Ինչու՞ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը. «Հայրենիք». 1940, թիվ 2, էջ 143–144:

յության ֆիզիկական գոյությունը, այլ նաև ՀՀ անվտանգությունը:

Այդ ամենը հաշվի առնելով, չնայած ուշացումով, 1920 թ. ապրիլի 13–14-ին Զանգեզուրից Դրոյի զորաջոկատները մտան Վարանդա: Մի քանի օր անց կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարությունը, որի կազմը հաստատեց Վարանդայի Թաղավարդ գյուղում 1920 թ. ապրիլի 25-ին հրավիրված Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը: Միաժամանակ համագումարը որոշեց «հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս»[6]:

Արցախը պաշտոնապես ընդունում է Հայաստանի Հանրապետության օրենքները, դրոշը, զինանշանը, հիմնը, դրամը:

1920 թ. ապրիլի 24-ին Դրոն հասնում է Ղարաբաղ և ապրիլի 26-ին կոչով դիմում արցախահայությանը: Կոչում մասնավորապես ասված է. «Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ բնակչությանը, շարունակել իրականացնել տաճկական փաշաների որոշումը, տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու, այդպիսով, վերացնել մահմեդական աշխարհի մեջ ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը:

Ես եկել եմ ձեր մեջ այն խորին համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթենք թշնամուն: Ես

---

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 98:

վճռել եմ մնալ ձեր մեջ, կռվել ձեր հետ միասին և ազատությունն ու հաղթանակը տոնել այստեղ»[7]:

Մինչև Դրոյի Վարանդա մտնելը Արցախի Ազգային խորհուրդը օգնության խնդրանքով բազմիցս դիմել էր Սյունիքում գտնվող զինված ուժերի հրամանատարներին՝ գեներալ Ս. Ղազարյանին և Գարեգին Նժդեհին: Խնդրագրերից մեկում նրանք հայ հրամանատարներին խնդրում են փորձված զինվորականների գործուղել Արցախ: «Այդպիսի մի առաջնորդ առայժմ փոխգնդապետ Նժդեհն է,- ասված է վերոհիշյալ դիմումի մեջ,- և որի անունը թշնամիների համար դառել է վրէժխնդրութեան խորհրդանշան, և որի անունից թշնամին սարսափահար փաղչում է, ինչպես ցույց տուեցին մօտիկ անցեալի դէպքերը, երբ թշնամու կանոնատոր զօրքերը լսեցին Նժդեհի Գողթանից վերադառնալու մասին, խուճապահար փախուստի դիմեցին: Գնդ. Նժդեհն ստեղծած է ժողովրդի համար և նա պիտի լինի այնտեղ, ուր նրա կարիքն աւելի է զգացւում»[8]:

Անսալով արցախահայության հորդորներին Նժդեհը իր հրամանատարության տակ եղած ուժերից կազմում է մարտունակ մի զորաջոկատ, որը ստանում է «Հարավղարաբաղյան» անվանումը, ջախջախելով Բարկուշատ-Հաքարլուի տարածքում կուտակված քրդերից և թաթարներից բաղկացած ուժերին, ճանապարհ է բացում և ապրիլի 26-ին մտնում Դիզակ: Այդ ռազմագործողությամբ, փաստորեն, Նժդեհը չեզոքացրեց Դրոյի զորամասի աջ թևում գործող թշնամական ուժերին, հնարավորություն տալով ՀՀ զինված ուժերին հիմնականում ազատագրելու և հանրապետության դրոշի տակ առնելու ողջ Արցախը:

---

[7] **Գևորգյան Հ.**, Հայաստանի Հանրապետության կառավարության մարտավարությունը Սյունիքում և Արցախում (1918–1920 թթ.), Երևան, 2018, էջ 814:

«Հարավղարաբաղյան» զորամասի փայլուն զորաշարժը բարձր գնահատվեց Դրոյի կողմից և նրանց հասցեագրված ուղերձում նա նշել է. «Շնորհաւորում եմ քաջարի զանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ, ուր ցանկալի որպէին նոքա օգնութեան հասան հարազատ Ղարաբաղին: Իւրաքանչիւր զանգեզուրցի թող յիշէ, որ կռուելով պատմական Ղարաբաղի լեռներում, դորանով նա կռում է ամբողջ Հայաստանի և մասնաւորապէս Զանգեզուրի ազատութեան և խաղաղութեան համար: Վստահ եմ, սպաներ և զինուորներ, առաջնորդութեամբ ձեր արժանաւոր հրամանատար փոխգնդապետ Նժդեհի, քաջարի տեղացիների հետ, որ ահա մի ամբողջ ամիս է կռում են, ոչ միայն կթեթևացնեք Ղարաբաղի հայերի վիճակը, այլև ձեր կորովի ասպետական գործողութիւններով կը հանդիսանաք Ղարաբաղի հայ ժողովրդի բախտավորութեան և ազատ գոյութեան ապագայի գրաւականը»[9]:

Այդ օրերին Թուրքիայում ծավալվող քեմալական շարժումը նոր մարտահրավեր է դառնում հայության համար: Մուստաֆա Քեմալը ծրագրում էր դեպի Այսրկովկաս ձգվող բոլշևիկների հետ դաշինք ձևավորել[10] և ռազմական գործողություններ սկսել

---

[8] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 138, թ. 1–2:

[9] **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի գոյամարտը (1919–1921), Երևան, 1991, էջ 59:

[10] Մուստաֆա Քեմալը հոգու խորքում ատում էր բոլշևիկներին և ընդհանրապես Ռուսաստանին, սակայն իր նպատակներին հասնելու համար նա ոչ մի բանի առաջ կանգ չառավ: Մի առիթով նա ասել է. «մեզ սպառնում է երկու վտանգ: Առաջինը՝ բոլշևիկյանն է, որը ապագային է վերաբերվում և մեզ համար կանխատեսելի է, որովհետև թուրքի համար սոցիալիստական հեղափոխության և կոմունիզմի գաղափարները ընկալելի չեն: Երկրորդը՝ հունական վտանգն է, որը վերաբերվում է ներկա ժամանակաշրջանին և առկախված է Թուրքիայի գլխին: Որպեսզի կարողանանք դիմակայել հունական վտանգին մենք ստիպված ենք մի առ ժամանակ տեղի տալ ռուսականին» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 82): Քեմալը նաև հայտարարել է, թե խորհրդային կայսրությունը կփլուզվի և «եղբայրական Ադրբեջանը կդառնա ազատ» (տե՛ս «Посольство Турции: Турция сближаясь с Арменей, хочет ускорить

ՀՀ նկատմամբ, նվաճել Կարսի շրջանը: Այդ թվում ՀՀ տարբեր գավառներում, մասնավորապես Զանգեզուրում, Վեդիբասարում կուտակված մահմեդական զինված ազգաբնակչությունը պետք է աաստամբի, իսկ Ադրբեջանի զինված ուժերը Ղարաբաղը և Զանգեզուրը մաքրեին հայկական զորքից և Արաքսի հովտով նոր կառուցվող Այլաթ-Ջուլֆա երկաթգծով կապվեին Էրզրումի հետ:

Սպասվող արհավիրքին դիմակայելու նպատակով Դրոն և Զանգեզուր-Արցախ զորախմբի շտաբի պետ գնդապետ Միրիմանյանը ստորագրությամբ մի նամակ-հրահանգ են ուղարկում Նժդեհին, որտեղ մասնավորապես ասված է. «Ադրբեջանում բոլշևիզմի և Բաքուն գրավելու մասին լուրերը հաստատվում են: Շուշիից եկած հայուհին և թաթարները հաղորդում են, որ սպաները հանել են իրենց ուսադիրները, նետել զենքերը, Սուլթանովը կապել է կարմիր ժապավեն և այլն: Թեև բոլշևիզմը ակնհայտ է, բայց առայժմ, ինչպես տեսնում եք, թաթարներին առաջնորդում են Սուլթանովը, Նուրի փաշան և այլոք: Ուստի մենք պետք է խիստ զգույշ լինենք...

Մինչև բոլշևիզմի բնույթը պարզելը պետք է սպասողական դիրք գրավենք: Սպասում ենք տեղեկությունների Երևանից և Ջիվանշիրից: Մի՛ ձեռնարկեք հարձակողական գործողություններ և կազմակերպե՛ք Ձեզ վստահված շրջանի համար պաշտպանությունը»[11]:

Ստեղծված կացությունը Նժդեհը և Արցախում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը Դիզակի շրջանի գյուղերի պատվիրակների հետ 1920 թ. մայիսի 14-ին Տող գյու-

---

развязку Карабахского конфликта», Ae.ar, htt://www.aze.az/ news-posolstvo_turciga_–27331.html, 6 ноября, 2009):

ղում քննարկում են և որոշում. «... ադրբեջանական վերջնագիրը համարել ընդամենը նոր պատրվակ հայերին նոր դժբախտություններ պատճառելու և Արարատյան կառավարությունը ընդունել որպես հարազատի ու Զանգեզուրի հետ միասին մտնել Արարատյան Հանրապետության կազմը»[12]:

Սակայն հետագա իրադարձությունները զարգացան ի վնաս հայ ժողովրդի: 1920 թ.-ապրիլի 28-ին բոլշևիկները խորհրդայնացրին Ադրբեջանը: «Համաշխարհային հեղափոխության» իրականացման ճանապարհին կանգնած էր քեմալականների և բոլշևիկների որակումով «իմպերիալիստական Հայաստանը»:

Ավետիս Ահարոնյանը 1920 թ. մայիսի 13-ին Ազգերի լիգայի խորհրդի նախագահին գրել է. «Ադրբեջանն իրեն հայտարարել է խորհրդային և ՀՀ կառավարությանը վերջնագիր է ներկայացրել՝ պահանջելով իրենց զիջել Ղարաբաղը և Զանգեզուրը: Օրջոնոկիձեն, պաշտպանելով Ադրբեջանին, Երևանի կառավարությանը հաղորդել է, որ Հայաստանի մերժման դեպքում, Ռուսաստանը Հայաստանի Հանրապետությանը կընկալի որպես իրեն պատերազմ հայտարարած երկրի»: Թուրքական զորքերը իրենց հերթին նախապատրաստվում են Էրզրումի կողմից հարձակվելու Հայաստանի վրա: Նրանք այդ ամենը իրար հետ համաձայնեցված են իրականացնում: Թուրքիան ծավալել է պանթուրքիստական շարժում: Ադրբեջանական զորքերը գլխավորում էին Էնվեր փաշայի եղբայրները՝ Խալիլ և Նուրի փաշաները: «Պանթուրքիստական շարժումը բոլշևիկյան գաղափարա-

---

[11] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, էջ 57:
[12] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 5, գ. 461, թ. 991:

խոսության քողի տակ նախապատրաստվում է ոչնչացնել Հայաստանի Հանրապետությանը»[13]:

Ստեղծված կացությունը քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու նպատակով 1920 թ. մայիսի 24-ին Ավետարանոց գյուղում Դրոյի, Նժդեհի, Արսեն Միքայելյանի և գնդապետ Միրիմանյանի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ արձանագրվում է. «ա/ որ Արցախի ժողովրդի տրամադրութիւնը զգալապէս փոփոխութեան ենթարկուած և աստիճանաբար կարող են վերածուել թշնամութեան: բ/ որ մայիսի 12-ից սկսեալ Հայաստանի կառավարութենէն հակառակ բազմիցս եղած դիմումների, ոչ մի տեղեկութիւն չի ստացուել, ապա ուրեմն Հայաստանի Հանրապետութիւնը գտնւում է օրհասական վտանգի մէջ: գ/ Որ Նժդեհի Ղափանի զօրամասը չի կարող երկար մնալ Արցախում, որովհետև բոլորն էլ գյուղացիներ են և կամաւոր ու կը կամենան վերադառնալ դաշտային աշխատանքներու լծուելու: դ/ Որ ռուսական բանակի որոշ զորամասեր, խճուղու վրայով, գրաւում են կարևոր դիրքեր, որով կտրում են Արցախի հայկական զօրամասի նահանջի ճամբան»[14]:

Վերոհիշյալ հանգամանքները հաշվի առնելով որոշում են ՀՀ զորքերը դուրս բերել Արցախից և իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Խորհրդակցության ժամանակ Նժդեհը վիճում է Դրոյի հետ՝ անընդունելի համարելով նմանօրինակ որոշումը[15]:

Հետագայում Նժդեհը գրել է. «Ղարաբաղն առանց կռվի թշնամուն թողնելը, անշուշտ, պիտի ունենար իր բարոյալքիչ

---

[13] Proces-verbol of the fifth session of the Council of league of Nations, held in Rome from 14 th to 19 th May, 1920, p. 169.

[14] «Հայրենիք», հմ. 12, հոկտեմբեր, 1923, էջ 126:

[15] Տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ 1917–1920, Երևան, 1999, էջ 681:

ազդեցությունը Զանգեզուրի վրա: Կամ թշնամին չափազանց ուժեղ է, որ երևանյան զորքերը խուսափել են չափվելու նրա հետ, կամ ինչ-ինչ քաղաքական նպատակներով չպետք էր կռվել և չեն կռվել մերոնք»[16]:

Նման պայմաններում Ղարաբաղի կառավարությունը արյունահեղությունից և քաղաքացիական պատերազմից խուսափելու համար, գնաց զոհաբերության՝ իշխանությունը հանձնեց բոլշևիկներին: 1920 թ. մայիսի 26-ին Թաղավարդում հրավիրված Ղարաբաղի հայության տասներորդ համագումարը, երկրամասը հայտարարում է խորհրդային: Նույն օրը Դրոն և Նժդեհը հեռանում են Արցախից:

1920 թ. մայիսին խորհրդայնացումից հետո Արցախը կորցրեց պետականությունը, բայց ոչ ըմբոստ ոգին:

Երկրամասում չկար քաղաքական մի ուժ, որ կարողանար նոր ոգի ու եռանդ հաղորդեր ազատագրական պայքարին: Դաշնակցական գործիչների մի մասը հեռացել էին Արցախից, մի քանի հոգի էլ անցել էին ընդհատակ:

Իրական իշխանություն ունեցող հայ բոլշևիկներն էլ համակերպվել էին ստեղծված իրավիճակին և, համաշխարհային հեղափոխության մոլուցքով տարված, դարձել էին Նարիմանովի և մոսկովյան կենտրոնական իշխանությունների կամակատարը:

Նման բարդ և անհուսալի պայմաններում ազատագրական պայքարի կազմակերպչի դերում հանդես եկավ Գարեգին Նժդեհը: Նա կարճ ժամանակահատվածում կարմիրբանակայիններին և թուրք ասկյարներին ջախջախեց Սյունիքում և ստեղծեց ազգային մի իշխանություն, որի իրավասությունները տարածված էին նաև Լեռնային Ղարաբաղի վրա:

---

[16] «Հայրենիք», հմ. 12, հոկտեմբեր, 1923, էջ 93:

Դեռևս 1920 թ. մայիսին, կարմիր բանակի դեմ պայքարելու արցախահայության ազատագրական շարժմանը կազմակերպված ընթացք տալու համար, Դրոն Թևան Ստեփանյանին նշանակում է Լեռնային Ղարաբաղում Նժդեհի տեղակալ[17]:

1920 թ. աշնանը Կապանում Թևան Ստեփանյանը հանդիպում է Գարեգին Նժդեհի հետ: Սպարապետը լուծում է Արցախում գտնվող զորամիավորումների հանդերձանքի, զենքի, զինամթերքի և ֆինանսական հարցերն ու ապստամբների առաջ, որոնց թիվն այդ ժամանակ հասել էր 1800-ի, խնդիր է դնում Լեռնային Ղարաբաղը միավորել Զանգեզուրի և Հայաստանի հետ[18]:

Ապստամբները կարճ ժամանակահատվածում ազատագրում են ամբողջ Դիզակը, Վարանդան, Խաչենի զգալի մասը: «Հակառակորդը Լեռնային Ղարաբաղում գրաված գյուղերը միացնում է Արարատյան հանրապետությանը»,- տագնապով գրում են բոլշևիկ գործիչները[19]:

Գարեգին Նժդեհը, ականատես լինելով արցախահայության հերոսական ոգորումներին ու հաջողություններին, Արցախն ամբողջապես ազատագրելու նպատակով 1921 թ. հունվարին նոր զորամասեր է ուղարկում: 1921 թ. Երևանում փետրվարյան ապստամբության հաջողությունից հետո, Ղարաբաղում արմատական բեկում կատարվեց: Մեկը մյուսի հետևից ազատագրվում էին գյուղերը:

1921 թ. փետրվարի 15-ին Շուշիի գավառային հեղկոմի նախագահ Շամիլ Մահմուդբեկովը խուճապահար հեռագիր է ուղարկում Ն. Նարիմանովին և Ս. Օրջոնիկիձեին՝ հաղորդելով,

---

[17] Տե՛ս «Նորք», հմ. 6, 1990, էջ 86:

[18] **Բալայան Վ.**, Արցախի պատմություն. Երևան, 2002. էջ 312:

որ հայկական գյուղերն առանց դիմադրության հանձնվում էին Թևանին[20]:

Կենտրոնից աջակցություն ակնկալելով՝ ԱՍԽՀ ներկայացուցիչ Բ. Շախտախտինսկին Լենինին զեկուցում է. «Հայաստանի մի մասը, մասնավորապես Ղարաբաղը և Զանգեզուրը, մնում է դաշնակների ձեռքին, որոնք կապ ունեն Թավրիզի հետ, որտեղ ապրում են Անտանտի գործակալները: Նրանք զավթել են Ղարաբաղի համարյա ողջ լեռնային մասը: Մեր կողմից զինած կոմբջիջների շուրջ հազար հայ մարդ անցել են դաշնակների կողմը»[21]:

Հաջողություններ է արձանագրվում նաև Խաչենագետի ձորակում: 1921 թ. փետրվարից հունիս ընկած ժամանակահատվածը այստեղ իշխանությունը գտնվում էր ապստամբների ձեռքում: Ապստամբական կենտրոնը համարվում էր Առաջածոր գյուղը: Շարժման կազմակերպիչները սերտ կապեր ունեին Թևան Ստեփանյանի հետ:

1921 թ. փետրվարի 12-ին կոմկուսի Ջևանշիրի գավառային կոմիտեն լիազորում է Թևանդրոս Միրզաբեկյանին բանակցել ապստամբների հետ: Ժամանակ շահելու նպատակով՝ ապստամբության ղեկավարները բանակցությունները ձգձգեցին մինչև հուլիսի 12-ը[22]: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարանդայում և Դիզակում ապստամբությունը գնում էր դեպի մարում, այստեղ նույնպես որոշվեց համակերպվել իրավիճակին:

---

[19] ՀԱԱ. ֆ. 1022. ց. 8. գ. 189. թ. 5–6:

[20] Տե՛ս նույն տեղում, գ. 203, թ. 1–2:

[21] АВПР, ф. 04. оп. 39. п. 232. д. 53001. л. 76–77.

[22] **Мирзабекян З.**, Тевадрос Мирзабекян, с. 28: Անտիպ գործը պահվում է Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

Ռազմական հաջողություններին զուգահեռ՝ Նժդեհը փորձում է հաջողություններ արձանագրել նաև դիվանագիտական ճակատում: Գարեգին Նժդեհը, լինելով իրատես քաղաքական գործիչ, գիտակցում էր, որ մի քանի ճակատով՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Խորհրդային Ռուսաստանի և հայ բոլշևիկների դեմ կռվելը անհնարին է: Եվ, օգտվելով իր ժամանակավոր հաջողություններից, փորձում է ճշգրտել Զանգեզուրի և Ղարաբաղի տարածքային պատկանելության հարցը:

Այդ նպատակով 1921 թ. փետրվարի 2-ին Գորիսում Նժդեհը հանդիպում է խորհրդային Հայաստանի և 11-րդ կարմիր բանակի ներկայացուցիչների՝ Գրիգոր Վարդանյանի, Սամսոն Թունիևի, Արմենակ Օրբելյանի, Արտուշ Հովհաննիսյանի և Շմավոն Քոչարյանի հետ: Նժդեհը նրանց հորդորում է ապագա հայկական պետականության շահը վեր դասել ամեն ինչից և անխաթար պահել Զանգեզուրի և Ղարաբաղի սահմանները: Բոլշևիկ գործիչներն իրենց հերթին Նժդեհին հավաստիացրին, որ Զանգեզուրն ու Ղարաբաղը խորհրդային Հայաստանի համար ունեն ռազմավարական նշանակություն, և այդ մարզերը հետագայում կարևոր դեր պիտի ունենան երկրի ամրապնդման և զարգացման համար[23]:

1921 թ. ապրիլի 2-ին Երևանը գրավելուց հետո կարմիր բանակն իր ողջ ներուժը կենտրոնացնում է Զանգեզուրում և Ղարաբաղում հայկական ինքնավարության վերջին կղզյակները ոչնչացնելու համար:

1921 թ. ապրիլի կեսերին դաժան մարտեր էին ծավալվում Հին Թաղերի և Խծաբերդի ուղղությամբ: Ուժերն անհավասար էին: Հետագա դիմադրությունը դառնում էր անիմաստ: Ապրիլի

---

[23] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 36:

18-ին սյունեցիների ջոկատը կապիտան Ամիրջանյանի գլխավորությամբ Ավլաղարի և Զաբուխի ուղղությամբ ճեղքում են կարմիր բանակի և տեղացի քրդերից բաղկացած զորամասերի պաշարման օղակը և Զանգեզուրում միանում Նժդեհի հիմնական ուժերին:

Գարեգին Նժդեհը ազատագրական պայքարի թափը չկոտրելու, նոր ստեղծված քաղաքական կացությունը քննարկելու ու ապագա անելիքները ճշգրտելու նպատակով 1921 թ. ապրիլի 26-ին Տաթևում հրավիրեց Սյունիքի հայության երկրորդ համագումարը:

Ինքնավար Սյունիքը վերանվանվեց «Լեռնահայաստան», որի վարչական կազմի մեջ ներառվեցին Վայոց ձորն ու Լեռնային Ղարաբաղը[24]: Արցախից Սյունիք հասած ապստամբական ուժերը Գարեգին Նժդեհի առաջնորդությամբ մի քանի ճակատներով շարունակեցին պայքարը թուրք-թաթարական և խորհրդային մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ: Պարզորոշ հեռանկար չտեսնելով՝ 1921 թ. հունիսի կեսերին ապստամբների մի մասը, իրենց ընտանիքներով՝ շուրջ 10.000 մարդ, որոնց թվում մեծ թվով արցախահայեր, հեռացան Պարսկաստան[25]: Հետագա պայքարը շարունակելու և կազմակերպական հունի մեջ դնելու նպատակով 1921 թ. հուլիսին Թավրիզում դաշնակցական գործիչները ստեղծեցին «Զանգեզուրի և Ղարաբաղի պաշտպանության և փրկության կոմիտե»[26]:

---

[24] Նույն տեղում, թ. 6:

[25] Տե՛ս **Գանգրունի Հ.**, Հայաստանը 1920–21 եւ միջազգային դիվանագիտութիւնը, Պէյրութ, 1986, էջ 75:

[26] **Хармандарян С.**, Ленин и становление Закавказской федерации (1921–23), Ереван, 1969, с. 177.

Վերոհիշյալ մարմինը գավառներում ուներ համապատասխան կապեր: Անհատ ականատեսն իր օրագրում նշել է. «...բոլշևիկներին գլխաբաց ընդունող Ղարաբաղն ու Զանգեզուրն արթունության նշաններ են ցույց տալիս և իրենց կաշվի վրա փորձով համոզվեցին, որ նախկին Ռուսաստանն է եկողը՝ նոր հագուստով»[27]:

Խորհրդային ուժերը ամենադաժան մեթոդներով հաշվեհարդար էին տեսնում հայրենասեր գործիչների հետ: Հետագա տարիներին ապստամբության մասնակիցների մի մասին, «թևանական» պիտակը կպցնելով, կամ գնդակահարում, կամ էլ արգելափակում էին բանտերում:

Արցախահայության հակաադրբեջանական, հակախորհրդային շարժումը չնայած տխուր վախճան ունեցավ, բայց ազատագրական շարժման գաղափարները կենդանի մնացին ժողովրդի մեջ՝ սպասելով նոր բարենպաստ ժամանակների:

---

[27] Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրերը (կազմ. հեղ.՝ Ս. Հարությունյան), Երևան, 1992, էջ 61–62:

**Ваграм Р. Балаян,** *АрГУ, д.и.н., профессор,* **Гарегин Нжде и вопрос сохранения армянской государственности Арцаха.**

В 1918–1921 годах руководство мусаватского, затем-советского Азербайджана, при поддержке Турции путем этнической чистки в Арцахе и Сюнике пыталось ликвидировать армянскую государственность и претворить в жизнь реализацию пантюркских программ. Для организации борьбы арцахских армян 24 апреля 1920 г. Дро, а 26 апреля Нжде, во главе с армянскими войсками вошли в Арцах. Сложная ситуация в Армении и установление советской власти в Арцахе вынудили Дро и Нжде покинуть территорию армянского края.

Для сохранения армянской государственности Арцаха осенью 1920 г. Нжде отправил из Сюника в Арцах новую воинскую часть. Армянским войскам, вместе с местными силами во главе с Теваном Степаняном, удалось сохранить автономию региона до середины июня 1921 г. Но силы были неравны. Несмотря, что у антиазербайджанского движения был печальный исход, идеи освободительного движения в народе остались живы, ожидая новых благоприятных времен.

**Vahram R. Balayan,** *ASU, Doctor of Sciences in History, Professor,* **Garegin Nzhdeh and the issue of preserving the Armenian statehood of Artsakh.**

In 1918–1921, the leadership of Musavat, th.n Soviet Azerbaijan, with the support of Turkey, through ethnic cleansing in Artsakh and Syunik, tried to eliminate the Artsakh-Armenian statehood and put the implementation of pan-Turkic programs into practice.

In order to organize the struggle of the Armenians of Artsakh in 1920, on April 24, Dro, and on April 26, Nzhdeh, led by the Armenian troops, entered Artsakh. The difficult situation in Armenia and the establishment of Soviet regime in Artsakh forced Dro and Nzhdeh to leave the Armenian region.

In order to preserve the Armenian statehood of Artsakh, in the autumn of 1920 Nzhdeh sent a new military unit from Syunik to Artsakh.

Together with the local forces led by Tevan Stepanyan, the Armenian troops managed to maintain the autonomy of the region until mid-June 1921. But the forces were unequal.

Although the anti-Azerbaijani, anti-Soviet movement had a sad ending, the ideas of the liberation movement remained alive among the people, waiting for new favorable times.

**ԳԵՎՈՐԳ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ**
***ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր***

# ՊՈՂՈՍ ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ. ՄԻ ՊԱՅԾԱՌ ԱՆՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ԵՐԿՆԱԿԱՄԱՐՈՒՄ

**«Ես կատարել եմ իմ պարտականությունը,**

**նախ՝ որպէս հայ և երկրորդ՝ որպէս դաշնակցական»:**

***Պողոս Տեր-Դավթյան***

***Բանալի բառեր՝*** Սյունյաց լեռնաշխարհ, Զանգեզուր, Անդրանիկ Օզանյան, Պողոս Տեր-Դավթյան, Արսեն Շահմազյան, Գարեգին Նժդեհ, հերոսամարտ:

Հայոց ազատամարտի նորագույն պատմության մեջ իր կատարած դերով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Զանգեզուրի 1918–1921 թթ. գոյամարտը: Գոյամարտ, որը տվել է բազում հերոսներ, որոնք իրենց անմնացորդ նվիրումով և պայքարով կերտել են մեր ժողովրդի փառավոր պատմությունը: Հայ ազատամարտի առաջատար ուժի՝ ՀՅԴ մարտական գործիչների փաղանգում իր հայրենանվեր գործունեությամբ արժանի տեղ է զբաղեցնում նաև Պողոս Տեր-Դավթյանը՝ «Պորուչիկ Պողոսը», որին բնորոշ էր հերոսականությունը: Հանգամանք, որի շնորհիվ էլ ժամանակակիցների շրջանում նա վաստակեց անվիճելի հեղինակություն և հայոց հիշողության մեջ անմահացավ «Սյունյաց Քաջ» պատվանունով:

Պ. Տեր-Դավթյանի կյանքի ուղին եղել է մաքառումների անվերջ շղթա, նա ձգտել է իր ուժն ու կորովը գործադրել այնտեղ, որտեղ ավելի շատ օգուտ կարող էր բերել հայրենիքին: Նրա կարճ, սակայն բեղմնավոր կյանքի տարեգրությունը ցույց է տալիս, որ հայրենիքին կապված էր հոգու ամենանուրբ և ամենասուրբ թելերով՝ խորապես վերապրելով նրա դժվարին անցյալն ու ողբերգական ներկան: Որպես գաղափարի զինվոր՝ նա ՀՅ Դաշնակցության այն նշանավոր զինվորականներից էր, որ մշտապես գտնվում էր իր ժամանակի քաղաքական իրադարձությունների կիզակետում, օրհասական պահերին՝ առանց երկմտանքի, պատասխանատվության մեծ զգացումով սատար կանգնելով հարազատ ժողովրդի գոյապայքարին: Ահա այս մթնոլորտի մեջ է կերտվել հայոց ազատամարտի նվիրյալի աննկուն կամքն ու ազնվագույն նկարագիրը: Կյանքով լեցուն, բնությունից առատորեն բազում շնորհներով օժտված Պ. Տեր-Դավթյանի մտերմությունը, հավանաբար, շատերն են փնտրել: Դրա վառ վկայությունը նրա ընկերների, մտերիմների ու ծանոթների լայն շրջանակն էր, որն ապշեցնում էր նաև իր բազմազանությամբ: Դրանց թվում էին այն ժամանակ արդեն անվանի բազմաթիվ հասարակական-քաղաքական և ռազմական գործիչներ: Ընդամենը մի քանի անունների թվարկումով փորձենք պատկերացում տալ. Անդրանիկ Օզանյան, Ստեփան Զորյան (Ռոստոմ), գեներալ-մայոր Հակոբ Բագրատունի, Համազասպ Սրվանձտյանց, Սիմոն Վրացյան, Ստեփան Շահումյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Արսեն Շահմազյան, Գարեգին Տեր-Հարությունյան (Նժդեհ), Դրաստամատ Կանայան (Դրո), Եղիշե Իշխանյան և շատ ուրիշներ:

Դժվար է սահման գծել Պ. Տեր-Դավթյանի կենսագրության և ռազմաքաղաքական գործունեության միջև, քանզի հայ ժողովրդի ազատության համար անմոռաց պայքարը միաժամանակ դարձավ նաև նրա անձնական կյանքի ժամանակագրությունը: Ուստի նրա 40-ամյա հերոսական կենսագրությունը պայմանականորեն կարելի է ստորաբաժանել հինգ շրջանի. մանկություն և պատանեկություն, ռուս-ճապոնական պատերազմի տարիներ (1904–1905 թթ.), Առաջին աշխարհա-մարտի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատի ռազմագործողություններ (1914–1916 թթ.), Բաքվի հերոսամարտ (1918 թ.), Զանգեզուրի հերոսամարտ (1918–1920 թթ.):

Պողոս Տեր-Դավթյանը ծնվել է 1880 թ. Սյունյաց աշխարհի պատմական Բաղք Աճանան գավառի Վերին Խոտանան գյուղում, երկրագործ Սողոմոն և Նազլու Տեր-Դավթյանների լուսավոր և բազմանդամ ընտանիքում[1]: Կրթություն ստանալու նպա-

[1] Սողոմոնն ունեցել է վեց որդի՝ Դավիթ, Պողոս, Գրիգոր, Հարություն, Հայրապետ, Վարդան և մեկ դուստր՝ Մարգ անունով (տե՛ս Վերին Խոտանանի Տեր-Դավթ-ասների տոհմածառը: Կազմող՝ **Ա. Հովհաննիսյան**, Կասպան, 2018: Տոհմածառը մեզ է տրամադրել հեղինակը՝ Կասպանի երկրագիտական թանգարանի ֆոնդապահ Արմինե Հովհաննիսյանը, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը: Ի դեպ, Գրիգորը 1918 թ. դաժանորեն սպանվել է Խոտանանից հյուսիս գտնվող «Խուրթի ջման» հանդամասում Ավդիլազիմ բեկի հրոսակախմբի կողմից (տե՛ս **Անառնյան Ա.**, Վերին Խոտանան. Ամեն մի կածան՝ մի հուշապատում, «Սյունյաց երկիր», Կասպան, 2017, նոյեմբերի 9, № 36):

տակով[2] վաղ մանկությունից տեղափոխվել է Բաքու, իր քեռու՝ ծննդյամբ՝ Շրվենանց գյուղից Բաքվում հաստատված նավթարդյունաբերող, «Արամազդ» ընկերության նախագահ, բարեգործ Գասպար Տեր-Մարգարյանի[3] մոտ: 1901 թ. ավարտելով տեղի ռուսական գիմնազիան, նույն տարում զորակոչվել է ցարական բանակ և դարձել զինվորական ուսումնարանի ունկնդիր[4]:

Պ. Տեր-Դավթյանը պորուչիկի[5] կոչումով զինվորական առաջին մկրտությունը ստացավ ռուս-ճապոնական պատերազմում: Ակտիվորեն մասնակցել է ճապոնական զորքերի դեմ մղվող մարտական գրեթե բոլոր գործողություններին: Քաջագործություններով հատկապես աչքի է ընկել Մուկդենի հայտնի ճակատամարտում (1905 թ. փետրվարի 20-ից մարտի 10-ը): Մարտական սխրագործությունների համար արժանանում է բարձրագույն պարգևի՝ Գեորգիևյան խաչի և «Պարաբելլում»

---

[2] Վերին Խոտանանում ծխական դպրոցը բացվել է 1913 թ. (տե՛ս **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830–1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 126):

[3] Գասպար Հովհաննեսի Տեր-Մարգարյանը (1865–1943 թթ.) ծնվել է Կապանի Շրվենանց գյուղում: Երիտասարդ հասակում տեղափոխվելով Բաքու, գնում է նավթաբեր հողակտոր, որի ընդերքը մեծ հարստությունների տեր է դարձնում նրան: Նավթաբյունաբերողն առատ օգնության ձեռք է մեկնել մի շարք բարեգործական ու որբախնամ կազմակերպությունների: Մահացել է տարագրության մեջ՝ Ֆրանսիայի Նիցցա քաղաքում: Գ. Տեր-Մարգարյանի գործունեության մասին մանրամասն տե՛ս **Մմբատյան Գ.**, Սյունիք. Պատմություն և հիշողություն, Երևան, 2019, էջ 450–453:

[4] Տե՛ս **Սողոմոնյան Քրիստափոր**, Անմահության ճամբաներով (ձեռագիր հուշա-գրություն), Կասպան, 1975, էջ 1–2: Ձեռագրի հեղինակը Պողոս Տեր-Դավթյանի եղբոր՝ Հայրապետի որդին է: Հուշագրության կրկնօրինակը պահվում է մեր անձնական արխիվում:

[5] Պորուչիկը՝ լեյտենանտ բառի պավոնական փոխառությունն է: Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում (1918–1920 թթ.) զինվորական աստիճանակարգում պորուչիկը (տեղակալ) հավասարազոր էր լեյտենանտի կոչման (տե՛ս Զորական կանոնագրքերի թարգմանությունն, «Ռազմիկ», Երևան, 1920, մայիսի 15, № 1):

մակնիշի անվանական ատրճանակի, որի կոթին մակագրված է եղել. «Քաջության համար»[6]:

1909 թ. Պ. Տեր-Դավթյանն արդեն պահեստազորի սպա էր[7]: Պ. Տեր-Դավթյանի կյանքին ու գործունեությանն անդրադարձած պատմաբան Բաղդասար Թևոսյանը գրում է, որ նա եղել է ՍԴ Հնչակյան կուսակցության անդամ[8]: Չբացառելով, որ սկզբնական շրջանում Պ. Տեր-Դավթյանը թերևս անդամակցել կամ հարել է հնչակյաններին, այդուհանդերձ, 1920 թ. սեպտեմբերի 25-ին, Դարալագյազում, Զանգեզուր-Ղարաբաղի միացյալ Ազգային խորհրդի անդամ Եղիշե Իշխանյանի և Պ. Տեր-Դավթյանի միջև տեղի ունեցած զրույցում վերջինս փաստել է իր ՀՅ Դաշնակցության անդամ լինելը[9]: Որ Պ. Տեր-Դավթյանը եղել է ՀՅԴ անդամ աներկբա փաստում է նաև նրա համագյուղացի, մոտիկից ճանաչող գնդապետ Արտաշես Ղազարյանը[10]:

Առաջին աշխարհամարտը գործունեության նոր, ավելի լայն դաշտ բացեց Պ. Տեր-Դավթյանի համար: Արևմտահայության ազատագրման վեհ գաղափարներով տոգորված նա կամավորական շարժման ջերմ կողմնակիցներից էր և պորուչիկի կոչումով[11] ընդգրկվեց փառապանծ Զորավար Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ Սալմաստում կազմավորված կամավորական 1-ին ջոկատի կազմում: Անդրանիկի հետ ծանոթությունը

---

[6] Տե՛ս նույն տեղում էջ 2, տե՛ս նաև. **Թևոսյան Բ.**, Նժդեհի հետ կողք-կողքի (Պողոս Տեր-Դավթյան), «Երեկոյան Երևան». Երևան. 1990. հուլիսի 9. № 151. տե՛ս նաև. **Անտոնյան Ա.**, Վերին Խոտանան. Ամեն մի կածան՝ մի հուշապատում. «Այուլյաց երկիր». Կապան. 2017. նոյեմբերի 9. № 36:

[7] Տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920). Երեւան. 1999. էջ 673:

[8] Տե՛ս **Թևոսյան Բ.**, Նժդեհի հետ կողք-կողքի (Պողոս Տեր-Դավթյան), «Երեկոյան Երևան». Երևան. 1990. հուլիսի 9. № 151:

[9] Տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920). էջ 673:

[10] Տե՛ս **Казарян А.**, Полковник и его время. Ереван. 2014. էջ 254:

հետագայում վերաճեց մտերմության և բեղմնավոր մարտական համագործակցության, որը հետագայում շարունակվեց նաև Զանգեզուրում: Պ. Տեր-Դավթյանն ակտիվորեն մասնակցում է Կովկասյան ռազմաճակատում թուրքերի դեմ մղված մարտական գործողություններին, Արևմտյան Հայաստանի տարածքների ազատագրմանը և աչքի ընկնում մի շարք մարտերում: Իր քաջագործություններով նա հատկապես աչքի է ընկնում 1915 թ. ապրիլի 16–18-ին Դիլմանի նշանավոր ճակատամարտում,[12] որտեղ խայտառակ պարտություն կրեց Խալիլ փաշայի 12.000-անոց բանակը, որը Ատրպատականի վրայով շրջանցելով Վասպուրականը, արևելքից պետք է հարվածեր Վանին[13]:

Առաջին աշխարհամարտի շրջանում Պ. Տեր–Դավթյանն իր ակտիվ մասնակցությունը ցուցաբերեց նաև Բաքվի հայության 1918 թ. հերոսամարտի ընթացքում: Հերոսամարտ, որն իր նշանակությամբ իրավամբ դասվում է Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հաղթական ճակատամարտերի կողքին: Կովկասյան բանակի հրամանատար Նուրի փաշայի գլխավորությամբ Բաքվի դեմ արշավող թուրքական բանակի դեմ հայկական զինուժի 1918 թ. հունիս-սեպտեմբերյան մարտերը վճռորոշ դեր ունեցան նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում[14]: Այս առումով տեղին է

---

[11] Տե՛ս **Асадов Ю.**, 3000 армянских офицеров царской России. Историко-биографическая книга памяти (1701–1921), т. 2, Москва, 2018. էջ 276:

[12] Տե՛ս **Թևոսյան Բ.**, Նժդեհի հետ կողք-կողքի (Պողոս-Տերդավթյան), «Երևկոյան Երևան», Երևան, 1990, հուլիսի 9, № 151:

[13] Տե՛ս **Арутюнян А.**, Кавказский фронт. 1914–1917 гг., Ереван, 1971, էջ 300:

[14] Մանրամասն տե՛ս **Ստեփանեան Գ.**, Պաքուի 1918 թ. հերոսամարտի նշանակութիւնը Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան ապահովման եւ կայացման համատեքստում: Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակ: Գիտաժողովի նիւթեր (21–23 մարտ, 2018), Անթիլիաս, 2021, էջ 103–118:

վկայաբերել ՀՅԴ Բաքվի Ոսկանապատի Կ. Կոմիտեության շրջանային ժողովում, Բաքվի հերոսամարտի իրական կազմակերպիչ, ՀՅԴ հիմնադիր երրորդության անդամ Ռոստոմի ելույթի հետևյալ հատվածը. «Մենք գիտենք, որ Ադրբէյջանի կառավարութեան թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է, որ գծում է ադրբէյջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակէտից պարզ է: Տաճիկները ձգտում են հայ ազգի ֆիզիքական ոչնչացման եւ արդէն մէկ միլիոն սրածել են եւ մայր երկիրը աւերել: ...Վաղը, հէնց որ բացուեն Բագուի դռները Ադրբէյջանի բանակի առջեւ եւ տաճիկները տեղատրուեն Բագում, Խան-Խոյսկու ամբոխը եւ տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաեւ Բագուի ու Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Զանգեզուր եւ Երեւանը ոտնատակ պիտի տան»[15]:

Ահա վերոնշյալ հանգամանքներից ելնելով, արևելահայությանը սպասվող ցեղասպանությունից փրկելու և հայության գոյությունը պաշտպանելու գերխնդիրը լուծելու նպատակով հերոսամարտին մասնակցում էր քաղաքի ողջ հայությունը՝ անկախ կուսակցական պատկանելությունից և քաղաքական համոզմունքներից: Բանակի կազմում ստեղծվել էին հայրենակցական սկզբունքով կազմավորված «Զանգեզուրյան» և «Երևանյան» գումարտակները[16]: Հերոսամարտի կազմակերպման գործում իր հարուստ փորձով մեծ դերակատարություն ունեցավ նաև Պ. Տեր-Դավթյանը, որպես վաշտապետ ընդգրկված լինելով ազատագրական շարժման գործիչների փայլուն համաստեղու-

---

[15] **Ալչուջեան Ա.**, Ռոստոմը Բագուում (Ա), «Հայրենիք», Պոսթըն, 1956, ԼԴ տարի. յուլիս, № 7, էջ 6:

[16] Մանրամասն տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, էջ 360–436:

թյան մեջ պատվավոր տեղ զբաղեցնող Համազասպ Սրվանձտյանցի հրամանատարությամբ գործող 3-րդ բրիգադի «Զանգեզուրյան» անունը կրող գումարտակի կազմում[17]: Պ. Տեր-Դավթյանը լավ էր հասկանում ռազմական գործը, ուներ կազմակերպչական հիանալի ընդունակություններ: Նրա գլխավորած վաշտը[18], իր իսկ խոսքերով «Բագվի բոլոր կռիվներում»[19] դրսևորեց բարձր մարտական ոգի, հիանալի կարգապահություն և անդրդվելի տոկունություն: Հիրավի, «Զանգեզուրյան» գումարտակը, և մասնավորապես Պ. Տեր-Դավթյանի գլխավորած վաշտն իր մարտական հմտությամբ և սխրանքներով արժանի ավանդ է ներդրել Բաքվի հերոսամարտում՝ մեծապես նպաստելով քաղաքի պաշտպանությանը: Բաքվի համար օրհասական այդ օրերին Հյուսիսային Կովկասից Աստրախանի վրայով Բաքվի պաշտպաններին օգնու-թյան է հասնում ազատագրական պայքարի բովով անցած դաշնակցական նշանավոր հայդուկ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան)[20]: Հին հայդուկապետի ժամանումը Բաքու մեծ ոգևորություն առաջ բերեց քաղաքի պաշտպանների շարքերում: Օգոստոսի 3-ին Սեբաստացի Մուրադն ու Սեպուհը մեկնում են ռազմաճակատի ամենադժվարին շրջանը՝ Բալաջար, որը պաշտպանում էր Համազասպը[21]: Թեժ

---

[17] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձտյանց, Երևան, 2016, էջ 496–656:

[18] Այդ վաշտի զինվորներից էր նաև Պ. Տեր-Դավթյանի հորաքրոջ որդին՝ Երեմ Գրիգորի Բաղդասարյանը, որը զոհվեց մարտերից մեկի ժամանակ (տե՛ս **Անտոնյան Ա.**, Վերին Խոտանան. Ամեն մի կածան՝ մի հուշապատում, «Այուլյաց երկիր», Կապան, 2017, նոյեմբերի 9, № 36):

[19] **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 673:

[20] Տե՛ս **Գևորգյան Հ.**, Սեբաստացի Մուրադ, Երևան, 2003, էջ 356, տե՛ս նաև «Ցառաջ», Փարիզ, 21-րդ տարի, 1949, դեկտեմբերի 11, № 1434:

[21] Տե՛ս **Սեպուհ**, Էջեր իմ յուշերէն, հ. Բ, Պոստոն, 1929, էջ 171:

մարտերի բովում ձևավորվեց Սեբաստացի Մուրադի և Պ. Տեր–Դավթյանի ընկերությունը[22]:

Թուրքական զորամասերի և հայ դիմադրական ուժերի միջև մարտերը վերսկսվում են օգոստոսի 2-ին: Թեժ մարտեր ծավալվեցին հատկապես Բալաջար կայարանի և Սայլանի զորանոցների շրջանում: Բաքվի պաշտպանները կռվում էին անօրինակ քաջությամբ: Համախմբելով իրենց ուժերը և գործի դնելով մարտական ողջ կարողությունները՝ նրանք արիաբար պաշտպանվում էին՝ ձախողելով հակառակորդի բոլոր ձեռնարկումները: Համազասպի զորամասը անընդմեջ ենթարկվելով հակառակորդի հարձակումներին, աննկուն պաշտպանում էր դիրքերը: Ռազմաճակատի աջ թևում անօրինակ քաջությամբ կողք կողքի կռվում էին Սեբաստացի Մուրադի և Պ. Տեր-Դավթյանի ջոկատները[23]:

Հակառակորդի հերթական գրոհներից մեկի ժամանակ, բարձունքը գրավելու ժամանակ հերոսի մահով զոհվում է Սեբաստացի Մուրադը: Նրա զինակից ընկեր Սեպուհն (Արշակ Ներսիսյան) իր հուշերում, վերհիշելով այդ դրվագը, գրում է. «...չարագուշակ եւ աղետաբեր գնդակ մը եկաւ դպաւ անոր ճակատին, եւ ան, թաւալգլոր, գնաց բլուրի զա-ռիվարէն դէպի թշնամիին կողմը»[24]: Մուրադի մահը մեծ վիշտ էր պատճառել Բաքվի ողջ հայությանը և հատկապես զինակից ընկերներին,

---

[22] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 4, տե՛ս նաև **Казарян А.**, նշվ. աշխ., с. 254.

[23] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 4:

[24] **Սեպուհ**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 176: «Հորիզոնի» հաղորդած մի տեղեկության համաձայն, Մուրադը վիրավորված է եղել յոթ տեղից (տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, դեկտեմբերի 7, № 15): Հետագայում Մուրադի մարմինը տեղափոխվում է Թիֆլիս և ամփոփվում Խոջիվանքի գերեզմանատանը: Ի դեպ, Մուրադից մնացած միակ մասունքը՝ Շուշիում նվեր ստացած արծաթե ծխատուփը, պահվել է Փարիզի ՀԵԴ թանգարանում (տե՛ս **Վրացեան Ս.**, Հ.Ե.Դ. տուն, «Վէմ», Փարիզ, 1938, Զ տարի, հոկտեմբեր-դեկտեմբեր, № 4, էջ 97):

այդ թվում նաև Պ. Տեր-Դավթյանին, ով նույնպես մասնակցել է քաջ հայդուկի թաղման արարողությանը[25]:

Բաքվի 4-ամսյա հերոսամարտի ընթացքում հայկական զորքի աներևակայելի քաջագործություններով առլեցուն ինքնապաշտպանական կռվիների արդյունքում մեծաթիվ զոհերի գնով թուրքական զորամասերը մինչև սեպտեմբերի 15-ը գամված մնացին Բաքվի շրջանում, երբ Օսմանյան կայսրության անձնատվությանը հաշված օրեր էին մնացել: Դրանով իսկ թուրքական զորքերը չկարողացան օղակել Հայաստանի Հանրապետությունը և իրագործել հայությանը իսպառ բնաջնջելու համաթուրքական ծրագրերը: Այսպիսով՝ կանխելով Արցախի, Զանգեզուրի ու Երևանի հանդեպ ծրագրավող թուրքական ագրեսիան՝ Բաքվի հերոսամարտը վճռական դեր խաղաց նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետության պաշտպանության գործում[26]:

Բաքվի անկումից հետո Համազասպի գլխավորած զորամասը մյուս զորամիավորումների հետ (շուրջ 800 մարդ), որոնց թվում նաև Պ. Տեր-Դավթյանի գլխավորած 40 հոգանոց ջոկատը,[27] պետք է մեկնեին Պարսկաստան, իսկ այնտեղից՝ Հայաստան: Սակայն դավաճանության հետևանքով շոգենավն ուղարկվում է Պետրովսկ, որտեղ գեներալ-մայոր Լ. Բիչեր-ախովի հրամանով հայկական զորամասը բռնի կերպով մոբիլիզացվում և ներգրավվում է բոլշևիկների դեմ պայքարում[28]: Բոլշևիկների և թուրքերի դեմ Ղզլարում և Դերբենդում կարճատև կռիվներից հետո, երբ Հյուսիսային Պարսկաստանում տեղակայված բրի-

---

[25] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 4, տե՛ս նաև **Казарян А.**, նշվ. աշխ., էջ 254:
[26] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձտյանց, էջ 443:
[27] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 5:
[28] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձտյանց, էջ 445:

տանական զորքերը Ու. Թոմսոնի գլխավորությամբ 1918 թ. նոյեմբերի 17-ին Էնզելիից ժամանեցին Բաքու, նույն օրը Լ.Բիչերախովի հետ միասին Բաքու է վերադառնում նաև Համազասպի զորամասը[29]:

Պ. Տեր-Դավթյանի զորավարական հմտություններն առավել դրսևորվեցին Զանգեզուրում 1918–1920 թթ. մղած հերոսական կռիվների ժամանակ: Սյունիքի նվիրական ու բարձրաբերձ լեռներից հնչող մարտի ու պայքարի ձայները փոթորկեցնում ու ալեկոծում էին Պ. Տեր-Դավթյանի անբասիր հոգին. նա անարձագանք չթողեց իր հայրենակիցների մարտակոչերը, որովհետև ՀՅԴ-ին զինվորագրված Պողոսների նման անձնուրաց տղաները զենքի ու դրոշի վրա ուխտել էին հայրենի հողի պաշտպանության համար գնալ գերագույն զոհողությունների: Ուստի 1918 թ. նոյեմբերի վերջերին վերադառնալով հայրենի եզերք, Պ. Տեր-Դավթյանն անմիջապես ներգրավվում է մարտնչող Սյունիքի ազատագրական պայքարին և անձնուրաց օրինակներով իմաստավորում այն: Հիրավի, Զանգեզուրի գոյամարտի օրհասական պահերին Պ. Տեր-Դավթյանը ցուցաբերեց ազգային-քաղաքական գործչին բնորոշ կազմակերպչական տաղանդ, երկաթյա կամք և բացառիկ հետևողականություն:

Հերոսական դրվագներով հարուստ այդ գոյամարտն, անշուշտ, բախտորոշ դեր խաղաց Սյունյաց լեռնաշխարհի հայության պատմական ճակատագրում՝ ամրապնդելով հետագա սերունդների հավատը սեփական ուժերի նկատմամբ: Ընդսմին, Զանգեզուրի ազատակերտ համահերոսամարտը **ՄԵԿ ՈՒ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ** օրհասական խնդիրն էր:

---

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 650:

Ծանրագույն վիճակում էր հայտնվել ինչպես Արցախի, այնպես էլ Զանգեզուրի հայությունը: Երիտթուրքերի մտահղացմամբ ու օժանդակությամբ Արևելյան Այսրկովկասի քաղաքական քարտեզում 1918 թ. մայիսի վերջերին վաչկատուն թյուրքալեզու մահմեդական եկվորների հիմքի վրա ի հայտ եկած արհեստածին «Ադրբեջան» կազմավորման մուսավաթական կառավարությունը ի բնե հայկական վերոնշյալ երկրամասերը զավթելու նպատակով հայ բնակչությունից պահանջում էր հպատակվել, զինաթափվել ու անվերապահ ենթարկվել Բաքվին:

Զանգեզուրի համար բախտորոշ այդ ժամանակաշրջանում, 1918 թ. հուլիսի վերջերից Նախիջևանից Հայկական Առանձին Հարվածող զորամասով Զանգեզուր անցած Անդրանիկ Օզանյանը օգոստոսի 3-ից ժամանակավորապես հաստատվում է Զանգեզուրի գավառի վարչական կենտրոն Գորիսում[30]: Գավառի պաշտպանության հետ կապված հարցերը քննության առնելու նպատակով տեղի Ազգային խորհրդը (կոչվում էր «Զանգեզուրի Կենտրոնական Ազգային խորհուրդ», նախագահն էր բժիշկ Միքայել (Միշա) Պարոնյանը)[31] օգոստոսի 7-ին հրավիրում է շրջանների ներկայացուցիչների խորհրդակցություն, որ-

---

[30] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 316:

[31] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 42: Ե. Իշխանյանը, որ մոտիկից ճանաչում էր Միք. Պարոնյանին, իր հուշապատում-օրագրում հետաքրքրական տեղեկություններ է թողել նրա մասին: «Դոկտոր Միքայէլ Պարոնեանը,- գրում է Ե. Իշխանյանը,- որը ոչ միայն Գորիսի և շրջանի, այլև ամբողջ գաւառում հայերի կողմից ճանաչած ու մեծապէս յարգւած անձնաւորութիւն էր, թէ իբրև բարեխիղճ բժիշկ և թէ իբրև լաւ մարդ, մեծ հեղինակութիւն էր վայելում: Բժիշկենց տունը յայտնի էր իր հիւրասիրութեամբ, անկախ նրանից, թէ սեղանի շուրջը ինչ ազգութեան մարդ է նստած: Մեծահարուստ չէին, բայց հոգով հարուստ մարդիկ էին տան անդամները: Հայրը վախճանւած էր, սակայն մայրը սմուսնու փոխարէն շարունակում էր պահպանել արմատացած իրենց տան մեծութիւնը, և բոլորը, որոնք մնում էին այդ տան յարկի տակ, մեծ յարգանք էին տածում նրա հանդէպ» (**Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 493):

տեղ որոշվում է՝ խորհրդին կից ստեղծել հինգ հոգուց բաղկացած ռազմական գլխավոր շտաբ: Ժողովը միահամուռ գերագույն զինվորական հրամանատար է ընտրում Անդրանիկին[32]: Օգոստոսի 30-ին Հարվածող զորամասը ժամանակավորապես հաստատվում է Սիսիանի Անգեղակոթ գյուղում: Նույն գյուղում Սիսիանի 14 գյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ սեպտեմբերի 12-ին հրավիրված ժողովում միաձայն որոշվում է՝ «...ոչ մի կերպ չհամակերպվել Ադրբեջանի կամ թուրք իշխանության զինաթափության հնարավոր առաջարկին և դիմադրություն ցույց տալ մինչև վերջ: Հետևաբար, խնդրել գեներալ-մայոր Անդրանիկին, որ իր և մյուս զորամասերը մնան Սիսիան կամ այն շրջանները, որոնք զինվորական տեսակետով հարմար կը նկատվեն զինվորական իշխանությունների կողմից»[33]: Անգեղակոթի ժողովից անմիջապես հետո Անդրանիկը ձեռնամուխ եղավ ինչպես զորամասի շարքերի վերակազմության, այնպես էլ տեղական զինված ուժերի թվի ավելացման ու մարտունակության բարձրացման, շրջանի պաշտպանության ամրապնդման գործին[34]: Տեղական ռազմական ուժերի ստեղծումից հետո Սիսիանի նորաստեղծ գումարտակի հրամանատար է նշանակվում նախիջևանցի սպա, շտաբս-կապիտան Հայկ Գրիգորյանը, որն ըստ Շուշիի գնդի կոմիսար Հովակ Ստեփանյանի՝ «...բարեխիղճ եւ քաջ սպայ էր»[35]:

---

[32] Տե՛ս **Ստեփանեան Յ.**, Արցախեան կամ Շուշուայ գնդի պատմութիւնը. «Հայրենիք», Պոսթըն, 1935, ԺԳ տարի, մարտ, № 5, էջ 86, տե՛ս նաև **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921, էջ 80:

[33] **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը: Գիրք Բ, էջ 359–360:

[34] Տե՛ս նույն տեղում, էջ 362–364:

[35] **Ստեփանեան Յ.**, Անդրանիկը Սիւնեաց երկրում. «Վէմ». Փարիզ, 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 64:

Անդրանիկը օգոստոսի վերջերից մինչև սեպտեմբերի վերջերը Սիսիանի շրջանում համառ կռիվներ մղեց և սանձահարեց ռազմատենչ ավազակություններով ու կողոպուտներով աչքի ընկած թաթարաբնակ Աղիտու, Վաղատին, Որոտն (տարբ.՝ Ուրուտ), Շաքի, Օրթաքյուզ (հնում՝ Սապատաձոր՞), Ջոմարդլու (հնում՝ Թանահատ) և այլ գյուղերում տեղակայված մուսավաթական հրոսակախմբերին, ինչպես նաև արևելքից թուրք սպաների գլխավորությամբ Զանգեզուր ներխուժող թուրք-մուսավաթական զորքերի դեմ՝ կասեցնելով նրանց մուտքը երկրամաս[36]:

Գորիսի շրջանից թշնամու՝ սպասվելիք լայնածավալ գործողությունները հետ մղելու նպատակով Անգեղակոթում գտնվող Անդրանիկը անսալով Զանգեզուրի կենտրոնական Ազգային խորհրդի դիմում-խնդրանքներին[37], որոշեց հետ դառնալ Գորիս: Մեկնելուց առաջ Անդրանիկը սեպտեմբերի 27(14)-ին հետևյալ շրջաբերական հրամանն ուղարկեց Սիսիանի շրջանային և գյուղական կոմիսարներին, շրջանի ազգաբնակչությանը. «(Բուն) Զանգեզուրի ազգաբնակչության և թե գործի պահանջմամբ հայ[կական] առանձին հարուածող զորամասը վաղը կը շարժվի դեպի Գորիս: Զորամասի բացակայութիւնը Սիսիանի սահմաններէն ժամանակաւոր է: Շրջանի մեջ ինքնապաշտպանութեան համար սկսուած գործը պետք է շարունակել ու գլուխ հանել: Հետևաբար իմ բացակայութեան տեղի գործերը պիտի վարե

---

[36] Մանրամասն տե՛ս **Ստեփանեան Ց.**, Անդրանիկը Սիւնեաց երկրում, «Վէմ», Փարիզ, 1936, Դ տարի, թիւ 4, յուլիս-հոկտեմբեր, էջ 62–63: **Չէլեպեան Ա.**, Զորավար Անդրանիկ և Հայ յեղափոխական շարժումը (կենսագրական ակնարկ), Երեւան, 1990, էջ 522: **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը: Գիրք Բ, էջ 334–336: **Սիմոնյան Ա.**, Անդրանիկի ղեկավարությամբ Սիսիանում մղված կռիվներն ընդդեմ թուրքերի և ադրբեջանցիների (1918 թ. օգոստոս-սեպտեմբեր), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2005, № 2, էջ 27–36:

[37] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 390:

Սիսիանի Ազգային խորհուրդը և աղյուտանտ Հայկ Գրիգորեանը: Հայտնում եմ, որ բոլոր անոնք, որոնք չեն ենթարկուիր այդ իշխանութեան հրամաններուն, կենթարկուին մահապատժի»[38]: Սեպտեմբերի 29-ին Անդրանիկն արդեն Գորիսում էր:

Ահա այս դժվարին կացությունն էր տիրում Զանգեզուրում, երբ Պ. Տեր-Դավթյանը նշանակվում է Սիսիանում տեղակայված ինքնապաշտպանական զորամասի ընդհանուր հրամանատար[39] (տեղակալն էր Կապանի Ագարակ գյուղից շտաբս-կապիտան Սմբատ Թորոսյանը[40], համիարզը՝ 1908 թ. ցարական բանակի սպա, Բաշ-Ապարանի հերոսամարտի (1918 թ. մայիսի 23-29) մասնակից բռնակոթցի Երվանդ Աղայանը)[41], փոխարինելով շտաբս-կապիտան Հ. Գրիգորյանին:

Տեղին է նշել, որ Պ. Տեր-Դավթյանին հրամանատար նշանակելու հարցում անտարակույս հաշվի է առնվել հատկապես

---

[38] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921, էջ 135:

[39] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 6:

[40] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921, էջ 1005, տե՛ս նաև **Սմբատյան Գ.**, Սյունիք. Պատմություն և հիշողություն, էջ 256: Ս. Թորոսյանը ծնվել է 1889 թ. մայիսի 20-ին երկրագործ Փիրիջանի ընտանիքում: 1909 թ. ավարտել է Գևորգյան հոգևոր ճեմարանը: Որպես ուսուցիչ աշխատել է Էջմիածնում և հայրենի Ագարակի ու Առաջաձորի դպրոցներում: Ավարտելով Թիֆլիսի ռազմական դպրոցը, կապիտանի կոչումով 1915 թ. զորակոչվել է ռազմաճակատ: 1921 թ. հունիսին անցել է Պարսկաստան ու երեք ամիս անց վերադարձել: Նա միանգամից չի հանձնվել իշխանություններին. թաքնվել է անտառներում, հետո ձերբակալվել տանը՝ Պետքաղվարչության կողմից: Լուսավորության ժողկոմատի միջնորդությամբ երկու ամիս անց ազատվում է և ուսուցչական աշխատանքի նշանակվում Ագարակ գյուղի դպրոցում: 1930 թ. փետրվարի 6-ին Ս. Թորոսյանը ձերբակալվում է և տեղափոխվում Երևանի բանտ: Հիմնական մեղադրանքներն էին՝ ցարական բանակի նախկին սպա և դաշնակցական բանակի հրամանատար լինելը, Խորհրդային իշխանության վերացումը հետապնդող գործողությունը: Ս. Թորոսյանը աքսորավայրից վերադարձել է քայքայված առողջությամբ, մահկանացուն կնքել է 1935 թ.: Հանգչում է ծննդավայրի գերեզմանատանը (տե՛ս **Սմբատյան Գ.**, Երկաթե վարագույրից այս կողմ, Երևան, 2009, էջ 191–193, տե՛ս նաև **նույնի՝** Սյունիք. Պատմություն և հիշողություն, էջ 282–287):

[41] Տե՛ս **Առաքելյան Հ.**, Բռնակոթ, Երևան, 2017, էջ 92:

Անդրանիկ Օզանյանի կարծիքը: Հարկավ, Պ. Տեր-Դավթյանը, ով մեծ հարգանք էր տածում իր նախկին հրամանատարի հանդեպ, Զանգեզուր վերադառնալուց անմիջապես հետո կապ էր հաստատել նրա հետ, և մոտիկից իրազեկվել գավառի պաշտպանության կազմակերպման խնդիրներին: Պ. Տեր-Դավթյանի եղբոր՝ Հայրապետի որդու՝ Քրիստափոր Սողոմոնյանի 1975 թ. հեղինակած «Անմահության ճամփաներով» վերտառությամբ փաստագրական հուշագրության մեջ ասվում է, որ Պ. Տեր-Դավթյանին հրամանատարի պաշտոնում նշանակմանը հավանություն էր տվել հենց Անդրանիկը: «Զորավար Անդրանիկի գլխավոր հոգսը այն էր,- գրում է Ք. Սողոմոնյանը,- թէ ում պետք է հանձնվի Սիսիանի շրջանի ինքնապաշտպանության ղեկավարությունը, նրա հավանությանը արժանացավ Պողոսի նշանակվելը, որին հայտնի է Դիլմանի ճակատամարտում ցուցաբերած քաջագործությունները»[42]:

Սկզբից ևեթ նշենք, որ Պ. Տեր-Դավթյանը, երբ ստանձնեց Սիսիանի ինքնապաշտպանական զորամասի հրամանատարի խիստ պատասխանատու պաշտոնը, նոր պայմաններում երևան եկան նաև նրա՝ իրավիճակի արագ փոփոխությունների ոլորտում ճիշտ կողմնորոշվող, իրատես պետական-քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները: Իր հարուստ կենսափորձով իմաստնացած վճռականությամբ ու խիզախությամբ Պ. Տեր-Դավթյանը նվիրվում է հայրենի եզերքի պաշտպանության սրբազան գործին, ջանք ու եռանդ չխնայելով ամրապնդելու շրջանի սահմանները՝ ամուր կապ պահպանելով Անդրանիկի

---

[42] **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 6:

հետ: Զորամասի զորակայանը տեղակայված էր Բռնակոթ գյուղում[43]:

Ի թիվս բազում դժվարությունների, տարաբնույթ կազմակերպչական աշխատանքներից (դասալքության դեմ պայքար, կյանքի և գույքի ապահովություն, իրավակարգի, ամուր իշխանության հաստատում և այլն), Պ. Տեր-Դավթյանին առավել մտահոգող հարցը եղել և մնում էր իրեն վստահված շրջանի սահմանների և հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության ու անվտանգության կազմակերպումը: Տասնամյակներ շարունակ, հատկապես 1905–1906 թթ., հակահայկական կեցվածք որդեգրած տեղի թաթարական գյուղերի հրոսակախմբերն ու ավազակախմբերը ավարառության նպատակով հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա: Հայ բնակչության անվտանգությունը կազմակերպելու նպատակով Պ. Տեր-Դավթյանը շարունակելով Անդրանիկի՝ ինքնապաշտպանության առումով ձեռնարկած աշխատանքները, հրավիրում է սպայական կազմի խորհրդակցություն և գոտեպնդում նրանց օրհասական պայքարի համար: Խորհրդակցությունում քննարկման են դրվում հետևյալ հարցերը. «1) Ռազմական գործին գիտակ կադրերի առկայության, 2) հարձակման համար ելման դիրքերի և պաշտպանության համար բնագծերի ընտրություն, 3) ռազմական տեխնիկայի, զենքի ու զինամթերքի նպատակասլաց բաշխում, 4) ռեզերվների ստեղծում, 5) բարձր պետերի հրամաններն ու կարգադրությունները ժամանակին կատարողներին հասցնելու, կապի միջոցների ապահովում, 6) հանդերձի ու պարենի հայթայթում, 7) տրանսպորտի միջոցների մոբիլիզացում, 8) հետախու-

---

[43] Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 92, 104:

զության լավ կազմակերպում և այլն»[44]: Ի կատարումն խորհրդակցությունում քննարկված վերոհիշյալ հարցերի՝ Պ. Տեր-Դավթյանը ժամանակին հասցնում է ճիշտ բաշխել զինական բոլոր ուժերը, ստեղծել պահեստային ջոկատներ, կուտակել բավարար քանակությամբ զենք ու զինամթերք, կարգավորել հաղորդակցության ուղիները տարբեր գյուղերի միջև և այլն:

Պ. Տեր-Դավթյանի ժամանումով զորահավաքի ու մարտական խմբեր կազմավորելու գործընթացն ավելի է արագացվում: Նա մշտապես շրջագայում էր գավառի բազմաթիվ բնակավայրերում և գործուն կերպով մասնակցում զորահավաքի և ինքնապաշտպանության կազմակերպմանը: Հերոսամարտը պահանջում էր նվիրվածություն, անձնազոհություն և զոհաբերություն: Եվ սիսիանցիները սիրով էին կատարում այդ բոլորը: Նրանք լարեցին իրենց վերջին ուժերը, գործի դրեցին մարտական ողջ կարողությունները, ամբողջ եռանդը և ցուցաբերելով գերազանց կազմակերպվածություն ու կարգապահություն, կարողացան ոչ միայն պաշտպանվել, այլև հակահարված հասցնել ու հետ շպրտել հակառակորդին: Դիմելով գործնական քայլերի՝ Պ. Տեր-Դավթյանին հաջողվում է կարճ ժամանակում զորամասը համալրել նաև հիմնականում գյուղացիներից կազմված աշխարհազորայիներով, ինչպես նաև կամավորներից կազմել 300 հոգանոց հեծելախումբ[45]: Առաջին հերթին զենք վերցրին նրանք, ովքեր մասնակցել էին Առաջին աշխարհամարտին և մարտ վարելու փորձ ունեին: Պ. Տեր-Դավթյանն աշխատում էր լավ վարժեցնել իր զինվորներին, որպեսզի քիչ կորուստներով կարողանար լուծել շրջանի ինքնապաշտպանությունը;

---

[44] **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 7:

[45] **Տե՛ս Իշխանեան Ե.**, Լեռնային Դարաբաղ (1917–1920), էջ 673:

Պ. Տեր-Դավթյանն աչքի է ընկել իր համեստությամբ: Նրա մարդկային գրավչության գաղտնիքն առաջին հերթին անմիջական, դյուրազգաց, պարզ ու շիտակ բնավորության մեջ էր: Իր ողջ կյանքի ընթացքում նա դրսևորեց շատ քչերին միայն տրված այն հատկությունը, որ հմայք է կոչվում: Կենսախինդ, խոսքաշեն, առինքնող երիտասարդը և՛ ինքն էր ձգտում դեպի մարդիկ, և՛ մարդկանց էր ձգում դեպի իրեն: Ենթական զինվորների հետ վարվում էր եղբայրաբար և ընկերաբար: Նրա բնավորության գլխավոր հատկանիշներից մեկն էլ պարզությունը և համեստությունն էր: Ժողովրդի հետ իր հանդիպումների ժամանակ նրա առաջին պահանջն էր՝ լինել միածույլ և ապա կարևորում էր ինքնապաշտպանության անհետաձգելի պահանջը: Պատահական չէ, որ Զանգեզուրի հերոսամարտի օրերին նա դարձավ բոլորի սիրելին: Նա պաշտված ու սիրված «կուռք» էր իր անունով և հմայքով: Այս առումով Պ. Տեր-Դավթյանի մարդկային նկարագրի համար խիստ բնութագրական են նրա զինակից և գաղափարական ընկեր Ե. Իշխանյանի հուշապատում-օրագրում տեղ գտած հետևյալ տողերը. «Ի դէպ, չէ թէ միայն Սիսիանում, այլև Զանգեզուրի ամբողջ գաւառում Պօղոսը ճանաչած էր Պարոն Պարուչիկ անունով, մասնավորապէս Սիսիանում անգամ երեխաները այդ անունով էին ճանաչում: Պարոն Պարուչիկ կասէին գիւղացիները հետը խօսելիս, և իր մասին միմեանց հետ խօսելիս՝ դարձեալ Պարոն Պարուչիկ, որի խօսքը օրէնք է իրենց համար»[46]: Այսպիսինն էր Պ. Տեր-Դավթյանը:

Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում Սիսիանում տեղակայված մարտական ուժերը կռիվներ են մղել ոչ միայն տեղի, այլև Նախիջևանի և Շարուրի ուղղություններից գավառի

[46] Նույն տեղում, էջ 670:

տարածք ներխուժելու փորձ անող թուրք-մուսավաթական հրոսակախմբերի դեմ: Այս առումով Սիսիանը յուրօրինակ պաշտպանական վահանի դեր էր ծառայում Սյունյաց մնացյալ բնակավայրերի համար: Պ. Տեր-Դավթյանը լավագույնս օգտագործելով իրեն վստահված շտաբի պետի պաշտոնը և գյուղերի մարտական խմբերի ուժերի կարողությունները, խիստ հետևողական պայքար է ծավալում շրջանի տարածքում հայտնված այդ հրոսակախմբերի դեմ:

Պ. Տեր-Դավթյանի առաջին լուրջ ընդհարումը թուրք-մուսավաթական հրոսակների հետ տեղի ունեցավ 1918 թ. դեկտեմբերի սկզբներին, երբ վերջիններս ղեկավարվելով Նախիջևանի և Շարուրի խաների հրահանգներով փորձեցին Նախիջևանի կողմից մեծաթիվ զորամասով ներխուժել Սիսիանի տարածք: Թշնամու առաջխաղացման լուրը Պ. Տեր-Դավթյանին է հասցնում Շաղատ գյուղի ծխատեր քահանա Տեր Կարապետը: Արագ կողմնորոշվելով, Պ. Տեր-Դավթյանը հեծելազորային և հետևակային ջոկատները բաժանում է երեք մասի և Սալվարդ սարի փեշերին տարբեր ուղղություններից անակնկալ ու շեշտակի հարվածներ հասցնում թշնամուն: Սկսվում է թեժ մարտ: Որոշ տեղերում թշնամու գնդակները թափվում էին կարկուտի նման և ծուխ ու վառոդի հոտը լցնում հայկական դիրքերը: Բայց հայերը կանգնած էին իրենց դիրքերում կայուն ու անսասան և պատասխանում էին թշնամուն պատշաճ հակահարվածներով: Անցնելով հակագրոհի՝ Պ. Տեր-Դավթյանի հմուտ մարտավարության համաձայն՝ մի ջոկատը մտնում է թշնամու թիկունքը, թևերից գրոհում են հեծյալները, իսկ կենտրոնից՝ աշխարհազորայինները: Հարձակումն այնքան հանդուգն էր, որ հակառակորդը ուշքի

չգալով ընկնում է ծուղակի մեջ և մի քանի ժամ տևած մարտում մեծաթիվ զոհեր տալով, խուճապահար դիմում է փախուստի[47]:

Այս հաղթական կռիվներում հյուսվեց Պողոս Տեր-Դավթյանի լեգենդը: Մովդենից սկսած շարունակվում էր նրա մարտական փառավոր ուղին և հերոսապատումի շարքը: Պատահական չէ, որ այդ օրերին նա իր գործունեությամբ նվաճում է սիսիանցիների անհուն սերն ու հարգանքը, դառնալով նրանց ամենանվիրական անուններից մեկը: Նա առավել հայտնի դարձավ «Քաջ Պողոս» անունով, մեծ ճանաչում և հեղինակություն ձեռք բերելով ողջ Սյունիքում[48]: Նրա անվան շուրջ սկսեցին պտտվել լեգենդներ: Ինչպես վկայում է Ե. Իշխանյանը, Պ. Տեր-Դավթյանը դարձավ «...Սիսիանի հերոս ղեկավարը և ժողովրդի անվերապահ յարգանքն ու սէրը վայելող անձնուէր մարդը...»[49]:

Պ. Տեր-Դավթյանի ռազմական հետագա համագործակցությունը սերտորեն առնչվում է Անդրանիկի՝ Զանգեզուրից հեռանալուց հետո 1919 թ. մարտի 6-ից նրան փոխարինած Հայաստանի կառավարության կողմից Զանգեզուրի և Արցախի պետական կոմիսար նշանակված շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանի[50] հետ, որը համատեղում էր նաև զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը[51]:

---

[47] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 7–8, տե՛ս նաև՝ **Թևոսյան Ք.**, Նժդեհի հետ կռոք-կռոքի (Պողոս-ՏերԴավթյան), «Երեկոյան Երևան», Երևան, 1990, հուլիսի 9, № 151, տե՛ս նաև՝ **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 96:

[48] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 14:

[49] **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 666:

[50] **Աշխատունի Զ. [Զաքար Յոյան]**, Արսէն Շահմազեան, «Ալիք», Թեհրան, 1949, օգոստոսի 23, № 185, էջ 1–2): ՀՅԴ անդամ, տաղանդաշատ զինվորական և պետական գործիչ Արսեն Պողոսի (Պավել) Շահմազյանը ծնվել է 1883 թ. հունվարի 7-ին՝ Ախալքալաքում: 1903 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (տե՛ս Армяне в Первой мировой войне (1914–1918 гг.). Сборник документов, глав. ред. I части **А. Вирабян**, Москва, էջ 553): Մասնագիտությամբ եղել է նկարիչ-խեցեգործ (տե՛ս Գեղարուեստ, Թիֆլիս, 1921, № 7: IV. Պատկերահանդէս, Ա. Շահմազեան (Կերա-

միկս)): Ռուսական առաջին հեղափոխության շրջանում «Մինգրելեան գնդի զինուորական կազմակերպութեան մանիֆեստացիայի կազմակերպման» մեղադրանքով 1905 թ. ձերբակալվում է, և տակավին բանտում գտնվելու ժամանակ, օգոստոսի 29-ին, ստանում սպայական աստիճան: Հայ-թաթարական ընդհարումների շրջանում գործել է Գանձակում և Զանգեզուրում: Կռիվների ավարտից հետո զբաղվել է մանկավարժությամբ. նկարչություն և ձեռարվեստ է դասավանդել Ներսիսյան դպրոցում: 1907 թ. ձերբակալվել է ցարական իշխանությունների կողմից (տե՛ս նույն տեղում): Ազատվելուց հետո շարունակել է դասավանդել Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում (տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 2, ց. 1, գ. 1820, թ. 12): 1909 թ. «Դաշնակցության գործով» կրկին ձերբակալվում է և 9-ամսյա բանտարկությունից հետո աքսորվում Սիբիր: Աքսորից վերադարձել է 1912 թ. և ապրել համեստ կյանքով: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Քեռիի ջոկատի 2-րդ վաշտի հրամանատարը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 50, թ. 81): Աչքի է ընկել Վանա լճի հարավային շրջանները թուրքական կանոնավոր զորքերից և քրդերից մաքրելու գործողություններում: 1915 թ. մայիսին Ոստանի շուրջ տեղի ունեցած մարտերում ցուցաբերած արիության համար պարգևատրվել է Սուրբ Գեորգիի խաչ 4-րդ աստիճանի շքանշանով (տե՛ս Армяне в Первой мировой войне (1914–1918 гг.), с. 554): 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո մասնակցել է Պետրոգրադի Զինվորական համագումարի աշխատանքներին: Վերադառնալով Պետրոգրադից՝ իր շուրջն է համախմբել մի շարք հայ սպաների և Թիֆլիսում հիմնել «Հայկական զինվորական միություն»-ը և ընտրվել նրա նախագահը: Միությունը Նիկոլ Աղբալյանի խմբագրությամբ հրատարակել է «Ռազմիկ» շաբաթաթերթը (տե՛ս «Ռազմիկ», Թիֆլիս, 1917, նոյեմբերի 20. № 1, տե՛ս նաև Գ. Արտ., Հայ զինուոր[ական] միութեան նախագահը. «Հորիզոն», Թիֆլիս, 1917, նոյեմբերի 19, № 248: Ա. Շահմազյանն ակտիվորեն մասնակցել է Հայկական կորպուսի ստեղծման աշխատանքներին (տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 58): Միության կողմից որպես պատգամավոր մասնակցել է 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում հրավիրված Հայոց ազգային համախորհրդակցության աշխատանքներին: Եղել է «Ճակատի պահպանության և վտանգված վայրերի ապահովության շուրջ» սեկցիայի անդամ (Հայոց ազգային համախորհրդակցությունը: Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր: Փաստաթղթեր ու նյութեր: Կազմողներ՝ **Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան**, խմբագիր՝ **Վ. Ղազախեցյան**, ԲՀԱ. Երևան, 1992, № 1–2, էջ 105, 112): ՀՀ կառավարության կողմից 1919 թ. մարտի 6-ին շտաբս-կապիտանի աստիճանով նշանակվել է Զանգեզուր-Ղարաբաղի նահանգական կոմիսար: Այդ պաշտոնը վարել է մինչև նույն թվականի նոյեմբերի 9-ը (տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 539): ՀՀ նախարարների խորհուրդը 1919 թ. դեկտեմբերի 10-ին շնորհել է գնդապետի աստիճան (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, թ. 122): 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ժամանակ եղել է Ալեքսանդրապոլի կայազորի պետը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո գնդապետ Ա. Շահմազյանը 1921 թ. ձերբակալվել է բոլշևիկների կողմից, նստել Մետեխի բանտում, այնուհետև աքսորվել Ռուսաստան: 1935 թ. բնակվել է Օրյոլ քաղաքում և որպես բանվոր աշխատել աղյուսի գործարանում: 1937 թ. կրկին ձերբակալվել է և դատապարտվել 3 տարվա ազատազրկման. նստել է Կրասնոյարսկի երկրամասի վարչական կենտրոն Տուրուխանսկի բանտում: Բանտային հալածանքների պատճառով ստացել է

Լայն իրավունքներով օժտված Շահմազյանը Գորիս հասավ մարտի 10-ին և անմիջապես ձեռնամուխ եղավ տեղական ուժերով կանոնավոր զորամասերի վերակազմավորմանը՝ մուսավաթական Ադրբեջանի հետագա ոտնձգություններից Զանգեզուրն ու Արցախը պաշտպանելու համար[52]: Այսպես, ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար Շրջանային խորհրդի անդամներից կազմվեց Զինվորական խորհուրդ, իսկ սպաներից՝ գլխավոր սպայակույտ, որտեղ ակտիվ դերակատարություն ստանձնեց նաև Պ. Տեր-Դավթյանը: Շրջաններում նշանակվեցին զինվորական հրամանատարներ: Հաշվի առնելով Զանգեզուրում՝ Սիսիանի շրջանում Պ. Տեր-Դավթյանի 1918 թ. հոկտեմբերից ռազմական գործողությունների բացառիկ նշանակությունը և ցուցաբերած քաջությունը, նրան վերանշանակում են Սիսիանի զորամասի ընդհանուր հրամանատար[53]: Տեղակալն էր շտաբս-կապիտան Ս. Թորոսյանը[54]: «Այս երկու հերոս զինուորականները,- գրում է ազգային գործիչ, ՀՅԴ Զանգեզուրի «Սյու-

---

հոգեկան խանգարում: Գնդակահարվել է 1937 թ. (տե՛ս **Ստեմել [Ստեփան Մելիք-Փարսադանյան]**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, «Հայրենիք», Պոսթըն. 1963, ԽԱ տարի, փետրուար, № 2, էջ 29–36), տե՛ս նաև՝ **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի զոյամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000, էջ 614, տե՛ս նաև՝ **Туманян М.**, Дипломатическая история Республики Армения 1918–1920 гг., Ереван, 2012, с. 460, տե՛ս նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918–1920 թթ. (ժողովածու): Գլխավոր խմբագիր և կազմող՝ **Ա. Վիրաբյան**, կազմողներ՝ **Ս. Միրզոյան, Գ. Մանուկյան**, Երևան, 2014, էջ 611):

[51] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն, Գ հրատ., Թեհրան, 1982, էջ 331:

[52] Տե՛ս **Ստեմել [Ստեփան Մելիք-Փարսադանյան]**. Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, «Հայրենիք», Պոսթըն, 1963, ԽԱ տարի, փետրուար, № 2, էջ 29:

[53] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև՝ **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 331:

[54] Տե՛ս **Ստեմել [Ստեփան Մելիք-Փարսադանյան]**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, «Հայրենիք», Պոսթըն, 1963, ԽԱ տարի, փետրուար, № 2, էջ 29:

նիք» ենթակոմիտեի, ապա Կ. Կոմիտեի անդամ Ստեփան Մելիք-Փարսադանյանը (Ստեմել),- Ղափանի շրջանի՝ Վերին Խոտանանի և Հագարակ գիւղերի զաւակներն էին եւ իրենց կեանքը տուին իրենց պաշտած հայրենիքի ազատագրման գաղափարին»[55]: Այդ շրջանում Պ. Տեր-Դավթյանի օգնականն էր, նրա աջ բազուկ՝ սիսիանցի ածդահա Զաքար Տեր-Զաքարյանը (Զաքո)[56]:

Զանգեզուրի համար վճռական այդ օրերին, 1919 թ. մարտի 31-ին Գորիսում հրավիրված համազանգեզուրյան համագումարում Զանգեզուրի Ազգային խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը և Ազգային խորհուրդը վերանվանվեց Զանգեզուր–Ղարաբաղի միացյալ շրջանային խորհուրդ: Նախագահ ընտրվեց Մուշեղ Զաքարյանը (Սիսիանի շրջանից), փոխնախագահ՝ Արշակ Շիրինյան[57] (Գորիսի շրջանից)[58]: 1919 թ. հունիսից խորհուրդը նախագահում էր Ա. Շիրինյանը[59]:

---

[55] Նույն տեղում:

[56] Տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 673:

[57] Արշակ Հայրապետի Շիրինյանը ծնվել է 1881 թ. հունիսի 14-ին՝ Շինուհայր գյուղում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 373, թ. 27–28): 1899–1900 թթ. ուս. տարում սովորել է Շուշիի թեմական դպրոցում (տե՛ս Առաքելեան Հ., Ղարաբաղի Հայոց հոգեւոր թեմական դպրեւոցի 75-ամեակը, էջ 40): 1901–1903 թթ. կրթությունը շարունակել է Լայպցիգի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետում՝ անասնաբույժի մասնագիտությամբ: Ուսանելու տարիներին մասնագիտական բնույթի հոդվածներով թղթակցել է Թիֆլիսում լույս տեսնող «Առողջապահիկ թերթ» կիսամսյա ամսագրին (տե՛ս **Շիրինեան Ա.**, Ընտանի կենդանիների առողջապահութիւնը (Ա), «Առողջապահիկ թերթ», Թիֆլիզ, 1903, նոյեմբերի 1, № 3, էջ 66–68; (Բ), նոյեմբերի 15, № 4, էջ 89–93; (Գ), 1904, յունուարի 1, № 7, էջ 161–164): Հայրենիք վերադառնալով՝ ՀՅԴ-ին անդամագրված Ա. Շիրինյանը եղել է Զանգեզուրի ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից: 1919 թ. հունիսին ընտրվել է Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամ: Եղել է Զանգեզուրի Կենտրոնական Ազգային խորհրդի անդամ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թ. 42): 1920 թ. հուլիսի վերջերին, երբ Դրաստամատ Կանայանի ուժերն անցան հարձակման և օգոստոսի 3-ին ազատագրեցին Գորիսը, բոլշևիկները, նահանջից առաջ, Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) դատախազ Արամ Մուսայելյանի և միլիցիապետ Մկրտիչ (Մակիչ) Մաշուրյանի գլխավորությամբ, 10 զինվորներով Շինուհայր գյուղում դավաղրաբար ձերբակալում են պառլամենտի անդամներ Ա. Շիրինյանին և Վահան Տեր-Գևորգյանին (Վահան Խորենի) և Ա. Ղարագյոզյանի կարգադրությամբ օգոստոսի 2-ին՝ առավոտյան

Ի հակադրության Զանգեզուր-Ղարաբաղի միացյալ շրջանային խորհրդի, Բաքվից մուսավաթական Ադրբեջանի շահերը սպասարկող անգլիական հրամանատրությունը, հանձին՝ Դ.Շատլվորթի, հայտնեց, որ Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումով Խոսրով-բեկ Սուլթանովը նշանակված է Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր գավառապետ և վայելում է անգլիական հրամանատարության աջակցությունը[60]: Այս հայտարարությունը հանդիպեց ինչպես Հայաստանի կառավարության, այնպես էլ զանգեզուրցիների և արցախցիների դիմադրությանը: Անգլիացիների բացահայտ հակահայկական

---

ժամը 5-ին, Գորիսի բանտում անմարդկային տանջանքների ենթարկելուց հետո սպանում: Այդ օրը գնդակահարվում են նաև՝ ՀՅԴ անդամներ Զաքար Տեր-Ղազարյանը և Միքայել Աղամյանը (տե՛ս «Ցառաջ», Երևան, 1920. օգոստոսի 10. № 169, տե՛ս նաև՝ օգոստոսի 15. № 174, տե՛ս նաև՝ օգոստոսի 19, № 177, տե՛ս նաև՝ «Բանբեր». Թիֆլիս, 1920. Ա տարի, հոկտեմբեր. № 1. էջ 62–63): Բոլշևիկների քստմնելի այդ արարքը բողոքի ալիք է բարձրացրել հայ հասարակության մեջ: Դեպքերի ժամանակակից Արտեմ Խանզադյանն իր հուշերում գրում է. «Արշակ Շիրինեանին. Վահան Խորէնուն եւ սիսեանցի խմբապետ Զաքոյին, 1920 թի յուլիս ամսի վերջին. Գորիսի բանտի մէջ ազգուրաց բոլշեւիկացած մի քանի հայ երիտասարդներ գիշերով մտնում են բանտը, Արմենակ Ղարագոզեանի կարգադրութեամբը կամերի դուռը բացում. Խորէնուն եւ Զաքոյին (իմա՛ Զաքար Տեր-Ղազարյանին – Գ.Ս.) գնդակահարում. իսկ Շիրինեանին նախ սրով ծակծկում են, չարչարում, մէկ թեւը սրով կտրում եւ յետոյ գնդակահարում: Զորսին միատեղ տանում են բանտի մօտիկ ռուսական գերեզմանատան դրաղին մէկ փոսի մէջ թափում եւ հողով ծածկում: Ապստամբութեան օրերին, երբ բոլշեւիկների հետքը կտրուեց Զանգեզուրից, մի քանի հոգով այցի գնացինք Շիրինեանի գերեզմանին. Դրօն էր, բժ. Պարոնեանը, Նիկոլայ Յուսէփեանը, Յակոբ Մաշուրեանը եւ այլ մարդիկ: Հողերը գերեզմանի վրայից մաքրելով. տեսանք չորսին էլ իրար վրայ թափված: Շիրինեանի ձախ թեւը կտրուած էր. նկարները վերցրին. ուՀմ մօտ մնաց ինչ եղաւ, չիմացայ» (**Զանգեզուրցի Ա. [Արտեմ Խանզադյան]**, Դաշնակցութեան մուտքն ու աշխատանքը Զանգեզուրում (Կազմակերպիչ ընկերները ինչպիսի վախճանի արժանացան). «Այիք». Թեհրան. 1979, հունիսի 10, № 118, էջ 4, տե՛ս նաև՝ Սյունիքի հայրենապաշտ զավակ Արշակ Շիրինյան: Կազմեց՝ **Ռ. Հակոբյան**, Երևան, 2007):

[58] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 331, տե՛ս նաև՝ **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 253–254:

[59] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 279:

[60] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 11:

դիրքորոշումը հայատյաց Սուլթանովին դարձրել էին ավելի լկտի:

Չնայած բոլոր սպառնալիքներին, կանխազգալով դեպքերի հետագա ընթացքը, Ա. Շահմազյանի հրահանգով սկսվեց զինված նոր ջոկատների կազմակերպումը՝ թուրք-մուսավաթականների սպասվող հարձակումներից պաշտպանվելու համար: Գահավեժ արագությամբ զարգանում էին դեպքերը: 1919 թ. ապրիլից թուրք-մուսավաթական մեծաթիվ ուժերն իրենց հարձակումները վերսկսեցին Զանգեզուրի դեմ: Շրջափակման դժվարագույն պայմաններում լեռնաշխարհի զինված ուժերը ամռան ամիսներին ինքնապաշտպանական կատաղի մարտեր մղեցին թշնամու դեմ:

Թուրք-թաթար հրոսակախմբերը հարձակումներ էին գործում նաև Վայոց ձորի հայկական գյուղերի վրա: Դարալագյազի Ղուշչի Բիլակ[61] գյուղը գրավելու նպատակով 2000 հոգուց բաղկացած հրոսակախմբի հերթական հարձակումը տեղի ունեցավ 1919 թ. օգոստոսի 11-ի լուսաբացին[62]: Երևան մեկնելու առիթով այդտեղ հանգրվանած Ե. Իշխանյանը սուրհանդակի միջոցով օգնության ակնկալիքով դիմում է Սիսիանի ուժերի հրամանատար Պ. Տեր-Դավթյանին: Մինչ օգնական ուժերը կհասնեին, գյուղի աշխարհազորայինները 110 հոգով դիմում են ինքնապաշտպանության: Գյուղից շուրջ 2–3 հարյուր մետր հեռավորության վրա ծավալված թեժ մարտերում թշնամին չդիմանալով ինքնապաշտպանների հուժկու գրոհներին՝ մեծաթիվ կորուստներ տալով հաջորդ օրը նահանջում է[63]: Պ. Տեր-Դավթյանը Ղուշչի Բիլակ է հասնում միայն հաջորդ օրը, երբ արդեն մարտը

---

[61] 1946 թ.՝ Կեչուտ (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1991, էջ 494):

[62] Տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 499:

վերջացել էր: Ուշացման պատճառն այն էր, որ սուրհանդակը շատ ուշ էր գտել Պ. Տեր-Դավթյանին: Ինչպես վկայում է Ե. Իշխանյանը. «...գալիս է տեղակալ Պօղոս Տէր Դաւթեանը՝ Սիսիեանի հերոս հրամանատարը, մի տասնեակ ձիաւորներով: Պօղոսը ախ է քաշում և անիծում չար բախտը, որ միանգամայն երես է դարձրել մեզնից: Այո, չար բախտի պատճառով էր, յարմար առիթ էր լաւ ջարդ տալու թուրքերին, որ խելոք մնան, չեղավ: Շրջագայութեան մէջ լինելով, սուրհանդակը ուշ էր հասել ինձ, ի հարկէ, սուրհանդակը մեղք չունի, եթէ շրջագայութեան մէջ չլինէի, սուրհանդակը իր պարտականութիւնը շուտ կատարելով, կը վերադառնար: Եւ միայն վերջին ժամին, շտապ կերպով մօտ գտնուող գիւղերից՝ Բռնակոթից, Ուզից, Ղարաքիլիսէից[64], Շաղաթից հարայ տալով մարդիկ հաւաքեցինք, Անգե-

---

[63] Տե՛ս նույն տեղում, էջ 499–502:

[64] *Ղարաքիլիսան* Սյունյաց Ծղուկ(ք) գավառի հնագույն և նշանավոր բնակավայր՝ Սյունիք-Սիսիանն է: Գտնվում է Որոտան գետի ընդարձակ և գեղատեսիլ հովտում: «Աշխարհացոյց»-ում այն հիշատակվում է Սյունիք անվամբ, որը վաղ միջնադարում բերդավան էր (տե՛ս **Երեմյան Մ.**, Հայատանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 80, տե՛ս նաև՝ **Հասրաթյան Մ.**, Պատմահնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 129): Ըստ վրաց Անանուն պատմիչի՝ բնակավայրը Սիսիան անվամբ հիշատակվում է Զաքարե Զաքարյանի գլխավորությամբ հայկական զորքերի կողմից 1207 թ. Անիից Արդաբիլ կատարած արշավանքի ժամանակ. «Հավաքվեցին Անիում ու շարժվեցին դեպի Արդաբիլ, անցան Գեղաքունի (իմա՛ Գեղարքունիք – Գ.Ս.) և իջան Սիսիան» (**Кикнадзе Р.**, Очерки по источниковедению истории Грузии, Тбилиси, 1980, с. 74–75): XV–XVI դդ. սկզբնաղբյուրներում, Սյունիք-Սիսիան անվանը Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում, Միսաջան մահալում հիշատակվում է որպես գյուղ՝ «Ղարաքիլիսա» անվամբ (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. Ա: Հրովարտակներ, պրակ Ա (ԺԵ–ԺԶ դդ.), կազմեց՝ **Հ. Փափազյան**, Երևան, 1956, էջ 48, տե՛ս նաև՝ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. Բ: Կալվածագրեր, պրակ Ա (ԺԴ–ԺԶ դդ.): Կազմեց՝ **Հ. Փափազյան**, Երևան, 1968, էջ 102, 113): Ավանին տրված օտարահունչ անունը թերևս կապված է բնակավայրի հյուսիս-արևմտյան դարավանդի վրա գտնվող Սյունի վանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հետ, որը թյուրքալեզու քոչվոր ցեղերի տիրապետության ժամանակներում կոչվել է նաև «Ղարաքիլիսա» («ղարա»-սև, «քիլիսա»-եկեղեցի): Ժամանակի ընթացքում այդ

ղակոթի մարտիկների հետ ուղղեցինք դէպի Զախմախթափա, սակայն հասնելով այնտեղ, գիւղացիներից մէկից տեղեկացանք, որ կռիւը վերջացել է, ուստի տղաներին վերադարձրի, իմքս եկայ: Այո, յարմար առիթը փախաւ: Եթէ պահանջած մոմէնտին պատրաստ գտնուէինք, փառատոր գործ կը կատարէինք, ափսոս, շատ ափսոս»[65]: Օգոստոսի 12-ին Պ. Տեր-Դավթյանն իր զինակից ընկերներով վերադառնում է Սիսիան:

Ահա այս ճակատագրական օրերին էր, երբ Զանգեզուր հասաւ հայոց ազատամարտի մեկ այլ նվիրյալ, տաղանդաշատ զորահրամանատար Գարեգին Տեր-Հարությունյանը՝ Գարեգին Նժդեհը: Խորապես ճշմարիտ է ասված, որ հերոսները ծնվում են ժամանակի պահանջով, որում հայտնվում է տվյալ երկիրն ու ժողովուրդը: Նույնքան էլ ճշմարիտ է, որ ժողովուրդը, ապավինելով նրանց, դարեր շարունակ ամրապնդվում ու հզորանում է իր արժանի զավակների շուրջ հյուսված հերոսապատումներից: Այդպես էլ պետք է լիներ, քանզի իր պատմության բախտորոշ պահերին Գ. Նժդեհի նման ռազմիկներին ժողովուրդն է ծնում, պահպանում ու հավերժացնում նրանց անունը[66]:

Հայրենաշունչ իր գործունեությամբ, ռազմագիտական հզոր մտքով, պետական քաղաքական գործչին յուրահատուկ լրջախոհությամբ, իրատես ու հեռատես մտածողությամբ Գ. Նժդեհն էլ ավելի բարձրացրեց լեռնաշխարհի դիմադրական ոգին: 1919

---

անվանումը տպագրվելով նաև բնակավայրի վրա՝ Սյունիք-Սիսիանը փոխարինվել է «Ղարաքիլիսա»-ով: Հայր Ղևոնդ Ալիշանի պարզաբանմամբ՝ «Գեօղ մեծ է և Գարագիլիսէ (Մեաւ. եկեղեցի), այսպէս կոչեցեալ վասն գունոյ քարանց հին եկեղեցւոյն, յորմէ և հնութիւն գեղջն գուշակի...» (**Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 213): 1935 թ. «Ղարաքիլիսան» վերանվանվել է՝ Միսավան, իսկ 1940թ.՝ Սիսիան:

[65] Նույն տեղում, էջ 503:

[66] Գ. Նժդեհի գործունեության մասին մանրամասն տե՛ս **Աւ.** Նժդեհ. կեանքն ու գործունեութիւնը. Նշխարներ, վկայութիւններ, Պէյրութ, 1968:

թ. օգոստոսի 10-ից ստանձնելով Կապան-Գենվազ-Գողթան միացյալ ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարի պաշտոնը, նա ինքնապաշտպանական մարտերին փոխարինեց՝ հարձակողական մարտավարությունը[67]: Որպես գաղափարի զինվոր, Գ. Նժդեհը ժողովրդական աշխարհազորի կազմակերպման և հետագա գործունեության ընթացքում մարտականից զատ գլխավորապես շեշտը դրեց պայքարի գաղափարական-հոգեփոխիչ կողմերի վրա, որով Զանգեզուրի համար ազգային-ազատագրական կռիվը վերածվեց համաժողովրդական պայքարի:

Զանգեզուրը զենքի ուժով նվաճելու վճռականությամբ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը 1919 թ. աշնանը որոշեց բոլոր ուղղություններով հարձակվել լեռնաշխարհի վրա: Այդ նպատակով Զանգեզուրի սահմանագլխին կենտրոնացրեց շուրջ 15.000-անոց խոշոր բանակ, որի հրամանատարն էր ցարական բանակի հրետանու գեներալ-լեյտենանտ Ալի-աղա Շիխլինսկին[68]: Զանգեզուրի մատույցներում, սահմանամերձ Կոռնիձոր, Տեղ, Խնածախ, Բայանդուր, Խոզնավար, Վերիշեն, Բռուն (այժմ՝ Ակներ) գյուղերի զանգեզուրյան մարտիկները ստեղծել էին պաշտպա–նական հզոր շղթա: Նոյեմբերի 4-ին Գորիսի շրջանի արևելյան և հյուսիսային կողմերից սկսվեց հարձակումը: Ծավալված թեժ մարտերում կասեցվում են թշնամու գրոհները: Կռվի չորրորդ օրը հակառակորդի մի խմբավորմանը հաջողվում է Խնածախ գյուղի մոտ պատռել պաշտպանական շղթան և առաջանալ Գորիսի քաղաքին մոտ

---

[67] Տե՛ս **Գեորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), Երևան, 1991, էջ 28–29:

[68] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 334–335:

Ճաղատ սարի (Քաչալ դաղ) բարձունքները[69]: Վճռական այդ պահին օգնության են հասնում Պ. Տեր-Դավթյանի հրամանատարությամբ գործող Սիսիանի ուժերը, որոնք փակել էին դեպի Եռաբլուր տանող սարահարթի, այնտեղից էլ Սիսիան տանող ճանապարհը: Օգնության հասած ուժերը կատաղի կռիվ տալով թուրքերի դեմ՝ ստիպեցին նրանց անկանոն և խուճապահար նահանջել, թույլ չտալով օղակել Գորիսը: Ինչպես միշտ, Պ. Տեր-Դավթյանն առաջավոր դիրքերում էր և իր անձնական օրինակով ոգեշնչում էր մարտիկներին: Կռվի հետագա ընթացքի վրա մեծ ազդեցություն ունեցավ նրա կազմած Սիսիանի հեծելախումբը, որի հրամանատարն էր իր օգնական Զաքար Տեր-Զաքարյանը[70]: Ինչպես իր հուշերում վկայում է Ս. Մելիք-Յոլչյանը. «Բայց այդ ժամանակ, Ուշթափալարի կողմից, Քեչալդաղի միւս ծայրից, երեւում է Սիսեանի հեծելազօրը, ղեկավարութեամբ Պօղոս Տէր Դաւթեանի եւ Զաքար Տէր Ղազարեանի: Երեւում է եւ, ապա թրերը բարձրացած, քշում ձիաները ու գրոհ տալիս թշնամու վրայ: Սարսափահար է լինում թշնամին, խուճապի է մատնւում եւ փախչում: Բայց փախչել չի կարողանում եւ ընկնում է տասնեակներով, հարիւրներով մերոնց սրերի հարուածներից»[71]: Նոյեմբերի 4–7-ը կռիվներն ավարտվում են սյունեցիների կատարյալ հաղթանակով:

Նկատենք, որ նույն ժամանակ Գ. Նժդեհի ղեկավարությամբ սյունեցիները գերմարդկային ջանքերով համառ մարտեր էին մղում նաև Կապարգողթում՝ Նախիջևանի կողմից հարձակված թուրք-թաթար զորամասերի դեմ: Օխչիձորի հաղթական

---

[69] Տե՛ս **Մելիք-Եօլչեան Ս.**, Բագուի հերոսամարտը (Է), «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, հոկտեմբեր, № 12, էջ 127:

[70] Տե՛ս նույն տեղում, էջ 343:

[71] **Մելիք-Եօլչեան Ս.**, Բագուի հերոսամարտը (Է), էջ 127–128:

կռիվներից հետո (նոյեմբերի 15) դեկտեմբերի 1-ից մինչև 7-ը մարտերը շարունակվեցին նաև Գեղի ձորի ուղղությամբ: Հարձակողական սաստիկ գրոհների արդյունքում թշնամին կռվի դաշտում թողնելով հարյուրավոր սպանվածներ, մեծաքանակ զենք ու զինամթերք, դիմում է փախուստի[72]:

1919 թ. դեկտեմբերի 1-ից Արսեն Շահմազյանին Զանգեզուրի պետական կոմիսարի պաշտոնում փոխարինում է ՀՅԴ անդամ Սերգեյ Մելիք-Յոլչյանը,[73] իսկ Զանգեզուրի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնում՝ գեներալ-մայոր Նիկոլայ Ղազարյանը: Ս. Մելիք-Յոլչյանի նախագահությամբ ստեղծվում է «Վարիչների խորհուրդ», որի ձեռքում է կենտրոնացվում գավառի ողջ իշխանությունը: Զանգեզուրը բաժանվում է երկու գավառի. «1) Բուն Զանգեզուր, Տաթեւ, Դարաբաս, Սիսիան՝ Զանգեզուր անունով, 2) Ղափան, Բաղաբերդ-Գեղայ ձոր, Արեւիք եւ Գողթն՝ Կապար Գողթ անունով»[74]: Միաժամանակ Զանգեզուրը բաժանվում է երեք զինվորական շրջանների: Առաջին շրջանի՝ Սիսիանի հրամանատարն էր Պ. Տեր-Դավթյանը, երկրորդի՝ Կապարգողթի (Կապան, Գենեվազ (Արևիք-Մեղրի), Գողթան)՝

---

[72] Տե՛ս **Նժդեհ**. Հայ-բոլշեւիկեան կռիւները. «Հայրենիք», Պոսթոն. 1923. Բ տարի, նոյեմբեր, № 1, էջ 111-116:

[73] Ս. Մելիք-Յոլչյանը ծնունդով Սիսիանի Մուցք (հետագայում՝ Մազրա. Բարձրավան) գյուղից էր: Ի դեպ, Ս. Մելիք-Յոլչյանն ու Դրաստամատ Կանայանը մորաքրոջ որդիներ էին (տե՛ս **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 538, 626:

[74] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 371:

հրամանատարն էր Գ. Նժդեհը[75], երրորդի՝ Բուն Զանգեզուրի[76] հրամանատարն էր գնդապետ Բուղդան Մելիք-Հուսեինյանը[77]:

Արցախի և Զանգեզուրի խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով ՀՀ կառավարության հանձնարարությամբ նույն թվականի դեկտեմբեր 20-ին 600 զինվորով Գորիս է հասնում նաև Զանգեզուր-Արցախի մարտական ուժերի ընդհանուր հրամանատար Դրաստամատ Կանայանը (Դրո)[78]: Արցախում ռազմական գործողություններ սկսելուց առաջ անհրաժեշտ էր վաղորոք ապահովել թիկունքի անվտանգությունը: Ուստի գեներալ-մայոր Ն. Ղազարյանը Դրոյի անունից Կապարգողթի հրամանատար Գ. Նժդեհին առաջարկեց արշավանք սկսել Շուռնուխի, Մազրայի և հարակից թաթարական գյուղերի վրա, ոչնչացնել

---

[75] Տե՛ս նույն տեղում:

[76] Բուն Զանգեզուրը նեղ իմաստով գործածական էր Գորիսի շրջանի դեպքում: Լեոյի պարզաբանմամբ՝ «...Զանգազուրը թէեւ ամբողջ գաւառի պաշտօնական անունն է, բայց Գորիսի շրջակայ գաւառակի միայն անունն է» (**Լէօ**, Իմ յիշատակարանը (տեղեկութիւններ մեր սարերից ու ձորերից), Շուշի, 1890, էջ 101):

[77] Տե՛ս **Ստեմել [Ստեփան Մելիք-Փարսադանյան]**, Զանգեզուրի հերոսամարտը եւ Արսէն Շահմազեան, «Հայրենիք», Պոսթըն, 1963, ԽԱ տարի, փետրուար, № 2, էջ 29: ՀՅԴ անդամ, գնդապետ Բուղդան Մելիք-Հուսեինյանը Գորիսի մելիքության հիմնադիր շնորհազարդ Մելիք-Հուսեինյան տոհմի շառավիղներից է: Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 1908 թ. չափաբերական մատյանում արձանագրված է. «Բուղդան բէգ Աղաբեգեան Մելիք-Ցուսեյինեան: Կին նորա Արուսեակ Հայրա-պետեան» (ՀԱԱ, ֆ. 47, ց. 5, գ. 444, թ. 10): Բ. Մելիք-Հուսեինյանը եղել է Գորիսում տեղակայված զորամասի՝ Բարգուշատի ճակատի հրամանատարը (տե՛ս **Վանբէկ [Վազգեն Միրզաբեկյան]**, Մի ղրւագ Զանգեզուրի հերոսամարտից (Բարգուշատի ռազմաճակատից), «Այիք», Թեհրան, 1979, յունիսի 3, № 113, տե՛ս նոսա՝ **Աշխատունի Զ. [Զաքար Ցոլյան]**, Արսէն Շահմազեան, «Այիք», Թեհրան, 1949, օգոստոսի 23, № 185, էջ 1–2): Զոհվել է 1920 թ. աշնանը: Խորհրդային իշխանությունների կողմից 1928 թ. կազմված Զանգեզուրի գավառի «Քաղաքացիական կռիվներում կամ իմպերիալիստական պատերազմում սպանվածների, անհայտ կորածների» ցուցակում նշված է, որ Գորիս գյուղացի «Մ.[ելիք] Հուսեյինյան Բաղդանը» զոհվել է 1920 թ. քաղաքացիական կռիվներում: «Սպանվածի խնամքի տակ գտնվող անաշխատունակ զավակ» սյունակում նշված է՝ 4 (տե՛ս ՀԱԱ, ֆ. 132, ց. 1, գ. 184, թ. 95):

[78] Տե՛ս **Գևորգյան Հ.**, Դրո, Երևան, 2007, էջ 373, 375:

հրոսակախմբերին և Գորիս-Կապան խճուղին դարձնել անվտանգ[79]: Շուռնուխի և շրջակա գյուղերի ազատագրման ռազմական գործողության ընդհանուր ղեկավարն էր Դրոն, ով արշավանքից առաջ վերակազմավորելով մարտախմբերը, պոդպորուչիկ Արիստակես Մուրադխանյանին նշանակում է Սիսիանի ջոկատի գումարտակի հրամանատար[80]: Համաձայն Զանգեզուրի մարտական ուժերի հրամանատարության մշակած ծրագրի՝ հարձակումն իրականացվելու էր համաժամանակ, սրընթաց և հակառակորդի համար անսպասելի:

1920 թ. հունվարի 19-ին Գ. Նժդեհի վաշտերն անցան հարձակման: Միաժամանակ Հովհաննես Պարոնյանի[81] (Յապոն) առաջնորդած ուժերը հարվածեցին Որոտանի ափին գտնվող թաթարական Էյվազլար գյուղին: Հարկավ, նրանց օգնության հասավ Սիսիանի ուժերի հրամանատար Պ. Տեր-Դավթյանն իր քաջակորով մարտիկներով: Դաժան բքի պայմաններում հաղթահարելով Սիսիան-Հարժիս-Տաթև-Երիցաթումբ դժվարին ճանապարհը, ջոկատը մարտավարական հմուտ գործողությունների շնորհիվ դիրքեր գրավեց Կատար կոչվող բարձունքում՝ կրակի տակ առնելով թշնամու գրավված բարձունքները: Զարգացնելով հարձակումը՝ Պ. Տեր-Դավթյանի զինվորները գերազանց են կատարում մարտական առաջադրանքը: Հանկարծակի եկած հակառակորդը մարտադաշտում թողնելով բազմաթիվ սպանվածներ, հունվարի 20-ին դիմում է փախուստի, իր հետ

---

[79] Տե՛ս **Գեորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), էջ 43: Շուռնուխի գյուղախմբի ազատագրման ռազմական գործողությունների մասին մանրամասն տե՛ս **Սիմոնյան Ա.**, Գարեգին Նժդեհի շուռնուխյան ռազմական գործողությունը և նրա արձագանքները, ԲՀԱ, Երևան, 2005, № 2, էջ 198–204:

[80] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 396:

[81] Հովի. Պարոնյանի գործունեության մասին մանրամասն տե՛ս **Գևորգյան Հ.**, Յապոն (Հովհաննես Պարոնյան), գործը և հուշերը, Երևան, 2011:

տանելով նաև կովկասյան թաթար խաժամուժին[82]: Թշնամին կրում է ջախջախիչ պարտություն: Կռիվների բովում բնատուր ռազմական տաղանդով օժտված Պ. Տեր-Դավթյանը մեծ համբավ և ժողովրդականություն վայելեց ոչ միայն իր կուսակցության՝ ՀՅԴ-ի շարքերում, այլև ժողովրդի տարբեր խավերի մեջ: Անձնական քաջության և հայրենասիրական գործերի շնորհիվ Պ. Տեր-Դավթյանն իրավամբ վաստակեց ժողովրդական հերոսի փառքը, որն արժանապատվությամբ կրեց իր ապրած հետագա կյանքի ընթացքում:

Շուռնուխի օպերացիան ավարտվեց հունվարի 20-ին՝ հայկական զինուժի փայլուն հաղթանակով: Բացելով Գորիս-Կապան խճուղին, հայերն իրենց հսկողության տակ վերցրին 30-ից ավելի գյուղ[83]: Ռազմական այդ խոշոր պարտությունից հետո Ադրբեջանի մուսավաթական կառավարության ռազմական նախարար գեներալ-մայոր Սամեդբեկ Մեհմանդարովը ստիպված էր հրաժարական ներկայացնել[84]:

Այսպիսով՝ սյունեցիների համառ դիմադրության շնորհիվ ձախողվեց թուրք-թաթարական զորամասերի կողմից Զանգեզուրը շրջապատելու ծրագիրը, որով վիժեցվեց մուսավաթական Ադրբեջանի՝ զենքի ուժով լեռնաշխարհը զավթելու համաթուրքական ծրագիրը:

Սակայն դժվարին մարտերը դեռ առջևում էին...

---

[82] Տե՛ս **Թևոսյան Բ.**, Նժդեհի հետ կողք-կողքի (Պողոս Տեր-Դավթյան). «Երեկոյան Երևան», Երևան, 1990, հուլիսի 9, № 151, տե՛ս նաև՝ **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 396–397:

[83] Տե՛ս **Նժդեհ**, Հայ-բոլշևիկեան կռիւները, «Հայրենիք», Պօսթըն, 1923, Բ տարի, նոյեմբեր, № 1, էջ 116–117, տե՛ս նաև՝ **Միքայէլեան Ա.**, Դարաբաղի վերջին դէպքերը, Հայրենիք», Պօսթըն. 1923, Ա տարի. յունիս, № 8, էջ 115:

[84] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 398:

Թուրք-մուսավաթական հրամանատարությունը Արցախի և Զանգեզուրի գրավման համար առաջիկա ռազմական գործողության համար կազմել էր ոճրագործ նոր ծրագիր: Հաշվի առնելով ստեղծված վիճակը, Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յոլչյանը 1920 թ. մարտի 20-ին հանդես եկավ զինվորականությանն ու գյուղացիությանը ուղղված կոչով, որում մասնավորապես ասվում էր. «Տաճկա-ադրբէջանեան միութիւնը իր դիւային ծրագիրը առաջ է տանում: ...Ղարաբաղի ազատ լեռների առիւծները համարձակ կերպով մերժել են Ադրբէջանի պահանջները և դիմել ապստամբութեան: Այժմ Ադրբէջանը հաւաքելով Մուղանի և Բարգիւշադի վայրենաբարոյ հորդաներին՝ վերջին անգամ փորձում է ճնշել Ղարաբաղը, ոչնչացնել Զանգեզուրը և մեր երկրի փլատակների վրայով միանալ Տաճկաստանի հետ:

Զանգեզուրի հերոսներ, ձեզ եմ դիմում վերջին անգամ և կոչում ի զէն, պաշտպանելու մեր պատմական Զանգեզուր-Ղարաբաղը, որը ծածկած է հայութեան դարավոր կոթողներով, ցողած է մեր փառապանծ նախնիքների արիւնով և ոռոգած ձեր ամենօրեայ աշխատանքի քրտինքով: ...Առանց Զանգեզուր Ղարաբաղի չը կայ Հայաստան»[85]:

1920 թ. ապրիլին բոլշևիկյան Ռուսաստանի զորքերը մտան Այսրկովկաս, և Ադրբեջանն առաջինը դարձավ խորհրդային (1920 թ. ապրիլի 28): Ն.Նարիմանովի ղեկավարությամբ ստեղծված ադրբեջանական խորհրդային կառավարությունը տնտեսական, ռազմաքաղաքական և դիվանագիտական լիակատար աջակցություն ստանալով ռուսական բոլշևիկյան կառավարությունից, հայ ժողովրդի նկատմամբ շարունակեց մուսավա-

[85] Կոչ Զանգեզուրի քաջարի զօրքին եւ գիւղացիութեան. «Սիւնիք». Գորիս. 1920, մարտի 21, № 10:

թականների՝ համաթուրքական, զավթողական հայատյաց քաղաքականությունը[86]:

Զանգեզուրի համար այս ճակատագրական օրերին 1920 թ. մայիսի 12-ին խորհրդային կարգեր են հաստատվում Արցախում: Այս հանգամանքը թևավորեց Զանգեզուրի բոլշևիկներին, որոնք փորձեցին ապստամբություն բարձրացնել ՀՀ իշխանությունների դեմ նաև Զանգեզուրում: Սակայն հակապետական այս ընդվզման փորձը տեղում ճնշվեց[87]:

---

[86] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի վրա կախված ռազմական ներխուժման սպառնալիքը Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատման առաջին երկու ամիսներին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1998, № 2 (95), էջ 18:

[87] Այստեղ խիստ կարևոր է հետևյալ դիտարկումը: Բանն այն է, որ Սիսիանի Բռնակոթ գյուղից հին բոլշևիկ Թովմաս Ադոնցն իր հուշերում անդրադառնալով 1920 թ. մայիսի կեսերին ՀՀ իշխանությունների դեմ ծավալված հակապետական խռովություններին, խիստ սուբյեկտիվ և աղավաղված ներկայացնելով իրական դեպքերը, դրանք որակելով որպես «զինված ապստամբության նախապատրաստում», պատմական իրականության խեղաթյուրմամբ գրում է, թե, իբր, «...Բռնակոթի հարյուր հոգուց բաղկացած զինված ջոկատը ...մտավ Ղարաքիլիսա: ...Տեղի ունեցան ձերբակալություններ. սկզբում ձերբակալեցինք դաշնակցության տեղական իշխանության ղեկավարներին (միպետ Իսակ Բշտունցին (ճիշտը՝ Իսահակ Բուշտինցյան – Գ.Ս.), հողբաժնի վարիչ՝ Ներսես Տեր-Միրաքյանին, շրջանի զինվորական հրամանատար Պողոս Տեր-Դավթյանին, կոմիսար Նիկոլայ Օսիպովին (նկատի ունի Գորիս քաղաքից ՀՅԴ անդամ Նիկոլայ Հովսեփյանին – Գ.Ս.) և ուրիշների» (**Ադոնց Թ.**, Դեպքերը Սիսիանի շրջանում (Հին բոլշևիկների հիշողություններ, գիրք Բ, Երևան, 1961, էջ 557): Հետաքրքրական է նշել, որ ժամանակի որևէ այլ հավաստի աղբյուրով չհիմնավորվող սույն տեղեկությունը տեղ է գտել նաև Ա. Լալայանի պատմահուշագրական աշխատությունում, որում հեղինակը վկայակոչելով ՀԱԱ-ում պահվող արխիվային գործերից մեկը (ֆ. 201, ց. 1, գ. 41, թ. 11), գրում է, թե, իբր, մայիսի 13-ին բոլշևիկյան զինված ջոկատները «...ձերբակալում են ...դաշնակցության շրջանի զինված ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանին և շրջանային կոմիսար Զաքար Տեր-Ղազարյանին» (**Լալայան Ա.**, Զանգեզուրյան դրվագներ. 1917–1921 թթ. (պատմահուշագրական ակնարկ), Երևան, 1985, էջ 48): Ա. Լալայանի մատնանշած փաստաթուղթն ընթերցելու համար, որի իսկությունն ու հավաստիությունը էապես կարող էր նպաստել հարցի պարզաբանմանը, ՀԱԱ-ում նույնպես ուսումնասիրեցինք վերոնշյալ գործը: Սակայն ամենից ավելի տարօրինակն այն էր, որ 1919 թ. փետրվարի 27-ի թվագրմամբ «Ղարաբաղի հայկական համագումար» վերտառությամբ փաստաթղթում իսպառ բացակայում էր Պողոս Տեր-Դավթյանին վերաբերող որևէ տեղեկություն: Ինչպես տեսնում ենք, մեջբերված

1920 թ. հուլիսի 4-ին 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մտան Զանգեզուրի սահմաններից ներս և հաջորդ օրը գրավեցին գավառի կենտրոն Գորիսը[88]: Լեռնավայրում ազդարարվեցին խորհրդային կարգեր: Առաջին իսկ օրից Զանգեզուր մտած բոլշևիկյան ուժերը դաժան բռնարարքների դիմեցին գավառի հայրենասիրական ուժերի դեմ՝ հաստատելով մղձավանջային ռեժիմ: Համընդհանուր էր սպանությունները, ավերն ու թալանը: Քաղաքի ոչ մի հայ ընտանիք զերծ չմնաց բռնարարքներից ու կողոպուտից[89]:

Խորհրդային զորքերը Արցախը խորհրդայնացման ճանապարհով նվաճելուց հետո, երբ մուտք են գործում Զանգեզուր, Սիսիանի մարտական ուժերը Պ. Տեր-Դավթյանի գլխավորությամբ նահանջելով, հանգրվանում են Դարալագյազում՝ Ջուլ[90] գյուղում և մինչև նույն թվականի հոկտեմբեր, այսինքն մինչև խորհրդային իշխանության դեմ բռնկված համաժողովրդական ապստամբությունը, մնում այնտեղ: ՀՅԴ անդամ Զա-

---

տվյալները պարզորոշ խոսում են այն մասին, որ վերոհիշյալ հեղինակները ապատեղեկատվությամբ կեղծել են պատմական իրողությունները: Մինչդեռ փաստերը վկայում են, որ որպես զորահրամանատար Պ. Տեր-Դավթյանն իր վճռականությամբ և հաղթական ռազմագործողություններով արդեն իսկ մեծ համբավ էր վայելում Սիսիանի շրջանում, որի խոսքը օրենքի ուժ ուներ ազգաբնակչության համար: Հետևաբար, դժվար թե որևէ մեկի համարձակությունը ներեր՝ «...ժողովրդի անվերապահ յարգանքն ու սէրը վայելող անձնուէր մարդուն...» ձերբակալելու հրաման արձակել, քաջ գիտակցելով, որ կտտանար արժանի հակահարված:

[88] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 530:

[89] Մանրամասն տե՛ս Ազատ Սիւնիք: Մև էջեր և փաստեր բոլշևիկների հնգամսեայ գործունէութիւնից, Գորիս, 1921; Ազատ Սիւնիք: Արնոտ գիրք. Պատմական համառոտ տեսություն բոլշևիկյան «սխրագործության» Զանգեզուրում, Սիսիանում և Ղափանում: Ապստամբական շարժում: Փաստաթղթեր: Կազմող և խմբագիր՝ **Ա. Հարությունյան**, Երևան, 2007:

[90] Ջուլը գտնվել է Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառում, Արփա գետի ձախակողմյան վտակ Արտավան գետակի ակունքի շրջանում: Ներկայիս Վայոց ձորի մարզի Վայքի շրջանի Արտավան գյուղն է (տե՛ս **Հակոբյան Թ.**, Մելիք-

քար Յոլյանի հավաստմամբ՝ «1920 թ. յուլիսի սկզբներին, Սովետական զորքերի կողմից Զանգեզուրը բռնագրաւելու հետեւանքով, մեր նահանջող ուժերի եւ վտանգուած ժողովրդի համար Դարալագեազը հանդիսացաւ որպէս ապահով թիկունք եւ պատսպարան, ուր անմոռանալի եւ քաջ հայրենասէր Պօղոս Տէր-Դաւթեանը վերակազմեց իր տրամադրութեան տակ գտնուող ուժերը...»[91]:

Հարկ է նշել, որ չնայած ձեռնարկած պատժիչ գործողություններին, Զանգեզուրը չհանձնվեց: Գ. Նժդեհը տեսնելով, որ Զանգեզուրի հարցում Խորհրդային Ռուսաստանը պաշտպանում է Ադրբեջանին, շարունակեց պայքարը թուրք-բոլշևիկյան ուժերի դեմ: 1918–1920 թթ. սահմանային խնդիրների հետևանքով առաջացած հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների[92] շրջանում Հայաստանի Հանրապետությունը մտադիր չէր հրաժարվելու բոլշևիկյան Ռուսաստանի կողմից դիվանագիտական բազմաքայլ խարդավանքներով ու դավադրություններով «վիճելի տարածքներ» հայտարարված Հայոց հայրենիքի մի հատվածի՝ ի բնե հայկական Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ ունեցած իր իրավունքներից: Ինչպես իրավամբ գրում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը, 1920 թ. օգոստոսի 10-ի Հայաստանի ու ՌԽՖՍՀ-ի միջև կնքված Թիֆլիսի համաձայնագրով ««Վիճելի» տարածքների հարցը արևմտյան տերությունների դիվանագիտական ոլորտից վերցվեց և մտցվեց բոլշևիկյան Ռուսաստանի և Խորհրդային

---

**Բախչյան Մա., Բարսեղյան Հ.**, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հ. 4, Երևան, 1998, էջ 423):

[91] **Աշխատունի Զ. [Զաքար Յոլյան]**, Դրուագներ մեր ազատութեան պայքարից. «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, օգոստոս, № 10, էջ 116:

[92] Մանրամասն տե՛ս **Ղուլյան Յու.**, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից 1918–1920 թթ., Երևան, 2009:

Ադրբեջանի քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների ոլորտը»[93]:

Զանգեզուրի ռազմաքաղաքական ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ Զանգեզուրի անկումով և այն Ադրբեջանին բռնակցելով միանալու էին թուրքական աշխարհի երկու թևերը՝ Թուրքիան և Ադրբեջանը, և համաթուրքական ծրագրի իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության գլխին կախվելու էր մահացու սպառնալիք: Ուստի, ռազմաքաղաքական այդ բարդ պայմաններում այլընտրանք այլ բան չէր մնում, քան մեն-մենակ՝ առանց դրսի օժանդակության, վճռականորեն շարունակել գերմարդկային մաքառումը: Ստեփան Մելիք-Փարսադանյանի (Ստեմել) դիպուկ բնորոշմամբ. «Իրաւ, որ «**Սիւնիքը**» յետ չի մնում Զէյթունից եւ Սասունից: Հայաստանում այդ երեք լեռնաշխարհն են կազմում մեր Մայր երկրի ողնաշարը: Բնական այդ ամրութիւններն են, որ «**սիւնեցիներին**» դարերից ի վեր ըմբոստութիւն են տալել»[94]:

Այսպիսով՝ ստեղծված պայմաններում, ՀՀ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը կարգադրում է Դրոյին՝ Զանգեզուրն ազատագրել խորհրդային զորքերից: Նշենք, որ նախքան այդ, 1920 թ. հոկտեմբերի 23-ին Ռ. Տեր-Մինասյանի, Դրոյի և գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի մասնակցությամբ Դարալագյազում տեղի ունեցած խորհրդակցությունում որոշվել էր, որ «...Դրոյի զորամասը և Վայոց Ձորի Զոր. Մելիք-Մուրադեանին ենթակայ ուժերը շարունակեն յառաջխաղացումը, գրաւեն Նախիջևանն ու շրջանը և շարժեն առաջ, ամբողջացնելով Նախիջևանի գաւա-

---

[93] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ., էջ 159:

[94] **Ստեմել [Ստեփան Մելիք-Փարսադանյան]**, Անդրանիկը «Սիւնեաց աշխարհում», «Ալիք», Թեհրան, 1961, յունուարի 18, № 13, էջ 3:

ռի լրիւ գրաւումը»[95]: Ի դեպ, Զանգեզուրը խորհրդային զորքերից մաքրելուց առաջ թիկունքից սպառնացող վտանգը բացառելու նպատակով Նախիջևանը ազատագրելու ծրագրին կողմնակից էր նաև Պ. Տեր-Դավթյանը: Ինչևէ, Դրոն, որպես զինվորական կատարելով վերադասի հրամանը, ռազմական գործողությունները սկսելուց առաջ, Վայքի շրջանի Ղուշչի Բիլակ գյուղում հուլիսի 30-ին հրավիրում է ռազմական խորհրդակցություն: «Երեկոյեան ժամը 10-ին,- վկայում է խորհրդակցությանը մասնակից Ե. Իշխանյանը,- Դրօն մեզ կանչում է իր մօտ, ներկայ էին Կուռօն, խմբապետ Մարտիրոսը և Պօղոս Տէր Դաւթեանը.

Դրօն հարց է դնում, ինչպէս վարուել: Ես կրկնեցի առաւօտեան ասածս, որի վրայ պնդեց Պօղոսը, թէ չպիտի կարողանանք պահել Զանգեզուրը, ուստի պէտք չէ յարձակում գործենք:

– Սակայն արժանապատուութեան խնդիր է դարձած այժմ ինձ համար, ասում է Դրօն: Կենտրոնում, թիւրիմացաբար, պիտի կարծեն, թէ վախեցայ և այդ պատճառով յարձակում չգործեցի»[96]:

Դրոյի հրամանով Պ. Տեր-Դավթյանը մեկնում է Սիսիան, որպեսզի «...տեղացիներին ապստամբեցնի բոլշեւիկների դէմ, լուր տայ Լեռնահայաստան գտնուող Նժդեհին՝ մօտենալ Սիսիանին եւ թիկունքից հարուածել թշնամուն... մեր ուժերը Սիսիան մտնելուն պէս»[97]:

Օգոստոսի 1-ին Դրոն Ղուշչի Բիլակից իր զորամասով հանկարծակի հարձակման է անցնում Սիսիան խուժած բոլշևիկների

---

[95] **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 635:

[96] Նույն տեղում, էջ 639:

[97] **Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան-Բաշգառնեցի.** Իմ յիշելի յուշերը: Կազմեց՝ **Արսէն Մամեան**, Թեհրան, 1978, էջ 463:

զորամասի վրա և գրավում Բազարչայ (հնում՝ Ակունք, Բագրատավան, այժմ՝ Գորայք – Գ.Ս.) գյուղը: Մինչ այդ Պ. Տեր-Դավթյանն իր զորաջոկատով (1920 թ. օգոստոսի դրությամբ Դրոն իր տրամադրության տակ ուներ 1300, իսկ Պ. Տեր-Դավթյանը՝ 120 զինվոր)[98] Սիսիանի գյուղերից դուրս էր քշել հակառակորդի հետևակ գնդերին[99]: Դրոյի զորամասն ու Պ. Տեր-Դավթյանի գլխավորած զորաջոկատները համատեղ ուժերի սրընթաց հարվածների տակ Կարմիր բանակին ստիպում են նահանջել դեպի Գորիս[100]: Օգոստոսի 2-ին գրավվում է նաև Գորիսը[101]: Սակայն այդ հաջողությունը կարճատև եղավ: Ստանալով օժանդակ ուժեր, Կարմիր բանակը օգոստոսի 7-ին վերագրավում է նախ Գորիսը, ապա՝ Սիսիանը[102]:

Նախքան Պ. Տեր-Դավթյանի՝ հետագա գործունեության լուսաբանմանն անցնելը, միջանկյալ պատասխանենք այն հարցին, թե նա զինվորական ի՞նչ կոչում է ունեցել: Նախընթացում նշեցինք, որ զինվորական ուսումնարանն ավարտելուց հետո Առաջին աշխարհամարտի տարիներին Պ. Տեր-Դավթյանն արդեն ստացել էր պորուչիկի աստիճան: Այս առումով վկայակոչենք Պ. Տեր-Դավթյանի և Ե. Իշխանյանի միջև 1920 թ. սեպտեմբերի 2-ին՝ Դարալագյազում տեղի ունեցած զրույցը, որը տեղ է գտել վերջինիս հուշերում: «**Սեպտեմբերի 2-ին** Պողոսը

---

[98] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 173, թ. 1, տե՛ս նաև ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 156, տե՛ս նաև՝ **Հարությունյան Ա.** Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը (ըստ նորահայտ վավերաթղթերի), Երևան, 2001, էջ 7:

[99] Տե՛ս **Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան-Բաշգառնեցի**, Իմ յիշելի յուշերը, էջ 463:

[100] Տե՛ս **Գևորգյան Հ.**, Դրո, էջ 433:

[101] Տե՛ս **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), էջ 66:

[102] Տե՛ս նույն տեղում, էջ 67–68, տե՛ս նաև՝ Ազատ Անկախ և Միացյալ Հայաստանի վերջին օրերը (Անհայտ գրողի օրագիրը): Կազմ. հեղ.՝ **Ս. Հարությունյան**, Երևան, 1992, էջ 71:

գալիս է Ջուլից, հրամանատարութիւնը թողնելով ղափանցի գլխապետ Սմբատ Թորոսեանին, կարճ ժամանակով Երևան գնալու տեսնելու իր նշանածին ու եղբօրը՝ Յարութիւնին: Սմբատ Թորոսեանը մեր լաւագոյն սպաներից մէկն էր:

- Ախպեր, չափազանց անյարմար վիճակում եմ զգում ինձ, ես պարուշչիկ եմ (տեղակալ), իսկ Սմբատը կապիտան (գլխապետ)[103], ես զօրամասի հրամանատարն եմ, իսկ կապիտան Թորոսեանը ինձ ենթակայ իմ զօրամասում: Սմբատը մեր արժանաւոր, խիզախ և թասիբով զինտրականներից մէկը՝ կապիտան, պարուշչիկի հրամանատարութեան ներքո՞յ. եղա՞ւ: Հրահանգ տալուց ճնշում եմ, ուստի հետը այնպիսի տօնով եմ խօսում, որ չվիրաւորւի: Սմբատը մի քանի տարով փոքր է ինձնից և իբրև տարիքով մեծ է վերաբերում ինձ հետ: Էհ, ինչևէ, մի կերպ կանենք, եօլա կերթանք»[104]:

Երևան հասնելուց հետո Պ. Տեր-Դավթյանը տեղեկանում է, որ Ե. Իշխանյանը գրություն էր ուղարկել ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին՝ իրեն գլխապետի աստիճան շնորհելու համար[105]: Նկատենք, որ Մազրա գյուղից 1920 թ. հոկտեմբերի 13-ին Գ. Նժդեհին ուղարկած նամակում Պ. Տեր-Դավթյանն իր կոչումը դեռևս նշում էր՝ տեղակալ (պորուչիկ)[106]: Կապիտանի կոչումը նա թերևս ստացել է հոկտեմբերի վերջերին:

---

[103] Հայաստանի Առաջին հանրապետության շրջանում (1918–1920 թթ.) զինվորական աստիճանակարգում կապիտանը հավասարազոր էր գլխապետի կոչմանը (տե՛ս Զօրական կանոնագրքերի թարգմանութիւն. «Ռազմիկ». Երեւան. 1920. մայիսի 15, № 1):

[104] **Իշխանեան Ե.**, Լեռնային Ղարաբաղ (1917–1920), էջ 670:

[105] Տե՛ս նույն տեղում էջ 673:

[106] Տե՛ս **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), էջ 94:

Անշուշտ, այս փոքրիկ հուշ-ակնարկում մեկ անգամ ևս դրսևորվում է Պ. Տեր-Դավթյանի ոչ միայն պարզ ու շիտակ բնավորությունը, այլև անսահման համեստությունը:

Ինչևէ, հետևենք դեպքերի զարգացմանը: Չնայած բոլշևիկների ձեռնարկած պատժիչ գործողություններին, լեռնավայրը դիմեց ապստամբության: Ինչպես նշում է Ս. Վրացյանը. «Ստի, բռնութեան ու թալանի վրա հիմնուած իշխանութիւնն, ի հարկէ չէր կարող յարատեւել Զանգեզուրում: Գիւղացիութիւնը շատ շուտով համոզւեց, թէ ինքը խաբուած է, եւ սկսեց միջոցներ որոնել ստեղծուած դժոխային կացութիւնից դուրս գալու համար: Գիւղերի երիտասարդութիւնը համարեա ամէն տեղ հալածական՝ քաշւել էր լեռները կամ ապաստան գտել Դարալագեազում: Նա գլուխ բարձրացնում բոլշեւիկների դէմ»[107]:

Գ. Նժդեհի՝ հոկտեմբերի 5-ին Կապանի ժողովրդին ուղղված կոչից հետո, առաջինը խուստուփյան բարձրունքներից ապստամբության դրոշ պարզեց Կապանը: Բոլշևիկյան զորամասերին այլ բան չէր մնում, քան նահանջել Գորիս: Հոկտեմբերի 10-ին ազատագրված էր ամբողջ Կապանը[108]: Անհաջողություն կրեցին նաև Սիսիանի ուղղությամբ կռվող բոլշևիկյան ուժերը: Կապանցիների օրինակով ապստամբեցին Սիսիանի ընդհատակյա ուժերը՝ Գ. Նժդեհի անձնուրաց զինակից, նրա աջ թևը համարվող Պ. Տեր-Դավթյանի գլխավորությամբ: Նշենք, որ 1920 թ. սեպտեմբերին՝ թուրք-հայկական պատերազմն սկսելուն պես, Դրոն մեկնել էր ռազնաճակատ և Վայոց ձորում նրան՝ իբրև զորամասի հրամանատարի փոխարինում էր Պ. Տեր-

---

[107] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 548:

[108] Տե՛ս **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), էջ 88–90:

Դավթյանը[109]: Ս. Վրացյանի վկայության համաձայն՝ «Սիսեանի շարժման գլուխը կանգնեց Խոտանանցի սպա Պողոս Տէր-Դաւթեանը՝ մի անձնազոհ ու գաղափարական երիտասարդ, որ լայն ժողովրդականութիւն էր վայելում իր շրջանում»[110]: Ապստամբությունը նախապատրաստելու նպատակով, Պ. Տեր-Դավթյանը Ջուլում հոկտեմբերի 5-ին հրավիրում է խորհրդակցություն, որտեղ որոշվում է. «...կապ հաստատել հրամանատար Գ.Նժդեհի, Սիսեանի եւ Զանգեզուրի բնակչութեան հետ եւ բարձրացնել ապստամբութեան դրօշակը»[111]: Միաժամանակ, բնակչության տրամադրությունները շոշափելու նպատակով Պ. Տեր-Դավթյանը «...քանի մը վստահելի անձեր թռուցիկներով կը ղրկէ Սիսեանի գիւղերը ժողովուրդի տրամադրութեան մօտէն ծանոթանալու եւ զինուորութիւնը կազմակերպելու նպատակով»[112]:

Տեղեկություն ստանալով, որ Գ. Նժդեհի գլխավորությամբ Կապանն ազատագրված է, և որ Սիսիանի զինական ուժը կազմ ու պատրաստ է՝ Պ. Տեր-Դավթյանը ռազմական Ջուլից հոկտեմբերի 12-ին 200 մարտիկներով անցնում է Սիսիանի գյուղերը, ուր նրան են միանում ամբողջ գյուղացիությունը և տեղի զինական ուժը[113]: Մազրա գյուղից հոկտեմբերի 13-ին Գ. Նժդեհին ուղարկած նամակում Պ. Տեր-Դավթյանը հայտնում էր հետևյալը. «Ամսիս 11-ին ժամը 6-ին ես իմ զօրախմբով մեկնեցի Ջուլից Ղալաչաղ գիւղը, նպատակ ունենալով գրաւելու Մեծամասնականների կողմից թողած գիւղերը համաձայն Սիսեանի ժողովր-

---

109 Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 656, տե՛ս նաև՝ **Գևորգյան Հ.**, Դրո, էջ 445:

110 **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 548:

111 Տե՛ս **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), էջ 95–96:

112 Նույն տեղում, էջ 95:

113 Տե՛ս Ազատ Սիւնիք: Արնոտ գիրք: Կազմող և խմբագիր՝ **Ա. Հարությունյան**, Երևան, 2007, էջ 82–83:

դի ցանկութեան: Շրջակայ գիւղերը ուղարկուած մարդիկ հաղորդեցին, որ գիւղացիութիւնը գրգռուած է Մեծամասնականներու դէմ եւ սպասում է ընդհանուր ապստամբութեան:

Ղալաչաղ, Մազրա, Կարակլիս, Բելեակ արդեն գրաւուած է իմ զօրքերով: Մնացած գիւղերը բացի Անգեղակոթից եւ Բազարչայից տրամադրել են ինձ իրենց զինուած ուժերը»[114]: Անպատասխան թողնելով Անգեղակոթից բոլշևիկյան հրամանատարության՝ հանձնվելու վերջնագիրը, Պ. Տեր-Դավթյանը հոկտեմբերի 14-ին հուժկու գրոհով կարողանում է շրջանի ողջ տարածքը մաքրել խորհրդային զորքերից և վերագրավել Սիսիանը[115]: Ավելին, Սիսիանի կողմից Տաթևի տարածքներ մտած զանգեզուրյան զորամասերը Պ. Տեր-Դավթյանի գլխավորությամբ հոկտեմբերի 18-ին թիկունքից հարվածեցին Տաթև-Հալիձոր-Գորիս ճանապարհով խուճապահար նահանջող բոլշևիկյան զորքերին[116]: Ինչպես ասվում է վավերագրում. «Միաժամանակ փորձառու և հմուտ սպա Տեր-Դավթյանը թշնամիներին հանկարծակիի բերելու համար առանձին ճանապարհով առաջ անցնելով՝ տաք ճակատամարտից հետո գրավում է Եայջին (այժմ՝ Հարժիս – Գ.Ս.), որտեղից անցնում է Տաթև՝ կամենալով միանալ Սպարապետ Նժդեհին»[117]: Գ. Նժդեհի հավաստմամբ՝ «Ըստ տրուած մարտագրի՝ Սիսեանի ուժերը շարժում են դէպի Ուշթափա-

---

[114] Տե՛ս **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), էջ 95:

[115] Տե՛ս նույն տեղում, էջ 83, տե՛ս նաև՝ **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոս-ամարտը (1919–1921), էջ 95: **Զ. Աշխատունի [Զաքար Ցոլյան]**, Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի, օգոստոս, № 10, էջ 116: Զանգեզուրի հերոսամարտը, «Ցառաջ», Երեւան, 1920, նոյեմբերի 27, № 261: Ազատ Սիւնիք: Արևոտ գիրք. Պատմական համառոտ տեսություն բոլշևիկյան «սխրագործության» Զանգեզուրում, Սիսիանում և Ղափանում: Ապստամբական շարժում: Փաստաթղթեր, էջ 86:

[116] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 675:

[117] Ազատ Սիւնիք: Արևոտ գիրք, էջ 86:

լար,[118] Ղարաքլիս-Գորիս խճուղիով, եւ լուսաբացին հարուածում են թշնամուն՝ թիկունքից»[119]: Գողթանի կառավարիչ Աշոտ Մելիք-Մուայանից ստացված հաղորդագրության հիման վրա «Մշակը» հաղթական այդ մարտերի մասին գրում էր. «Թշնամու նպատակն էր միացնել Նախիջևանը Ադրբէջանին՝ Ալիաթ ու Ջուլֆա երկաթուղագիծը գրաւելով: Հայ գիտղացիութիւնը կռում էր 9000 բոլշեւիկ զինուորների դէմ: Հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 6-ը Սիսիանի, Գէնվազի, Գողթանի, և Օրդուբադի զօրաճակատների վրայ հայ քջարի գիտղացիութիւնը վանել է թշնամու 14 ուժեղ հարձակումներ: Այդ կռիւների մէջ թշնամին թողեց 1800 սպանուած, 600 գերի, 67 գնդացիր, 400 ձի, շատ ռազմամթերք և ուտելիք: Թշնամին յետ է մղուել Զանգեզուրի հողաբաժնից»[120]:

Ռազմական այդ հաջողություններից հետո Պ. Տեր-Դավթյանն իր զորամասով անցավ Տաթև և Գ. Նժդեհին միանալու նպատակով շարժվեց Կապանի ուղղությամբ: Ճանապարհին՝ Մալդաշ (այժմ՝ Քաշունի – Գ.Ս.) գյուղում, հանդիպում է բոլշևիկյան մի զորամասի և կռվի բռնվում: Վերջիններիս փախուստի մատնելուց և բավական ռազմամթերք գրավելուց հետո Պ. Տեր-Դավթյանն անցնում է Խոտանան գյուղ, ուր և միանում է Գ. Նժդեհին և ստանալով նոր հրահանգներ մի քանի օր անց վե-

---

[118] Ուշթափպար-Եռաբլուրը գտնվում է համանուն սարավանդի սահմանային շրջանում Գորիս քաղաքից արևմուտք, Շինուհայր գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք, Հարժիս գյուղից՝ 4 կմ հյուսիս-արևելք: Ամենաբարձր գագաթը ճանապարհի աջ կողմում գտնվող Հարժիսի սարն է (2274 մ), այնուհետև՝ Ուղբլուրը (2216 մ), ապա՝ Քարասարը (2192 մ): Սարահարթի կենտրոն անցնում է Նախիջևան-Սիսիան-Գորիս-Շուշի-Պարտավ հնուց ի վեր հայտնի ճանապարհը (տե՛ս **Լիսիցյան Ստ.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 44, 92):

[119] **Նժդեհ**, Էջեր Լեռնահայաստանի գոյամարտէն, «Հայրենիք», Պոսթոն, 1924, Բ տարի, ապրիլ, № 6, էջ 118:

[120] Դրութիւնը Զանգեզուրում, «Մշակ», Թիֆլիս, 1920, դեկտեմբերի 2, № 151:

բաղառնում է Սիսիան, որտեղից բոլշևիկյան զորքերը նահանջել էին Գորիս[121]:

Այդ օրերին Պ. Տեր-Դավթյանը հրամանատար էր բառի լայն իմաստով: Գոտեպնդված վերոնշյալ հաղթանակներով, վստահ իր զորամասի մարտական ուժին, նա Գ. Նժդեհին նամակով հայտնում է՝ Գորիս քաղաքը վերագրավելու նպատակադրության մասին, ակնկալելով վերջինիս համաձայնությունը: Սակայն Նժդեհը հոկտեմբերի 27-ի պատասխան նամակում աննպատակահարմար էր գտնում տվյալ պահին վերագրավել Գորիսը: Հիմավորելով, որ դրա համար անհրաժեշտ է՝

«1. Առանց ուշացնելու ունենալ բավականին կանոնավոր ու զգալի զինված ուժեր, այնքան, որ քաղաքը գրավելուց հետո այդ ուժերի մի մասով «կարողանանք ամրացնել և մեր ձեռքին պահել Զաբուտի մեր հին դիրքերը»,

2. Բուն Զանգեզուրի ժողովուրդը հետևի Ղափան-Սիսիանի օրինակին. «թոթափի սովետա-ադրբեջանական լուծը», իր միջից արմատախիլ անի բոլոր կոմունիստական տարրերին, վճռականորեն կանգնի իր սահմանների վրա՝ «միշտ պատրաստ՝ դիմագրավելու թշնամու բոլոր տեսակի փորձերին ու խաղերին»[122]:

Ապստամբությունը ճնշելու և սյունեցիներին վերջնականապես ծնկի բերելու նպատակով ջախջախված բոլշևիկյան զորամասերին փոխարինելու են գալիս նորերը: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության որոշմամբ շուրջ 6000 հետևակ և 2000 հեծյալ զորաբանակ Պյոտր Կուրիշկոյի հրամանատարութ-

---

[121] Տե՛ս Ազատ Սիւնիք: Արևոտ գիրք, էջ 86:

[122] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 683:

յամբ Ադրբեջանից ուղարկվեց Զանգեզուր[123]: Այդ հզոր խմբավորմանն էր կցվել նաև Զավալ փաշայի գլխավորած 1200 թուրք ասկյարներից բաղկացած զորագունդը (ուներ 4 թնդանոթ, 40 գնդացիր),[124] որը Արցախ-Զանգեզուրի, այն է հայկական բնակավայրերով պետք է անցներ Նախիջևան, այնտեղից՝ Թուրքիա՝ քեմալական շարժմանը միանալու համար[125]: Սակայն խմբավորման հրամանատար Կուրիշկոն հոկտեմբերի 29-ին Գորիս ժամանելուց հետո որոշեց թուրքական գնդին ևս մասնակից դարձնել ռազմական գործողություններին: Բոլշևիկները թուրքական գնդի ամենաակտիվ աջակցությամբ շարունակեցին հակահայ քաղաքականությունը. հայտնի գործիչների սպանություններն ու կողոպուտը ոչ մի օր չդադարեցին քաղաքում[126]:

Զանգեզուրյան վաշտերը հարկադրված եղան թուրք-բոլշևիկյան զորամիավորումների դեմ վերսկսել ծանր մարտերը: Այդ ծանր օրերին Զանգեզուրի բոլոր շրջանների զորահրամարանատարները գտնվում էին սերտ կապի մեջ և թուրք-բոլշևիկյան զորքերի դեմ մղված պայքարը ընդունել էր համաժողովրդական բնույթ: Արյունահեղ մարտերում զանգեզուրյան վաշտերին հաջողվեց բոլոր ճակատներում փայլուն հաղթանակ տանել: Արժանավոր գնահատելով այդ ժամանակահատվածում սյունեցիների մղած համառ մարտերի դերն ու նշանակությունը, մասնավորապես Գ. Նժդեհի և Պ. Տեր-Դավթյանի անգնահատելի ծառայությունը Զանգեզուրի հերոսամարտում, Ս. Վրացյանը գրում էր. «Ամբողջ ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում իր գոյութիւնը պաշտպանելու համար: Կռուում են եւ ծերերը,

---

[123] Տե՛ս նույն տեղում, էջ 688:
[124] Տե՛ս «Ցառաջ», Երեւան, 1920, նոյեմբերի 10, № 246:
[125] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 549:
[126] Տե՛ս «Ցառաջ», Երեւան, 1920, նոյեմբերի 10, № 246:

եւ կանայք եւ երեխաները, կռւում են բահերով ու քարերով: Տեղի են ունենում յամառ ու յուսահատական կռիւներ: Ժողովրդին առաջնորդում են երկու սիրւած հերոսներ՝ Գ. Նժդեհն ու Պ. Տէր-Դաւթեանը եւ օգնում են՝ խստաունչ ձմեռը, մութ գիշերները ու խոր ձորերը, որոնցից այնպէս սարսափում են ռուս զինւորները»[127]:

Զանգեզուրի զինյալները անօրինակ սխրանքներով համառ դիմադրություն կազմակերպեցին հատկապես Սիսիանի տարածք ներխուժած թուրք-բոլշևիկյան զորքերի դեմ: Թուրքական գունդը որքան առաջանում էր դեպի Նախիջևանի սահմանը, հայկական գյուղերում թալանը, նորանոր սադրիչ և սանձարձակ գործողություններն ավելի սանձարձակ էին դառնում: Ծանր վիճակ էր ստեղծվել հատկապես Ուզ (այժմ՝ Ույծ – Գ.Ս.) և Ղարաքիլիսա գյուղերի համար:

Պ. Տեր-Դավթյանը լուր ստանալով թուրքական զորամասի ռազմարշավի մասին, իր հեծյալ ջոկատով շտապում է կասեցնել թվական գերակշռություն ունեցող թշնամու առաջխաղացումը: Նոյեմբերի 5-ին օգտվելով թանձր մառախուղից, Պ. Տեր-Դավթյանի մարտիկները, նրանց միացած գյուղերի աշխարհազորայինները սրընթաց գրոհով Ուզ գյուղի մոտակայքում հարձակվում և թևանցումով նեղն են գցում թշնամուն: Օրհասական այդ պահին Սիսիանի ինքնապաշտպանական ուժերին օգնության են հասնում Չիմանքենդ գյուղից (այժմ՝ Ուրցաձոր – Գ.Ս.)[128] Զանգեզուր վերադարձած գորիսեցի մարտիկները: Վերջիններս, Գորիսը Կարմիր բանակի զորքերի կողմից գրավելու օրը (1920 թ. հուլիսի 5), հեռացել էին քաղաքից և երեք ամիս

---

[127] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 549:

այդտեղ մնալուց հետո վերադարձել ու Սիսիանում միացել էին Պ. Տեր-Դավթյանին զո-ռամասին: Դեպքերի ժամանակակից Հաքար Յոլյանը ՀՅԴ անդամ Վանո Խանզադյանին նվիրած հուշ-ակնարկում գրում է. «-Յուլի-սին, 1920 թ., բոլշեւիկների Ղարաբաղից Գորիս ներխուժման հետեւանքով՝ Վանօն շատերի հետ նահանջում է Զումանքեանդ (Ջուլի ձորերը): ...իր հօրեղբօր (իմա՛ ՀՅԴ անդամ Արտեմ Խանզադյանի – Գ.Ս.) խմբի հետ, վերադառնում է Սիսիան եւ միանում քաջակորով Պ. Տէր-Դաւթեանի զօրամասին»[129]:

Ինքնապաշտպանների համար նահանջի ճանապարհ չկար: Թշնամու վրա սկսում է կարկուտի պես գնդակներ տեղալ: Պ. ՏերԴավթյանի գլխավորությամբ քաջարի մարտիկները մի քանի անգամ գրոհում են թշնամու դիրքերը: Ոմանք անգամ վիրավոր վիճակում էին շարունակում մարտը: Պ. Տեր-Դավթյանը, արհամարհելով վտանգը, ձի հեծած, դիրքից դիրք է նետվում և քաջալերում իր կտրիճներին՝ ամուր պահել դիրքերը: Ցավոք, կռվի թեժ պահին գլխից վիրավորում է Պ. Տեր-Դավթյանը,[130] որն «...առանց ուշ դարձնելու իր հավատարիմ զինվորների թախանձանքին՝ խիզախությամբ առաջ է անցնում կռվի ամենատաք վայրը»[131]: Գնդակը ծակել էր նրա աջ հոնքը վերևի մասում, կոտրել ոսկորը:

Պ. Տեր-Դավթյանին ժամանակավորապես փոխարինում է անգեղակոթցի քաջ խմբապետ Սարգիսը, ով մարտը հաղթական ավարտին է հասցնում: Երեքժամյա կռվում չարանենգ

---

[128] Գտնվում է ՀՀ Արարատի մարզում: Ուրցաձոր է վերանվանվել 1975 թ. հունվարի 1-ին (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 5, Երևան, 2001, էջ 217):

[129] **Աշխատունի Ա. [Հաքար Յոլյան]**, Վանօ Խանզադեան (Նրա մահուան 40-օրեակի առթիւ), «Ալիք», Թեհրան, 1962, հոկտեմբեր 11, № 218:

[130] Տե՛ս Ազատ Սիւնիք: Արնոտ գիրք, էջ 86–87:

[131] Ազատ Սիւնիք: Արնոտ գիրք, էջ 86:

թշնամին ցանկանում էր թեկուզ մեծ կորուստներ տալու գնով առաջանալ, բայց ինքնապաշտպանները ցուցաբերելով համախմբվածություն ու կազմակերպվածություն, հաջողությամբ հարվածում ու ջախջախում էին նրան: Բոլշևիկներն ու ասկյարները չդիմանալով արիաբար կռվող ինքնապաշտպանների անընդհատ գրոհներին, տալով 100-ի չափ սպանված ստիպված իրիկնադեմին բռնում են նահանջի ճանապարհը[132]: «Յառաջ» օրաթերթի տեղեկացմամբ՝ «...հեռագրային տեղեկութիւնների համաձայն Սիսիանում Ղարաքիլիսա գիւղի մօտ, բոլշևիկները միացած տաճիկների հետ, յարձակւել են տեղական ժողովրդի վրայ, Ուզ գիւղի մօտ: Տեղական ազգաբնակութիւնը նրանց լաւ ջարդ տալուց յետոյ քշել է մինչև Ոշ-Թափլար»[133]:

Այդ օրվա կռիվների մասին փաստագրական արժեքավոր հուշեր է թողել Պ. Տեր-Դավթյանի զորաջոկատի զինվոր, մասնագիտությամբ բժիշկ գորիսեցի Սամսոն Շալունցը: Ըստ նրա՝ «Թուխպը սար ու ձոր էր բռնել. չէիր հասկանում՝ որտեղ ես, որտեղից են կրակում, որտեղ է թշնամիդ, որտեղ՝ բարեկամդ: Բայց պանիկա [խուճապ] չկար, հերոս հրամանատար ունեինք: Քիչ էինք, թշնամին՝ շատ: Դիմացներս լավ զինված ռուսներ և թուրքեր էին: Պողոս Տեր-Դավթյանը կենտրոնում էր, սիրուն, ջահել, վախ չուներ գնդակից: Ճապոնացիների դեմ էր կռվել, Բաքուն էր պաշտպանել, ասում էր՝ տղանե՛ր, ձեր ցավը տանեմ, ղոչա՛ղ կացեք, մտքներովդ չանցնի՝ նահանջեք: Շղթա կազմեք, թող չիմանան, որ քիչ ենք: Մեր ետևում մայրեր, քույրեր, երեխաներ են: Համբերող կլինեք, ավելորդ չկրակեք, թո՛ղ մոտե-

---

[132] Տե՛ս **Թևոսյան Բ.**, Նժդեհի հետ կողք-կողքի (Պողոս Տեր-Դավթյան), «Երեկոյան Երևան», Երևան, 1990, հուլիսի 9, № 151:

[133] «Յառաջ», Երեւան, 1920, նոյեմբերի 17, № 252:

նան, նոր կրակեք: Մեր սարերը սրանց գերեզմանը պիտի դառնան:

Ափսո՜ս: Շատ ափսոս: Ուզի կռիվը վերջինն էր: Էդ ինչու՞ մոռացան նրան, ինչու՞ ուրացան: Աչքերիս առաջ է հրամանատարը: Մոսինի գնդակը խոցել էր քունքոսկրը: Օրեր կռիվ տվեց մահվան դեմ: Դժվար փրկեինք նրան էն ժամանակվա պայմաններում»[134]:

Հիրավի, Ուզի հերոսամարտը մի գեղեցիկ էջ է հայ ժողովրդի պատմության մեջ: Այն էլ ավելի բարձրացրեց սյունեցու պայքարի ոգին և ցույց տվեց, որ նա գիտի պաշտպանել իր մարդկային ու ազգային արժանապատվությունը, գերադասում է մեռնել, քան հանձնվել թշնամու ողորմածությանը: Որևէ կասկած լինել չէր կարող, որ եթե թուրք-բոլշևիկյան զորքը Պ. Տեր-Դավթյանի գլխավորած ինքնապաշտպանական ջոկատների կողմից չստանային արժանի հակահարված, ապա սպանդի, թալանի և ավերակույտերի կվերածեին Սիսիանի շրջանը:

Պ. Տեր-Դավթյանի երիտասարդ մարմինը Բռնակոթում տեղակայված բժշկական կայանում[135] պայքարում էր մահվան դեմ, սակայն՝ ապարդյուն: 1920 թ. նոյեմբերի 20-ին[136], 40 տարեկան հասակում կյանքից հեռանում է կապիտանի աստիճանի հասած լեռների արծիվը, սյունեցիների, մասնավորապես՝ սիսիանցիների անվերապահ հարգանքն ու սերը վայելող անձնվեր ռազմիկը, ով անմնացորդ նվիրումով ծառայեց հայրենիքին: Նրա զինակից ընկերներից ՀՅԴ անդամ Բաշգառնեցի Մարտիրոսի դիպուկ բնութագրմամբ՝ «Կապիտան Պողոս Տէր Դաւթեանը Լեռ-

---

[134] **Մմբատյան Գ.**, Սյունիք. Պատմություն և հիշողություն, էջ 311:

[135] 1920 թ. դրությամբ Սիսիանի շրջանում գործող միակ բժշկական կայանը գտնվում էր Բռնակոթում (տե՛ս «Սիւնիք», Գորիս, 1920, յունուարի 1, № 1):

[136] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1917–1921 թթ., էջ 714:

նահայաստանի Խոտանան գիւղից էր, մեր լաւագոյն սպանե-
րից. հայրենասէր, անձնազոհ, չարքաշ կեանք վարող: Խաղաղ
ժամանակ գառ էր, իսկ կռի դէպքում՝ առիւծ»[137]:

Ի նշան երախտագիտության, հերոսի դին զինակից ընկեր-
ները չհանձնեցին դիակառքին, այլ նոյեմբերյան դառնաշունչ
օրերին Բռնակոթ գյուղի բժշկական հենակետից մինչև հայրենի՝
Վերին Խոտանան գյուղ, ավելի քան 60 կմ իրենց ուսերի վրա
տարան դագաղը[138] և դեկտեմբերի 4-ին մեծ պատվով ամփոփե-
ցին գյուղի գերեզմանատանը[139]:

Պ. Տեր-Դավթյանի մահը մեծ վիշտ է պատճառում Սյունյաց
լեռնաշխարհին: Սյունեցին միահոյզ և խուլ զսպումով արտա-
սվեց, արտասվեց իրենից հավիտենապես բաժանվող անմահա-

---

[137] **Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան-Բաշգառնեցի**, Իմ յիշելի յուշերը, էջ 463:

[138] Դագաղը տեղափոխող բռնակոթցի զինվորների թվում են եղել նաև Արտո Բայանը և հեծյալ հարյուրյակի հրամանատար Երվանդ Աղայանը: Ի դեպ, նվիրյալ զինվոր Արտո Բայանը մինչև կյանքի վերջին օրը իր մահճակալի գլխավերևում փակցված է պահել սիրելի հրամանատարի լուսանկարը (տե՛ս http://www.sisianmuseum.am/free.php?lng=2&parent_id=22):

[139] Տե՛ս **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 17: Նկատենք, որ 1930-ականների կեսերից երկրում տիրող համատարած բռնությունների պայմաններում պղծվել և անհետացել են ազգային գործիչների գերեզմանաքարերը: Պատմաբան Գ. Սմբատյանի հավաստմամբ՝ «Վերին Խոտանանում 30-ականներին կարող էր պղծվել ու անհետանալ Միսիանի զինված ուժերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանի գերեզմանը: Լուրեր էին պտտվում, որ էնկավեդեի հերոսները գյուղ են գալու՝ ժողովրդական հերոսի շիրիմին դրված լուսանկարով հուշաքարը տապալելու և անհետացնելու: Գերեզմանատուն ներխուժած չեկիստները հուշաքարը չգտան: 1953-ին՝ Ստալինի մահից հետո, մի օր՝ լուսաբացին, հուշաքարն հայտնվեց գերեզմանաթմբին... ամբարում, ախոռում, ցորենի մեջ, խոտի, ծղոտի դեզերում, երկար սպասելուց հետո»: 50-ականների վերջին կրկին անհետացավ: Աղրբեջանցիները բողոքել էին, որ Տեր-Դավթյանի շիրմաքարը նացիոնալիզմ է քարոզում: Մեկ տարի տեղաշորի ծաղքերում պահվելուց հետո կանգնեցվեց իր տեղում» (**Սմբատյան Գ.**, Երկաթե վարագույրից այս կողմ, էջ 173–174): Պ. Տեր-Դավթյանի շիրմաքարը փրկողներն էին նրա եղբայրների զավակները: Հայրապետի որդի՝ Քրիստափոր Սողոմոնյանը և Գրիգորի դուստր՝ Վարինկան (տե՛ս նույն տեղում, էջ 174):

նուն զավակի համար, որ խոստացել էր, սակայն, իր ժողովրդից երբեք ու երբեք չբաժանվել...

Թաղման ժամանակ արտահայտվող բոլոր ընկերներն իրենց խոսքի մեջ անդրադարձան հանգուցյալ ընկերոջ ունեցած մարդկային, ազգային և կուսակցական բարձր նկարագրին: Արցունքն աչքերին դամբանական է ասել նաև նրա զինակից, գաղափարակից ու սրտակից ընկեր Գ. Նժդեհը: Խոսքը տանք Ք.Սողոմոնյանին, որի հուշապատում-օրագրում ասվում է. «Հանդիսավոր լռությամբ հերոսի շիրիմի վրա խոնարհվեցին իր մարտական ընկերները: Գարեգին Նժդեհի աչքերում արցունքներ երևացին: Իր ելույթում ասաց. կոտրվեց իմ աջ թևի բազուկը, գնաց Զանգեզուրի արծիվը, լեգենդար հրամանատարը, ժողովրդական ինքնապաշտպանության հերոսներից հերոսը, հայ ժողովրդի հավատարիմ զավակը: Գնա անվեհեր քաջերից քաջ Պողոս: Կգա ժամանակ, որ Զանգեզուրի ժողովուրդը քո գերեզմանի վրա ուխտ կգա»[140]: Այս խոսքերն իրենց բովանդակությամբ լավագույն բնութագիրն են Պ. Տեր-Դավթյանի, որպես ինքնապաշտպանության կազմակերպչի ու հրամանատարի, ինքնին վկայում են նրա ունեցած մեծ հեղինակության և հատ-

---

[140] **Սողոմոնյան Ք.**, նշվ. աշխ., էջ 17: Անշուշտ, Գ. Նժդեհի խոսքերն իրականության դարձան: Երևանապարտ սիսիանցիները Զանգեզուրի հերոսամարտի 90-ամյակի առիթով Սիսիանի Ն. Ադոնցի անվան պատմության թանգարանի նախաձեռնությամբ (տնօրեն՝ Ծ. Պետրոսյան) 2011 թ. օգոստոսի 20-ին ուխտագնացություն կազմակերպեցին Վերին Խոտանան գյուղ՝ հարգանքի տուրք մատուցելու սիրելի հրամանատար Պ. Տեր-Դավթյանին: Թանգարանի էլեկտրոնային կայքեջում կարդում ենք. «Քահանայի աղոթքից հետո խունկ ծխվեց և մոմ վառվեց հրամանատարի գերեզմանին: Պողոս Տեր-Դավթյանի անունը կրող դպրոցին հանձնվեց Սիսիանից բերված հող ու ցորեն՝ որպես հայրենիքի և հարատևող կյանքի խորհրդանիշեր, նաև այն լուսանկարի կրկնօրինակը, որը պահվում էր Պողոս Տեր-Դավթյանի զինակիր, բռնակոթցի Արտո Բալյանի տանը: Ուխտագնացության մասնակիցները հենց գերեզմանոցում ելույթներ ունեցան, հուշեր պատմեցին հրամանատարի մասին, բռնակոթցի դպրոցականները հայրենասիրական բանաստեղծություններ արտասանեցին» (http://www.sisianmuseum.am/free.php?lng=2&parent_id=22):

կապես այն կարևորագույն դերակատարման մասին, որ խաղացել է Զանգեզուրի հերոսամարտի համատեքստում:

Պ. Տեր-Դավթյանի մահը խորը կսկիծ թողեց հատկապես նրա զինակից ընկերների սրտում: Այս առումով ուշագրավ է հետևյալ դիպվածը: Վերջին օրերին նրան խնամող բժիշկ Սամսոն Շալունցը մահվանից առաջ դստերը պատվիրել էր. «Աղջի՛կս, իմ վերջին խնդրանքը քեզ. գնաս Ղափանի Վերին Խոտանան, գերեզմանատանը համեստ, սովորական մի շիրիմ կա. հայ ժողովրդի հերոս զավակ Պողոս Տեր-Դավթյանի շիրիմն է: Ծաղիկներ տա՛ր, ձեռքդ դի՛ր քարին ու ասա՝ բարևներ Շալունցից: Ասա, ասում է՝ ներիր ինձ, հրամանատա՛ր: Ես անզոր էի քեզ օգնելու, բացի վերքերդ խնամելուց և արյունդ մաքրելուց: Ների՛ր... շուտով կհանդիպեմ քեզ...»[141]:

Դեկտեմբերի 5-ին Գ. Նժդեհը Կապանի հանքերից Սիսիանի հերոսական ժողովրդին ուղղեց հետևյալ կոչը. «Դուք, հետևելով ապստամբ Ղափանի օրինակին, թոթափեցիք բոլշևիկ-ադրբեջանական անարգ լուծը և ստեղծեցիք Ձեզ համար ազատ ու անկախ կեանք:

Փառք ու պարծանք Ձեզ: Յարգանք ձեր տաճ զոհերին ու թափած սրբազան արիւնին: Խեղճացած, բայց չար թշնամին մինչեւ Ձեր ապստամբութիւնը անարիւն կոտորածով էր բնաջնջում, ոչնչացնում Ձեզ՝ խլելով Ձեզնից Ձեր զենքը, Ձեր ղեկավարներին, Ձեր արիւն-քրտինքով ձեռք բերած մի կտոր հացը, միացած աշխարհի ամօթն ու անեծքը հանդիսացող օսմանեան ջարդարար ասկեարներին՝ նա փորձեց նորից Ձեր վզին դնել բռնութեան լուծը:

---

[141] **Ամբարյան Գ.**, Սյունիք. Պատմություն և հիշողություն, էջ 315:

Այդ փորձի ժամանակ, որը շնորհիւ Ձեր անօրինակ քաջութեան փորձանք դարձաւ պարտաւած թշնամու համար, վիրաւորեց մեր պաշտելի Պօղոսը եւ մի քանի օր անց վախճանուեց:

Փառք այդ մեծ ու հերոս նահատակին:

Այսօրւանից Պօղոսի որբացած զօրամասը յանձնում եմ շտաբս կապիտան Թորոսեանին[142], որին արդէն հրամայած է անցնել Սիսեան: Լիայոյս եմ, որ դուք, քաջանուն սիսիանցիներդ, թեւ ու թիկունք կը հանդիսանաք Ձեր նոր հրամանատարին:

Աստուած եւ իմ հոգին Ձեզ հետ»[143]:

Պ. Տեր-Դավթյանը թաղվեց հայկական մարտիրոսության անեզր գերեզմանոցում՝ անկատար ու անավարտ թողնելով շատ ու շատ երազներ: Ցավոք նա չտեսավ Ինքնավար Սյունիքն ու Լեռնահայաստանը: Սակայն նրա նահատակությունը դարձավ վերածնություն. Գողգոթայից նորից հարություն առավ և սկսվեց անմահությունը, հարատև քայլքը դեպի հավերժություն... Իր ապրած հայրենանվեր կյանքով Պողոս Տեր-Դավթյանն անցավ անմահների շարքը, որ նրանց հետ մեկտեղ դարերին պատմի իր սերնդի սխրանքների մասին:

Հիրավի, նրա կյանքը դարձավ վառ օրինակ բոլոր ժամանակների հայ ազգային-ազատագրական գործիչների համար, ովքեր պատրաստ են մարտիկին վայել համարձակությամբ անմնացորդ նվիրումով ծառայելու սեփական ժողովրդին: Այո՛, սա է պատգամը նահատակների, սա է պարտքը ապրողներիս:

---

[142] Նախքան այդ, զորամասի հրամանատարի պաշտոնում Պ. Տեր-Դավթյանին ժամանակավորապես փոխարինում է պորուչիկ Պարանյանը (տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, Նժդեհը Զանգեզուրում. 1920 թ. վերջ – 1921 թ. հուլիս, Երևան. 2001, էջ 5):

[143] **Գէորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), էջ 122:

Պողոս Տեր-Դավթյանը զոհվեց իր նշանաբանը շուրթերին. **«Ես կատարել եմ իմ պարտականությունը, նախ՝ որպես հայ և երկրորդ՝ որպես դաշնակցական»:**

**Պողոս Տեր-Դավթյանի գերեզմանը**
**Վերին Խոտանան գյուղում**

**Геворг С. Степанян,** *Институт истории НАН РА, д.и.н., профессор,* **Погос Тер-Давтян: одно яркое имя на небосклоне Сюника.**

В новейшей истории армянской освободительной борьбы героическая самооборона Зангезура в 1918–1921 гг. занимает особое место. Самооборона дала множество героев, которые своей безоговорочной преданностью и борьбой создали славную историю нашего народа. Своей патриотической деятельностью Погос Тер-Давтян, «поручик Погос», занимает достойное место в рядах героев войны за Горную Армению.

**Gevorg S. Stepanyan,** *Institute of History of the NAS RA, Doctor of Sciences in History, Professor,* **Poghos Ter-Davtyan, a bright name in the sky of Syunik.**

The Zangezur survival war during the years of 1918–1921 occupies a special place in the recent history of the Armenian liberation war. This war has given several heroes, who, with their selfless dedication and struggle, created the glorius history of our people. In the line of these heroes Poghos Ter-Davtyan – "Poruchik Poghos" stands out and occupies a worthy place.

ԱՐՄԵՆ Ց. ՄԱՐՈՒՔՅԱՆ
*ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր*

# ԳԱՐԵԳԻՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ (ՆԺԴԵՀ) ԴԵՐԸ ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ

***Բանալի բառեր՝*** Ղարաքիլիսայի հերոսամարտ, թուրքական զորքեր, Գարեգին Նժդեհ, Գուրգեն Տեր-Մովսիսյան, զորավար Անդրանիկ:

Ղարաքիլիսայի ճակատամարտը վերջինն էր մայիսյան հերոսամարտերի շարքում, որով և վերջակետ դրվեց թուրք-հայկական պատերազմին և ստորագրվեց Բաթումի հաշտության պայմանագիրը: Եթե Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերով Արարատյան դաշտավայրում ծվարած հայությունը փրկվեց անխուսափելի ոչնչացումից և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայոց պետականության վերականգնման համար, ապա Ղարաքիլիսայի ճակատամարտը, նշվածից բացի, ուներ նաև աշխարհաքաղաքական նշանակություն, քանզի դրա հետևանքով որոշ ժամանակով կասեցվեց թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Թիֆլիս ու Արևելյան Այսրկովկաս՝ խաթարելով համաթուրանական ծրագրերի շուտափույթ իրականացումը:

Սարդարապատի հերոսամարտի նախօրեին Արամ Մանուկյանը Դիլիջանում գտնվող Ալեքսանդրոպոլի Ազգային խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Հակոբյանին (Իրազեկ) տեղեկացնում է. «Պատրաստում ենք վճռական ճակատամարտ տալու Սարդարաբատի մոտ: Ի սէր Աստծո, գոնե երեք օր պաշտպանեք Ղա-

ռաքիլիսայի ճակատը, որ թշնամին իր այդ կողմի ուժերը չբերե մեր վրա»[1]: Թուրքական զորքերին Ղարաքիլիսայում պահել, նշանակում էր թույլ չտալ նրանց շրջանցել և թիկունքից հարվածել Արարատյան դաշտավայրին, իսկ այդ դեպքում թե՛ Սարդարապատի, և թե՛ Բաշ-Ապարանի հերոսամարտերը անիմաստ էին դառնում:

Ղարաքիլիսայի ճակատամարտին իր կենսագրականում դիպուկ գնահատական է տվել ճակատամարտին անմիջականորեն մասնակցած և մարտական գործողությունները ղեկավարած Գարեգին Տեր-Հարությունյանը (Նժդեհը). «1918 թ. մայիսի վերջերին վարել եմ Ղարաքիլիսայի ճակատամարտը: Վիրավորվել եմ: Ներկայացվել ամենաբարձր քաջության շքանշանի: Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսայի ճակատամարտի ոչ թե օրվա Խորհրդային Հայաստանը, այլև այդ երկրամասի վրա այսօր ապրող հայություն չէինք ունենա: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատյան հայությանը և հիմք դրեց Հայկական Պետության»[2]:

Հայկական ուժերի Դիլիջան հեռանալուց հետո Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը հայտնվել էր օրհասական վիճակում՝ նրա գլխին կախված էր թուրքական զորքերի կողմից բնաջնջվելու վտանգը: Ստեղծված պայմաններում Ղարաքիլիսայի հեղինակավոր գործիչները մտածում էին թուրքա-

---

[1] **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից. պատմական դեպքեր եւ ապրումներ 1917–1922, Պէյրութ, 1956, էջ 32:

[2] **Գարեգին Նժդեհ**, Ինքնակենսագրություն, 1944 թ. սեպտեմբեր, Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, Երևան, 2002, էջ 277:

կան հրամանատարության հետ լեզու գտնելու և նրանց մոտ պատվիրակություն ուղարկելու մասին[3]:

Իրազեկն իր հուշերում գրում է, որ զորքի Դիլիջան նահանջելուց հետո մայիսի 24-ի առավոտյան Գարեգին Նժդեհի հետ գնացին զորավար Նազարբեկյանի մոտ՝ խնդրելով, որ թույլ չտա զորքերը լքեն ճակատը, որովհետև ճակատը մերկացնելով վտանգվում էր Երևանը, ինչպես նաև Բաքվի հայերի դրությունը: Ծայրահեղ հուսալքված վիճակում գտնվող Նազարբեկյանը պատասխանում է, որ ինքն այլևս զորք չունի, իսկ զրույցի վերջում նրանց ասում է՝ ինչ կարող եք դուք արեք[4]:

Նազարբեկյանի հետ հանդիպումից հետո Իրազեկն ու Նժդեհը սկսում են իրականացնել Դիլիջան նահանջողների բեռների խուզարկումը, քանզի տեղեկություններ կային, որ Ղարաքիլիսայից հեռացողները մեծ քանակությամբ զենք-զինամթերք էին դուրս բերում՝ սայլերի կամ բեռների մեջ թաքցրած իրենց հետ տանելով հրացաններ, ատրճանակներ, փամփուշտներ, անգամ գնդացիր[5]:

Որոշ ժամանակ անց Արամ Մանուկյանի կողմից Իրազեկին հայտնած լուրը, որ Սարդարապատում հայերը փառահեղ հաղթանակ են ունեցել, Նժդեհին այնքան է ոգևորում, որ նա շտապում է Դիլիջանի եկեղեցու բակը և ժողովրդին ու զորքին միտինգի է հավաքում[6]: Նժդեհի ճառը ոգևորիչ մեծ ազդեցություն

---

[3] Տե՛ս Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ **Դալլաքյան Վ., Մարուքյան Ա.**, Երևան, 2008, էջ 103–105: Տե՛ս նաև՝ **Մ.Դ.**, Ղարաքիլիսայի հերոսամարտը (ականատեսի հիշողություններ), Թիֆլիս, 1920:

[4] Տե՛ս **Իրազեկ Յ.**, նշվ. աշխ., էջ 27–33:

[5] Նույն տեղում, էջ 30:

[6] Նույն տեղում:

է ունենում այնտեղ հավաքված զորքի և բնակչության վրա, և դրանից հետո որոշվում է վերադառնալ Ղարաքիլիսա, դուրս գալ թշնամու դեմ և կրկին աշխարհին ցույց տալ, որ հայը հերոսաբար կռվել և հայրենիքի համար մեռնել գիտի[7]:

Մայիսի 24-ի գիշերվանից Ղարաքիլիսայի ճակատամարտի փաստացի ղեկավարությունը ստանձնած Գարեգին Նժդեհը մոտ հազար զինվորներով վերադառնում է Ղարաքիլիսիա: Մայիսի 24-ի գիշերվա ժամը 2-ին հասնում են Վարդանլու գյուղը, որտեղ թողնելով հիմնական ուժերը, 50 հոգանոց հեծյալ ջոկատով Նժդեհը մտնում է Ղարաքիլիսա, որտեղ մեռելային լռություն էր տիրում, սակայն լույսերի բացակայությունը վկայում էր այն մասին, որ թուրքերը դեռ չէին մտել բնակավայր: Տուն չկար, որ սպիտակ դրոշ պարզած չլիներ: Իր ջոկատի մեկ տասնյակին Նժդեհն ուղարկում է Ղշլաղ՝ հետախուզության, իսկ ինքը մոտենում է այն տանը, ուր հինգ օր առաջ էր գիշերել: Թակում է դուռը, սակայն ներսից վախենում են դուռը բացել՝ կարծելով, թե թուրքերն են: Սկսում է տալ տանտիրոջ և նրա երեխաների անունները, ինչից հետո դուռը բացում են, և Նժդեհին տեսնելով՝ ուրախություն է գալիս մարդկանց դեմքերին:

Տեղեկանալով, որ թշնամին գտնվում է Արջուտ գյուղում և սպասում է, որ լուսաբացին աղ ու հաց պետք է մատուցվի թուրք զորահրամանատարներին, Նժդեհը կտրուկ կանխում է այդ անպատվությունը, իր մոտ եկած բնակավայրի ազդեցիկ դեմքերն էլ խոստանում են ամեն ինչ տրամադրել հայոց զորքին[8]:

---

[7] Տե՛ս Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 105: Տե՛ս նաև՝ **Մ. Դ.**, Ղարաքիլիսայի հերոսամարտը (ականատեսի հիշողություններ), Թիֆլիս, 1920:

[8] **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 2, Երևան, 2012, էջ 272:

Նժդեհը լավ էր հասկանում, որ անգամ փոքր հաղթանակը կարող էր ոգևորել ինչպես զորքին, այնպես էլ Լոռի-Փամբակի բնակչությանը, քանի որ Էրզրումից մինչև Գուգարք տխուր պարտություններն էին ու նահանջ, մյուս կողմից քաջ գիտակցում էր, որ չնչին անհաջողությունն անկարելի էր դարձնելու հետագա դիմադրությունը: Այս հանգամանքից ելնելով էր, որ իրեն ներկայացած քահանաներին և ուսուցիչներին խնդրում էր ամեն կերպ բարձրացնել զորքի և ժողովրդի ոգին[9]:

Շրջակա գյուղեր սուրհանդակներ են ուղարկվում՝ հորդորելով զենք կրելու ընդունակ գյուղացիներին մի քանի օրվա պաշարով և ունեցած ռազմամթերքով ներկայանալ Նժդեհին Ղշլաղում, ուր վերջինս մեկնել էր, որպեսզի դեռ լույսը չբացված կարողանար նպաստավոր դիրքեր գրավել՝ հակառակորդին առավոտյան դիմավորելու համար: Պահեստային ուժերի և զինամթերքի սակավության պատճառով թշնամու զորքերի առաջխաղացման ճանապարհին Նժդեհը հարկադրված ցանցաձև է դասավորում սակավաթիվ ուժերը[10]:

Դարանակալող խմբեր են տեղեկայվում վանքի ավերակների (ներկայումս՝ «Կոտրած եկեղեցի»՝ Ղարաքիլիսայի հերոսամարտի հուշարձան) և երկաթգծի կամրջի մոտ, որոնք առանց իրենց մատնելու, խաչաձև կրակով պետք է փորձեին խուճապի մատնել թուրքերի առաջապահ ուժերին՝ այդ կերպ նաև ազդանշան տալով հակառակորդի առաջխաղացման մասին: Մինչև լույսը բացվելը Նժդեհն անձամբ շրջում է բոլոր առաջապահ դիրքերով, գոտեպնդում զինվորներին և հիշեցնում, որ Երևա-

---

[9] Տե՛ս **Համբարձումեան Ռ.**, Ղարաքիլիսայի համատարած խուճապը յաղթանակի վերածող ոգին, Երևան, 2005, էջ 56:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 57:

նից իրենց հրահանգել են գոնե երեք օր թշնամու հիմնական ուժերը պս հել Ղարաքիլիսայի տակ[11]:

Մայիսի 25-ի առավոտյան ժամը 10-ին, այդպես էլ աղուտացի չարժանանալով, թշնամու ուժերը շարժվեցին առաջ և հայտնվեցին դարանակալող խմբերի խաչաձև կրակի տակ: Նժդեհի՝ անտառապատ բարձունքները հսկող դարան մտած խմբերի կատաղի կրակից թուրքերի առաջապահ զորքերը ծանր կորուստներ տվեցին և, չկարողանալով անգամ տանել իրենց վիրավորներին, խուճապահար փախան դեպի Արջուտ[12]:

Ճակատամարտի մասնակից Բենիամին Նավոյանն իր հուշերում գրում է, որ Նժդեհի հեծյալ ջոկատը Կամակատարի բարձունքի ետևի թաքստոցից այգիների և ձորերի միջով մոտեցավ թուրքերի պաշտպանական դիրքերին և մարտի բռնվեց: Չնայած այն հանգամանքին, որ թշնամին մեծաթիվ օժանդակ ուժեր ուղարկեց այդ դիրքերը պահելու համար, սակայն չկարողացան դիմանալ հայկական զորքերի ճնշմանը, ինչի հետևանքով թուրքական 11-րդ դիվիզիայի աջ թևի առաջապահ զորամասերը լիովին ջախջախվեցին և ետ շպրտվեցին: Չնայած ծանր կորուստներին, Նժդեհն իր հեծյալ ջոկատով թուրքական զորքերին հալածելով կարողացավ հասնել մինչև Արջուտի մատույցները, ինչից հետո հեծելազորը հետ ուղարկեց, իսկ հետևակին հրամայեց հրանոթային կրակի պաշտպանության տակ խրամատավորվել նվաճված դիրքերում[13]: Ականատեսների վկայությամբ Նժդեհի առաջապահ հեծելաջոկատը Հաջիղարա (ներկայիս

---

[11] Տե՛ս նույն տեղում:

[12] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, Ավարայրի ոգեկոչումը. Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1932, թիւ 3 (յունուար):

[13] Տե՛ս **Համբարձումյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 49–53: Տե՛ս նաև՝ **Багратян К.**, Годы, подвиги, судьбы, Киев., 1998.

Լեռնապատ) գյուղի մոտ առասպելական քաջագործություններ կատարեց:

Ղարաքիլիսայի հերոսամարտի անմահ հերոսներից է նաև հրետանային մարտկոցի երիտասարդ հրամանատար, կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանն, ով Ղարաքիլիսա առաջին վերադարձողներից էր: Նրա հրետանային մարտկոցը տեղակայված էր կարևոր ռազմավարական դիրք ունեցող Դարբաս գյուղի մոտ գտնվող 750 բարձունքում: Տեր-Մովսիսյանի մարտկոցն իր համազարկերով հաջողությամբ հետ էր մղում հակառակորդի գրոհները՝ մեծ կորուստներ պատճառելով վերջինիս:

Մեծ թվով զոհերից ու վիրավորներից կատաղած՝ թուրքերը զգալի ուժեր կենտրոնացրին 750 բարձունքի ուղղությամբ և հետևակային գրոհով գրեթե հասան մարտկոցին: Ստեղծված ծանր իրավիճակում Տեր-Մովսիսյանը չկորցրեց սառնասրտությունը, հրետանավորներին և հետախուզական խումբը արագ վերածեց հետևակի և համարձակ հակագրոհով թշնամուն ստիպեց նահանջել: Մարտկոցի թնդանոթները փրկված էին, սակայն դրա համար չափազանց թանկ գին վճարվեց՝ մահացու վիրավորում ստացավ ինքը՝ մարտկոցի հրամանատարը[14]: Կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը մահվանից առաջ զինակից ընկերներին հաստրեց ասել վերջին խոսքերը. «Մի՛ թողեք դիակս թշնամու ձեռքին»[15]:

Հատկանշական է, որ Ղարաքիլիսայի հերոսամարտի շուրջ հետագայում հեռակա բանավեճ ծավալվեց Գարեգին Նժդեհի և զորավար Անդրանիկի միջև, որն իր արձագանքը գտավ Ավե-

---

[14] Տե՛ս **Թորոսյան Ս.**, Ղարաքիլիսայի ճակատամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1951, թիւ 9 (308):

[15] Տե՛ս Ղարաքիլիսայի 1918 թ. հերոսամարտը, էջ 181–182:

տիս Ահարոնյանի կողմից Բոստոնի «Հայրենիք» ամսագրում հրատարակած հոդվածներում: Մեջբերելով Նժդեհի հուշերը, Ահարոնյանը նշում է, որ իզուր սպասեցին Անդրանիկին, որն իր զինվորներով, եթե երկաթուղու գիծը կտրելով գար և դիրքավորվեր Ղարաքիլիսայի արևելյան բարձունքներին, ապա այդպիսով կձախողվեր Ղարաքիլիսան շրջապատելու թշնամու ծրագիրը[16]:

Զորավար Անդրանիկն իր հրատարակած գրքույկում որոշ պարզաբանումներ է ներկայացնում Ղարաքիլիսայի ճակատամարտին իր չմասնակցելու պատճառների վերաբերյալ: Նա նշում է, որ գեներալ Նազարբեկյանի կողմից իրեն հրաման էր տրվել պաշտպանել երկաթգիծը, իսկ երբ վերջինիս օգնական զորավար Մանասյանն իրեն հաղորդել է Ղարաքիլիսայի տակ հայկական ուժերի հաղթանակի մասին՝ խորհուրդ է տվել կենտրոնով չառաջանալ, այլ ամուր պահել երկու թևերը, որովհետև թշնամու նահանջը կեղծ է[17]:

Նժդեհը հանդիմանում է Անդրանիկին, որ եթե գար և զբաղեցներ նշված բարձունքը, ապա երկաթուղին կմնար իր ուժերի թիկունքում՝ թուրքերից պաշտպանված, բայց գիտենալով հանդերձ, որ թշնամին պետք է փորձեր մեր թևերից շրջանցել և հաջողության հասնել, նա այդ ժամանակ իր հրամանատարության տակ եղած ուժերը կրավորական վիճակում պահեց[18]:

Ճակատամարտին չմասնակցելու Անդրանիկի փաստարկներից մեկն էլ այն է, որ առաջին օրվա չորս ժամվա կռիվներից հետո հաջորդ առավոտ կռիվը վերսկսվել է և երեք ժամ հետո իրեն տեղեկացրել են, որ Ղարաքիլիսան հանձնված է, և զորքե-

---

[16] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., թիւ 4 (փետրուար):

[17] Զորավար Անդրանիկ կպատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 25–27:

ը նահանջել են Դիլիջան[19]: Այս փաստարկին Նժդեհը պատասխանում է, որ Ղարաքիլիսայում անմահացող հայկական զորքը նահանջել է ոչ թե հաջորդ առավոտյան, այլ ճակատամարտի չորրորդ օրը երեկոյան: Նա տարակուսանք է հայտնում, թե ո՞վ և ինչպե՞ս պետք է Անդրանիկին այդ ստահոդ լուրը հաղորդեր՝ այն էլ մեր ամենամեծ հաղթության օրը:

Նժդեհն, անշուշտ, փորձում է հասկանալ Անդրանիկին, որ նա այդ կերպ փորձել է արդարացնել Ղարաքիլիսայի և Սարդարապատի օրերին իր անգործությունը, սակայն խորապես ցավում է այն արտահայտության համար, որ նա թույլ է տվել այն անմահ բանակի մասին, որն իր հերոսական խոյանքով հիացումի խոսքերի է արժանացել անգամ թուրք հրամանատարներից՝ Վեհիբ և Խալիլ փաշաներից[20]:

Ավետիս Ահարոնյանը Ղարաքիլիսայի հերոսամարտը համարում է 20-րդ դարի Ավարայր, երբ գերակշիռ ուժերով հարձակված թշնամին հարկադրված եղավ գնահատել հայերի անձնազոհ հերոսությունը Ղարաքիլիսայում: Բաթումի խաղաղության բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը Ղարաքիլիսայի ճակատամարտը հատուկ շեշտեց որպես գործոն, որն իրենց ստիպեց ճանաչել Հայոց պետությունը[21]:

Ղարաքիլիսայի ճակատամարտի հերոսներն իրենց անձնուրաց հերոսությամբ կատարեցին Արամ Մանուկյանի պատգամը՝ թուրքական գերակշիռ ուժերին Ղարաքիլիսայում պահելով ոչ թե երեք, այլ չորս օր՝ մինչև մայիսի 28-ը: Այդ գործում իրենց ժո-

---

[18] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., թիւ 4 (փետրուար):

[19] Զօրավար Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 27:

[20] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, նշվ. աշխ., թիւ 4 (փետրուար):

ղովրդին մեծագույն ծառայություն մատուցեցին Ղարաքիլիսայի հերոսամարտի ռազմական գործողությունների անզուգական փաստացի հրամանատար Գարեգին Նժդեհը և ճակատամարտում հերոսաբար անմահացած երիտասարդ կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը:

**Армен Ц. Марукян,** *Институт истории НАН РА, д.и.н., профессор,* **Роль Гарегина Тер-Арутюняна (Нжде) в Караклисском героическом сражении.**

Караклисское сражение было последним в череде Майских героических сражений, которым завершилась турецко-армянская война, после чего и был подписан Батумский договор. Если сражениями при Сардарапате и Баш-Апаране ставилась задача предотвращения продолжения политики Геноцида армян и истребления армянского населения Араратской долины, то Караклисское сражение, помимо недопущения ликвидации армянского населения Лори-Памбака, имело также важное геополитическое значение. Караклисским сражением временно приостановилось продвижение турецких войск на Тифлис и в Восточное Закавказье, чем приостановилась скорейшая реалиизация пантюркистских планов турецких властей.

Герои Каракилисского сражения своим самоотверженным героизмом исполнили послание Арама Манукяна, удержав превосходящие турецкие войска под Каракилисой не три, а четыре дня – до 28 мая. Своему народу в Караклисском сражении оказали неоценимую службу фактический командующий сражением

---

[21] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թթ. 55–63:

Гарегин Нжде и героический погибший на поле боя молодой капитан Гурген Тер-Мовсисян.

**Armen Tz. Marukyan,** *Institute of History of the NAS RA, Doctor of Sciences in History, Professor,* **The role of Garegin Ter-Harutyunyan (Nzhdeh) in the heroic battle of Karakilisa.**

Karakilisa battle was the last in May heroic battles to which the Turkish-Armenian war was ended and then the Batumi contract was signed. If Sardarapat and Bash-Aparan battles set a task of prevention of continuation of the Armenian Genocide and destructions of the Armenian population of the Ararat valley, that Karakilisa battle, besides prevention of elimination of the Armenian population of Lori and Pambak, had also important geopolitical value. The Karakilisa battle temporarily suspended the advance of Turkish troops to Tiflis and Eastern Transcaucasia, which suspended the early implementation of the pan-Turkist plans of the Turkish authorities.

The heroes of the Battle of Karakilisa, with their selfless heroism, fulfilled the message of Aram Manukyan, holding the superior Turkish troops near Karakilisa not three, but four days – until May 28. The actual battle commander Garegin Nzhdeh and the heroic young captain Gurgen Ter-Movsisyan who died on the battlefield rendered invaluable service to their people in the Karakilisa battle.

**ԼԻԼԻԹ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
***ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ***

# ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ԱՄՆ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1919–1920 ԹԹ.)

***Բանալի բառեր՝*** ԱՄՆ պետդեպարտամենտ, Մեծ Բրիտանիա, Հայաստանի Հանրապետություն, Զանգեզուր, Դաշնակիցներ, հայ-ադրբեջանական համաձայնագիր, Գարեգին Նժդեհ, Վիլյամ Հասկել, Ջեյմս Հարբորդ, կովկասյան թաթար:

ԱՄՆ պետական դեպարտամենտի՝ արտաքին գործերի գերատեսչության փաստաթղթերը, ի թիվս 1919–1920 թթ. հայոց պատմության մի շարք հիմնահարցերի, ուշագրավ սկզբնաղբյուր են Զանգեզուրի գոյամարտի պատմությունը համակողմանի ուսումնասիրելու համար: Վաշինգտոնի Ազգային արխիվում պահպանվող այդ փաստաթղթերի առավել կարևոր մասն ընդգրկված է 1931–1947 թթ. ԱՄՆ կառավարության կողմից պաշտոնապես հրատարակված հատորներում, իսկ մի մասի պատճեններն էլ պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) միկրոժապավենների հավաքածուներում: Նշենք, որ 2011 և 2020 թթ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ռուսերեն, ապա անգլերեն լեզուներով լույս է ընծայել պատմագիտության դոկտոր Գ. Մախմուրյանի կազմած «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917–1920 թթ. փաստաթղթերում» վերնագրով ծավալուն ժողովածուն, որում ամփոփված է ՀԱԱ տարբեր ֆոնդերում ու միկրոժապավենների հավաքածուներում

հայտնաբերված, ինչպես նաև ԱՄՆ կառավարության հրատարակած հատորներից քաղված Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող 330 ամերիկյան դիվանագիտական փաստաթուղթ[1]: Մենք նպատակ ունենք ներկայացնել 6 պաշտոնական փաստաթուղթ, որոնք ընդգրկում են 1919 թ. հուլիսի վերջից մինչև 1920 թ. հունվարի վերջն ընկած ժամանակահատվածը և ուղղակիորեն ու անուղղակիորեն լույս են սփռում 1919–1920 թթ. Զանգեզուրի ներքին դրության, երկրամասի նկատմամբ թուրք-ադրբեջանական նկրտումների, դրանց վտանգավորության հարցերի վրա:

1918 թ. աշնանը թուրքական բանակի հեռանալուց հետո Անդրկովկասում հաստատվել էր անգլիացիների գերակայությունը: Մեծ Բրիտանիայի կառավարությունը Անդրկովկասում խաղաղություն հաստատելու ձգտման քողի տակ երկրամասում իր աշխարհաքաղաքական շահերը ապահովելու խնդիր ուներ: Պատմաբան Համլետ Հարությունյանի գնահատմամբ, մի կողմից՝ Բաքվի «սև ոսկու» շլացնող ցոլքը, մյուս կողմից՝ Ադրբեջանը որպես պատվար ընդդեմ Ռուսաստանի օգտագործելու հավակնությունը անգլիացիներին դարձրել էին մուսավաթականների դաշնակիցը: Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշմամբ Արևելյան Հայաստանի Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ նահանգապետ հռչակված Խոսրով բեկ Սուլթանովը Բաքվում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Վիլյամ Թոմսոնի, այնուհետև նրան փոխարինած գնդապետ Դիգբի Շատելվորդի աջակցու–

[1] Տե՛ս Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., сост. и пер. с англ. Г. Г. Махмурян, Ереван, 2011, Armenia in documents of the U.S. Department of State 1917–1920. Compiled and translated by Gayane G. Makhmourian. Yerevan, 2020:

թյամբ փորձում էր դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, զինված ուժի գործադրմամբ հայերից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Զանգեզուրի և Արցախի հայ բնակչության պատասխանը անփոփոխ էր ու հստակ. ո՛չ Ադրբեջանի իշխանությանը: Որքան ուժեղանում էին Ադրբեջանի իշխանությունների ճնշումներն ու բռնությունները, այնքան ավելի անկոտրում էր դառնում հայության անկախ ու ազատ ապրելու և իր պատմությունն ինքնուրույն կերտելու կորովն ու կամքը[2]: Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր անասելի ծանր դրության մեջ, իսկ 1919 թ. հուլիսի 1-ին Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդը երկրամասում ռազմական դրություն էր հայտարարել՝ ռազմական ողջ ուժերը կենտրոնացնելով երկրամասի պետական կոմիսար և գերագույն հրամանատար Արսեն Շահմազյանի տրամադրության ներքո[3]: Թիֆլիսում ԱՄՆ փոխհյուպատոս Հուքեր Դուլիթլի, զինվորական առաքելության պետ Բենջամին Մուրի, Թուրքիայում ԱՄՆ զինվորական դիտորդ, մայոր Հայկ Շեքերջյանի (նստավայրը՝ Թիֆլիս), Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) ղեկավար Էռնեստ Յարրոուի, Ռումինիայի գծով ամերիկյան օգնության պատասխանատու, մայոր Ջոզեֆ Գրինի (նստավայրը՝ Թիֆլիս) կողմից հուլիսի 23-ին Փարիզում ամերիկյան առաքելության ղեկավար Ֆրենկ Փոլկին, Ռազմական հետախուզության վարչության տնօրեն, մայոր Ռոյալ Թայլերին, Պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, Օգնության ամերիկյան վարչության ղեկավար Հերբերտ Հուվերին,

---

[2] Տե՛ս **Հարությունյան Հ.**, Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), «Բանբեր հայագիտության», 2015, № 1, էջ 50–51:

[3] Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք I [Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)], Երևան, 2010, էջ 206:

Ամերկոմի գործկոմի անդամ և հոգաբարձու Հենրի Մորգենթաուին ուղղված շտապ հեռագրում ՀՀ դրությունը բնութագրվում էր որպես «ճգնաժամային». «... Եթե քաղաքական ու սահմանային հարցերը ողջամտորեն չկարգավորվեն և եթե անհապաղ չձեռնարկվեն ռազմական միջոցներ ու լայնամասշտաբ օժանդակություն, ապա նախկին ռուսական և թուրքական կայսրությունների հայերի լոկ մի մասին ներկայացնող ռուսաստանյան Հայկական հանրապետությունը կկործանվի սովից ու հարևան ժողովուրդների ներխուժումից, իսկ հայկական պետության կազմակերպումը կդառնա անհնար,- նշում էին ամերիկյան պաշտոնյաներն ու հավելում,- Հայաստանը շրջապատված է թշնամի թուրքերով՝ արևմուտքում, թուրքական հրամանատարության ներքո գործող թաթարական զորքերով՝ հարավում, թաթարների գործունեությունն ուղղորդող և թուրքերի հետ գործակցող թշնամական ադրբեջանական կազմակերպությամբ՝ արևելքում, իսկ հյուսիսում նրա հետ մրցակցում է ոչ բարեկամ վրացական հանրապետությունը»[4]: Այնուհետև, անդրադառնալով թուրքերի ու կովկասյան թաթարների օրեցօր սանձարձակացող վարքագծին, տարբեր բնակավայրերում տեղի ունեցած հայերի կոտորածներին՝ հեռագրի հեղինակները շեշտում էին բրիտանացիների կողմից պաշտոնապես ադրբեջանական կառավարությանը ենթարկեցված Ղարաբաղի ու Զանգեզուրի շրջաններում, ինչպես նաև հայկական իշխանությանը ենթակա, բայց թուրք-թաթարական ուժերի կողմից գրավված Նախիջևանում, Կաղզվանում ու Սարիղամիշում տեղի ունեցած և շարունակվող խոշոր զինված ընդհարումները, Երևան–Նախիջևան,

---

[4] Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., док. № 158, с. 166.

Երևան–Կարս երկաթուղագծերը կտրելու իրողությունը[5]: Նաև նշվում էր, որ թուրքերն ու կովկասյան թաթարները խոչընդոտում էին Օգնության ամերիկյան կոմիտեի աշխատանքին հատկապես այն շրջաններում, որտեղ հայերը տառապում էին սովից: Վրացիներն էլ, իրենց հերթին, չէին թույլատրում բեռների փոխադրումը դեպի Հայաստան: Փաստաթղթում շեշտվում էր թվարկված խնդիրներն անհապաղ լուծելու անհրաժեշտությունը որպես միակ միջոցն՝ ապահովելու համակողմանի օգնության տրամադրումը հայ բնակչությանը[6]: Նշենք, որ Զանգեզուրի դեմ Ադրբեջանի հարձակումները տեղի էին ունենում և՛ արևելքից, և՛ արևմուտքից: Դրանց ընթացքին աչալրջորեն հետևող Ջ. Գրինը հուլիսի 24-ին Օգնության ամերիկյան վարչության տնօրեն Հերբերտ Հուվերի միջոցով տեղեկացնում է պետքարտուղար Ռ.Լանսինգին և ամերիկյան զինվորական առաքելության ղեկավար Ջեյմս Հարբորդին, որ թուրքերն ու կովկասյան թաթարները թուրքական գեներալ Հալիլ-բեյի հրամանատարությամբ գրոհ են սկսել Ղարաբաղ–Զանգեզուրի ուղղությամբ և գրավում են հայկական տարածքները: Նա նաև նշում է, որ հայկական կանոնավոր բանակի պահեստները և հայ բնակչությանն օգնելու համար նախատեսված բեռներով լի գնացքները շրջապատված են ու, հավանաբար, գրավված, իսկ իրենք չեն կարող միջամտել դեպքերին, քանի որ կաշկանդված են բրիտանական կառավարության հրամաններով: Ջ. Գրինի համոզմամբ, հայ բնակչությանը հուսահատ դրությունից կարող էր հանել միայն բրիտանական զորքերի կողմից ՀՀ տարածքի, մասնավորապես՝ Ղարաբաղի ու Զանգեզուրի մաքրումը թուրք-թաթարական

---

[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 167:

ուժերից[7]: Բայց բրիտանական կառավարությունը ոչ միայն մտադիր չէր նման «բեռ» վերցնել, այլև պատրաստվում էր դուրս բերել իր զորքերն Անդրկովկասից: Նշենք, որ Նախիջևանի կողմից հարվածի տակ էր հատկապես Զանգեզուրին սահմանակից Գողթան գավառը, որի պաշտպանության կազմակերպումը ՀՅԴ բյուրոյի առաջարկով ստանձնեց Գարեգին Նժդեհը: Օգոստոսի 10-ին նա արձակեց առաջին հրամանը՝ Ղափան-Գենվազ-Գողթանի միացյալ ուժերի հրամանատարությունը ստանձնելու մասին[8]:

Քանի որ 1919 թ. օգոստոսի 12–22-ը տեղի ունեցած Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը ժամանակավորապես ճանաչել էր Ադրբեջանի իշխանությունը, Ա. Շահմազյանը, գիտակցելով և հաշվի առնելով, որ այդ որոշումն է՛լ ավելի կծանրացնի Զանգեզուրի վիճակը, օգոստոսի 17-ին զեկուցագիր է ուղարկում ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին՝ խնդրելով ուղարկել ռազմամթերք, հակառակ դեպքում, Զանգեզուրում իր մնալը համարում էր անիմաստ[9]:

Օգոստոսի երկրորդ կեսին Զանգեզուրի սահմանները համեմատաբար խաղաղ էին: Ադրբեջանի իշխող շրջանակներում գնալով ամրապնդվում էր այն կարծիքը, որ Ղարաբաղից հետո Զանգեզուրին կարելի էր տիրել առանց ուժի, առավել ևս, որ Նախիջևանում տեղի ունեցած հայերի ջարդերից հետո «մերկացել» էր Զանգեզուրի թիկունքը: Սեպտեմբերի կեսերին սկսեցին շրջել լուրեր Ադրբեջանի կողմից նախապատրաստվող նոր հարձակման մասին: Այդ օրերին իրադրությունը Զանգեզուրում գտնվում էր ՀՀ-ում գործող Ջ. Հարբորդի պատվիրակության

---

[7] Տե՛ս նույն տեղում, փաստ. № 160, էջ 169:
[8] Տե՛ս Հայոց պատմություն, էջ 206:

ուշադրության կենտրոնում: Այդ պատվիրակությունը Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովի «Չորսի խորհրդի»[10] 1919 թ. մարտի 20-ի որոշմամբ նույն թվականի օգոստոսին գործուղվել էր տարածաշրջան՝ համակողմանիորեն ուսումնասիրելու Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի, անդրկովկասյան անկախ հանրապետությունների մարդկային և բնական ռեսուրսները, միջպետական ու ազգամիջյան հարաբերությունները, տնտեսական հնարավորությունները, ռազմական կարողությունները և նախապատրաստելու զեկուցագիր Կոստանդնուպոլիս-Թուրքիա-Արևմտյան Հայաստան-Անդրկովկաս ընդարձակ տարածքի նկատմամբ ամերիկյան միասնակցն մանդատ սահմանելու նպատակահարմարության վերաբերյալ: Հայաստանի կառավարությունը չէր առարկում ՀՀ նկատմամբ մանդատն ԱՄՆ-ին հանձնելուն, ուստի Ջ. Հարբորդի պատվիրակությանը տրամադրում էր անհրաժեշտ տեղեկություններ: Այսպես, 1919 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության կողմից պատվիրակությանն է փոխանցվում 19 պաշտոնական փաստաթղթերի ցուցակ, որում, ի թիվս ընդհանուր բնույթի և Նախիջևանի ու Կարսի հարցերի, առանձին բաժնով ներկայացված էր Ղարաբաղի և Զանգեզուրի հարցը[11]: Ցուցակի այդ բաժնում ընդգրկված է 8 փաստաթուղթ, որոնցից երեքը վերաբերում են Զանգեզուրին: Դրանք են՝ «Վերջին վիճակագրական տեղեկություններ Ղարա-

---

[9] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 76, թ. 239–240:

[10] «Չորսի խորհուրդը» կամ «Մեծ քառյակը» Փարիզի վեհաժողովի օրակարգում ընդգրկված որոշիչ սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի քննարկման նպատակով ձևավորված խորհուրդ էր, որում ընդգրկված էին՝ հակագերմանական դաշինքի առաջատար պետությունների առաջնորդները՝ Վուդրո Վիլսոնը (ԱՄՆ), Դեյվիդ Լլոյդ Ջորջը (Մեծ Բրիտանիա), Վիտորիո Օռլանդոն (Իտալիա) և Ժորժ Կլեմանսոն (Ֆրանսիա):

[11] Տե՛ս Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., док. № 223, էջ 246–247:

բաղի և Զանգեզուրի հայ բնակչության վերաբերյալ, ըստ առանձին քաղաքների և գյուղերի», «1919 թ. ապրիլի 3-ի բրիտանական հրամանատարության պաշտոնական հրամանը՝ ուղղված Ղարաբաղի, Զանգեզուրի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի շրջանների բնակիչներին», «Գեներալ Ջ. Կորիի[12] հունիսի 1-ի № 13/12 նամակը՝ Զանգեզուրում իր իշխանությունը տարածելու փորձերից ձեռնպահ մնալու վերաբերյալ Ադրբեջանին արված առաջարկության հղմամբ» վերնագրերով փաստաթղթերը: Վերջիններս ուսումնասիրվել են Ջ. Հարբորդի պատվիրակության կողմից ու հաշվի առնվել 1919 թ. հոկտեմբերի 16-ին Պետդեպարտամենտ ներկայացված նրա զեկուցագիրը ձևակերպելիս, իսկ վերջինս էլ, ինչպես գիտենք, առանցքային նշանակություն ունեցավ 1920 թ. հունիսի 1-ին ԱՄՆ Սենատի կողմից միայն Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատն ընդունելու մասին Վ. Վիլսոնի մայիսի 25-ի ուղերձը մերժելու գործում:

Ամերիկյան պետդեպարտամենտի հաջորդ ուշագրավ փաստաթուղթը 1919 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանում Դաշնակից պետությունների Գերագույն կոմիսար, Ամերիկյան բանակի գնդապետ Վիլյամ Հասկելի՝ Թիֆլիսից Փարիզի վեհաժողովի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ և Պատերազմի նախարար Ժ. Կլեմանսոյին ուղարկված հեռագիրն է: Նրանում նախ թվարկված են նոյեմբերի 23-ին Թիֆլիսում ստորագրված հայ-ադրբեջանական համաձայնագրի 5 կետերը, որոնցով նոյեմբերի 5-ին Շուշիի, Կարյագինոյի և Նախիջևանի կողմերից Զանգեզուրի դեմ հարձակումը ձախողած Ադրբեջանը պարտավորվում էր

[12] Գեներալ Ջորջ Կորին 1919 թ. մայիսի 10-ից մինչև սեպտեմբերի 6-ը՝ ընդհուպ Անդրկովկասից բրիտանական զորքերի դուրսբերումը, 27-րդ դիվիզիայի և երկրամասում բրիտանական զորքերի հրամանատարի պաշտոնում փոխարինել է գեներալ Վ. Թոմսոնին:

դադարեցնել ռազմական գործողությունները երկրամասի դեմ և բացել նրա ճանապարհները՝ առանց ռազմական գործողությունները չվերսկսելու իրական երաշխիքներ տալու[13]: Այնուհետև վստահություն էր հայտնվում, որ այդ համաձայնագրի իրագործման, հետևաբար, Անդրկովկասում խաղաղության պահպանման երաշխիքը երկրամասի՝ մասնավորապես Ադրբեջանի դեմ Ա. Դենիկինի բանակի հնարավոր ռազմական գործողությունների կանխումն էր, քանի որ դրանց վտանգի դեպքում Ադրբեջանը «հարկադրված էր» ստանալ թուրքական աջակցությունը: Վ. Հասկելն առաջարկում էր, որպեսզի Փարիզի վեհաժողովը թեկուզ ժամանակավորապես՝ մինչև Անդրկովկասի հարցի վերջնական լուծումը, սահմանափակեր Ա. Դենիկինի ակտիվության շրջանակները երկրամասում՝ հիմք ընդունելով դրա վերաբերյալ բրիտանական առաջարկները[14]: Այս փաստաթուղթը լրացնելու է գալիս ԱՄՆ Գերագույն կոմիսար Մարկ Բրիստոլի 1919 թ. դեկտեմբերի 4-ի հեռագիրը պետքարտուղար Ռ. Լանսինգին, որում նույն տարվա կեսերին 600 հայերի կոտորածը Շուշիում և 5.000-ինը՝ Նախիջևանում ներկայացված են որպես վերջիններիս կողմից կովկասյան թաթարներին գրգռելու հետևանք, մասնավորապես՝ Գորիսի մոտ թաթար հովիվների վրա հայերի հարձակման արդյունքում վերջիններիս հասցված վնասների հատուցման նպատակով և Նախիջևանից թաթարնե-

---

[13] Տե՛ս նույն տեղում, փաստ. № 272, էջ 352–353: Համաձայնագիրը ստորագրել են՝ Հայաստանի ու Ադրբեջանի վարչապետերը՝ Ալ. Խատիսյանն ու Ն. Ռասուլզադեն, և Դաշնակիցների Գլխավոր կոմիսարին փոխարինող ԱՄՆ բանակի Գլխավոր շտաբի գնդապետ Ջ. Բեան՝ Վրաստանի արտգործների նախարար ու ժամանակավոր նախագահ Եվգ. Գեգեչկորին (Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, փաստ. № 130, էջ 140–141):

[14] Տե՛ս Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., док. № 272, էջ 353:

ին վռնդելուն ի պատասխան ձեռնարկված գործողություններ[15]: Մ. Բրիստոլի կարծիքով, երկրամասում իրադրության անկայունացմանը նպաստեց բրիտանական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից, ինչին զուգահեռ ոչ միայն նոր թափ առան կովկասյան թաթարների հակահայկական նկրտումները, այլև փոխվեց բրիտանացիների վերաբերմունքը «բրիտանական քաղաքականությանը ենթակա» Զանգեզուրի հայերի նկատմամբ. տեղի ազգային խորհրդին թույլատրվեց կառավարել երկրամասը, իսկ Զանգեզուրի պատկանելության հարցը մնաց չլուծված: Ամերիկյան դիվանագետը չէր սխալվում. Անդրկովկասից բրիտանական զորքերի դուրսբերումից ոգևորված՝ Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին ջանք չէր խնայում Հայաստանը «ներսից պայթեցնելու» համար: Այսպես, 1919 թ. օգոստոսի 3-ին նա իր կառավարությանը կոչ արեց «օգտագործել պահն» ու «վերջ տալ Զանգեզուրին»[15]: Մ. Բրիստոլը սխալ էր միայն Զանգեզուրի իրավական կարգավիճակի հարցում. նրա կողմից Զանգեզուրը «բրիտանական քաղաքականությանը ենթակա» համարելը կրկնությունն էր 1919 թ. հուլիսի 23-ի վերոնշյալ հեռագրում տրված ձևակերպման, որը չէր համապատասխանում իրականությանը: Թե՛ Վաշինգտոնի և թե՛ Երևանի արխիվային ֆոնդերում պահպանվող դիվանագիտական վավերագրերը, մասնավորապես՝ 1919 թ. մարտի 28-ին 27-րդ դիվիզիայի հրամանատար Վ. Թոմսոնի՝ Երևան կատարած այցը և դրան հաջորդած իրադարձությունները ներկայացնող փաստաթղթերը վկայում են, որ բրիտանացիներին չի հա-

---

[15] Տե՛ս նույն տեղում, փաստ. № 273, էջ 353–354:

[16] Տե՛ս նույն տեղում, փաստ. № 273, էջ 354: ՀԱԱ. ֆ. 200. ց. 1, գ. 427, մաս 1, թ. 210:

ջողվել Զանգեզուրը ենթարկել Բաքվի իշխանությանը[17]: Նույն հեռագրում ԱՄՆ Գերագույն կոմիսարը նաև նշում էր, որ իր տպավորությամբ հայկական տարածքների վրա կովկասյան թաթարների հարձակումների նպատակը Ա. Դենիկինի դեմ Ադրբեջանի ու Վրաստանի հետ համատեղ գործողությունների վերաբերյալ համաձայնագրի ստորագրման հարցում Հայաստանի համաձայնության կորզումն էր, մանավանդ, որ դա բխում էր Դաշնակիցների շահերից: Այդ առիթով նա մատնանշում էր Վ. Հասկելի կողմից Փարիզի վեհաժողովին արված առաջարկը Կովկասում Ա. Դենիկինի ակտիվության շրջանակները սահմանափակելու վերաբերյալ՝ հավելելով, որ ինքը վերջինիս հետ միասին անելու է հնարավոր ամեն ինչ՝ դենիկինյան զորքերի դեմ անդրկովկասյան հանրապետությունների համատեղ պայքարը կազմակերպելու համար[18]:

ԱՄՆ պետդեպարտամենտի փաստաթղթերում ակնհայտ է Զանգեզուրի հայերին կովկասյան թաթարների նկատմամբ բռնությունների մեջ մեղադրելու, նրանց իբրև մարդասպաններ, ավազակներ ներկայացնելու միտում՝ առանց խորամուխ լինելու իրադարձությունների պատճառահետևանքային կապերի մեջ կամ էլ դիտավորյալ խեղաթյուրելով փաստերը, ինչի դրսևորումներից է 1920 թ. հունվարի 22-ին Վ. Հասկելի հեռագիրը Ռ. Լանսինգին[19]: Հեռագրի հիմքում ամերիկյան մի սպայի կողմից Գեղվածորի և Օխչի ձորի թաթարների շրջանում անցկացված հարցման արդյունքներն են: Դրանցում միակողմանիորեն՝ կով-

---

[17] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 4: Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., док. № 273, էջ 357:

[18] Տե՛ս Армения в документах Государственного департамента США 1917–1920 гг., док. № 273, էջ 354:

[19] Տե՛ս նույն տեղում, փաստ. № 293, էջ 383–384:

կասյան թաթարների տեսանկյունից, նկարագրված են 1919 թ. նոյեմբերի 18-ին ՀՀ կառավարության որոշմամբ Դրաստամատ Կանայանի (Դրո) հրամանատարությամբ ստեղծված ռազմարշավային ջոկատի և գեներալ-մայոր Ղազարյանի հրամանատարության տակ դրված Զանգեզուրի զինված ուժերի կողմից դեկտեմբերի սկզբներին ձեռնարկված քայլերը նշված բնակավայրերի թաթարներին հնազանդեցնելու ուղղությամբ: Փաստաթղթի բովանդակությունը վկայում է՝ կովկասյան թաթարները համոզել էին ամերիկյան սպային, որ իրենք հարձակվել էին ու թալանել Օրդուբադին մերձակա հայկական Գեղվաձոր և Օխչի ձոր բնակավայրերը, որոնք նախկինում «զավթված» էին եղել հայերի կողմից: Այնուհետև, առանց դիմադրության ձյունապատ լեռները փախած հայերը, Գորիսում հրետանային համալրում ստանալով, հարձակվել էին թաթարների վրա, շրջապատել ու դուրս մղել նրանց: Ողջ մնացածները փախել էին Օրդուբադ ու Նախիջևան, որտեղ նրանց հարցուփորձ էր արել ամերիկյան սպան: Թաթարները հաստատել էին, որ «Հայաստանի նպատակը բոլոր թաթարների դուրսմղումն է Զանգեզուրից, Օրդուբադի ու Ջուլֆայի գրավումը և այդ կերպ Նախիջևանի հարկադրական մաքրումը»[20]: Վ. Հասկելն իր հեռագրում Պետդեպարտամենտի ուշադրությունը հրավիրում էր այն փաստի վրա, որ ՀՀ կառավարության կողմից կովկասյան թաթարների զինաթափումից հետո ընդլայնվել էր վերջիններիս նկատմամբ հայերի զինված բռնությունների աշխարհագրությունն ու հաճախականությունը: Ուստի նա պնդում էր, որ ՀՀ կառավարությունը ձեռք առներ անհետաձգելի միջոցներ՝ կանխելու նմանատիպ գործողությունների կրկնությունը: Դաշնակից պետությունների Գերա-

[20] Նույն տեղում, փաստ. № 293, էջ 384:

գույն կոմիսարի կարծիքով, «ՀՀ գործող կառավարությունը հետևողականորեն ապացուցում էր իր անհուսալիությունն ու անկարողությունը՝ անթաքույց դրսևորելով իր տարածքն ու քարոզչության նյութն ընդլայնելու ձգտում»[21]: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Այսպիսով, ներկայացված ամերիկյան արխիվային վավերագրերը փոխլրացնում են միմյանց: Դրանք ամբողջացնում են 1919-1920 թթ. Զանգեզուրում առկա իրադրության պատկերը՝ մերկացնելով Դաշնակից պետությունների շահամոլ քաղաքականությունը ՀՀ նկատմամբ, Ադրբեջանի ու Թուրքիայի զավթողական նկրտումները հայկական տարածքների, մասնավորապես՝ Զանգեզուրի նկատմամբ: Ժամանակաշրջանի պատմական իրողություններն առավել քան հասկանալի են 2020 թ. սեպտեմբեր–նոյեմբերին Արցախի Հանրապետության դեմ տեղի ունեցած թուրք–ադրբեջանական ագրեսիայից հետո Զանգեզուրի վերաբերյալ Անկարայից ու Բաքվից անթաքույց հնչող հավակնությունների համատեքստում:

**Лилит Г. Оганисян,** *Институт истории НАН РА, к.и.н., доцент,* **Зангезур в документах госдепартамента США (1919–1920 гг.).**

Документы Государственного департамента США являются достойным внимания источником для всестороннего изучения истории борьбы Зангезура за выживание. Среди них особенно важны: срочная телеграмма вице-консула США в Тифлисе Х. Дулитла, начальника военной миссии Б. Мура, военного наблюдателя в Турции Г. Шекерджяна, начальника АКПБВ Э. Ярроу,

[21] Նույն տեղում, էջ 384:

начальника ААП на Кавказе майора Дж. Грина – начальнику американской миссии в Париже Ф. Полку, директору управления военной разведки майору Р. Тайлеру, госсекретарю Р. Лансингу, директору АПА Г. Гуверу, Г. Моргентау (23 июля 1919 г.), телеграмма Дж. Грина – Г. Гуверу, для Р. Лансинга (24 июля 1919 г.), список 19 документов, переданных правительством Республики Армения начальнику военной миссии в Армению Дж. Харборду (1 октября 1919 г.), телеграмма Верховного комиссара Союзников в Армении полковника армии США В. Гаскеля – председателю Парижской мирной конференции, премьер министру и военному министру Франции Ж. Клемансо (1 декабря 1919 г.), телеграмма Верховного комиссара США М. Бристоля – Р. Лансингу (4 декабря 1919 г.), телеграмма В. Гаскеля – Р. Лансингу (22 января 1920 г.). Документы раскрывают внутреннее положение Зангезура, турецко-азербайджанские устремления в отношении региона, их опасность и продажную политику союзных держав по отношению к Армении в 1919–1920 годах. Исторические реалии того периода более чем понятны в контексте заявлений о Зангезуре, откровенно звучащих из Анкары и Баку после турецко-азербайджанской агрессии против Республики Арцах в сентябре – ноябре 2020 г.

**Lilit G. Hovhannisyan,** *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History, Associate Professor,* **Zangezur in U.S. State department documents (1919–1920).**

The documents of the U.S. State Department are a remarkable source for a comprehensive study of the history of Zangezur's struggle for survival. Among them are especially important the

urgent telegram from the U.S. vice-consul at Tiflis H. Doolittle, chief of the military mission B. Moore, military observer in Turkey H. Shekerjian, chief of the ACRNE E. Yarrow, chief of the ARA Mission in the Caucasus Major J. Green – to the chief of American Mission in Paris F. Polk, Director of Military Intelligence Bureau Major R. Tyler, Secretary of State R. Lansing, director of the ARA H. Hoover, H. Morgenthau (July 23, 1919), the telegram from the Major J. Green – to the H. Hoover, for the R. Lansing (July 24, 1919), the list of 19 documents, submitted by the Government of the Republic of Armenia – to the chief of the military mission to Armenia J. Harbord (October 1, 1919), the telegram from the Allied High Commissioner in Armenia, Colonel of the U.S. Army W. Haskell – to chairman of Paris Peace Conference, Prime Minister of France and its Minister for War G. Clemenceau (December 1, 1919), the telegram from the U.S. High Commissioner M. Bristol – to the R. Lansing (December 4, 1919), the telegram from W. Haskell – to the R. Lansing (January 22, 1920). These documents reveal the internal situation of Zangezur, the Turkish-Azerbaijani aspirations towards the region, their danger and the venal policy of the Allied powers towards Armenia in 1919–1920. The historical realities of that period are more than understandable in the context of the claims about Zangezur, undisguisedly sounded from Ankara and Baku after the Turkish-Azerbaijani aggression against the Artsakh Republic in September–November 2020.

ԷԴԳԱՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
*ՀՊՄՀ, պ. գ. թ., դոցենտ*

# ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՇՈՒՐՋ

***Բանալի բառեր՝*** Գարեգին Նժդեհ, Աշոտ Մելիք-Մուսյան, Սյունիք, Զանգեզուր, կարմիր 11-րդ բանակ, բոլշևիկներ, ազատագրական պայքար:

1920 թ. ապրիլին Ադրբեջանը խորհրդայնացնելուց հետո բոլշևիկներն իրենց խնդիրը համարեցին ձեռնամուխ լինել նաև Հայաստանի խորհրդայնացմանը: Խորհրդային դարձած Ադրբեջանի սպառնալիքը Հայաստանի Հանրապետության և հատկապես Արցախի ու Սյունիքի նկատմամբ ավելի ահագնացավ, քանի որ այն արդեն վայելում էր Խորհրդային Ռուսաստանի անմիջական աջակցությունը: 11-րդ կարմիր բանակը նախատեսել էր Հայաստանի խորհրդայնացումը սկսել Արցախից ու Սյունիքից: Ադրբեջանը նպատակ էր հետապնդում խորհրդայնացնելու անվան տակ իրեն կցել Արցախն ու Սյունիքը, որով փաստորեն կիրականանար թուրքերի պանթուրքիստական ծրագրերի հերթական փուլը:

Այդ ծրագրերի իրականացման դեմ էր ուղղված զանգեզուրցիների հերոսական մաքառումը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ 1919–1921 թթ, որով ի չիք դարձավ ադրբեջանաթուրքական վաղնջական երազանքը: Գարեգին Նժդեհի զանգեզուր-

յան գործունեության վերաբերյալ գոյություն ունի առատ փաստական նյութ: Այդ թեմային անդրադարձել են տարբեր պատմաբաններ: Պատմաբան Արամ Սիմոնյանը 1920–1921 թթ. Զանգեզուրի գոյամարտը ամփոփել է առանձին մեծածավալ մենագրության մեջ[1]:

1920 թ. հուլիսին Լեռնային Ղարաբաղից ներթափանցած 11-րդ Կարմիր բանակին հաջողվել էր գրավել Զանգեզուրի մեծ մասը: 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը Նժդեհից պահանջում էր թողնել Զանգեզուրը[2]: Սակայն վերջինս ոչ միայն հրաժարվեց հեռանալ Զանգեզուրից, այլև ձեռնամուխ եղավ Զանգեզուրի ազատագրման գործին: Նույն թվականի օգոստոսի 25-ին Ղափանի Կավարտ գյուղում Գարեգին Նժդեհը օծվեց որպես Կապարգողթի հրամանատար-դիկտատոր[3]: Բոլշևիկները փորձեցին համոզել Նժդեհին կամավոր հանձնել Զանգեզուրի մնացած մասը, սակայն ապարդյուն: Դրանից հետո կարմիրբանակայինները 1920 թ. օգոստոսի վերջին անցան հարձակման և արդեն սեպտեմբերի առաջին տասնօրյակում գրավեցին Զանգեզուրի մեծ մասը՝ բացառությամբ Մեղրիի շրջանի և մի քանի այլ գյուղերի: Սակայն սեպտեմբերի կեսերից Նժդեհի հրամանատարությամբ սկսվում է զանգեզուրցիների մաքառումը և գերմարդկային ճիգերի արդյունքում արդեն հոկտեմբերի 10-ին վերագրավվում է Ղափանը, իսկ մեկ տասնօրյակ անց արդեն ազատագրված էր ողջ Սյունիքը:

---

[1] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի հերոսամարտը 1920–1921 թթ., Երևան, 2000:

[2] Նույն տեղում, էջ 183–184:

[3] Տե՛ս **Համբարձումեան Ռ.**, Գարեգին Նժդեհ, Երևան, 2008, էջ 196:

Այս իրադարձություններն են նկարագրված հրատարակության ներկայացվող փաստաթղթում: Այն պահպանվում է Հայաստանի ազգային արխիվի Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտի ֆոնդում[4]: Փաստաթղթում նկարագրվող իրադարձությունները ժամանակագրական առումով ընդգրկում են 1920 թ. սեպտեմբերի 1-ից մինչև նույն թվականի նոյեմբերի 7-ն ընկած շրջանը: Փաստաթղթի ստեղծման տարեթիվն ու ամսաթիվը հստակ չէ: Սակայն, ելնելով շարադրանքի բնույթից, կարելի է ենթադրել, որ փաստաթղթի հեղինակը իրադարձությունները նկարագրել է դեպքերից տարիներ անց:

Նշենք, որ փաստաթուղթը ձեռագիր և անստորագիր է: Ակնհայտ է, որ փաստաթղթի հեղինակն անմիջական մասնակցություն է ունեցել նկարագրվող իրադարձություններին, եղել է Նժդեհի մտերիմ զինակիցներից մեկը և ներկայացնում է ականատեսի աչքերով իրադարձությունները: Նկարագրվող իրադարձությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև ձեռագրերի համեմատությունը թույլ է տալիս պնդել, որ փաստաթղթի հեղինակն է Աշոտ Մելիք-Մուայանը՝ Գարեգին Նժդեհի հավատարիմ զինակիցներից մեկը: Նման հետևության համար հիմք է հանդիսացել նաև այն փաստը, որ սեպտեմբերի 6-ին Կալերում տեղի ունեցած ժողովից հետո Նժդեհը, Գենվազի հրամանատարը և Աշոտ Մելիք-Մուայանը միասին մեկնում են Շիվանիձոր, այնուհետև Մեղրի[5]: Այդ դեպքերը սույն փաստաթղթում հեղինակը նկարագրում է որպես անմիջական մասնակից:

---

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 162, թթ. 1–6, շրջերես:

[5] Տե՛ս **Նժդեհ Գ.**, Հայ-բոլշեւիկեան կռիւները, «Հայրենիք», հոկտեմբեր, թիվ 12, 1923, էջ 101:

Փաստաթղթում ոչ միայն նկարագրվում է Նժդեհի կողմնակիցների հաջողությունները և Զանգեզուրի ազատագրման ընթացքը, այլև ցույց է տրվում, որ շատ վայրերում տեղացիները, եթե նախկինում բարյացակամ էին տրամադրված բոլշևիկների հանդեպ, ապա վերջիններիս կողմից Զանգեզուրի մեծ մասի գրավելուց հետո կարճ ժամանակ անց հիասթափվում են: «...Ժողովրդի միակ ցանկությունը դա է (ազատագրել Ղափանը և ողջ Զանգեզուրը – Է.Հ.), որովհետև մի ամսայ ընթացքում շատ թոյն ընդունեցին բոլշևիկներից, այլևս հանդուրժել չենք կարող նրանց արարքներին...»[6],- ասված է փաստաթղթում: Դրա պատճառը կարմիրբանակայինների հալածանքներն էին տեղացիների նկատմամբ և երբեմն անմարդկային ու դաժան գործելաոճը, որի մասին խոսում է փաստաթղթի հեղինակը: «Թշնամին, մտնելով յիշեալ գիւղերը (Արծվանիկ, Ըրկենանց, Չաւինի – Է.Հ.), որտեղ մնացել են քիչ կին և երեխայ, հաւաքում ուղարկում են Գորիս մի քանիսին, իսկ մնացեալին անխնայ կոտորում են, մեր զինուորները այդ դէպքից գոգուած լինելով գերի չեն վերցնում-ընկածներին կոտորում են»[7],- նշված է փաստաթղթում:

Փաստաթղթի հեղինակը հիացմունքով է խոսում Գարեգին Նժդեհի՝ հրամանատարին և առաջնորդին բնորոշ հատկություններ մասին՝ նրան անվանելով «երկրորդ Դավիթ Բեկ», «Աժդահա փաշա», որի ներկայությամբ և առաջնորդությամբ էլ պայմանավորված էր Զանգեզուրում տարված հաղթանակները:

Խոսվում է նաև Նժդեհի զինակիցների և վաշտապետերի մասին, որոնք անմիջական դերակատարություն են ունեցել Ղա-

---

[6] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 162, թ. 1, շրջերես:

[7] Նույն տեղում:

փանի և Զանգեզուրի մնացած հատվածների ազատագրման գործում[8]:

Փաստաթուղթը բաղկացած է երկու մասից՝ գրված նույն հեղինակի կողմից: Այն հրատարակվում է լեզվական և ոճային առանձնահատկությունների պահպանմամբ: Կատարվել են որոշակի կետադրական շտկումներ:

### *ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՋԷՅՎԱՅԻ[9] ԴԷՄ*

Սեպտ[եմբերի] 1-ին բոլշևիկները յարձակեցին Ջէյվայի վերայ: 2 սուտկա[10] կատաղի կռիւ մղելուց յետոյ նոքա մտան Ջէյվա գիւղը և ձեռք բերելով Ղալտաշ անուանեալ տեղի ամենակարևոր դիրքերը, որտեղ խփւեց և հրամանատարի[11] ձին, նոքա տէր ու տիրական դարձան այդ Ղալտաշին, միևնոյն օրը, այն է՝ 3-ին սեպտ. թշնամին միաժամանակ յարձակւեց և՛ Գեղայ ձորից, և՛ Թափասարից: Թափասարից եկած խումբը Ջալին-կեօլ[12] կոչւած տեղը հանդիպում է հրամանատարին իր 5 ձիաւորների հետ, որտեղ կռի են բռնում և թշնամին տալիս է 11 սպանած և բաւականին վիրաւորներ: Այս բոլորը աչքի առաջ ունենալով, որ չորս կողմից շրջապատւած ենք, միևնոյն ժամանակ նկատելով Ղափանի ժողովրդի մէջ եղած սրիկաների[13] վերաբերմունքը և չորս գիւղի, այն է՝ Երիցվանիկի, Սևաքարի, Զափնիի, Ըրկինանցի ժողովրդի վերաբերմունքը, նաև ժողովրդի գրաւոր դիմումը, որ կռւելու միջոցներ չունին, ստիպւած եղանք սեպտ. 4-ին առա-

---

[8] Նույն տեղում:

[9] Գյուղ Կապանի տարածաշրջանում, ներկայումս՝ Դավիթ Բեկ:

[10] Երկու օր:

[11] Նկատի ունի Գարեգին Նժդեհին:

[12] Լիճ:

[13] Նկատի ունի բոլշևիկներին:

ւստեան նահանջել դէպի Խուատուֆի[14] լեռները: Առաջին գիշերը մնացինք Շփռոտում, որտեղից 5-ին անցանք Կալեր, 6-ին Կալերում ընդհանուր ժողով ունեցանք, իմանալու արդեօ՞ք Գինուազի ժողովուրդը գրկաբաց ընդունելու է թշնամուն, թէ ոչ: Ժողովականները համոզեցին մեզ, որ մինչև վերջին շունչը պիտի դիմադրեն թշնամուն: Այդ հիման վրայ էլ սկսեցինք պատրաստութիւններ տեսնելու, որպէսզի յարձակման դէպքում կարողանանք մեզ պաշտպանել և միևնոյն ժամանակ չմոռացանք Ղափանը, որտեղ անվերջ մարդիկ էինք ուղարկում ստուգելու դրութիւնը և պարզելու թշնամու ուժերը և այլն: Ամսի 12-ին լուր հասաւ, թէ յարձակւել են Շիվանիձորի վրայ: Մենք գնում էինք Մեղրի, որտեղ հասնելով ստացանք գրութիւն, որ Շիվանիձորում կռիւը սաստկանում է, իսկոյն վերադարձանք Շիվանիձոր, ամրացրինք դիրքերը, անցանք Շիշկերտ և Մազրա գիւղերը ու այնտեղի ուժերը հանեցինք թշնամու թիկունքը (Շահբազ-Իւրդի կողմով): Վերադարձանք Շիրվանի ձոր, որտեղ ստացանք գրութիւն, թէ թշնամին Ալանգեազի[15] կողմից էլ է յարձակւել: Առանց ուշանալու հրամանատարի հետ ճանապարհւեցինք դէպի Կարճեւան: 15-ին ամրացրեց Կարճեւանի դիրքերը և անցանք դէպի Կաքաւաբերդի դիրքերը, որտեղ հրամանատարը կարգադրեց մեր վաշտապետներից Նաւասարդին, Աղալոին և Անդրէասին և պատպրապորչիկ Արտեմին աբխոտ[16] կատարելու՝ տալով նրանց 25 զինւոր Լիճք-Դաշտունից: Այդ ամսի 17-ին էր ժամը 16-ին: Միւս օրը ժամը 11-ին թշնամուն ջարդեցին, փախուստի

---

[14] Խուատուփ-լեռ Սյունիքում, Ղափանից 10 կմ հարավ-արևմուտք, ունի 3021 մ բարձրություն:

[15] Ալանգազ կամ Ալանգյալ, լեռներ Զանգեզուրի լեռնահամակարգի հարավային կողմում, ձգվում է Արաքս գետին զուգահեռ:

[16] Զինվորական շրջայց:

մատնեցին՝ վերցնելով մի քանի գերիներ, ռազմամթերք, 2 պուլեմիոտ[17] և այլն:

18-ի գիշերը վերադարձանք Մեղրի, որտեղ 19-ին խորհրդակցութիւն ունեցանք: Ի միջի այլոց հարց ծագեց Ղափանի ապստամբութեան մասին, որ ինչ գնով էլ ուզում է լինի, պիտի վերագրաւենք և այդ միայն կփրկէ մեր հայրենիքը[18]:

Նամանաւանդ մեր ստացած տեղեկութիւններից պարզ էր, որ ժողովուրդը շատ դժգոհ է եկւորներից-բոլշևիկներից: Այդ դիտաւորութիւնը իրագործելու համար ճանապարհեցինք Կալեր գիւղը, որտեղից մարդիկ ուղարկեցինք դէպի Ղափան, որպէսզի ժողովրդի տրամադրութիւնը, միտքը իմանան և զինուորներ պատրաստին:

Կալերում տեղեկութիւն ստացանք Ղափանից, որ թշնամին մեծ ուժերով շարժել է դէպի Բաղաբերդի շրջանի Փիրմազրայ[19] գիւղը: Հանեցինք բոլոր զինուորներին դիրքերը և ուլտիմատումի[20] ձևով յայտնեցինք Քիւրդիքէնդ[21] գիւղը հասած բոլշևիկներին, որ 24 ժամի ընթացքում հեռանան: Միւս օրը՝ ամսի 22-ին, նորանք հեռացան: Վերադարձանք Լիճք գիւղը, որտեղ տեղեկութիւն ստացւեց, թէ թշնամին նորից յարձակւել է Շիվանիձորի վերայ, միաժամանակ տեղեկութիւն ստացւեց, որ Ալանգեազի ճակատից ևս թշնամին յարձակում է գործել: Երկու ճակատում էլ կռիւը տևեց մինչև ամսի 29-ը: Երկու ճակատումն էլ թշնամին

---

[17] Գնդացիր:

[18] Մեղրիի ժողովի ժամանակ Ղափանում ապստամբության կազմակերպման պատասխանատվությունը դրվեց Գերասիմ Աթաջանյանի և Սամսոն Մելիք-Փարսադանյանի վրա:

[19] Գյուղ Սյունիքում, այժմ կոչվում է Կաթնառատ:

[20] Վերջնագիր:

[21] Գյուղ Սյունիքում, այժմ՝ Լեռնաձոր:

յետ շպրտեց: Ամսի 30-ին եկանք Կալեր, որոշեց մեր տղաներից մի քանիսին ուղարկել Ղափան՝ ժողովրդի տրամադրությունը իմանալու:

Հոկտեմբերի 1-ին ստացեց մի գրություն Ճակատէն գիւղից, ուղղած հրամանատարին, որով գիւղի ամբողջ զինտրությունը վաշտապետ Արմենակ Դավթեանի հետ միասին խնդրում են անցնել Ղափանը, գրաւել ու տէր դառնալ: Միաժամանակ շեշտում են, որ ժողովրդի միակ ցանկությունը դա է, որովհետև մի ամսւայ ընթացքում շատ թոյն ընդունեցին բոլշևիկներից, այլևս հանդուրժել չենք կարող նրանց արարքներին, այն է հասարակութեան մէջ եղած ձեռնհաս մարդկանց երկրից հեռացնելուն, պարէնի հաւաքելուն և այլն:

Որոշեցինք նամակին պատասխանել, պահանջելով տալ աւելի մանրամասն, պարզ տեղեկություններ ու պատրաստեցինք երկու օրից յետոյ անցնել Ղափանը:

Ամսի 4-ին թշնամին հանգստություն չտուեց մեզ, նորից յարձակուեցին Շիվանիձորի վրայ ու մենք գնացինք այդ ֆրոնտը[22] թշնամու գործողությունները չեզոքացնելու: Ամսի 6-ին մեր տղաներից վաշտապետ Գերասիմին, Կարապետին, Աստուածատուրին, Սաշին, Գրիգորին, Անդրէասին և պարուչիկ Բ. Մէլիք-Ղարագեոզեանին կարգադրեց, որ անցնեն Ղափան, իրաքանչիւրը իւր շրջանի ապստամբական ուժերը պատրաստելու նպատակով:

Հոկտեմբեր 8-ին ժամադիր եղանք Ղարա-Եօխուշ[23] անուանեալ տեղը, որտեղ պիտի որոշէր մեր անելիքը, նրանց զեկուցումը լսելուց յետոյ:

---

[22] Ռազմաճակատ:

[23] Լեռնագագաթ Զանգեզուրի լեռնաշղթայում:

Մենք նշանակած՝ օրը 8-ին, հասանք այնտեղ, բայց տղորցից և ոչ մէկը չկար նշանակած վայրում, 4 ժամ սպասելուց յետոյ վերադարձանք Ղազըղ-Բաթմազ[24] վայրը: Լուսաբացին եկաւ մեզ մօտ վաշտապետ Գերասիմը[25], ասաց, որ իրեն շփոթեցրել է մեր սուրհանդակը, սխալ տեղեկութիւն տալով ու աւելացրեց, որ Ճակատէն, Կիւրկիւմ, Հանքերը ինչպէս մի սիրտ, մի հոգի պատրաստ են զոհուելու և խնդրում են հրամանատարին չուշացնել վերագրաւման գործը, որքան հնարատոր է շուտ սկսել:

Մեր հարցին, թէ ո՞րտեղ մնացին միւս ընկերներդ, պատասխանեց, թէ չգիտէ, միայն աւելացրեց, որ իրեն հասած հաստատ տեղեկութեան համաձայն բոլշևիկները մեծ ուժով դարձեալ շարժւել են դէպի Բաղաբերդի շրջանը: Գերասիմին յետ ուղարկեցինք, որպէսզի միւս ընկերներին էլ վերցնելով գայ մեզ մօտ, որ խորհրդակցելով մեր անելիքը որոշւի: Ժամադիր եղանք ժամը 4-ին կէսօրից յետոյ: Նորա գնալուց յետոյ Բաղաբերդի շրջանի Փիրմազրայ գիւղից գրութիւն ստացւեց, որ թշնամին ամսի 8-ին յարձակւել է իրենց վերայ, բայց յետ են շպրտւել, միաժամանակ օգնութիւն էին խնդրում՝ աւելացնելով, որ էլի սպասւում է թշնամու կողմից նոր յարձակում, իսկ հարևան Հանդ և Փուխրուտ[26] գիւղերը տատանւում են իրենց օգնելու: Իսկոյն Գողթանի զորամասի պետ Ղազարը իր տղաներով և թնդանօթով ուղարկեցինք այնտեղ օգնութեան: Մեզ մօտ մնաց 7 հոգի: Սպասում ենք որոշւած ժամին Գերասիմին, բայց չկան: Գալիս են մեզ մօտ Ճակատէնից 2 հոգի՝ Աղաբէկը ու Արամը, յետոյ գալիս են դարձեալ 2 հոգի, որոնք յայտնում են, թէ իրենց ասել են, որ լոյս 9-ի

---

[24] Բարձունքը գտնվում է Կապանի Ներքին Մազրա և Մեղրիի Կալեր գյուղերի միջև:

[25] Աթաջանյան:

գիշերը հրամանատարը դալու է, որ յարձակումն սկսէ, այդ առթիւ իրենք էլ ամբողջ օրը իրենց սահմանով անցուդարձ անողներին, թէ՛ մեծամասնական պաշտօնեաներին և թէ՛ միլիցիաներներին[27] և թէ՛ ռեվկոմներին[28], բոլորին բռնել բանտարկել են, նոյնպէս բանտարկել են իրենց սահմանով անցնող խաղաղ բնակիչներին (որպէսզի այսու այն կողմը լուր չտանին) համոզուած լինելով, որ լուսաբացին ամէն կողմից յարձակումն կ'սկսուի, այժմ լուսաբացին ոչ մի գործողութիւն չկան: Նրանց արած յայտարարութիւնը չափազանց ազդում է մեզ վրայ, բայց ի՞նչ արած ոչ թնդանօթ կայ, ոչ ոյժ, բոլորը ուղարկել ենք Բաղաբերդի շրջանը: Մի խոսքով, շատ կրիտիքական[29] ռոպէ էր, էլ յետ կենալու հնարաւորութիւն չկար: Ճանապարեցինք դէպի Ղարաեօխուշ կոչտող վայրը, տեսակցելու մերոնցից մէկի հետ ու մեր անելիքը որոշել և սկսել:

Սուրհանդակը վերադառնում է գիշերայ ժամը 10-ին ու հաղորդում է մեզ ցանկալի տեղեկութիւնները, որից յետոյ պատրաստւում ենք անցնել դէպի Ղափան, վերագրաւելու համար մեր քաղցր հայրենիքը:

Կէս գիշերին մեր ձախ թևը՝ ղեկավարութեամբ Ս-ի (Սամսոն Մելիք-Փարսադանյան – Է.Հ.) և վաշտապետ Կարապետի, կալերցի 6 տղաների և պօդպրապորչիկ Բ. Մելիք - Քարամեանցի հետ, ընդամենը ութ հոգի, ճանապարհւում է, իրագործելու իրենց յանձնուած խնդիրը, իսկ հրամանատարը գնում է աջ թևի Կիւրկիամի (Գուտկում – Է.Հ.) և Ճակատէնի ուղղութեամբ: Որոշում է, որ ամէնքը պիտի ժամը 3-ին լուսաբացը իրենց դիրքերը

---

[26] Փխրոտ-գյուղ Սյունիքում:

[27] Ոստիկաններին:

[28] Նկատի ունի հեղափոխական կոմիտեների անդամներին:

հասնին, որպէսզի նշան տալուց միանգամից, ամէն կողմից սկսի յարձակումը: Հրամանատարը գիշերայ ժամը 2-ին հասնում է Կիւրկիամ գիւղը, իսկ ձախ թևը միայն ժամը 4-ին է հասնում Վաչագան գիւղը: Հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ գիւղի ուսումնարանի շէնքում գտնւում են բոլշևիկ ռուսներ, իսկոյն մօտենում ենք դպրոցական շէնքին ու առաջարկում այնտեղ լինող զինուորներին անձնատուր լինել, բայց բոլշևիկները պատասխանում են, որ անձնատուր չենք լինում ու սկսեցին պատուհաններից կրակել մեզ վրայ: Կռիւը սկսւեց, տեսնելով շէնքում փակաւծների յամառութիւնը, դիմեցինք դինամիտի օգնութեանը, պայթեցնելով շէնքի մի մասը, գերեցինք այնտեղ լինողներին բոլորին: Չանցած 10 րոպէ, կռիւը սկսւեց նաև հանքերումը ու երկու ժամից յետոյ նշանակաւծ բոլոր վայրերից գալիս են կեդրոնը (Ղափանի հանքերը) գրաւում: Վերցրաւծ է 300-չափ գերիներ, մօտ 100 ձի, 12 պուլիմեօտ, փամփուշտ, սայլեր և այլն:

Հոկտեմբերի 10-ին թշնամին փախուստի դիմեց Ղափանի սահմաններից դուրս: Ամսի 11–12-ին սկսում ենք ամրացնել դիրքերը: Գալիս են զանազան գիւղերից զինուորութիւն, ժողովուրդ ու պատգամաւորներ աղուհացով, մատաղով հրամանատարի մոտ, ուրախ, ուրախ, երգերով ու դափ ու զուռնայով: 12-ին երեկոյեան ստանում ենք Մեղրու շրջանից մի գրութիւն, որ թշնամին նորից երկու ֆրօնտով Ալանգեազով և Շիրանի ձորով յարձակում է գործել, խնդրում ու աղաչում են, որ վերադառնայ այդ ֆրօնտը:

13-ին հրամանատարը գնում է դէպի Գինուազ՝ թողնելով այստեղ Ս-ին (Սամսոն Մելիք-Փարսադանյան – Է.Հ.) և վաշտա-

---

[29] Ճգնաժամային, տագնապալից, ճակատագրական, անելանելի:

պետներին տալով նրանց կարևոր հրահանգներ երկրում իշխանությունը ամրացնելու նկատմամբ:

16-ին առաւօտեան Խոտանանի ճակատից և Երիցվանիկի ճակատից հաղորդում են, որ թշնամին մեծ ուժերով յարձակւել է այդ ուղղութիւններով: 4 օր ու գիշեր երկու ճակատում էլ ուժեղ դիմադրութիւն ցոյց տալով թշնամուն թոյլ չենք տւել մի քայլ անգամ առաջանալու իրենց գրաւած դիրքերից: Հրամանատարը ամսի 20-ին վերադառնում է Գինուազից ու այդ օրը թշնամուն յետ ենք շպրտում Խոտանանի դիրքերից, վերցնելով 8 պուլիմեօտ, 60 գերի և բաւականաչափ կոտորում նրանցից: Երիցվանիկի շրջանում թշնամուն յաջողւում է գրաւել մեր դիրքերը և մտնում է Երիցվանիկ, Չափնի, Ըրկինանց և Սևաքար գիւղերը: Լոյս 22-ին Խոտանանի կողմից անցնում ենք թշնամու թիկունքը և փաւռաւոր ջարդ տալիս թշնամուն, վերցնելով գերիներ մոտ 100 հոգի, պուլիմեօտ 20 հատ: Թշնամու կողմից թէ Խոտանանի և թէ Երիցվանիկի մօտ սպանւած է մօտ 255[30] հոգի:

28-ին մի գրութիւն է ստացւում, որ թշնամին յարձակւել է Գողթանի վրայ: Իսկոյն հրամանատարի կարգադրութեամբ Ղազարը, որը անցել էր Գինուազի շրջանը, պիտի անցնէր Գողթան՝ իւր մօտ լինող Գողթանի ուժերով և օժանդակ ոյժեր վերցնելով Բաղաբերդի շրջանից:

30-ին հրամանատարը ճանապարհւում է դէպի Գինուազ՝ Ալանգեազի ուղղութեամբ դեմօնստրացիա անելու Օրդուբատի վրայ, որպէսզի թշնամուն ստիպի իր ուժերը յետ քաշելու Գողթանից:

---

[30] 255 թիվը տեքստում ավելացված է կարմիր գույնի մատիտով:

Բարեբախտաբար նոյեմբեր 1-ին լուր է ստացուել Գողթանից, որ թշնամին այնտեղ ևս Ցղնայի տակ երկու սպանուած թողնելով կորագլուխ յետ է նահանջել:

Հրամանատարի գնալուց յետոյ՝ նոյեմբեր 1-ին, անամօթ թշնամին երկու թնդանօթով և պուլիմեօտներով յարձակուեց մեր արևելեան ֆրոնտի Ագարակ գիւղի վրայ, ամբողջ օրը ռմբակոծութեան ենթարկեցին այդ գիւղը՝ արձակելով 80 ռումբ, հետևանքը՝ սպանուած է մի կին և փլեցրած է մի երկու տան մասերը (պատերը կամ կտուրը):

Նոյն օրը երեկոյեան դէմ մերոնք հակագրոհ տուին թշնամու վրայ, որը, թողելով մի քանի դիակներ, յետ նահանջեց: Նոյեմ. 2-ին նոյն ուղղութեամբ մեր կատարած խոր հետախուզութիւնը մինչև Իգդալու թուրք գիւղը երևան չհանուեց թշնամու ներկայութիւնը, այդ օրը անցաւ խաղաղ:

Նոյեմբ[երի] 3-ին թշնամին յարձակում է Ճակատէն հայ գիւղի վերայ, բայց հանդիպելով մերոնց դիմադրութեանը, տալով սպանուածներ ու թողնելով սպանուածների մօտ դոկումէնտներ[31], փախչում է Ղարագեօլ թուրք գիւղի ուղղութեամբ: Միևնոյն օրը կատարած խոր հետախուզութիւնը երևան հանեց, որ Ղարագեօլից էլ է փախել թշնամին:

Նոյեմ[բերի] 3-ին թշնամին յարձակում է նաև Ղզլտաշի ուղղութեամբ Երեցվանիկի վրայ և 4-ի առաւօտեան յաջողում է նրան գրաւել Երեցվանիկի գլխի բարձունքը՝ Կարմիր-վանք կոչուած տեղը: Թշնամին ունէր 3 թնդանօթ, 10-ից աւելի պուլիմեօտներ:

6-ի առաւօտեան մերոնք շրջապատեցին թշնամուն, խլեցին 7 պուլիմեօտ, փամփուշտներ և այլ աւարներ:

---

[31] Փաստաթղթեր:

7-ի առաւօտեան խ՝որ հետախուզութիւնը ցոյց տուեց, որ թշնամին այլևս մեր սահմաններում չի երևում: Պէտք է աւելացնել, որ թշնամին երկու ֆրօնտում էլ ունէր ոչ պակաս քան 600-ական ոյժ:

Ղափանի վերագրաւման գործում մեծ դեր են խաղացել և օգտակար եղել մեծ չափով հետևյալ անձինք.

1. Արմենակ Մանասեան Դաւթեանց-Ճակատէն գիւղացի, վաշտապետ, առաջինն է մտել հանքերը և գերիների առաջը կտրողը եղել:

2. Գերասիմ Թեւանեան Աթաջանեանց-կիւրկիմեցի, շրջանային վարչութեան պետ, առաջինն է եղել, որ Բազաբուրջ գիւղի վրայով մտել է հանքերը և իսկոյն գրաւելով իր ընկերների՝ Արմենակի, Սաշա Սողոմոնեան Մարտիրոսեանի հետ հետամուտ է եղել թշնամուն: Առաջնակարգ կռուող է:

3. Գրիգոր Թադէոսեան Պօղոսեան-կաւարդեցի վաշտապետ, մինակ դիմադրել է թշնամուն նրա վրայ գնդացիրային խիստ կրակ է բացել:

4. Սաշա Սողոմոնեան Մարտիրոսեան-բարաբաթումցի վաշտապետ, օժանդակել է հանքերի գրաման գործում:

5. Աստուածատուր Սահակեանց Տէր-Պետրոսեանց-խոտանանցի վաշտապետ, փակել է Ինջաբիլի անցքը:

6. Յարութիւն Ավանեսեան Գրիգորեան-խըդրանցի, վաշտապետ, անվեհեր և աննման քաջութիւններ է ցոյց տուել Ղափանում տեղի ունեցած բոլոր կռիւներում:

7. Տիգրան Գրիգորեան Ղազարեանց-խըդրանցի վաշտապետ, Յարութիւնի զինտրը, միշտ խիզախ յարձակող թշնամու վրայ:

8. Նաաասարդ Ավակիմեան Վեզիրեան-վաչագանցի անվեհեր քաջութիւններ է ցոյց տուել Ղափանում տեղի ունեցած բոլոր կռիւներում:

9. Կարապետ Աղաջանեան Նուրիջանեան-վաչագանցի նախկին շրջանային վաշտապետ, Գեղայ ձորի կռիւներում և Ղափանի վերագրաման գործում մեծ գործ է կատարել, նոյնպէս Վաչագանի ուսումնարանի շէնքը պայթեցնելու և այնտեղ գտնուող ռուսների գերի վերցնելու գործում:

10. Անդրիաս Բախշեան Տէր-Յարութիւնեան-եղավարդցի, Ագարակի շրջանային վաշտապետ, արևելեան ճակատում տեղի ունեցած կռիւներում մեծ քաջագործութիւններ է արել, նոյնպէս և Երիցավանիկի շրջանում տեղի ունեցած կռիւներում և Ղափանի վերագրաման ժամանակ:

11. Բոգդան Մովսէսեան Տէր Մովսէսեան-զէյվեցի վաշտապետ, Զէյվի ճակատում տեղի ունեցած կռիւներում քաջութիւն է ցոյց տուել:

12. Թադէոս Անտոնեան Բաղաբուրջեցի-նախկին վաշտապետ Բաղաբուրջ գիւղի, Ղափանում տեղի ունեցախ վերջին յարձակումների ժամանակ աչքի էր ընկնում իր քաջութեամբ:

13. Խաչանի Թումանեան-Ճակատէնցի փոխվաշտապետ, Ճակատէն գիւղի, Ղափանի վերագրաման գործում և նոյեմբերի 3-ին Ճակատէնի վրայ թշնամու յարձակման ժամանակ մեծ քաջութիւն է արել:

14. Պատւական Տէր Գրիգորեան Սիակեանց-շիշկերտցի վաշտապետ, մեծ դեր է խաղացել Ղափան-Գենաազի շրջաններում տեղի ունեցած կռիւներում: Ամենանեղ ժամանակ կենդանի հաղորդակցութիւն պաշտպանելով հրամանատարութեան հետ և թոյլ չտալով, որ իրենց գիւղը խմորի «բոլշևիկեան» ախտով:

15. Պօդպրապօրչիկ Բագրատ Մկրտիչբէկեան Մէլիք-Քարամեանց-ղարաբաբեցի, աչքի է ընկնում Ղափանի վերագրավման ժամանակ Վաչագանի ուսումնարանի վրայ յարձակելու և այնտեղ գտնուած ռուսներին գերելու գործում և միւս տեղերում տեղի ունեցած կռիւներում:

16. Պօդպրապօրչիկ Արամ Մնացականեան-ճակատէնցի, աչքի էր ընկնում Ղափանի վերագրաման գործում իր ունեցած եռանդագին գործունէութեամբ և նոյեմբեր 3-ին Ճակատէնի վրայ տեղի ունեցած յարձակման յետ մղելու գործում, նոյնպէս Խոտանանի ճակատում տեղի ունեցած կռւում:

17. Պարուչիկ Բագրատ Աւետիս-Բէկեան Մէլիք-Ղարագեոզեանց-եղավարդցի, հիւսիսարևելեան ճակատի պետ, աչքի է ընկնում Ղափանի վերագրավման գործում, նամանաւանդ փայլուն քաջութեան օրինակներ ցոյց տւեց հոկտեմ. 22-ին և նոյեմբեր 6-ին Երիցվանիկի վրայ տեղի ունեցած յարձակումների ժամանակ, իր քաջերով անցնելով թշնամու թիկունքը յաղթութեան նժարը թեքել է դէպի մեր կողմ, երկու դէպքում էլ թշնամուն մեծ ջարդ է տւել, խլել է պոլիմիոտներ և վերցրել գերիներ:

18. Սամսոն Աթայեան Մարտիրոսեան-խըդրանցի, թիկնապահ հրամանատարի, Ղափանի վերագրաման գործում և այլ պարագաներում ցոյց է տւել քաջութիւն, եղել է իր սիրելի հրամանատար Նժդեհին միշտ հաւատարիմ և արթուն իր պաշտօնում:

19. Բեխի վաշտապետ՝ Արշակ Մարտիրոսբէկեան Մէլիք-Փարսադանեանը, Առաջաձորի վաշտապետ Ստեփան Ղազարեանը, Խլպթաղի վաշտապետ Դաւիթ Աւետիսեան Մինասեանը, շրվինանցի վաշտապետ Վարդազար Գասպարեան Պետրոսեանցը, Նորաշէնցի վաշտապետ Արշակ Մարտիրոսեանը

միշտ գտնուել են իրենց կոչման բարձրութեան վրայ և փայլուն կերպով կատարել են իրենց յանձնած գործերը:

20. Բաղաբերդի շրջանի Փիրմազրայ գիւղի վաշտապետ Տիգրանը անվեհեր քաջութիւն է ցոյց տուել բոլշևիկների իրենց գիւղի վրայ յարձակման ժամանակ, թշնամուն փախուստի է մատնել, բացի այդ նրա ղեկավարութեամբ գիւղի ամբողջ հասարակութիւնը ծառացել է թշնամու դէմ ու չի ենթարկուել գայթակղութեան:

21. Պօդպրապօրչիկ Արտեմ Սարգսեան-ղարաբաղցի (Գիւնէյ-Ճարտար գիւղից), քաջ, անվեհեր և կտրիչ է եղել բոլոր կռիւներում, վեր է ամէն գովասանքից:

Մեր գրիչը անզօր է նկարագրել Կափգեն-Գողթի[32] (Ղափանի, Գենուազի և Գողթանի) սիրելի հերոս Նժդեհի՝ «երկրորդ Դաւիթ-Բէկի», «Աժդահա փաշայի» մի տարուց ի վեր այս շրջանում կատարած քաջագործութիւնները: Տեղի ունեցած բոլոր կռիւներում, որ ճակատում էլ նա յայտնուել է, իր օրինակով ոգևորել է զինուորութեանը ու միշտ գտնուելով առաջին շարքերում, տարել է թշնամու վրայ փայլուն յաղթանակներ: Չնայած այն հանգամանքին, որ կռի տաք ժամանակը խփուել է իր տակի ձին և մի ուրիշ տեղ էլ վիրաւորուել է ոտքից, բայց և այնպէս ոչ մի ժամանակ կռի առաջին շարքերից չի հեռացել ու իւր բարոյական օրինակով շատերին է մղել հերոսական գործեր կատարելու:

Բաւական է, որ թշնամին իմանար, թէ իւր դէմ կռուողը «Աժդահա փաշան» է, այնուհետև նա՝ թշնամին, միշտ բռնում էր փախուստի ճամբան իրեն գլուխը ազատելու համար:

Նժդեհը որպէս Դաւիթ Բէկեան ուխտի հաւատարիմ զինուոր, միայն մի առ ժամանակ ստիպած եղաւ շնորհիւ Ղափանի

---

[32] Կապարգողթի:

Երիցվանիկ, Չափնի, Ըրկենանց և Սևաքար գիւղերի դաւաճանութեան (որոնք մոլորւած էին բոլշևիկական ագենտների խոստումներով) և ժողովրդի գրաւոր դիմումին (որ զինամթերքի պակասութեան և այլ պատճառներով իրենք այլևս հնարաւորութիւն (չունեն – Է.Հ.) կռուելու թշնամու դէմ) բարձրանալ Խուստուփի սարը և այնտեղից սրատես արծի աչքերով դիտել ներքևում կատարւող բոլշևիկական էպոպէան: Նա այդ սարի գագաթին էլ երբեք մտքից չէր հանում Ղափանի վերագրաւման գործը: Սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 10-ը նա ջարդ ու փշուր անելով Ալանգեազից, Շիրվանի-ձորից, Բաղաբերդից և արևելեան ֆրօնտից իրեն օղակող թշնամուն, իրեն հաւատարիմ ընկերների հետ վերագրաւեց Ղափանը ու հոկտեմ. 10-ին թշնամուն դուրս քշեց Ղափանի սահմաններից: Հոկտեմ. 16–21-ին և նոյեմ. 1-6-ին տեղի ունեցած թշնամու յարձակումները Ղափանի վրայ նոր փառք են աւելացնում մեր սիրելի հերոսի անւանը: Թշնամին (ռուս և թուրք) երկու նւագում էլ ջարդված կորագլուխ ետ է նահանջում մեր սահմաններից՝ զարդարելով մեր լեռները ու անտառները, տափարակները և ձորակները իրենց դիակներով: Սեպտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 7-ը թշնամին տւել է սպանւածներ մօտ 600, գերիներ – 500 հոգի, խլված է մօտ 45 պուլիմեօտներ, փամփուշտներ, հեռախոսական պարագաներ, սայլեր, մօտ 100 ձի, հրացաններ և այլն:

***Բոլշևիկների պարբերաբար հարձակումները...***

Մոռացա գրելու, որ Ղափանի գրաւման ժամանակ Խլաթաղից առաջացող զորամասը Զալի Գէօլ կոչված տեղում պատահում է հրամանատարին մի քանի հոգով, որտեղ սկսող կռւում

թշնամին թողնում է իր կամանդիրին[33] 10-ից աւելի դիակների հետ վիրավորները և մնացած ոյժը, յետ է փախչում: Իսկ Ղափանը վերագրավման ժամանակ խլում է 15 պուլիմեօտ, 500 հարիւր հրացան, 100-աւելի ձիեր, 100 հազար փամփուշտ և զանազան ռազմական աւար:

Անցնելով 6 օր, ամսի 16-ին հրամանատարի բացակայութեան ժամանակ թշնամին միաժամանակ Ինժաբելից մինչև Մոդես[34] սկսում է իր յարձակումները 5 օր տևող կռիւը որտեղ ստանում է կատաղի բնոյթ, վերջանում է թշնամու կատարեալ պարտութեամբ: Պարտելով Ինջաբելում՝ Գերասիմի, Ասատուրի, Տաթևից հասնող պարուչիկ Պողոսի հարձակումներից, թշնամին տալով 60 աւելի գերիներ և ահագին դիակներ 8 պուլիմեօտի հետ անկարգ փախչում է մինչև Գորիս: Միւս օրը հրամանատարից հրամայված լինելով վաշտապետեր՝ Արմենակին, Նավասարդին, Կարապետին, Անդրէաս Մէլիք-Գարագեօզեանին պաշարել Արծվանիկ, Սևքար, Չափնի, Ըրկենանց մտնող պօլկերին[35] և ոչնչացնել: Առաւօտեան ժամը 5-ին միաժամանակ սկսում է յարձակումները 8 ժամ տևող: Կատաղի կռիւը վերջանում է բոլշևիկների խայտառակ պարտութեամբ, կռաղաշտի ամբողջ տարածութիւնը թշնամու դիակներով լիքն է լինում: Վաշտապետ Անդրէասը և վաշտապետ Յարութիւնը, կտրելով Կրենա ձորի դիրքերը, փառատր կերպով ջարդում են՝ խլելով ահագին քանակութեամբ ռազմամթերք: Ամսոյս 16-ին սկսած կռիւը, որ վերջանում է 21-ին, թշնամու 4 պօլկերից հազիւ է հաջողում մի չնչին մասն ազատել: Արծվանիկի ֆրօնտում նրանք

---

[33] Հրամանատար:

[34] Գյուղ Սյունիքում, այժմ՝ Կաղնուտ:

[35] Գնդերին:

տալիս են հարիւրի չափ գերիներ, 10 հատ պուլիմէտ, հսկայական փամփուշտ, ձիաներ և այլ ռազմամթերք:

Նոյեմբերի 1-ին նրանց մի պօլկը 2 թնդանօթի հետ յարձակւում է Ագարակ գիւղի վերայ: Ռմբակոծելով գիւղը՝ սկսում է մի քանի պուլիմեստների հետ առաջանալ, բայց հանդիպելով ուժեղ դիմադրութեան և զգալով, որ մերոնց առաջանալը վտանգ է սպառնում թնդանօթներին, նահանջում է մինչև Խօջահան: Ամսի երեքին իրենց յարձակումը սկսում են Ճակատէն գիւղի վերայ, այդտեղ 2 ժամ ձգող կռւում սպանւում է ըստ երևոյթին պօլկի կամանդիրը և 8 հատ էլ զինւոր անկարգ փախչում է մինչև Ղարագեօլ՝ գիշերով անցնելով Զանգեզան: Իսկ Արծվանիկի ֆրօնտում, որտեղ ունէին 3 թնդանօթ և 10 աւելի պուլիմեստներ, 2 օր կռւելուց յետոյ նրանց յաջողւում է մտնել Արծվանիկ, Զափնի, Ըրկենանց գիւղերը: Երեք գիւղերի ժողովուրդն էլ գաղթած է լինում: Ամսի 5-ին Գենվազից գալիս է հրամանատար Նժդեհը, իջնելով ձիուց հրամայում է օֆիցերներին[36] և վաշտապետներին անմիջապէս պաշարել և վերագրաւել վերոյիշեալ գիւղերը: 6-ին սկսւում է պ. Նժդեհի յարձակումները, ամբողջ օրը տևող կատաղի կռվում չնայած նրանց երեք թնդանոթը գործի են հանել, բայց կատարեալ պարտութիւն են կրում: Մեծ դեր է խաղում այդ կռվում Մելիք Ղարագեօզեանը, շ.կապ.[37] Թորոսեանը, կապիտան Նարինյանը, վաշտապետ Անդրեասը և այլն: Թշնամին թողնում է 7 հատ պուլիմէտ և հսկայական քանակութեամբ փամփուշտ և այլ աւարներ: Թշնամին մտնելով յիշեալ գիւղերը, որտեղ մնացել քիչ կին և երեխայ, հաւաքում ուղարկում են Գորիս, մի քանիսին, իսկ մնացեալին անխնայ կոտորում են: Մեր

---

[36] Սպաներին:

[37] Շտապս կապիտան:

զինտրները այդ դէպքից գոգուած լինելով գերի չեն վերցնում - ընկածներին կոտորում են:

Գրիչս չի ուզում նկարագրել, որ անցեալ անգամ, երբ նրանք մտան Արծվանիկ, բռնաբարեցին 35 չափ կանանց, թալանելով բոլոր տները:

**Эдгар Г. Оганнесян,** *АГПУ, к.и.н., доцент,* **Документ о деятельности Гарегина Нжде в Зангезуре.**

В документе, который хранится в Национальном Архиве Армении описывается деятельность главнокомандующего Гарегина Нжде и освобождение им Зангезура от красноармейцев с 1-ого сентября по 7-ого ноября 1920 г.

По нашему мнению, автором этого документа является Ашот Мелик-Мусян, который не только имел непосредственное участие в этих событиях, но и являлся близким соратником Нжде.

Интересно, что здесь описаны не только боевые успехи Нжде в борьбе против красноармейцев, а также разочарование местных жителей жестокой деятельностью большевиков.

**Edgar G. Hovhannisyan,** *ASPU, Candidate of Sciences in History, Associate Professor,* **Document on Garegin Nzhdeh's activity in Zangezur.**

In the following document, stored in the National Archives of Armenia, the liberation activities of Zangezur with the effort of Garegin Nzhdeh from the 11th Red Army soldiers, during 1 September – 7 November 1920 are presented.

We believe, Ashot Melik-Musyan – G. Nzhdeh's companion-in-arms to be the author of the document. Apart from being one of

Nzhdeh's close companions-in-arms, he also directly took part in the described events. It is especially important, that here not only Nzhdeh's military successes against the Red Army, but also the local Armenian population's disappointment to the Bolsheviks, which was the result of their violence and inhumanity are described.

The document is being fully published for the first time.

**ՀԱՄՈ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**
***ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ***

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921 Թ.)

***Բանալի բառեր՝*** Խորհրդային Հայաստան, Զանգեզուր, Գարեգին Նժդեհ, սահման, գավառ, գյուղ, տարածք, որոշում, բաժանում, իշխանություն:

1919 թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունը վարչական տեսակետից բաժանվել էր 9 գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Սուրմալուի, Դարալագյազի և Զանգեզուրի: 1920 թ. մայիսյան հակապետական ապստամբությունից հետո երկրի կառավարումն առավել կենտրոնացնելու նպատակով հանրապետությունը բաժանվեց 4 նահանգի՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց[1]: Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ Սյունիք-Զանգեզուրը ներառված էր ՀՀ կազմում՝ առանց հատուկ վարչատարածքային սահմանագծման: Այդ շրջանում սա տարածված գործելակերպ էր:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրի երրորդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության

(ՀՍԽՀ) տարածքը կազմելու էր շուրջ 43000 քառ. կմ: Հանրապետության մասը հանդիսացող տարածքների թվում էր նախկին Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը, որի տարածքը շուրջ 6829,7 քառ. վերստ կամ 7772 քառ. կմ էր: Համաձայնագրի այլ կետերի նման սույն հոդվածը ևս մնաց թղթի վրա[2]:

Երևանի «Կոմունիստ» պաշտոնաթերթի 1920 թ. դեկտեմբերի 26-ի համարում տպագրված ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմ Իսահակ Դավլաթյանի «Նահանգների ու շրջանների վերացման մասին» հրամանով հանրապետությունը ժամանակավորապես բաժանվեց 6 գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Դարալագյազի[3]: Ինչպես տեսնում ենք, այստեղ Սյունիք-Զանգեզուրը հիշատակված չէ: Նշված են այն հայկական տարածքները, որոնց վրա փաստացի տարածվում էր Հայաստանի հեղկոմի իշխանությունը: Երկրի վարչա-տարածքային վերջնական բաժանումը 1921 թ. փետրվարյան հակախորհրդային ապստամբության պատճառով առժամանակ հետաձգվեց: Բացի այդ՝ կարևոր էր հստակեցնել, թե հարևան պետությունների հետ վիճելի համարվող տարածքներից որո՞նք էին միանալու Խորհրդային Հայաստանին:

1921 թ. փետրվարի վերջին խորհրդայնացվեց Վրաստանը, իսկ ապրիլի սկզբին խորհրդային ուժերը վերագրավեցին Երևանը: Փաստորեն, Անդրկովկասի հիմնական մասում խորհրդային իշխանություն հաստատվեց: Այդ իշխանությունը չէր տա-

---

[1] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 446, «Հառաջ», Երևան, 18 հունիսի 1920, N 126:

[2] **Խաչատրյան Կ., Մուքիասյան Հ., Բաղալյան Գ.**, Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920–1930-ական թվականներին, Երևան, 2020, էջ 30–43:

[3] Սովետական Հայաստան, հանրագիտարան, Երևան, 1987, էջ 18:

ռածվում միայն 1920 թ. դեկտեմբերի 25-ին «Ինքնավար Սյունիք», իսկ արդեն 1921 թ. ապրիլի 26-ին «Լեռնահայաստան» անվանակոչված Զանգեզուրի վրա:

1921 թ. հուլիսի 20-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի հրատարակած «ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետով հանրապետությունը բաժանվեց 8՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր Բայազետի, Դարալագյազի գավառների՝ 33 գավառակով: Գավառակների սահմանների փոփոխումը, կենտրոնների որոշումը, գավառների միջև դրանց վերաբաժանումը, նոր կենտրոնների որոշումը և գավառից կամ գավառակից քաղաքների առանձնացումը կատարում էր Հայաստանի ժողկոմխորհը՝ ներքին գործերի ժողկոմատի առաջարկությամբ և համապատասխան հեղկոմի միջնորդությամբ[4]:

Հուլիսի 20-ի դեկրետը հապշտապ էր ընդունվել: Ասվածի հաստատումն է այն, որ արդեն օգոստոսի 16-ին Ժողկոմխորհը նոր դեկրետ ընդունեց, որով նախորդ դեկրետի՝ Երևանի գավառին վերաբերող մասը փոփոխության ենթարկվեց. առանձնացվեցին Վեդի-Բասարի և Ախտայի գավառակները[5]:

Վերը հիշատակված երկու դեկրետներում Զանգեզուրը հիշատակված չէ՝ չնայած հիմնական դեկրետի հրապարակումից շուրջ 2 շաբաթ առաջ խորհրդային գերակշիռ զինուժի առաջխաղացման պայմաններում ամբողջ գավառը խորհրդայնացվել էր: Հուլիսի 9-ին Գարեգին Նժդեհն իր մի խումբ կողմնակիցներով Մեղրիի հատվածում անցել էր Արաքս գետի պարսկական ափը: Զանգեզուրի ինքնապաշտպանությունն ունեցավ այն արդ-

---

[4] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ II. Էջմիածին, 1921. էջ 83–84:

յունքը, որ երկրամասի հայությունը փրկվեց ադրբեջանական ջարդերից: Առաջին հերթին լեռնականների դիմադրությամբ էր պայմանավորված, որ Զանգեզուրի գավառի հայաբնակ հատվածը միացավ Խորհրդային Հայաստանին:

ՀՍԽՀ վարչական վերաբաժանմանը վերաբերող դեկրետներում Զանգեզուրի շրջանցումը, մեր կարծիքով, ուներ իր օբյեկտիվ պատճառը: Չնայած Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի հայտնի հայտարարությանը՝ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու մասին[6], նաև Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրի երրորդ հոդվածին՝ Զանգեզուրի խորհրդայնացմանը հաջորդող օրերին ՀՍԽՀ իշխանությունների համար դեռևս հստակ չէր, թե նախկին Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի որ մասերը պետք է ընդգրկվեն հանրապետության կազմում: Բանն այն է, որ, ինչպես 1921 թ. մայիսի 12–15-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի պատվիրակների միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ[7], այնպես էլ ՀՍԽՀ ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 13-ի նամակ-հայտարարությունում, որի համաձայն երկրամասը կազմելու էր Խորհրդային Հայաստանի մասը[8], չէր նշվում, թե Զանգեզուրն ինչպիսի սահմաններով պետք է անցներ ՀՍԽՀ-ին: «Զանգեզուր»-ի դեպքում առաջին հերթին պետք է հասկանային ողջ գավառը՝ մանավանդ որ այդպես էր նշվում Ադրբեջանի հեղկոմի հայտարա-

---

[5] ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1921, N 3, էջ 18:

[6] Нагорный Карабах в 1918–1923 гг., сборник документов и материалов, отв. ред. **В. Микаелян**, Ереван, 1992, с. 602.

[7] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը (1920–1921 թթ.), Երևան, 2000, էջ 498–513:

[8] «Խորհրդային Հայաստան», Երևան, 19 հունիսի, 1921, N 106:

ությունում և Երևանի հայ-ռուսական համաձայնագրում: Տրամաբանորեն, կարող էին հասկանալ նաև գավառի արևմտյան՝ հայաբնակ և Նժդեհի իշխանության ներքո գտնվող մասը՝ մանավանդ որ 1917 թվականից գավառը փաստացի երկու (հայկական և մուսուլմանական) մասերի էր բաժանված:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Զանգեզուրի հետ գրեթե միաժամանակ (1921 թ. հունիսի 26-ին) խորհրդայնացված Դարալագյազը ենթարկվեց վարչական վերաբաժանման, իսկ Զանգեզուրը՝ ոչ: Հավանաբար ՀՍԽՀ իշխանություններին ժամանակ էր անհրաժեշտ նոր խորհրդայնացված Զանգեզուրի վարչական բաժանման հարցում կողմնորոշվելու համար: Կամ էլ՝ ՀՍԽՀ ղեկավարությունը սպասում էր Հայաստանի և Ադրբեջանի միջև նախկին Զանգեզուրի գավառի վերաբաժանման վերաբերյալ Մոսկվայի վերջնական ցուցումին ու միայն դրանից հետո կհայտարարեր ՀՍԽՀ-ին միացված տարածքների մասին: Հակառակ պարագայում կարող էր կրկնվել Լեռնային Ղարաբաղի օրինակը, երբ, հիմք ընդունելով Ադրբեջանի հեղկոմի հայտնի հայտարարությունը, ՀՍԽՀ ժողկոմխորհը 1921 թ. հունիսի 12-ին հատուկ դեկրետով Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի «անբաժան մաս» հայտարարեց[9], սակայն Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության իրականացրած գործողությունների արդյունքում Լեռնային Ղարաբաղի՝ ՀՍԽՀ-ին միացմանն ուղղված քայլերը ձախողվեցին:

Ի դեպ, 1921 թ. հուլիսի 16-ին «բոլոր գավառամասերի հեղկոմներին» ուղղված «շտապ» նշագրումը կրող գրությամբ ՀՍԽՀ Զանգեզուրի գավառային հեղկոմը տեղեկացնում էր, որ հուլիսի 25-ին Գորիսում կայանալու է բոլոր գյուղական հեղկոմների նա-

[9] Нагорный Карабах в 1918–1923 гг., сборник документов и материалов, с. 636.

խագահների և անկուսակցական ներկայացուցիչների համագումար: Յուրաքանչյուր գյուղից մասնակցելու էին գյուղական հեղկոմի նախագահը և մեկ անկուսակցական ներկայացուցիչ: Համագումարը քննարկելու էր նաև «Հողային հարցը»[10]: Այս փաստաթուղթը թույլ է տալիս ենթադրել, որ խորհրդայնացումից անմիջապես հետո փաստացի «Զանգեզուր» էր դիտվում նախկինում Գ. Նժդեհի իշխանության ներքո եղած տարածքը (գավառի արևմտյան մասը): Այլապես մինչև գյուղերի ներկայացուցիչների համագումար հրավիրելը խորհրդային իշխանությունները կփորձեին հստակեցնել Զանգեզուրի գավառում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի սահմանագիծը:

ՀՍԽՀ վարչական վերաբաժանման մասին դեկրետի ընդունումից ավելի քան մեկ ամիս անց՝ 1921 թ. օգոստոսի 31-ին, ՀՍԽՀ ժողկոմխորհը որոշում ընդունեց Զանգեզուրի գավառ կազմելու մասին: Այստեղ հստակ նշվում էր. «Զանգեզուրի՝ ՀՍԽ Հանրապետությանը կցված մասից կազմել առանձին Զանգեզուրի գավառ (կենտրոնը՝ Գորիս)»՝ հետևյալ գավառակներով. Սիսիանի (կենտրոնը՝ Բռնակոթ), Ղափանի (կենտրոնը՝ Ղաթարի գործարանները), Գորիսի, Տեղի, Տաթևի և Մեղրիի (նույնանուն կենտրոններով)[11]: Դեկրետում արձանագրված «Զանգեզուրի՝ ՀՍԽ Հանրապետությանը կցված մաս» արտահայտությամբ Խորհրդային Հայաստանի ղեկավարները, ըստ էության, ընդունում էին, որ կա նաև Զանգեզուրի՝ ՀՍԽՀ-ին չկցված, այն է՝ Խորհրդային Ադրբեջանի գերիշխանության ներքո գտնվող մաս:

Փաստորեն, Խորհրդային Հայաստանում սկսեցին «Զանգեզուր» ասելով հասկանալ հայաբնակ այն տարածքները, որոնց

---

[10] ՀԱԱ. ֆ. 146. ց. 1. գ. 16. թ. 2–3:

[11] ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1921, N 5, էջ 39–40:

վրա մինչև 1921 թ. հունիսին խորհրդային ուժերի հարձակումը տարածվում էր Գարեգին Նժդեհի իշխանությունը: Ինչպես տեսնում ենք, ՀՍԽՀ ղեկավարները լռելյայն համակերպվում էին Երևանի համաձայնագրով հանրապետության մաս ճանաչված Զանգեզուրի գավառի արևելյան մասի կորստի հետ՝ քարոզչական դաշտում պատրանք ստեղծելով, թե իբր Զանգեզուրը միացել է Խորհրդային Հայաստանին: Այնինչ խոսքը միայն գավառի արևմտյան հատվածի մասին է: Ի դեպ, ՀՅԴ հայտնի գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը 1925 թ. տպագրած իր մի հոդվածում հայ-ադրբեջանական տարածքային վեճերը լուծելու բոլշևիկյան իշխանությունների սկզբունքը «մաքիավելյան» է անվանում, որի արդյունքում «Զանգեզուրի գավառի մի մասը» միացվել է Ադրբեջանին[12]: Իր աշխատություններից մեկում նշանավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանը ևս ուղղակի հիշատակում է, որ Անդրկովկասի խորհրդայնացումից հետո «ցարական ժամանակի ընդարձակ առոմով Զանգեզուր կոչվող գավառը» Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև բաժանելու մասին, որից հետո գավառի նախկին անվանումը սկսել է օգտագործվել միայն հայկական մասի առնչությամբ[13]:

Զանգեզուրում հայ-ադրբեջանական միջպետական սահմանագծի անորոշ լինելը տեղերում զանազան խնդիրների, թյուրիմացությունների առիթ էր դառնում: Ուստի՝ առաջնային խնդիր էր ժամանակավոր սահմանագծի հաստատումը: Մանավանդ որ անհրաժեշտ էր նաև պատրաստվել տեղական խորհուրդների ընտրություններին: Որքան էլ զարմանալի թվա, նախկին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի տարածքում Խորհր-

---

[12] **Ռուբէն**, Զանգեզուրի պայքարը, «Դրօշակ», Փարիզ, 1925, դեկտեմբեր, էջ 173:

դային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև ժամանակավոր սահմանագծի որոշումը վերապահվեց ոչ թե միջպետական հանձնաժողովի, այլ հայ և ադրբեջանցի կոմունիստներին: 1921 թ. հոկտեմբերի 12–13-ին տեղի ունեցավ հայկական Զանգեզուրի և ադրբեջանական Ղուբաթլուի գավառների 43 «պատասխանատու գործիչների» խորհրդակցություն, որը որոշեց. «Ընտրել հանձնաժողով՝ պարզելու համար, թե որ գյուղերում են գյուղխորհուրդներ եղել, որոնց ներկայացուցիչները մայիսի 1-ին մասնակցել են համաադրբեջանական խորհուրդների առաջին համագումարին, այդտեղ պետք է տարածվի Ղուբաթլուի գործադիր կոմիտեի իշխանությունը, իսկ Զանգեզուրի հեղկոմի տարածք համարել այն, որը 1921 թ. հուլիսին մաքրվել է Նժդեհի բանդաներից»[14]:

Փաստորեն, Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Սյունիքում մղված պայքարի արդյունքում է, որ Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի արևմտյան մասը միացավ Խորհրդային Հայաստանին: Բացառված չէ, որ եթե մինչև 1921 թ. մայիս-հուլիսը (ադրբեջանական տեղական խորհուրդների ընտրությունների և Զանգեզուրի խորհրդայնացման շրջանը) Զանգեզուրի գավառից առավել քիչ տարածքներ գտնվեին Գ. Նժդեհի իշխանության ներքո, ապա ավելի սեղմ կլիներ Խորհրդային Հայաստանի տարածքը:

1922 թ. փետրվարի 3-ին ընդունված Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի խորհուրդների համագումարի և Կենտրոնական գործադիր կոմիտեի իրավասությանն էր վերապահված

---

[13] **Լիսիցյան Ս.,** Զանգեզուրի հայերը. Երևան. 1969. էջ 13:

[14] **Խաչատրյան Կ., Մուքիասյան Հ., Բաղալյան Գ.,** նշվ. աշխ., էջ 63–65:

«Հանրապետության ընդհանուր վարչական բաժանումը»[15]: Մինչ այդ այս գործառույթը սկզբում իրականացնում էր Հայաստանի հեղկոմը, այնուհետև՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդը:

1922 թ. գարնանը Խորհրդային Հայաստանը բաժանված էր 10 գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռիի, Դիլիջանի (Իջևանի գավառն անվանափոխվել էր), Նոր Բայազետի, Դարալագյազի, Զանգեզուրի, Մեղրիի (Զանգեզուրի գավառի Մեղրիի գավառակն առանձին գավառի էր վերածվել):

1922 թ. աշնանը անցկացված գյուղատնտեսական վիճակագրության տվյալների հիման վրա[16] ՀՍԽՀ կենտվիճվարչության կողմից հրատարակված Խորհրդային Հայաստանի բնակավայրերի ցուցակից տեսնում ենք, որ Զանգեզուրի գավառը բաժանված էր 5 գավառամասի՝ 141 բնակավայրով: Դրանցից Սիսիանի գավմասի մեջ ընդգրկված էր Ալիլու, Ալիշար, Աղուդի, Աղքենդ, Ախլաթյան, Անգեղակոթ, Արավուս, Բազարչայ, Բալաք, Բորիսովկա, Բնունիս, Բռնակոթ, Գետաթաղ, Դաստակերտ, Դարաբաս, Դարաքյանդ, Թազագեղ, Լծեն, Լոր, Հորթիկըզ, Ղալաջուղ, Ղարաքիլիսա, Ղզըլջուղ, Ղվրախ, Մազրա, Մուրխուզ, Շաղատ, Շամբ, Շաքի, Շխլար, Շնաթաղ, Ուզ, Ուռուտ, Ջոմարդլու, Վաղուդի, Տոլորս, Պիսակ գյուղերը, Տաթևի գավմասի[17] մեջ՝ Յայջի, Երիցաթումբ, Խոտ, Հալիձոր, Շնհեր, Սվարանց, Տաթև, Տանձատափ գյուղերը, Գորիսի գավմասի մեջ՝ Գորիս քաղաքը, Գորիս գյուղը (Նոր Գորիս), Վերիշենը (Հին Գո-

---

[15] ՀՍԽՀ Սահմանադրություն, «ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու», Երևան, 1922, N 8, էջ 63:

[16] **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 228:

[17] ՀՍԽՀ Կենտգործկոմի 1923 թ. դեկտեմբերի 29-ի որոշմամբ Տաթևի գավառակը միացվեց Գորիսի գավառակին (ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1923, N 9, էջ 10):

րիս), Բռուն, Կյորու, Մաղանջուղ, Քարահունջ գյուղերը, Տեղի գավմասի մեջ՝ Ալիղուլիշեն, Արավուա, Բայանդուր, Խնածախ, Խնձորեսկ, Խոզնավար, Կոռնիձոր, Տեղ, Քարաշեն գյուղերը, Ղափանի գավմասի մեջ՝ Ագարակ, Աղքենդ, Աչըղլու, Աջիբաջ, Առաջաձոր, Արծվանիկ, Բաղաբուրջ, Բարքդաշ, Բիարլու, Բողաջըղ, Գեղի, Վերին Գյոդաքսլու, Դաշբաշ, Դովրուզ, Եղվարդ, Եմազլու, Զեյվա, Ըրկենանց, Թորափ Խանլու, Թունուա, Ինջևար, Խալաջ, Խդրանց, Խլաթաղ, Վերին Խոտանան, Ներքին Խոտանան, Ծավ, Կավարտ, Կեմանց, Ներքին Կեռաթաղ, Վերին Կեռաթաղ, Կյուտկում, Ղովշուտ, Հաջաթին, Վերին Հանդ, Ներքին Հանդ, Հանքեր (Ղաթար), Ղարաբաղ, Ղարաբաբա, Ղուչըլու, Ղրղըլու, Ճակատեն, Մահմուդլու, Մոլլաալի, Մողես, Մուսալամ, Նորաշենիկ, Շաբադին, Շիկահող, Շհարջիկ, Շորալի, Շրվենանց, Ողջի, Չափնի, Չիրիշ, Չոպլու, Պարաբաթումբ, Բեխ, Ջիբիլլու, Ջրախոր, Սանջարոլլի Սանջարավազ, Սարուշեն, Սևաքար, Սըզնակ, Ներքին Վաչագան, Վերին Վաչագան, Վժենիս, Տորթնի, Փիրդովգան, Փիրիլու, Փիրմազրա, Փխրութ (հայի), Փխրութ (թուրքի), Քաջարան, Քարթս, Քեհան, Քեյփաշին, Քիրս, Քյուրուտ, Քյուրդիքյանդ գյուղերը[18]:

Ինչպես տեսնում ենք, ամենից շատ բնակավայրեր ընդգրկված էին Ղափանի գավմասում: Սակայն դրանք մեծ մասամբ փոքրաթիվ բնակչություն ունեին: Գավմասի 80 բնակավայրից 34-ը մինչև 30 ծուխ ունեցող գյուղակներ էին, ամենամեծը 191 ծուխ ունեցող Արծվանիկն էր: Համեմատության համար նշենք, որ Տեղի գավառակի Խնձորեսկ գյուղն ուներ 877, իսկ Տեղը՝ 651 ծուխ բնակչություն:

---

[18] Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի. հրատ. ՀՍԽՀ վիճակագրության, Երևան, 1923, էջ 54–65:

Մեղրիի գավառի բնակավայրերի թիվը 24 էր՝ Աբկեզ, Ագարակ, Բուղաքար, Գուդեմնիս, Թաղամիր, Թեյ, Առաջին Լեհվազ, Երկրորդ Լեհվազ, Լիճք, Կալեր, Կարճևան, Կուրիս, Մազրա, Մալև, Մարալզամի (Վարդանաձոր), Մեղրի, Մյուլք, Շիշկերտ, Շիրվանաձոր, Վանք, Վարդանաձոր, Վարհավար, Տաշտուն, Փուշկագ[19]:

Այս բաժանումը հիմնականում պահպանվեց մինչև 1929 թ.՝ չնայած 1921 թ. հուլիսի 20-ին ընդունված ՀՍԽՀ վարչական վերաբաժանման մասին դեկրետը հաջորդ տարիներին որոշ փոփոխությունների ու լրացումների ենթարկվեց:

Փաստորեն, Գարեգին Նժդեհի առաջնորդած սյունյաց գոյամարտի արդյունքում Խորհրդային Հայաստանի մաս կազմեց ցարական շրջանի Զանգեզուրի գավառի արևմտյան՝ հայաբնակ հատվածը: Այս տարածքների վրա 1921 թ. օգոստոսին կազմակերպվեց ՀՍԽՀ Զանգեզուրի գավառը՝ հինգ գավառակներով: Հաջորդ ամիսներին գավառը վարչատարածքային մասնակի փոփոխությունների ենթարկվեց: Համեմատության համար նշենք, որ շուրջ 7772 քառ. կմ տարածք ունեցող ցարական Ռուսաստանի Զանգեզուրի գավառից ներկայումս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում ընդգրկված է շուրջ 4500 քառ. կմ տարածք:

**Амо К. Сукиасян,** *Институт истории НАН РА, к.и.н., доцент,* **Из истории организации Зангезурского уезда Советской Армении (1921 г.).**

Согласно осуществленным в 1919–1920 годах административно-территориальным делениям Сюник–Зангезур был вклю-

---

[19] Նույն տեղում, էջ 80–83:

чен в состав республики Армения без специальной административно-территориальной демаркации. Весь Зангезурский уезд (7772 кв. км) признавался частью Советской Армении также по армяно-российскому соглашению от 2 декабря 1920 г. После советизации Зангезура по решению правительства Советской Армении от 31 августа 1921 г. был организован Зангезурский уезд с округами Сисиан, Горис, Тег, Татев, Капан, Мегри. 12-13 октября 1921 г. на совещании 43 армянских и азербайджанских коммунистов была определена временная граница между Советской Армением и Советским Азербайджаном на территории Зангезурского уезда прежней Елизаветпольской губернии. Фактически в состав Советской Армении вошла западная (населенная армянами) часть Зангезура, где до июля 1921 г. распространялась власть Гарегина Нжде.

**Hamo K. Sukiasyan,** *Institute of History of the NAS RA, Candidate of Sciences in History, Associate Professor,* **From the history of organization of Zangezur province of the Soviet Armenia (1921).**

According to the administrative-territorial divisions realized in 1919–1920, Syunik-Zangezur was included in the Republic of Armenia without special administrative-territorial demarcation. The whole province of Zangezur (7772 sq. km) was recognized as part of Soviet Armenia by the Armenian-Russian agreement signed as of December 2, 1920. After the sovietization of Zangezur, by the decision of the Government of Soviet Armenia on August 31, 1921, Zangezur province was organized with the cantons of Sisian, Goris, Tegh, Tatev, Ghapan, Meghri. Subsequently, during the meeting of

43 Armenian and Azerbaijani communists on October 12–13, 1921, the temporary border between Soviet Armenia and Soviet Azerbaijan was determined in the territory of Zangezur province of the former Elizavetpol Governorate. In fact, the western (Armenian-populated) part of Zangezur province was incorporated within Soviet Armenia which was ruled by Garegin Nzhdeh until July 1921.

ԷԴԻԿ Գ. ՄԻՆԱՍՅԱՆ
*ԵՊՀ, պ.գ.դ., պրոֆեսոր*

# ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ 1920-30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

***Բանալի բառեր՝*** Սփյուռք, դատակեան ատյան, Բուլղարիա, ԱՄՆ, Սոֆիա, Բալկանյան կոմիտե, ՀՅԴ անդամ, «Հայրենիք» ամսագիր, գաղութահայություն:

Հայտնի է, որ 1921 թ. հուլիսի 12-ին Հայհեղկոմի կողմից Լեռնահայաստանը Խորհրդային Հայաստանի կազմում թողնելու պաշտոնական հայտարարությունը մամուլում հրապարակվելուց հետո, համոզվելով, որ Զանգեզուրը մնալու է Խորհրդային Հայաստանի կազմում Գարեգին Նժդեհը Մեղրիից անցնում է Արաքս գետը և ժամանակավորապես պատսպարվում է Իրանի Մուժումբար գյուղում, ապա անցնում է Թավրիզ[1]:

«Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի Հայկական ափում զինվորներիս կողմից զարնած վագրի մորթին-իմ միակ վարձատրությունը, Զավալ փաշայի դաշույնը-իմ միակ պատերազմական ավարը, պարտություն չտեսած Սիւնեաց Դրոշակը- թո՛ղ դա դրվի կրծքիս վրայ, գերեզմանիս մէջ, և մի հին Հայկազյան բառարան-իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ,- գրում է Նժդեհն իր կենսագրականում, ապա ավելացնում,- ոճիկ չեմ ստացել ողջ կյանքում: Հրաժարել եմ անգամ օտար

[1] **Համբարձումյան Ռ.**, Գարեգին Նժդեհ (համառոտ վարք, ասույթներ և կենսատարեգրություն), Երևան, 2008, էջ 46:

պետության սահմանած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու և ճոխ ապրելու ամէն կատարելիութիւն,սակայն ապրել եմ իբրև ժողովրդի մարդ, համեստօրեն, աղքատ կոչելու աստիճան: Նիւթապաշտութիւնը Հեղափոխականի, զօրականի, հայրենասէրի համար համարել եմ մէկը մեր աշխարհի ամենամեծ պղծութիւններէն»[2]:

Հայտնի է, որ 1921 թ. հուլիսի 24-ից սեպտեմբերի 28-ը Թավրիզում Գ. Նժդեհը կանգնում է ՀՅԴ Գերագույն դատական ատյանի առաջ՝ մեղադրվելով Սյունիքը բոլշևիկներին հանձնելու և այլ անհեթեթ մեղքերի մեջ: Նա իր խոսքում հերքում է իր հաստեին հնչած բոլոր մեղադրանքները: Չնայած այդ ամենին՝ 1921 թ. սեպտեմբերի 29-ին դատական ատյանի դատավճռով առաջարկվում է Նժդեհին հեռացնել Դաշնակցությունից՝ «ներկայացնելով նրա գործը կուսակցության 10-րդ ընդհանուր ժողովին»[3]: 1922 թ. մարտի վերջին Կոստանդնուպոլսի վրայով Գ. Նժդեհը ժամանում է Սոֆիա և մշտական բնակություն հաստատում Ցար Բորիսի փողոցի թիվ 92 տանը:

1923 թ. ապրիլի 7-ից մայիսի 19-ը, ապա 1924 թ. նոյեմբերից 1925 թ. հունվարի 17-ը գումարված ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողովը և ՀՅԴ 10-րդ ընդհանուր ժողովը Նժեդհին վերականգնում են Դաշնակցության մեջ[4]:

Գարեգին Նժդեհը 1922–1944 թթ. բնակվելով Բուլղարիայում (Սոֆիա), զբաղվել է քաղաքական, հասարակական և ազ-

---

[2] Գարեգին Նժդեհ. Հատընտիր. Երևան, 2006. էջ 432:

[3] Տե՛ս **Հարությունյան Ա.**, Գարեգին Նժդեհ 1921 թվականի Թավրիզի դատավարությունը, Երևան 2004, էջ 229–230:

[4] **Համբարձումյան Ռ.**, Գարեգին Նժդեհ: Կենսագրական մասնունքներ. Երևան, 2019, էջ 45–46:

գային գործունեությամբ, եղել է ՀՅԴ Բալկանյան կոմիտեի անդամ[5]:

Բացի իր ազգային, հասարակական-քաղաքական գործունեությունից, Նժդեհը 1920–30-ական թթ. Սփյուռքում հրատարակում է բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ, որտեղ հանգամանորեն վերլուծում է ոչ միայն Զանգեզուրում իր տարած հաղթանակների պատճառները, այլև ազգային գաղափարախոսության առանցքային շատ հիմնահարցեր, որոնց ընդհանրացված արդյունքը հանդիսացավ նրա կողմից Սփյուռքում հիմնադրած, Ցեղակրոն շարժումն ու Տարոնակությունը իբրև հայրենապաշտության և ցեղի ոգու արթնացման և քարոզչության գաղափարախոսություն: Դեռևս 1923 թ. Բոստոնում «Հայրենիք» ամսագրում հոկտեմբեր-նոյեմբերին հրատարակվում են նրա «Հայ բոլշևիկների կռիվները», «Ինչու՞ պայքարեց Լեռնահայաստանը», «Լեռնահայաստանի գոյամարտը» հոդվածաշարերը[6]: Այդ ընդարձակ հոդվածաշարերը նա շարունակում է տպագրել մինչև 1925 թ.:

1924 թ. Կահիրեում լույս տեսավ նրա «Էջեր իմ օրագրեն» աշխատությունը[7]: 1924 թ. մայիսին ժամանելով Թավրիզ նա զբաղվում է ազգային-հասարակական գործունեությամբ, հայ երիտասարդության առջև հանդես գալիս հայրենասիրական ելույթներով, սփյուռքահայությանը կոչ անելով համախմբվելու հայրենիքի ազատագրման գաղափարի շուրջ: 1925 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում տպագրվում է նրա «Ազատ Սյունիք» հոդվածաշարը: 1926 թ. Նժդեհը սկսում է հանդես գալ Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» դաշնակցական թերթում, որտեղ

---

[5] Նույն տեղում, էջ 47–53:
[6] Նույն տեղում, էջ 46:

տպագրվում է նրա «Բաց նամակներ հայ մտավորականությանը», շարքը (այն 1929 թ. լույս է տեսնում առանձին գրքույկով)[8]: Իր ինքնակենսագրականում Գ. Նժդեհը գրել է. «1926 և 1941 թթ. ապրել եմ Ռումինիայում, ճամփորդել որպես լրագրող, 1933 թ. Ամերիկա մեկնելուց առաջ մոտ երկու ամիս գտնվել եմ Փարիզում, մոտ 20 ամիս ապրել եմ Ամերիկայում, այնտեղ 1933–34 թթ. աշխատել եմ Կարմիր խաչի կազմակերպությունում»[9]: 1932 թ. վերջին Փարիզում կայացավ ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը, որին Նժդեհը մասնակցեց իբրև Բուլղարիայից ընտրված պատգամավոր: Նա ժողովի առջև բարձրացրեց երեք հիմնական պահանջ.

ա) ձգտել, որ գաղութահայությունը դառնա զինական գործոն Հայաստանի ինքնապաշտպանության գործում,

բ) կազմակերպել հայ երիտասարդ սերունդը ապակուսակցական հողի վրա,

գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում:

Այդ նպատակների իրականացման համար 1933 թ. ամռանը Նժդեհը մեկնեց ԱՄՆ: ԱՄՆ-ում Նժդեհի գործունեության միանգամայն նոր և չլուսաբանված կողմեր է ներկայացված՝ Վենետիկի սուրբ Ղազար կղզում պահվող Նժդեհի երկար տարիներ անհայտ 20-ի չափ բացառիկ արժեքավոր նամակներում, որոնք ուղղված են ԱՄՆ-ի Ցեղակրոն Ուխտերի հայտնի գործիչ 1930-ական թթ. ՀՅԴ ԱՄՆ Կենտրոնական կոմիտեի անդամ, Գ. Նժդեհի վստահելի ու սիրելի բարեկամներից մեկին՝ Հովհաննես Հովհաննիսյանին: Միայն 2011 թ. այդ նամակները հայտնա-

---

[7] **Գարեգին Նժդեհ**, Ընտիր երկեր. Երևան, 2007. էջ 12–39:

[8] Նույն տեղում, էջ 40–41:

բերվեցին և հրատարակվեցին առանձին գրքով[10]: Այդ նամակներում չափազանց հետաքրքիր և նոր մանրամասներ կան Նժդեհի՝ ԱՄՆ-ում ծավալած գործունեության մասին: Մենք կաշխատենք այդ նորահայտ նամակների ոգով ներկայացնել ԱՄՆ-ում Գ. Նժդեհի գործունեության չլուսաբանված կողմերը: Նամակները բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն Գ. Նժդեհի Ամերիկյան գործունեության լուսաբանման, այլև՝ 1920–1930-ական թվականների Նժդեհի սփյուռքյան գործունեության և հայոց պատմության բազմաթիվ խեղաթյուրված իրողությունները ճշտելու համար: Դրանցում Գ. Նժդեհը տալիս է նաև ցեղակրոնության և տարոնականության մեկնաբանությունները, որոնք էլ ավելի են ամբողջացնում դրանց էությունը բացահայտող իր սահմանումները:

Գ. Նժդեհի հետ միասին ընդհանուր ժողովի որոշումով, ԱՄՆ անցավ կուսակցական հայտնի գործիչ Կոպեռնիկ Թանդրճյանը, որին հանձնարարված էր կազմակերպել ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար Բեյի սպանությունը (վերջինս մասնակից էր արևմտահայերի ջարդերին և արտասահմանում հակահայկական քարոզչության ղեկավարներից էր): Նժդեհը պիտի աջակցեր Թանդրճյանին այդ գործում[11]: Սակայն այդ ծրագիրը տարբեր պատճառներով չիրականացավ[12]:

ԱՄՆ-ում Նժդեհը նախաձեռնում է Ցեղակրոն շարժումը և ստեղծում է Ցեղակրոն Ուխտերը: Հենց 1933 թ. հունվարի 14-ին, Գ. Նժդեհը ԱՄՆ-ում՝ Բոստոնում հիմնեց Ցեղակրոն Ուխտերը

---

[9] **Համբարձումյան Ռ.**, Նժդեհ. Երևան, 2007. էջ 371:

[10] Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Նորահայտ նամակներ, Երևան, 2011. էջ 58:

[11] Տե՛ս **Լալայան Մ.**, Ցեղակրոն և Տարոնական շարժումները՝ Սփյուռքում 20-րդ դարի 30-ական թթ., Երևան, 1997, էջ 81:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 127:

(ոչ կուսակցական կազմակերպություն), իսկ 1934 թ. հունիսի 1–3-ը անցկացրեց և վարեց ՀՅԴ Ցեղակրոն Ուխտերի անդրանիկ համագումարը, որին ներկա էին 40 կազմակերպությունների («Ուխտերի») ընտրյալ ներկայացուցիչներ: Ժողովը հունվարի 14-ը հռչակեց ցեղակրոնների օր, օգոստոսի 10-ը՝ «Դրոշակի օր», Բարսեղ Կանաչյանի և Ժորժ (Գևորգ) Կառավարենցի «Յառաջ նահատակ» երգը, ցեղակրոնների ժամանակավոր քայլերգ «Հայրենիք» շաբաթաթերթի անգլերեն տարբերակը (Hairenik Weekly) հայտարարվեց ցեղակրոնների պաշտոնական շաբաթաթերթը[13]:

Համագումարի գլխավոր նպատակը եղավ ցաք ու ցրիվ բոլոր այդ երկսեռ խմբերն իրար մոտ բերել՝ 44 ուխտեր ավելի քան 1500 անդամներով[14] :

Թեև Գ. Նժդեհի առաջարկով ու ջանքերով ՀՅԴ Փարիզի ընդհանուր ժողովը որոշել էր կառույցը հիմնել անկուսակցական հողի վրա, բայց որպեսզի ցեղակրոնության գաղափարի իրագործումը չտուժեր, Նժդեհը ստիպված եղավ համաձայնել ՀՅԴ ԱՄՆ ղեկավարներից ոմանց ջանքերով ցեղակրոնների ընդհանուր ժողովի ընդունած որոշմանը՝ կառույցն անվանել «Հ.Յ. Դաշնակցության ցեղակրոն ուխտեր»: Նժդեհը մեկ տարվա մեջ իրար շաղկապեց 60 ցեղակրոն կազմակերպություններ («Ուխտեր») 2500 անդամներով[15]: Նժդեհը հասկանում էր, որ Ցեղակրոն շարժումը կարող է հաջողություն ունենալ միայն ամուր և համահայկական կառույցի միջոցով, իսկ ՀՅԴ-ն իբրև այն ժամանակվա սփյուռքահայ ամենազդեցիկ կազմակերպություն, կարող էր լինել այդպիսին: Եվ Նժդեհը փորձեց գործը գլուխ բե-

---

[13] Տե՛ս **Գէորգէան Կարո**, Ամէնուն տարեգիրքը. Պեյրութ, 1963. էջ 417–418:

[14] Տե՛ս «Հայրենիք», ամսագիր, 1934, թ. 9, հուլիս, էջ 155:

ռել կուսակցության միջոցով, որի համար նախ անհրաժեշտ էր այն վերակառուցել, տալ նոր գաղափարախոսություն և ունենալ դրան համապատասխան ղեկավարություն: Նժդեհին դա հաջողվեց: ՀՅԴ-ն սկզբնավորման օրից այդպիսի հզոր վերելք չէր տեսել: Գ. Նժդեհը ԱՄՆ-ում Ցեղակրոն շարժումը կարողացավ թե՛ գաղափարապես և թե՛ կազմակերպական առումով դարձնել աշխարհի նմանակերպ հզորագույն կառույցներից մեկը: Ընդ որում, ինչպես ամերիկյան թերթերից քաղած մեջբերումների վկայակոչումներով Ավոն է գրում ԱՄՆ-ում Նժդեհը հայամետ քարոզչություն է իրականացնում նաև «Նիու Եորքի, Փրովիտնեսի, Պոսթընի, Տիթրոյիտի, Սէնթ Լուիզի, Համիլթընի, Ֆրեզնոյի, Լոս Անճելըսի, Սան-Ֆրանցիսկոյի, Թորոնթոյի, Սէնթ Քաթերինսի և այլ վայրերու ամերիկյան մամուլի էջերէն» [16]: «Ցեղակրոն ուխտերը» 1941 թ. հուլիսի 3-ին անվանափոխվեց «Հայ երիտասարդական դաշնակցություն»[17]:

Խոսելով ԱՄՆ-ում Ցեղակրոն շարժումը սկզբնավորելու և ծավալելու անհրաժեշտության մասին, Գ. Նժդեհը գրում է, որ այդ կազմակերպությունը նա ստեղծել էր.

ա) պարտվողականությամբ տառապող գաղութահայության հատկապես երիտասարդ հատվածին հոգեփոխելու, նրան ազգային գիտակցություն, ուժ ու վստահություն ներարկելու համար,

բ) Արևմտյան և Արևելյան Հայաստանում կատարված ցեղասպանությունը հասկանալու և թուրքերի հակահայկական քարոզչական արշավին դիմագրավելու համար,

---

[15] Տե՛ս **Աւօ**, Նժդեհ, Բեյրութ, 1968, էջ 508, 514:

[16] Նույն տեղում. էջ 240:

[17] Տե՛ս **Համբարձումեան Ռ.**, Նժդեհ, հարց ու պատասխան, Բ հրատարկութիւն, Երեւան, 2012, էջ 113–114:

գ) հայկական սպանդին հետևող բարոյական քայլեր, եղեռնի վարկաբեկմանը դիմակայելու համար ձեռնարկել ինքնապաշտպանական քայլեր,

դ) հայկական հին կուսակցությունների կողմից Հայոց դատից հրաժարվելու և Թուրքիային մերձենալու մտայնությանը «ոչ» ասելու և հայությանը «Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին տեր դարձնելու» նպատակով:

Շարունակելով իր միտքը՝ Հ. Հովհաննիսյանին հասցեգրած նամակներից մեկում նա բացահայտում է ցեղակրոնության էությունը և նպատակները:

«Հայը Հայաստանից դուրս ենթակա է վատասերումի,- գրում է Նժդեհը,- ապա ավելացնում որ այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր է միայն ցեղային արժեքների, առաքինությունների ու սրբությունների խոր ճանաչումով ու վերապրումով,- մի բան, որ հիմնավորեցի և անվանեցի Ցեղակրոնություն: Դրա նպատակն է՝ անհայրենիք հայությանը հոգևոր ու քաղաքական անտուն-անտերությունից փրկելով, դարձնել հայրենատեր: Դա հայրենասիրական շարժում է, որի մեջ վերանորոգվելով միայն պիտի միանան հայության բոլոր հատվածները»[18]:

Նամակներից մեկում Նժդեհը տալիս է ցեղակրոնության ծագումն ու նպատակները հենց ստեղծման փուլում. «Տարիներով իմ միտքը չարչրկել է մի հատիկ հարց. Հայաստանի ինքնապաշտպանության գործի իրականացումը: Ցեղակրոնությունը չծնվեց գաղութներում, դա բերված է երկրից, մեր հայրենիքից: Դա կյանքի կոչվեց 1919–1921 թվականներից, երբ վտանգներից ամենից ահավորն էր կախված Հայոց Լեռնաշխարհի գլխին: Ոչ ֆաշիզմ, ոչ էլ հիտլերականություն չկար աշխարհում այդ ժամա-

[18] Տե՛ս **Գարեգին Նժդեհ,** Նորահայտ նամակներ, էջ 42–43:

նակ: Ցեղի հավիտենականությամբ ապրելու և նրա համար մեռնելու ուխտն էր Դավիթբեկյան Ուխտը, որ թուրքից և թաթարից մեր հայրենիքը վտանգից ազատեց, Լեռնահայությունը զենքի ուժով Մայր Հայրենիքին կցեց Ադրբեջանին թողած Սյունաց աշխարհը... Ցեղակրությունը հայ կյանքի բարձրացող նոր ալիքն է՝ ուղղված գլխավոր չարիքների դեմ»[19]:

Մեկ այլ առիթով նամակներից մեկում նա շարունակում է. «Քանի որ գաղութահայության ամենամեծ զանգվածն ապրում է ԱՄՆ-ում, որտեղ մեր սերնդին ամենամեծ վտանգն է սպառնում (ի դեմս ամերիկյան միջավայրի ամենակուլ, ծուլող հատկության), ես Ցեղակրոն շարժումը սկզբնավորեցի Ամերիկայում: Ցեղակրոն շարժումը ոչ մի ընդհանուր բան չունի և չէր կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի այն, նախ և առաջ, բարեփոխիչ շարժման վերածնունդ է, որ հնարավոր է միայն սեփական, այլ ոչ փոխառված արժեքներով»[20]: Այսպիսով՝ անվիճելի իրողություն է, որ Ցեղակրոնությունն իբրև զուտ հայկական յուրատիպ գաղափարաբանություն, հիմնավորապես տարբերվում է 1919 թ. Իտալիայում ու Գերմանիայում սկզբնավորված, 1922 թ. Իտալիայում (Մուսոլինի), 1933 թ. Գերմանիայում (Հիտլեր) իշխանության եկած և աշխարհի բազմաթիվ երկրներում տարածում գտած ցեղամոլ ֆաշիստականությունից: Ցեղակրոնությունը ֆաշիստականությունից հատկապես տարբերվում ու առանձնանում է քրիստոնեական դրոշմով: Ֆաշիստների համար քրիստոնեությունը անընդունելի էր, մինչդեռ 20-րդ դարի հայոց մեծագույն պատգամախոսի գաղափարախոսության մեկնակետը հայոց քրիստոնեականն էր:

---

[19] Տե՛ս նույն տեղում. էջ 22–26:

Նժդեհի աշխատանքը ԱՄՆ-ում Ցեղակրոն շարժումը ակտիվացնելու, այնտեղի կուսակցական կառույցները վերակենդանացնելու ուղղությամբ առաջացրեց որոշ դաշնակցական գործիչների՝ այդ թվում Ռուբեն Տեր-Մինասյանի և այլոց դժգոհությունները[21]:

ՀՅԴ-ն վերահսկող ուժերը, տեսնելով կուսակցության անպարտելիության հաղթարշավն ամբողջ աշխարհում բյուրոյի ձեռքով, ամեն միջոց կիրառեցին, որպեսզի Ցեղակրոն շարժումը չդառնա համագաղութային, որը հնարավոր էր միայն մի դեպքում, եթե Գարեգին Նժդեհը մեկուսացվեր ՀՅԴ-ից: Նամակներում խոսելով ՀՅԴ շարքում տիրող իրավիճակի մասին՝ նա գրում է. «Շարքերի մեջ չկա այդ հավատը: Իսկ չկա, որովհետև ղեկավարների մեջ հերոսական-բարոյական գործելու, զոհաբերելու, քաջաբար մեռնելու տրամադրություն չկա: Ուրեմն, շառլատանություն է խոսել կարգապահության մասին, երբ ղեկավարությանը պակասում են սովորական մահկանացուներին հատուկ առաքինություն... Ամեն ծառայություն, որ դառնում է վճարովի արհեստ՝ պղծվում է»[22]:

Գարեգին Նժդեհն իր նամակներում տալիս է նաև այն հարցերի պարզաբանումը, թե ինչու գնաց Ամերիկա, ինչ արեց և ինչպես արեց: 1936 թ. նոյեմբերի 15-ի նամակում գրում է. «Ես չեկա Ամերիկա ժողովրդականություն փնտրելու, այլ աշխատելու մեր ցեղի հոգու անսպառ հանքերում: Ամերիկան ոչինչ չավելագրեց այն բանին, որ ես ստացել էի Հայաստանից, Լեռնահայաստանից: Ամերիկան կռվադաշտ չէ, որ նոր բան տար ինձ:

---

[20] **Նժդեհ Գ.**, Ցեղի հավիտենական ձեռքը, Երևան, 2001, էջ 334: **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 1, Երևան, 2002, էջ 393:

[21] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1963, թ. 11, էջ 24:

[22] Տե՛ս նույն տեղում:

Ամերկայում ինձ հաջողվեց, հակառակ շատերի չկամության, ոտքի հանել հայոց ցեղը, ցեղայնությունը նորահաս սերնդի մեջ: Իսկ ինձ հաջողվեց, որովհետև ես Ամերիկա եկա որոշ առաքելությամբ, որովհետև ես ունեի իմ որոշակի ճամփան, ես գիտեի իմ գործը, իմ անելիքը: Ես չեկա հրահանգվելու և հրահանգներ կատարելու, ես եկա հրահանգելու, ղեկավարելու»[23]:

1930-ական թթ. ԱՄՆ-ում գտնվելու տարիներին Գարեգին Նժդեհը խորհրդածում է. «Օհաննէս, մի ժողովուրդ, որը չգիտէ իր ներքին սրիկանները պատժել, չպիտի կարողանայ պատժել իր գոյության արտաքին թշնամիներին»:

Նամակներից մեկում շարունակելով իր միտքը գրում է. «Ամեն անգամ հաստատում է պատմությունը, երբ ժողովուրդը բարոյական քաջություն չի ունենում պատժելու իր դժբախտության հեղինակներին, այդ միևնույն հեղինակների միջոցով պատմությունը պատժում է ժողովրդին: Ահա՛, սիրելիս, թե ի՞նչն է տագնապեցնում ինձ»[24]:

ԱՄՆ-ում գտնվելու ժամանակ Նժդեհը արդեն զգում էր պատերազմի անխուսափելիությունը և մտածում էր իր հիմնադրած Ցեղակրոն Ուխտերից ստեղծել Հայաստանի անկախությունը վերականգնելու և հայության ինքնապաշտպանությունը վարելու համար լեգիոններ: Այդ առթիվ նա նամակներից մեկում գրում է.«Ցեղակրոնությունը հող գտած կլիներ մեր բոլոր գաղութներում, ամեն գաղութ ստեղծած կլիներ ուխտվածների իր լեգիոնը, այսօր մեր թիվը հասած կլիներ տասնյակ հազարի, եթե մեզ հաջողվեր ժամանակին զինաթափել ներքին չարությունը՝ տգետն ու նախանձելին»[21]: Մեկ այլ անթվակիր նամակում հավելում է.

---

[23] Տե՛ս նույն տեղում. էջ 25:

[24] **Նժդեհ Գ.,** Նորահայտ նամակներ, էջ 23–24:

«Այժմ մենք տասնյակ հազարի հասնող Ցեղակրոններ պետք է ունենայինք Սփյոռքի մեջ, գաղութից գաղութ .... Թուրքն իր կնոջը տղամարդ զինվոր է դարձնում այսօր, իսկ մե՞նք...ոչ»[25]:

Գ. Նժդեհը 1934 թ. աշնանը վերադառնում է Սոֆիա և 1935 թ. ամուսնանում է Եփիմե Սուքիասյանի հետ: 1935 թ. Սոֆիայում լույս է ընծայվում Գ. Նժդեհի «Ամերիկահայությունը: Ցեղը և իր տականքը» աշխատությունը, իսկ 1937 թ.՝ Գ. Նժդեհը Սոֆիայում լույս է ընծայում «Իմ պատասխանը» աշխատությունը[26]:

1937 թ. իր բուլղարացի բարեկամների միջոցով նա կապ է հաստատում գերմանացիների հետ՝ այդ երկրի ռազմական ու հետախուզական մարմիններին ներշնչելով պատերազմի բռնկման դեպքում հարձակվել Թուրքիայի վրա:

1937 թ. Հայկ Ասատրյանի հետ Սոֆիայում հիմնում է «Ռազմիկ» թերթը[27]:

ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Ռուբեն Տեր-Մինասյանի հետ 1926 թ. ի վեր ունեցած բազմաթիվ տարաձայնությունների պատճառով, նաև չկարողանալով հանդուրժել կուսակցական կարգապահությունը խախտելու պատրվակով Ցեղակրոն շարժման ու իր անձի դեմ Ռ. Տեր- Մինասյանի սկսած անարդար արշավը, Նժդեհը 1937 թ. հեռանում է ՀՅԴ-ից[28]:

Դրանից հետո ՀՅԴ Բյուրոն Նժդեհին հրավիրել էր Կահիրե իր կենտրոնատեղի, առաջարկել հաշտվել Ռուբենի հետ: Սակայն հաշտությունը չի կայացել, քանի որ հիմնական տարակարծությունը գաղափարական էր՝ Թուրքիայի հանդեպ ունենալիք վերաբերմունքը: Ռ. Տեր-Մինասյանը կարծում էր, որ կարելի

---

[25] Տե՛ս նույն տեղում:

[26] Տե՛ս **Համբարձումյան Ռ.**, Նժդեհ, Երևան, 2012, էջ 111–112:

[27] Տե՛ս նուն տեղում, էջ 112:

[28] Տե՛ս նույն տեղում:

և ցանկալի է ընդհանուր լեզու գտել Թուրքիայի հետ, իսկ Նժդեհի կարծիքով «Թուրքիայի հետ ցանկացած հաշտություն կբերի աղետալի հետևանքների»:

1937 թ. Դաշնակցությունից հեռանալուց հետո Նժդեհն իր մերձավորագույն զինակից, փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանի և իր այլ հետևորդների հետ հիմնել է տարոնականություն շարժումը, որը նպատակ ուներ հայ երիտասարդությանը և համայն հայությանը հեռու պահել օտարացումից և լճացումից, նրա մեջ վառ պահել նախնիների, մասնավորապես Հայոց Մամիկոնյան նախարարական գերդաստանի հայրենապաշտությունը, հայրենիքի համար քաջաբար զոհվելու կամքն ու պատրաստակամությունը:

Թէ՛ ցեղակրոնությունը և թէ՛ հատկապես տարոնականությունը, որի գաղափարական ատաղձը Հայկ Նահապետի մեծագործությունն էր, հիմնված էին հայոց Ոսկեդարում Սուրբ թարգմանիչների և Մամիկոնյանների ձեռքով քրիստոնեական վարդապետությամբ մշակված մեր «յավերժակեաց ու մշտագոյ» ազգապահպան ռազմահայրենասիրական գաղափարախոսության՝ «Ուխտ Մամիկոնէիցի» վրա:

Ոսկեդարի գործիչներից 1500 տարի հետո հայոց մոռացության տրված ինքնապաշտպանական զուտ ազգային, եզակի ու անփոխարինելի գաղափարաբանությունը 1920–30-ական թթ. հայտնագործել, վերականգնել ու ամբողջացրել է Գարեգին Նժդեհը, որի մեծագործությունը նույն արժեքն ունի, ինչ որ Կոմիտաս վարդապետի ու Թորոս Թորամանյանի վաստակը հայոց երաժշտության և ճարտարապետության բնագավառներում: Մենք ազգային երաժշտության և ճարտարապետության զարգացումը չէինք ունենա, եթե Կոմիտաս վարդապետն ու Թորոս

Թորամանյանը չապացուցեին դրանց գոյությունը և չվերականգնեին... Գարեգին Նժդեհի «Ուխտ Մամիկոնէիցը», որը 1919–21 թթ. Զանգեզուրում անվանակոչվեց Դավիթբեկյան ՈՒխտեր, 1934 թ. ԱՄՆ-ում՝ Ցեղակրոն ՈՒխտեր, իսկ 1936–37 թթ. Բուլղարիայում՝ տարոնականություն՝ հայտարարելով ցեղի հավիտենական զենքը:

Այն հարազատեցրեց ազգի ընտրանին, նաև որոշ կազմակերպություններ, հատկապես Տարոն-Տուրուբերան հայրենակցական միությունը, որը Տարոնականությունը հայտարարելով գործունեության ծրագիր՝ իր պաշտոնաթերթ «Տարօնի Արծիւ» ամսաթերթով 1938–1944 թթ. այն քարոզեց ամենուր: Այսպես՝ ամսաթերթն իր 1938–1939 թթ. առաջնորդողներում ազդարարում էր. «Տարօնականությունը խմորվեցվավ և շարժումի ձև ու բովանդակութիւն ստացաւ 1932–36 թուականներուն... Ան կյանքի կոչուեցաւ հատուածականացած և իբր բարոյական-հասարակական-քաղաքական ոյժ փոշիացած հայութիւնը հոգեբանական ամբողջացումի վերածելու պահանջէն... Հայ կյանքի վերանորոգումը տարօնականության միջոցով «կուսակցական» գործ չէ, դա պարտականության նոր լուծ է բոլորի համար և հրամայական է, հայկական դրոշ ունեցող ամէն կազմակերպության...

1. Կա՛յ մեկ ուղի և այդ Հայաստանի ուղին է

2. Կա՛յ մեկ առաջնորդ և այդ՝ մամիկոնյան ոգին է

3. Կա՛յ մեկ երջանկութիւն և այդ՝ ցեղի ու հայրենիքի համար մեռնելու վճռականութիւնն է»[29]:

1937 թ. դեկտեմբերի սկզբին Գ. Նժդեհը Ֆիլիպեում մասնակցում և ելույթ է ունենում Բալկանյան պատերազմին մասնակցած հայ կամավորների կազմակերպած հանդիպմանը՝

[29] «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938, օգոստոս-սեպտեմբեր, թիւ 5–6, էջ 7–8:

Բուլղարիայի Մակեդոն-Օդրինյան կամավորական կազմակերպության փոխնախագահի և այլ անդամների հետ: Նույն օրը Մակեդոն-Օդրինյան կամավորական կազմակերպության Ֆիլիպեի մասնաճյուղի նախագահի հրավերով հյուրընկալվում է այդ կազմակերպության գրասենյակում և «Մակեդոն-Օդրինյան մարտիկների անունից» պարգևատրվում այդ կազմակերպության շքանշանով[30]:

Գ. Նժդեհը 1938 թ. ապրիլին Հ. Ասատրյանի հետ հիմնում է «Տարօնի Արծիւ» շաբաթաթերթը, որով պաշտոնապես սկսվում է տարոնական շարժումը[31]:

1938 թ. սեպտեմբերի 3-5-ին ԱՄՆ-ի Օհայոյի նահանգի էքրոն քաղաքում կայացած Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության համագումարը վավերացնում ու հաստատում է տարոնական շարժումը[32]: 1938 թ. աշխարհի քսան երկրներում իր աջակիցների հետ միասին Գ. Նժդեհը հիմնեց ժամանակակից ոգուն առավելագույնս բավարարող, ավելի քան 2500 անդամ ունեցող հայկական համաշխարհային կազմակերպություն՝ «Տարոնականություն», որը հայոց ազգային գաղափարախոսության ինքնապաշտպանական կառույց հանդիսացող Ուխտ Մամիկոնէիցի արդիացրած ու էլ ավելի զորացրած վերականգնումն էր:

Գարեգին Նժդեհն իր զինակիցների հետ՝ ծրագրել էր 1939 թ. հրավիրել գաղափարակիցների համահայկական հիմնադիր համագումար, որը Երկրորդ աշխարհամարտի բռնկվելու պատճառով հնարավոր չեղավ իրագործել: 1939 թ. Երկրորդ աշխարհամարտը սկսվելուց հետո նա նամակ է հղում ՀՅԴ Գերագույն

---

[30] Տե՛ս «Ռազմիկ» եռօրյա թերթ, Սոֆիա, 1937թ. դեկտեմբերի 4:

[31] **Համբարձումյան Ռ.Գ.**, Նժդեհ. Երևան, 2014. էջ 113–114:

[32] **Համբարձումեան Ռ.**, Գարեգին Նժդեհ (համառօտ վարք. ասոյթներ եւ կենսատարեգրութիւն), էջ 60:

մարմին՝ իր կարողությունները Դաշնակցության տրամադրության տակ դնելու առաջարկով:

Այսպիսով Գ. Նժդեհը 1920–30 ական թթ. Սփյուռքում իր հայանպաստ գործունեությամբ նպաստեց ցեղի ոգու արթնացմանը, անդավաճան մնաց հակաթուրքական պայքարի գաղափարախոսությանը, որը արդիական է նաև մեր օրերում:

**Эдик Г.Минасян,** *ЕГУ, д.и.н., профессор,* **Деятельность Гарегина Нжде в Диаспоре в 1920–30-ых годах.**

Анализ соответствующих фактов раскрывает многие детали деятельности Гарегина Нжде в диаспоре в 1920–1930-е годы. В 1922–1944 годах он проживал в Болгарии (София), занимался общественной и национальной деятельностью, был членом Балканского комитета АРФД. В статье, посвященной анализу произведений Нжде, опубликованных в диаспоре, раскрываются его ответы на многие ключевые вопросы национальной идеологии, результатом которых стало движение Цегакрон («род и религия»), которое он основал в диаспоре и таронизм как идеологию пропаганды патриотизма, пробуждение духа нации, как главного оружия в борьбе с извечными врагами – турками.

В Соединенных Штатах Нжде инициировал движение Цегакрон в 1933 г. и создал Цегакронские заветы. Анализ фактов фиксирует успех движения в Соединенных Штатах, затем возвращение Нжде в Софию, где в 1935 г. он опубликовал актуальную для нашего времени работу «Армяне Америки - раса и ее подонки», в которой объясняется цель расширения вышеупомянутого движения и распространения его среди нашей диаспоры. В статье представлены истоки и процесс движения Таронизма. Усилия Нжде и практические шаги по созыву съезда тех, кто вышел из АРФ Дашнак-

цутюн и пожелал присоединиться к движению Цегакрон, что, однако, не состоялось из-за начала Второй мировой войны. Дана положительная обобщенная оценка деятельности Нжде в диаспоре.

**Edik G. Minasyan,** *YSU, Doctor of Sciences in History, Professor,* **Activities of Garegin Nzhdeh in the Diaspora in the 1920s-30 s.**

The analysis of the relevant facts shows many details of Garegin Nzhdeh's activities in the Diaspora in the 1920s and 1930s. Living in Bulgaria (Sofia) in 1922–1944, he was engaged in public and national activities, was a member of the ARF Balkan Committee. An article analyzing Nzhdeh's works published in the Diaspora reveals his answers to many key questions of national ideology, the result of which was the Tseghakron movement ("carrier of race") he founded in the Diaspora and Taronism as an ideology of propaganda of patriotism, awakening the spirit of the nation, as the main weapon in the struggle against the age-old enemy – the Turks.

In the United States, Nzhdeh initiated the Tseghakron movement in 1933 and created the Tseghakron vows. Analysis of the facts records the success of the movement in the United States, then Nzhdeh's return to Sofia where in 1935 he published the work "American-Armenians – the race and its scum", which is relevant for our times, which explains the goal of expanding the abovementioned movement and making it common among our Diaspora. The article presents the origins and course of the Taron movement.

The efforts of Nzhdeh and practical steps to convene a congress of those who left the ARF Dashnaktsutyun and wished to

join the Tseghakron Movement are presented in the end, which, however, did not take place due to the outbreak of the World War II. A positive generalized assessment of the activities of Nzhdeh in Diaspora is given.

**ԽԱՉԱՏՈՒՐ Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**
***ՀՊՄՀ, պ.գ.դ., պրոֆեսոր***

# ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ 1921–1924 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԸՍՏ ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ԳՈՐԾԶԻ ՁԵԿՈՒՅՑՆԵՐԻ

***Բանալի բառեր՝*** Սյունիք, Դաշնակցություն, խորհրդային իշխա-նություն, ընդհատակյա պայքար, Գերասիմ Աթաջանյան:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանում Հայ Յեղափոխական Դաշնակցության ծավալած ընդհատակյա գործունեության մասին գիտական հանրությանը շատ քիչ բան է հայտնի: Խորհրդային պատմագրությունը չի զլացել «քննադատել» ՀՅԴ ընդհատակյա «հակաժողովրդական» գործունեությունը, ինչն, անշուշտ, եղել է միակողմանի ու խիստ թշնամական մեկնաբանություն: Միայն հետխորհրդային տարիներին հնարավոր եղավ որոշակի լույս սփռել ԽՍՀՄ-ում և մասնավորապես Խորհրդային Հայաստանում դաշնակցական ընդհատակի գործունեության պատմության վրա: Սակայն Խորհրդային Միությունում ՀՅԴ ընդհատակյա հարուստ գործունեությունը դեռ երկար ու հանգամանալից լուսաբանման կարիք է զգում: Այս տեսակետից մեծ արժեք են ներկայացնում ՀՅԴ Կենտրոնական արխիվում (ԱՄՆ, Մասաչուսեթս, Ուոթերթաուն) պահպանվող նյութերը: Բազմաթիվ գաղտնի նամակների, շրջաբերականների, զեկույցների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է տա-

լիս բավարար պատկերացում կազմելու տվյալ հիմնախնդրի վերաբերյալ: Ու թեև խորհրդապահական նկատառումներով փաստաթղթերի՝ գաղտնագրերով գրված լինելը բավականին դժվարացնում է գործը, բայց խնդիրն անլուծելի չէ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան ղեկավարությունը արգելեց ոչ բոլշևիկյան կուսակցությունների, այդ թվում և Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը: Սակայն Հայաստանում խոր արմատներ ունեցող ՀՅ Դաշնակցությունը չէր ուզում դադարեցնել իր գործունեությունը, խորհրդային իշխանություններն էլ անկարող էին միանգամից բացահայտել նրա ճյուղավորված կազմակերպական ցանցը: Խորհրդային Հայաստանում կուսակցական կառույց պահելը ՀՅԴ-ի համար ինքնանպատակ չէր: Մտավախություն կար, որ բոլշևիկյան ռեժիմը կարող է ժամանակավոր լինել, հետևաբար անհրաժեշտության պարագայում Հայաստանին սպառնացող հավանական մարտահրավերներին դիմագրավելու համար պետք էր կազմակերպական ներկայություն ունենալ: Սկզբունքային որոշում կար ստեղծված իրավիճակում չդիմելու բռնի միջոցների՝ Խորհրդային Հայաստանում բոլշևիկյան ռեժիմը տապալելու համար, խորհրդային տարածքում գործելու անլեգալ, իսկ արտասահմանում նաև՝ լեգալ ճանապարհներով: Միաժամանակ, գաղափարական պայքար տանել Խորհրդային Հայաստանի ղեկավարության վնասակար քայլերի դեմ, բայց նաև օգտագործել ՀՅԴ արտասահմանի ներուժը՝ Խորհրդային Հայաստանի վերաշինությանն աջակցելու համար[1]:

Խորհրդային Միության տարածքում և մասնավորապես Անդրկովկասում ՀՅԴ կազմակերպությունները իրենց անլեգալ

---

[1] Քաղաքներ Հ.Հ.Դ. արտասահմանեան մարմիններու արտակարգ խորհրդաժողովի որոշումներէն, ա. տ., 1923, էջ 4:

գործունեությունը շարունակեցին մինչև 1933 թ.: Այդ տարի Փարիզում տեղի ունեցած ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողովը, լսելով Հատուկ հանձնախմբի զեկուցումը Երկրի կազմակերպության մասին, որոշեց դա լուծարված համարել[2]:

Ստորև ներկայացվող զեկուցագրերը հետաքրքիր տեղեկություններ են պարունակում 1921–1924 թթ. Զանգեզուրում տեղի ունեցած մի շարք իրադարձությունների վերաբերյալ:

Զեկուցաբերը Գերասիմ Աթաջանյանն է: Լինելով դաշնակցական գավառային գործիչ՝ վերջինս մեծ զրկանքներ է կրել բոլշևիկյան հալածանքների պատճառով: Եվ չնայած այդ ամենին՝ նա կարողացել է պատվով կատարել իր առաքելությունը: Շուրջ 4 տարի Կապանի շրջանում ընդհատակում տոկուն է պահել Կապանի շրջանի դաշնակցական կառույցը, ոգևորել ժողովրդին՝ հույս ներշնչելով, որ հայրենիքի ազատության ժամն անպայման գալու է:

Իր զեկույցներում Գերասիմ Աթաջանյանը ներկայացնում է Կապանի մի շարք գյուղերում Խորհրդային զորքերի իրականացրած թալանը: Ժողովուրդը պարտավորված էր իր հաշվին պահելու զորքին, զորքն էլ չբավարարվելով իրեն տրվածով, երբեմն թալան էր իրականացնում գյուղերում:

Սակայն զորքի բերած զրկանքները միայն թալանով չսահմանափակվեցին: Բազմաթիվ համաճարակային հիվանդություններ զորքից փոխանցվեցին ժողովրդին:

Զազրելի է եղել բոլշևիկ զինվորների վարքը: Նրանք խաբելով ամուսնացել են օրիորդների և այրի կանանց հետ՝ որոշ ժամանակ ապրելով հետները: Զանգեզուրից հեռանալուց այդ զին-

---

[2] Քաղուածքներ Հ.Յ. Դաշնակցութեան ԺԲ Ընդհ. ժողովի որոշումներէն, Փարիզ, 1933, էջ 16:

վորներից ոմանք թողել են իրենց կանանց և փախել են, ոմանք վերադարձի ճանապարհին են թողել, ոմանք էլ սպանել են իրենց կանանց:

Զեկույցներում խոսվում է բոլշևիկների լրտեսական ցանցի մասին: Լրտեսները մեծ ջանքեր էին գործադրում ժողովրդին զինաթափելու, Առաջին Հանրապետության շրջանից մնացած զենք-զինամթերքը վերցնելու ուղղությամբ: Այս շրջանի բոլշևիկյան գործունեության անբաժան մասն են կազմում ձերբակալությունները: Ձերբակալվածների մի մասը աքսորվել է, մի մասն էլ ըստ զեկույցի բանտարկվել:

Անդրադարձ կա նաև սովին: Ընդ որում, նշվում է, որ սովը հիմնականում հայկական գյուղերում էր, իսկ թուրքաբնակ գյուղերում հացի պաշարներ եղել են:

Զեկույցներում խոսվում է նաև դրամի արժեզրկման մասին, ինչի պատճառով հասարակ մարդիկ ստիպված են եղել հացահատիկի համար էժան վաճառել իրենց տներում եղած ոսկեղենը և անհրաժեշտ իրերը: Նկարագրվում է նաև Սյունիքում բոլշևիկների հարկային ծանր քաղաքականությունը:

Մի զեկույցով էլ Գերասիմը դիմում է ՀՅԴ Բյուրոյին՝ առաջարկելով դաշնակցական մամուլում Սյունիքի օրինակով բարձրաձայնել Խորհրդային Հայաստանում առկա բազմաթիվ խնդիրների մասին:

Այս և հարանման բազմաթիվ հարցեր են քննարկվում ստորև ներկայացվող զեկույցներում:

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 1

Սովետական իշխանությունը 1921 թվին հայ և ռուս զորքերով մտնելով Լեռնահայաստան, Զանգեզուր, հրահանգված էր Զանգեզուրում, երբ ժողովրդի կողմից դիմադրություն լինի, անխնա կերպով սրի քաշել բոլոր ժողովրդին և կրակել բոլոր գյուղերը:

Հանքում ևս սովի մատնված ժողովուրդը երկար կռվելուց, իր ջանքերը գործադրելով, ստիպված եղավ հպատակվելու Սովետական ստոր իրավակարգերին: Հետևապես 1921 թվին նրանց[3] բոլոր զինվորները ցրեցին Ղափանի այն գյուղերը, որոնք Դաշնակցության կառավարության օրոք ըմբոստացած կային Սովետական ուժերի դեմ: Կառավարության կողմից կարգադրված էր յուրաքանչյուր զինվորին տալու 0,5 ֆունտ պարեն: Իսկ մնացած ուժերը ձրիաբար մնում էին հանքում: Զինվորները չբավականանալով նրանով, բռնի կերպով մտնում էին գյուղերը, թալանում գյուղացիների ուտելիքի պաշարը և անհրաժեշտ իրերը, տանում շուկաներում վաճառքի հանում, նույնպես գիշերները թալանում էին գյուղացիների այգիները և բանջարանոցները: Այսպիսով դատապարտված ժողովուրդը լռությամբ տանում էր նրանց հասցրած բոլոր վնասները ու բռնակալությունները: Զորքերը 4-5 ամիս մնալով հայ գյուղերում, նրանց մեջ առաջացավ «Տիֆ» հիվանդությունը, որոնցից և վարակվեց ժողովուրդը: Նրանք ապրում էին շատ կեղտոտ, նրանց սենյակները նման էին ախոռների: «Տիֆ» հիվանդությունից կոտորվեցին թե զինվորներից, թե ժողովրդից:

Շատ ընտանիքներ ստիպված եղան թողնել իրենց տները և փախչել լեռները: Այսպիսով Ղափանի ժողովուրդը մեծ վնասներ

---

[3] Խորհրդային իշխանությունների:

է կրել թե նյութապես, թե ֆիզիկապես: Բերանները փակ, բռնակալ սվինների առաջ չէին համարձակվում որևէ բողոք բարձրացնել: Կամ ո՞ւմ պետք է բողոքեին: Միաժամանակ Սովետական ոստիկանական խմբերը ցերեկը իրանց լրտեսների աջակցությամբ ընկած էին գյուղեգյուղ, զինաթափում էին ժողովրդի մոտ եղած մեծ թե փոքր զենքերը և Դաշնակցության օրոք մնացած բոլոր ռազմական զինամթերքը, ապրանքները և այլն:

Սկսվեցին ձերբակալությունները: Ձերբակալվեցին բոլոր վաշտապետերը, ափիցերները[4], աչքի ընկնող զինվորները, դաշնակցականները և համակրողները: Այդպիսով ոմանց խփեցին, ոմանց աքսորեցին, ոմանց էլ բանտարկեցին 6 ամսով, մի տարիով և այլն: Միաժամանակ զինվորները սկսեցին անբարոյականանալ: Նրանք խաբելով գյուղացիներին, սկսեցին ամուսնանալ օրիորդների և այրի կանանց հետ, 4–5 ամիս ապրելով հետները, գնալուց ոմանց թողեցին փախան, ոմանց տարան ճանապարհին թողեցին, ոմանց էլ սպանեցին: Այդպիսի օրիորդներից շատերը դեռ այսօր էլ դժբախտացած են մնացած իրանց հայրենի օջախների մոտը: Վերջապես վերջացնելով գյուղացիների հացի և մթերքի պաշարը, հեռացան Ղափանի շրջանից: Ապա զորքերը անցան Զանգեզուրի շրջանի Գորիս քաղաք, միառժամանակ մնացին այնտեղ և նույն դերը խաղացին այնտեղի ժողովրդի գլխին: Բոլոր նրանց հին հաշիվները մաքրելուց հետո քաշվեցին դեպի Երևան և Ադրբեջանի շրջանները:

Հիմնվեցավ տեղական իշխանություն ըստ սովետական իրավակարգերի: Նույն տարին ժողովուրդը սովի մատնվեցավ: Հացահատիկ գտնվում էր միայն հարևան թուրք գյուղերում: Այդ

---

[4] Սպաները:

ժամանակ սովետական թղթադրամը ոչ մի արժեք չուներ: Ժողովուրդը ստիպված եղավ իրանց տներում եղած անհրաժեշտ իրերը կիսարժեքով վաճառքի հանել՝ տալով թուրքերին հացահատիկի: Մի կերպ այդ տարին յոլա գնացին[5]:

Եկավ առաջիկա 1922 թիվը: Նույնպես ժողովուրդը եղած չեղած հոգապահուստները, կանանց և տղամարդկանց զարդ ու զարդարանքները, ոսկի և երկաթեղենը, անգամ հագնելիք շորերը, բոլորը վաճառքի հանեցին, մի կերպ յոլա գնացին՝ սպասելով նոր բերքին: Հենց այդ նույն տարին կառավարության կողմից հողի, ապրանքի և սնչի[6] հարկեր պահանջվեց: Հարկերի դիմաց պահանջվում էր կամ հացահատիկ, կամ թե ապրանք՝ գնահատված ոսկու արժեքով: Ժողովրդի կողմից առաջարկվեց որքան բողոքներ, որքան ներկայացուցիչներ, փաստացի չքավորության համախոսականներ: Ոչ մի հետևանք չունեցավ: Ստիպված զենքի ուժով, լաց ու կոծով հավաքեցին առանց խտրության հարուստ և աղքատի: Միայն ազատվեցին պարտքերից կոմունիստները:

1923 թվին թեկուզ կարկուտը մեծ վնաս հասցրավ ժողովրդին, բայց և այնպես նույնպես այդ տարի յոլա գնացին: Կառավարության կողմից հարկեր նշանակվեցին: Հարկերի դիմաց վերցվեց այդ տարի նույնպես հացահատիկ, մեղր, յուղ և ապրանք: Գյուղացու մթերքների և ապրանքների արժեքները գնահատված էր կառավարության ցանկությամբ: Այնպիսի այրի կանայք կային, որոնց եղած չեղածը հազիվ երկու ամսվա ուտելու պաշար լիներ, լաց ու կոծով տարավ հանձնեց կառավարությա-

---

[5] Դիմացան:

[6] Ենչի:

նը: Նաև խնդրեց կոմիսիա[7] նշանակել գալու իր տունը ստուգելու, արդյո՞ք մի շաբաթվա պաշար մնացել է, թե ոչ իրա խեղճ որբերի համար: Չեր հարգվում նույնիսկ նրա լաց ու կոծը:

Այսպիսով հավաքում էին ժողովրդի եղած չեղածը: Շատ ընտանիքներ սովամահ եղան, հեռացան իրանց ծննդավայրերից, իրենց երեխաների հետ գյուղե-գյուղ թափառելով նույնիսկ այժմ դեռ չեն վերադարձած իրենց ծննդավայրը, և այդպիսիների տները ավերակներ են դարձած: Այդ երեք տարվա ընթացքում հարուստ ու աղքատ չէին իմանում ինչ բան է շաքարը, մանուֆակտուրան, ֆաբրիկային մթերքները և այլն...

Գյուղացիները իրանց ստեղծած միջոցներով հազար ու մի տանջանքներով ապրել են մի կերպ մինչև 1924 թիվը: Դեռ այս տարի է, որ չերվոնեց[8] փողը գոյություն ունի Լեռնահայաստանի ժողովուրդի մեջ: Ղափանի հանքերում կառավարության հաշվին մի երկու խանութ է բացված, մի երկուան էլ կողմնակի մարդիկ են բացել, այն, ինչ որ ցարի ժամանակ Պղնձահանքերում 100-ից ավելի էր լինում: Իսկ Գորիս քաղաքում 20–30 խանութներ հազիվ կարող են լինել: Ներկա 1924 թվին Լեռնահայաստանում բերքը բավարար էր: Միայն առաջին անգամն էր այդպես չտեսնված: Կառավարության կողմից այնպիսի հարկեր էին պահանջում, ոչ մի պետություն, նույնիսկ պարսկական խաների կողմից այսպիսի զուլում տրված չէր եղել:

Ժողովուրդը, ճիշտ ցուցակ չի տալով իրա հողերի սնչի և ապրանքի համար, գողանում է կառավարությունից: Եթե ճիշտ ցուցակն տային, պետք է տուն, տեղ բոլորը հանձնեին ու դա-

---

[7] Հանձնաժողով:

[8] Տասը ռուբլու արժողությամբ թղթադրամ, որ շրջանառության մեջ է եղել 1922–1947 թթ.:

տարկ նստեին: Ճիշտ ցուցակ չի տալու համար գյուղացիներին տանում են, պատժում են, տուգանքի ենթարկում, ապրանքները պետականացնում, որ ճիշտ ցուցակն տան: Բայց ժողովուրդը կանգնում է իրա ասածին:

Կան այնպիսի այրի կանայք, որոնցից պահանջվում է 150–200 ռուբլի ոսկու արժեքով, կան այնպիսի մարդիկ, որ պետք է իր տարվա պաշարը, եզները հանձնի և հազիվ ազատվի...

Ժողովուրդի ձեռքին չկան ոչ մի աշխատանքի աղբյուր, տեղական պաշտոնյաները շատ քիչ են: Բոլոր գյուղացիները վաճառքի են հանում իրանց եղած չեղած հացահատիկները, լծկան եզները և կովերը:

Գյուղացիների վաճառքի հանած մթերքները կամ առնում են կոմունիստ պաշտոնյաները, որովհետև այս տարի հարկերի դիմաց դրամ են վերցնում, և դրամն էլ կոմունիստների ձեռքին է գտնվում: Հետևապես գյուղացիների ապրանքները վաճառվում են չնչին գներով:

Շատ մեծ զանազանություն կա գյուղատնտեսական և ֆաբրիկային ապրանքների միջև, ֆաբրիկային ապրանքները շատ թանկ են գյուղացու ապրանքների համեմատությամբ:

Կան և զանազան տեսակի տուրքեր:

Պաշտոնի մեջ են Նիկոլայի ռեժիմի բոլոր աբեշիկները և աքսիզնի չինովնիկները: Նրանք որպես հմուտ չինովնիկներ քերթում են ժողովրդի կաշին, թույլ չեն տալիս ժողովրդին առանց տոմս վերցնելու գնալ անտառ և մի ճիպոտ կտրել: Ամեն չնչին բանի համար հարկ է նշանակված: Իսկ եթե մի գոմ կամ մի մարագ շինեն, ահագին գումար դրամ է հարկավոր: Օղի քաշելու համար մեծ ծախսեր է պահանջվում: Եվ դրա համար գյուղացիների այգիներում ահագին մթերք է փչանում:

Կան և ուրիշ պաշտոնյաներ՝ «քոչպետներ»[9] և «ապահովագրողներ»:

Երբ որ գյուղացիները սար են բարձրանում, ընկեր քոչպետերը իրենց «ստրաժնիկներ»ով[10] պարտավոր են լինել գյուղացու վրանում: Փառավոր կերպով նստում են այնտեղ և գյուղացու տիկիններից հաշիվ են պահանջում: Նույնիսկ հարցնում են թե քանի ճիպոտ են բերել: Չհավատալով կանանց տված ցուցակին՝ պարոն քոչպետերը հրամայում են ստրաժնիկներին, ճիշտ ցուցակ կտան նոքա քոչպետերին բոլոր ճիպոտների և անասունների: Ձիերի, ջորիների և ավանակների ու ամեն մի վրանի համար բերված են լինում մոտ 60 ճիպոտ, յուրաքանչյուր ճիպոտ առնում են 30 կոպեկով: Նմանապես կառավարության կողմից նշանակված է հարկեր անասունների և մյուսների համար: Հարկերի համար վերցվում է յուղ, պանիր, չաղ մսացու, ապրանքներ և դրամ: Այդ ժամանակ գյուղացիների աշխատանքի վառ ժամանակ լինելու պատճառով բոլոր տղամարդիկ գյուղերում են լինում: Դրա համար ընկ. քոչպետերը այդ հաշիվները քաշում են տիկինների հետ: Տիկինները գիտեն, որ արդեն հրաման է: Պետք է պահանջը կատարվի: Ստիպված են լինում դժգոհությամբ եղած չեղած յուղն ու պանիրը հանձնել նրանց:

Հետո հերթը հասնում է նոր պաշտոնյաներին, որոնք եկան գյուղերը ցույց տվեցին ժողովուրդին կառավարության կողմից հրահանգված հրահանգները, որ պետք է գյուղացիությունը իրա եղած չեղած թե շարժական, թե անշարժ կարողությունը ապահովագրի: Ժողովուրդը ստիպված եղավ ապահովագրելու:

---

[9] Ամառային արոտավայրերի պատասխանատու:

[10] Զինված պահակախմբի անդամներ:

Եկվոր պաշտոնյաները հավաքեցին ժողովրդից ապահովագրված գույքի փողերը ըստ կառավարության որոշած նորմայով և գնացին: Հունիս ամսվա գյուղացիների արտերի կարկուտի վնասները ապահովագրեցին՝ խոստանալով մինչև մի ամիս կառավարության կողմից վճարվի յուրաքանչյուր դեսյատինին[11] 15 ռուբլի չերվոնեց փող: Դեռ մինչև էսօր ժողովրդի աչքը ճանապարհին է, թե երբ պիտի վճարեն: Ամեն մի ջրաղացից առել են տիրոջից 20 ռուբլի չերվոնեց: Վաճառականներից չտեսնված հարկեր են առնում և այլն:

Ահա այդպիսով ժողովրդին սննկացնելով, կառավարությունը հանգամանքից օգտվելով չնչին ռոճիկներով լրտեսների քանակը շատացրած է: Լրտեսներին հաշիվ չունի, նույնիսկ բարոյական մարդիկ, իրանց տնտեսական սուր կարիքները ստիպած է ստոր ծառայություններ հանձն առնել: Վերջապես ժողովուրդն եկած է այն եզրակացության, որ ներկա սովետական կառավարությունը ոչ թե բանվորագյուղացիական կառավարություն է, այլ լրտեսի և «թալանի» կառավարություն է: Միայն թալանի ձևն է փոխված: Ժողովուրդը թե տնտեսապես, թե ֆիզիկապես սննկացած է: Զանգեզուրում կյանք չկա, ուրախություն չկա: Կանանց և տղամարդկանց 70%-ը բոբիկ է ման գալիս: Եղածը տրեխներ են, այն էլ չի ճարվում: Հագուստները տեղային միջոցներով են պատրաստվում միայն, չի զանազանվում իրարից:

Տղամարդիկ անտառից շալակով փետ են բերում, արտերից խուրձով խոտ են բերում, մի խոսքով տղամարդիկ լծկան եզան դեր են կատարում, իսկ կանայք՝ տղամարդու դեր:

---

[11] Դեսյատինը հողի տարածության չափման միավոր է, հավասար է 1,09 հեկտարի:

Ժողովուրդը իրավիճակից և կառավարությունից դժգոհ և տրտունջ ապրում է հուսահատական և սպասողական դրության մեջ՝ հույս ունենալով, որ ներկա սովետական կառավարությունը ժամանակավոր է, պետք է տապալվի, կորչի:

Հույսները դնելով իրանց արտասահմանյան ընկերների վրա և եվրոպական պետությունների վրա, սպասում են որ կազատեն իրենց բռնություններից և թալանչի տականքներից: Կան այնպիսի գյուղացիներ, որոնք եթե իմանան, երկար պիտի տևի այս իշխանությունը, ինքնասպանություն կգործեն: Կառավարությունը արդեն համոզված է, որ ժողովուրդը զզված է, 15 տարեկանից բարձր գիշեր-ցերեկ աղոթում են իրենց տապալման համար: Գիտակցելով այդ, հենց այս տարվանից մեծ ծախսեր են անում, բավարարում են ուսուցիչներին, ուսումնարանները նորոգում են, պատրաստ են կրթության տալ մատաղ սերնդին և բատրակներին ըստ մարքսիզմի հովքերով[12]: Այդ առթիվ ձեր ուշադրությունն եմ գրավում, որ նոր սերունդը խորանում է մարքսիզմի հովքերով:

Ինչպես վերևում նշեցի, չկա մի պատասխանատու պաշտոն, որ կոմունիստի ձեռքին չլինի:

Ժողովրդական դատավորները կոմունիստ են և ցած կրթություն ունեցող մարդիկ: Դատի ժամանակ դատավորի աջ և ձախ կողմերում նստած են լինում երկու չեկիստ և զինված կոմունիստ գյուղացի կամ պաշտոնյա ատենակալներ: Եթե գանգատավորներից մեկը անկուսակցական է կամ դաշնակցական, իսկ մյուսը կոմունիստ է կամ նրանց համակրող, որքան էլ անկուսակցականը կամ դաշնակցականը արդար լինեն, դարձյալ,

---

[12] Նկատի ունի մարքսիստական գաղափարախոսությունը:

պետք է մեղադրվեն, և կոմունիստը պետք է ազատվի: Իսկ եթե կոմունիստի մեղքը շատ-շատ է, հնարավորություն չկա ազատվելու, նրա հանցանքի համար կաքսորեն մի ուրիշ շրջան և ավելի բարձր պաշտոն կտան: Այս մասին քանի-քանի փաստեր ունինք:

Գալով ընտրությունների ձևին.

Երևանից և գավառից գալիս են մի քանի պատասխանատու պաշտոնյաներ: Ընտրությունները սկսում են գյուղերից: Եկվոր պաշտոնյաները գյուղը մտնելուն պես կարգադրում են գյուղական իսպալկոմին[13] հավաքել բոլոր ժողովրդին մի հարմար սենյակ ընտրության համար: Մինչև ժողովը բացվելը կանչում են առանձին իրանց գիտցած մարդկանցից մի քանիսին: Նրանք խորհրդակցությամբ որոշում են իրենց հավատարիմ այն մարդկանց, ովքեր կարող են լինել գյուղական խորհրդի անդամ, նրանց ազգանունները գրում են թղթի վրա: Հետո ժողովը հայտարարում են բացված: Նախ իրենց սովորական ճառերը ասելուց հետո անցնում են ընտրության: Հայտարարում են, որ ընտրության ժամանակ ձայնազուրկ են դաշնակցական վաշտապետերը, աֆիցերները, տերտերները, նախկին կռիվների մասնակցիները:

Այդքանից հետո ժողովուրդը, վիճաբանելով, թղթի վրա գրում է իրենց ցանկալի մարդկանց անունները, բայց վերջում ազդեցիկ պաշտոնյաները որպես ընտրությունների հաղթող հայտարարում են իրենց ցանկալի մարդկանց անունները, որոնց ցանկը նախապես կազմել էին արդեն: Լուռ ու մունջ ժողովուրդը ճարը կտրված, իրարից նեղացած են մնում, թե ինչու

---

[13] Գործկոմ:

են այդպիսի մարդկանց ընտրել: Շատերը հասկանում են, թե ինչի մեջն է գաղտնիքը, բայց լռում են: Միաժամանակ լրտեսները ընտրության ժամանակ պտտվում են ժողովրդի մեջ: Անարդարության դեմ խոսացողին մի օր չանցած բանտարկում են և ամիսներով պահում: Ահա այսպես են լինում սրանց ընտրությունները:

Բոլոր կոմունիստները, ՝պաշտոնյա թե առանց պաշտոնի, փոքրիկ զենքերով են ման գալիս ժողովրդի մեջ: Միշտ քարոզում են ժողովրդին ուրանալ եկեղեցին, ուրանալ ազգային հոգին, զզվանքով են վերաբերվում հոգևորականների հետ:

Ժողովրդի 80 տոկոսը աղքատ է և հոգնած է իրավակարգեն: Հոկտեմբերի 15-ից մինչև վերջը կարգադրված և հրահանգված է բոլոր մեծ զենքերը հանձնել կառավարությանը: Թեև ժամանակը լրացավ, բայց ժողովուրդը ցանկություն չուներ զինաթափ լինելու: Կուսակցական պաշտոնյաները անկուսակցականների համեմատ կրկնակի բարձր ռոճիկ են ստանում: Բոլոր կոմունիստները տնտեսապես ապահով են, ապրում են լավ և գոհ են վիճակից:

Հողային հարցը:

Հողային հարցի համար օգոստոս ամսին կառավարության կողմից նշանակված էին մի քանի պաշտոնյաներ, որոնք եկած էին Լեռնահայաստան: Զանգեզուրի գյուղերը նոցա կարգադրությամբ ցուցակագրած էին: Ամեն մի գյուղից ընտրված էին երկուական կոմիսիա[14]: Պարտավորվեցին հողաչափերի հետ սահմանազատում անել գյուղերի միջև և ամեն սնչին տալ 1½ դեսյատին հող:

---

[14] Նկատի ունի հանձնաժողովի անդամ:

Գորիս քաղաքում և Ղափանի հանքերում գյուղացիների շինությունները և խանութները, որոնք կառուցել էին վարձով տալու, կառավարությունը բռնագրաված է որպես պետական:

Ձերբակալությունը և սպանությունը Լեռնահայաստանում: Ձերբակալություններ և սպանություններ միշտ եղել են և այժմ էլ լինում են: Քաղաքական հանցավորների հետ վարվում են շատ կոպիտ և անվայել հայհոյանքներով: Նրանց բանտարկում են խոնավ և մութ սենյակներում, խիստ ծեծի ենթարկում, մի քանի օր սոված պահում: Էտապով[15] ուղարկում են Գորիսի բանտը, որտեղ ենթարկում են հազարավոր տանջանքների: Շատերին ճանապարհին խփում են՝ պատճառաբանելով, թե փախչում էին: Այնինչ հանցավորին այնպիսի դրության են հասցնում, որ չի կարող նույնիսկ քայլել, էլ ուր մնաց փախչի: Բանտարկվածի հարազատները վաղորոք պիտի իմանան, որ իրենց բարեկամին տանելու են Գորիսի բանտը, որ ոստիկանին կաշառեն իրենց բարեկամին ճանապարհին չխփելու համար:

Բանտ տանելուց ոչ մի բարեկամի կամ ծանոթի թույլ չեն տալիս այցելել, հաց տանել: Այդպեսով մարդուն՝ բանտարկյալին, հանում էին հոգեկան հավասարակշռությունից, որ վերջինս հայհոյեր կառավարությունը և իմանային նրա վերաբերմունքը կառավարության հանդեպ: Շատ դեպքերում ոստիկանները սուտ դակլադներ[16] են տալիս չեկային[17]:

---

[15] Պահակախմբի հսկողությամբ որևէ տեղ տարվող կալանավորների խումբ:

[16] Զեկույց:

[17] Ռուսերեն черезвычайная комиссия (Արտակարգ հանձնաժողով) բառերի հապավումն է: Ստեղծվել է Խորհրդային Ռուսաստանում 1917 թ. դեկտեմբերին: Պաշտոնական անվանումը եղել է Հակահեղափոխության, սաբոտաժի և սպեկուլյացիայի դեմ պայքարի համառուսաստանյան Արտակարգ հանձնա-

Գերասիմ
առանց տարեթվի
ՀՅԴ կենտրոնական արխիվ, փաստաթուղթ թիվ Ե-412Ա5-12, 31
թերթ: Բնագիր: Ձեռագիր:

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 2

ՀՅԴ Բյուրոյին

1921 թվից սկսած մինչև 1924 թ. վերջերը ես, գտնվելով Լեռնահայաստանում, ականատես և մոտիկից ծանոթ լինելով հայ ժողովրդի վիճակին, նաև Սով[ետական] Հայաստանի կառավարության անբարեխիղճ վերաբերմունքին ժողովրդի հանդեպ, գրավոր հայտնում և խնդրում եմ պայքար մղել միշտ լրագիրների միջոցով, հետևյալ նյութերի առթիվ լայն իմաստով, որով կատարած կլինեք Հ.Յ. Դաշնակցության բարոյական պարտականությունը, որը հայ ժողովրդի այժմվա սրտի ուզած և կարևոր նյութեր են:

1. Լեզվի և մամուլի ազատություն,

2. Վերջ տալ քաղաքական հանցավորներին, սպանություններին և բանտարկություններին: Մեծ տարբերություն դնել քաղաքների և գավառների միջև: Վերջինս ավելի է տուժում: Հիմնվել գլխավորապես գավառների և գյուղերի վրա:

3. Նկարագրել աբեշիկների[18], աքսիզնի չինովնիկների[19], ապահովագրողների, չեկիստ ժանդարմների վերաբերմունքը հանդեպ հայ ժողովրդի քայքայման: Պատկերացնել վերոնշյալ

---

ժողով: Խորհրդայնացումից հետո Արտակարգ հանձնաժողով ստեղծվեց նաև Հայաստանում:

[18] Անտառապահ:

[19] Հարկային պաշտոնյա:

ծառայողների մասին, որոնք ցարական ժամանակվանից հմուտ իրանց պաշտոնների մեջ, այժմ էլ այնպիսիները դարձյալ ժողովրդի գլխին պաշտոնի են, որոնք որպես հմուտ գայլեր, ժողովրդի հոգին առնում են, իրանց վերաբերմունքով չեն զանազանվում ցարական ռեժիմից:

4. Ասպարեզ հանել ժողովրդի ներքին տնտեսական քայքայված վիճակը: Քայքայման պատճառը գրել. կառավարության պահանջած անսահման անբարեխիղճ, ժողովրդի ուժերից վեր տուրքեր և երթևեկության սահմանափակում: Պատկերացրեք, որ դեռ Խորհրդային իշխանությունը իրա թալանը չի դադարեցնում ժողովրդից: Եթե առաջ անկազմակերպ և անկանոն էին թալանում, ներկայումս խորհրդային իշխանությունը զիգզագ ճանապարհով է թալանում ժողովրդին, ավելի շատ և նկատելի, քան թե առաջ: Միայն զգուշությամբ և հեռատեսությամբ, կազմակերպված և զինված նոր ուժեղ խորհրդային քաղաքական իրավակարգերով, ապահովված և կազմակերպված ուժեղ լրտեսների աջակցությամբ, որը միայն խորհրդային իշխանության ուժն է կոչվում: Թող կորչի լրտեսությունը...

5. Կոմունիստ պաշտոնյաների և անպաշտոնյաների զինված ման գալը ժողովրդի մեջ, գլխավորապես գյուղերում, որն ազդում է ժողովրդի վրա, որով ցույց են տալիս, որ ժողովուրդը հավատարիմ չէ կառավարությանը և միշտ ճնշման ու տեռորիզացիայի[20] տակ են պահում:

6. Նկարագրել, որ Դաշնակցության կառավարության օրոք Լեռնահայաստանում համարյա թե բոլոր գյուղերում ունեինք պահեստներ, որոնց մեջ կար ամեն տեսակի ռազմամթերք,

---

[20] Ահաբեկում:

թնդանոթներ, 200-ից ավելի գնդացիրներ և այլն: 1921 թվին բոլորը դուրս են բերված և ուղարկվել են Ռուսաստան:

7. Խոսել 1924 թ. հոկտեմբեր ամսվա կառավարության կողմից հրահանգված Լեռնահայաստանի ժողովրդի զինաթափման առթիվ: Որ ժողովուրդը ցանկություն չուներ զինաթափ լինելու, որովհետև ինչպես կառավարությունը վստահություն չունի ժողովրդի վրա, նույնպես հայ ժողովուրդը վստահություն չունի իրա երկրի ամենամոտ դիրքերի և սովետական իշխանության վրա վտանգի դեպքում: Ամեն ինչ ձեռքից տված է, միայն ու միայն իր հույսը իր ուժի և իր զենքի վրա դրած է և նրանով իրավ ապահով է զգում: Այն էլ սովետական իշխանությունը ուզում է խլել ու դարձյալ Ռուսաստան ուղարկել: Հայ ժողովրդի համար ավելի լավ է ձեռքի հացը առնել քան թե իրա զենքը: Պայքար մղել զինաթափության առթիվ, սահմանների անորոշության և երկրի ամենամոտ դիրքերի առթիվ:

8. Կոմունիստ պաշտոնյաների և անկուսակցական պաշտոնյաների ռոճիկների զանազանության առթիվ: Անկուսակցականների և դաշնակցականների մեծ մասը անգործ են դիտավորյալ կերպով կառավարության կողմից:

9. Ժողովուրդը չի իմանում ինչ է կատարվում կամ խոսվում Սովետական թերթերի միջոցով կամ հատուկ պաշտոնյաների միջոցով, իրա լեզվից, դրսի երկրներում կամ գաղութներում: Միշտ շահագործում են ժողովրդի անունը:

Ընկերական բարևներով՝ Գերասիմ

10 մարտի, 1925 թ.

ՀՅԴ կենտրոնական արխիվ, փաստաթուղթ թիվ Ե-412Ա6-3, թթ. 1–3: Բնագիր: Ձեռագիր:

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 3

### ՀՅԴ Բյուրոյին

1922 թվից մինչև 1924 թ. մարտի մեկը մենակ ես էի կապ պահում Վրեժի[21] հետ: Այդ երկու տարեշրջաններում իմ կապն այնքան էլ կանոնավոր չէր: Հազիվ էի կարողանում զանազան անհատների միջոցով տեղեկություններ տալ կամ ստանալ երկրի և դրսի աշխարհի կացության և կուսակցական գործերի մասին:

Միայն ինձ հայտնում էին Վրեժից աշխատել ազգային ոգին վառ պահել ժողովրդի սրտում, և այդ ուղղությամբ իմ ուժերի չափ հաջող կատարել եմ որոշ աշխատանք: Կառավարությունը որքան խիստ միջոցներ ձեռք առավ իմ հանդեպ, պահել է միշտ ճնշման տակ, այդ առթիվ քայքայվեցավ իմ տնտեսական վիճակս, որը աչքի ընկնող մի ընտանիք է մեր շրջանում: Այնուամենայնիվ ես կանգ չեմ առել ոչ մի վտանգի կամ քայքայման առջև և առաջ եմ տարել Վրեժից ստացած բոլոր կուսակցական կարգադրությունները և աշխատանքները: Երկու տարեշրջանում ես ստացել եմ Վրեժից իմ տնտեսական սուր կարիքների համար 130 (հարյուրերեսուն) դոլար: Բայց այդ երկու տարվա ընթացքին իմ սեփական միջոցներով երկու հարյուր հիսուն դոլար ծախս եմ արել կապերի, սուրհանդակային, կուսակցական ընկերների անցուդարձի և այլն: Այժմ իմ պատճառով ինձնից բաժանված եղբայրս, որի վրա ծանրացած է մի մեծ ընտանիք, 6 ամիս է բանտում է, որը կուսակցական է: Երեկ նամակ եմ ստացել, իմ ընտանիքը ծանր դրության մեջ է, մեծ տղաս, որը 14 տա-

---

[21] ՀՅԴ Ատրպատականի Կենտրոնական կոմիտեի ծածկանունը:

ռեկան է, գրում է ինձ, որ իմ բացակայությունից հետո ուսումնարան չի գնում, որովհետև ծանր դրությունը իր վրա է ընկած, երբ պետք է ազատեմ իրեն այդ դրությունից:

Հետևապես այս բոլորը ես նախազգում և գիտակցում էի, որ պետք է քայքայվեմ, բայց կուսակցական լոզունգը, հայ ժողովրդի շահերը թույլ չեն տվել ինձ, որ մենակ իմ տնտեսական վիճակիս մասին մտածեմ: Միայն ես մի բանով եմ մխիթարվում, այդ այն է, որ ես ինձ Երկրում պահել եմ մաքուր կանգնած իմ կոչման վրա, կուսակցական հողի վրա, որը կ'հաստատի իմ թողած աշխատանքս: Քայքայվելով հանուն հայ ժողովրդի շահերի, ինքը ժողովուրդը կհաստատի: Սորանով ծանոթացնում եմ իմ բարոյական գործունեության հետ:

1924 թ. մարտի մեկից հիմնեցինք տեղական մարմին, կապվեցինք շրջանների մարմինների հետ: Մեր աշխատանքները ավելի խոշորացան: Մենք աշխատում էինք երկու ուղղությամբ. 1) Ընդհանուր ժողովրդական բնույթի էր, որոնք չէին դիմանում, զզվում էին կառավարության իրավակարգերից, բռնություններից: Այդպիսի դեպքերում մենք միշտ ատելություն և անվստահություն էինք մտցնում ժողովրդի մեջ հանդեպ սովետական կառավարության: Ժողովրդի 70–80%-ը դեմ էր կառավարությանը: 2) Կուսակցական ընկերական շարքերում հիմնվում էինք Վրեժից ստացած կարգադրությունների վրա, պահում մեր կուսակցական գաղափարը և լոզունգը, աշխատում էինք խորացնել մեր ուժերը, նաև աչքի առաջ էինք առնում ժողովրդի շահերը: Եվ այդ հողի վրա թողեցի եկա: Հետևապես մեր մարմնի անհրաժեշտ կարիքների համար գրավոր հայտնում եմ Ձեզ և խնդրում եմ Ձեր ուշադրությունը դարձնեք հետևյալ կետերի վրա և կարգադրեք փոխանցում.

1. Մեր կապը կանոնավոր չէր Պարսկաստանի հետ, որովհետև մեր մարմինը ի վիճակի չէր սուրհանդակային ծախսեր անելու, կանոնավորելու կապը, գրականությունը տարեշրջանում ստացել ենք երկու անգամ, որոնք հնացել են, անհետաքրքիր են դարձել:

2. Երևանի հետ մեր կապը հաստատվեց 1924 թ. մայիսից, որոնք թույլ և անհետաքրքիր էին վերաբերվում մեզ հետ: Որքան դրամ էր ստանում Երևանը Վրեժից, մեզ հատնի չէր: Միայն Վրեժից կարգադրված էր Երևանին ուղարկելու մեզ սուրհանդակային ծախս 60 դոլար: Մինչև վերջը չենք ստացել ոչ մի կոպեկ, և տեղեկությունների համար միշտ մենք էինք մարդ ուղարկում Երևան, որը մեզ վրա ահագին ծախսեր էր նստում:

3. Մեր կապը պետք է լինի անկախ Երևանից ուղիղ Երասխի վրայով: Այս կապի համար անհրաժեշտ է երկու սուրհանդակ, մեկը այս ափում, մյուսը՝ այն ափում հստակ կապ պահելու համար, որոնք կարող են ժամանակին իրազեկ անել ներսի և դրսի կացությունը: Երևանի հետ կապ կը պահենք միայն Երկրի կազմակերպչական գործի համար: Ներսի և դրսի տեղեկությունները միշտ թարմ պահել:

4. Մեր մարմնի վերջին ժամանակներս Վրեժից և Երևանից ստացած տեղեկությունները չէին համապատասխանում իրականությանը: Մեզ միշտ պահում էին սպասողական դրության մեջ, որպես թե օրերի կամ ամիսների հարց են փոփոխությունները, և թողել են նույն վիճակի մեջ Երկրի ընկերներին: Որից պատահում էին թյուրիմացություններ և վատ հետևանքներ: Պետք է կարգադրել Վրեժին, բացի Բյուրոյից ստացած տեղեկություններից կամ կարգադրություններից, սահմանից դուրս լուրեր չտան մեր մարմնին:

5. Երկրի մարմիններին տալ լայն իրավունքներ, հանդեպ լրտեսների, բռնակալների և վնասակար տարրերի: Նաև հայտնել նրանց իրավունքների սահմանը:

6. Նոր սերունդների վրա առանձին ուշադրություն դարձնել:

7. Կարգադրել կուսակցական ընկերներին գաղտնապահ լինել կուսակցական գործերի առթիվ և թույլերին պատասխանատվության ենթարկել:

8. Երկրի ընկերները տուժում են Թավրիզի անգործ ընկերների, փողոցներում կամ կաֆեներում անզգույշ զրույցներից: Թավրիզում բոլշևիկները հատուկ ագենտներ[22] ունեն, որոնք ռոճիկով ծառայում են գաղտնիքներ իմանալու և կառավարության հայտնելու:

9. Մեր մարմինը վերջերումս կուսակցական կարիքների համար երկու հարյուր հիսուն դոլար պարտքի մեջ էր ընկել ի կարգադրություն:

10.Երկրին դրամական կարիք միշտ լինում են, որով միայն կարելի է ուժեղ պահել:

Ընկերական հարգանքներով՝ Գերասիմ

19 մարտի 1925 թ.

ՀՅԴ կենտրոնական արխիվ, փաստաթուղթ թիվ Ե-412Ա6-3, թթ.1-4: Բնագիր: Ձեռագիր:

---

[22] Գործակալներ:

**Хачатур Р. Степанян,** *АГПУ, д.и.н., профессор,* **Положение в Сюнике в 1921–1924 гг. по докладам подпольного деятеля.**

Армянская революционная федерация Дашнакцутюн продолжала свою подпольную деятельность в Армении в первые годы советской власти. Представленные доклады, автором которых является дашнакский деятель, описывают общую ситуацию в Сюнике в 1921–1924 гг.: массовые грабежи со стороны большевиков, аресты, набеги Советской армии на беззащитное население, деструктивная деятельность большевистской шпионской сети, тяжелое социально-экономическое положение, суровая налоговая политика, голод и др.

**Khachatur R. Stepanyan,** *ASPU, Doctor of Sciences in History, Professor,* **The situation in Syunik in 1921–1924 according to the reports of the underground activist.**

The Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun continued its activities in Armenia in underground during the first years of Soviet rule. The situation in Syunik is described in the presented reports, whose author is a Dashnak figure: the widespread looting, the arrests by the Bolsheviks, the raids of the Soviet army on the defenseless population, the destructive activities of the Bolshevik spy network, the difficult socio-economic situation, the severe tax policy, the famine.

Հաղորդում

ԱՐՇԱԼՈՒՅՍ Ա. ՋՈՒՐԱԲՅԱՆ
*Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց, պատմության ուսուցիչ*

# ՋԱՆԳԵԶՈՒՐԸ 1920 Թ. ԱՊՐԻԼ – ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

***Բանալի բառեր՝*** Հայ-ադրբեջանական հարաբերություններ, հայ-ռուսական հարաբերություններ, քեմալա-բոլշևիկյան հարաբերություններ, հայ-ռուսական պայմանագիր, ռուսական 11-րդ Կարմիր բանակ, Զանգեզուր, Գորիս, Կապարգողթ, Արսեն Շահմազյան, Գարեգին Նժդեհ:

1920 թ. ապրիլի կեսերին Արցախի զգալի մասն ազատագրված էր հայկական զորամասերի կողմից: Ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում հրավիրվում է արցախահայության 9-րդ համագումարը, որը երկրամասը հռչակում է Հայաստանի Հանրապետության անբաժան մասը: Նույն օրը Զանգեզուրում գործող զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Ն. Ղազարյանը գավառում մտցնում է ռազմական դրություն: Սիսիանի, Գորիսի ու Կապարգողթի վաշտերը, մուսավաթական զորքերին ջախջախիչ հարվածներ հասցնելով, հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության հերոսական նոր էջեր են գրում: Թվում էր, թե խափանվել են թուրք-ադրբեջանական տանդեմի ծրագրերը, երբ Ադրբեջանի խորհրդայ-

նացումով տարածաշրջանում ստեղծվում է նոր իրավիճակ: Աշխարհաքաղաքական խաղի մեջ է ներգրավվում նաև Խորհրդային Ռուսաստանը:

Ադրբեջանի խորհրդայնացմանը նպաստեց նաև Մոսկվային հավատարմության երդումներ շռայլող քեմալականների ու բոլշևիկների միջև ուրվագծվող դաշինքը, որով Քեմալը ձգտում էր լուծել Թուրքիան կործանումից փրկելու, իսկ Ռուսաստանը՝ Անտանտի դեմ պայքարում նոր դաշնակից ձեռք բերելու ու Այսրկովկասում հաստատվելու խնդիրը: Բաքուն փորձում է ստեղծված իրավիճակում արագ կողմնորոշվել, և նույնիսկ ինքնիշխանությունը զիջելու գնով լուծել հայկական երկրամասերի՝ Ադրբեջանին կցելու հարցը:

Արցախի, Սյունիքի ու Նախիջևանի պատկանելության հարցը տեղափոխվում է նոր հարթություն: Թիկունքում զգալով քեմալականների աջակցությունը՝ Ադրբեջանը Մոսկվայի կենտրոնական իշխանություններից պահանջում է հիշյալ հայկական երկրամասերը միացնել Խորհրդային Ադրբեջանին: Ռուսաստանը նույնպես այս տարածքները համարում էր «վիճելի» և մեծ ճնշում էր գործադրում ՀՀ իշխանությունների վրա՝ հայ-ադրբեջանական ու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում հասնելու Երևանի կողմից Ռուսաստանի բացառիկ միջնորդության ճանաչմանը: Բաքվում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո՝ անմիջական սպառնալիք է ստեղծվում Արցախի ու Զանգեզուրի համար: Այդ օրերին Նժդեհը գրում է. «Ռուսներն Այսրկովկաս մտնելով՝ ուժեղացրին մեր թշնամիներին՝ թուրքերին ու թաթարներին»: Այն ծրագիրը, ինչին ձգտում ու երկու տարվա համառ պայքարում չէր կարողանում հասնել մուսավաթական Ադրբեջանը, 1920 թ.

մայիսից, Խորհրդային Ռուսաստանի գործուն աջակցությամբ, փորձում է կյանքի կոչել Խորհրդային Ադրբեջանը:

Խորհրդայնացումից երկու օր անց Ադրբեջանը վերջնագիր է ներկայացնում ՀՀ իշխանություններին՝ պահանջելով հայկական զորքերը դուրս բերել ադրբեջանական տարածքներից: Մայիսի 1-ին Երևանում նույնաբովանդակ վերջնագիր է ստացվում նաև Բաքվում տեղակայված 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունից: Սա նախկին մուսավաթական կառավարության քաղաքականության շարունակությունն էր՝ գումարած Բաքվին տրամադրվող Խորհրդային Ռուսաստանի տնտեսական ու զինական մեծ աջակցությունն ու ուժի սպառնալիքով Մոսկվայի միջնորդության պարտադրումը:

Այսրկովկասում Դաշնակից պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ) ներկայացուցիչները հայտարարում էին, որ եթե բոլշևիկները մոտենան Վրաստանի ու Ադրբեջանի սահմաններին՝ Անտանտն անմիջապես ռազմական զգալի աջակցություն կցուցաբերի Այսրկովկասյան հանրապետություններին և թույլ չի տա երկրամասի բռնազավթումը: Հետագա ամիսներին, սակայն, Դաշնակից երկրները գործնական քայլեր չարեցին դաշնակից Հայաստանի վրա ռուս-ադրբեջանա-թուրքական հարձակումները կանխելու համար: Ադրբեջանում կայծակնային արագությամբ տեղի ունեցած իշխանափոխությունն ու ռուսական զորամասերի հայտնվելը ՀՀ սահմանագլխին՝ նոր մարտահրավերներ ու խուճապային տրամադրություններ առաջ բերեցին Երևանում: ՀՀ իշխանությունները փորձում էին հասկանալ, թե ինչ նպատակներ է հետապնդում Խորհրդային Ռուսաստանը, ինչ զարգացումներ են սպասվում մոտակա օրերին, արդյո՞ք Մոսկվան պատրաստ

է ճանաչելու Հայաստանի անկախությունը, ինչպիսի՞ դիրքորոշում ունի Կրեմլը հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների և սահմանների վերաբերյալ, ի՞նչ քաղաքականություն է որդեգրել Ռուսաստանը քեմալական շարժման նկատմամբ, արդյո՞ք Անտանտը գործնական քայլեր կձեռնարկի Խորհրդային Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու համար:

Արտաքին վտանգին գումարվում են Հայաստանում բռնկված հակապետական խռովությունները, որոնք առանձին վայրերում վերաճում են զինված ելույթների՝ էլ ավելի սրելով իրավիճակը և հայ-ռուսական լարված հարաբերությունները: Ադրբեջանի խորհրդայնացման լուրը մեծապես ոգևորել էր հայ բոլշևիկներին, որոնք անհամբեր սպասում էին ռուսական զորքերի ժամանմանը և դրանց օգնությամբ Հայաստանի խորհրդայնացմանը:

1920 թ մայիսին, երբ ՀՀ կառավարությունը ջանքեր էր գործադրում բոլշևիկյան ելույթները ճնշելու ուղղությամբ, Խորհրդային Ռուսաստանը ձեռնամուխ է լինում հայկական տարածքների բռնազավթման գործին: Մայիսի 12-ին բոլշևիկները մտնում են Շուշի:

Մայիսի վերջին Ադրբեջանում բռնկվում են հակախորհրդային խռովություններ, որոնք շատ արագ տարածվում են Գանձակից ու Ջեբրայիլից մինչեւ Քյուրդամիր ու Լենքորան: Սյունիքի ուղղությամբ ռուս-թաթարական ուժերի հարձակումը հետաձգվում է: Հակաբոլշևիկյան շարժումը, որը տևում է երեք շաբաթ, գլխավորում են ինչպես նախկին մուսավաթական կառավարության պարագլուխները, այնպես էլ Ադրբեջանում մնացած օսմանյան բանակի հրամանատարները (այդ թվում՝ Նուրի

փաշան): Կարմիրներին հաջողվում է ճնշել զինված ելույթները, որից հետո կրկին առաջին պլան է մղվում Զանգեզուրի վրայով Նախիջևան հասնելու և քեմալականների հետ ցամաքային կապ հաստատելու հարցը: Թուրքիայի արևելյան շրջաններում սկսվում է զորահավաք: 15-րդ կորպուսի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրը նշանակվում է արևելյան ճակատի հրամանատար: Կազմավորվում է Շարուր-Նախիջևանի ուղղությամբ գործող «Բայազետյան» կոչվող նորաստեղծ զորախումբը:

1920 թ. հունիսի 17-ին հրավիրված Կապարգողթի ներկայացուցչական ժողովում արժանապատիվ սյունեցիները որոշում են Նժդեհի գլխավորությամբ շարունակել պայքարը թրքաբոլշևիկյան ուժերի դեմ: Նժդեհը դիմում է ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանին ու ՀՅԴ բյուրոյին՝ պահանջելով զինական օգնություն ուղարկել Սյունիք: 1920 թ. հունիսի վերջին կարմիր բանակի հետախուզական վաշտերը, առաջապահ զորամասերն ու ադրբեջանական բանակի ստորաբաժանումները շարժվում են Զանգեզուր:

Ռուս-ադրբեջանական ուժերը ներխուժում են Տեղ ու Խնձորեսկ, իսկ հուլիսի 5-ին՝ Գորիս: Հայկական ուժերի մի մասը նահանջում է Սիսիան (այստեղից՝ Դարալագյազ), իսկ զորախմբերից մեկը՝ Կապան: Գորիսում բոլշևիկները ստեղծում են գավիեղկոմ (գավառի հեղափոխական կոմիտե)՝ Հակոբ Կամարիի նախագահությամբ: Օրեր անց Գորիս ժամանած հայտնի ջարդարարներից մեկը՝ թուրք զինվորական գործիչ Խալիլ փաշան, հայտարարում է, որ եթե Զանգեզուրի հայությունը չճանաչի Ադրբեջանի գերիշխանությունը՝ կենթարկվի արևմտահայության ճակատագրին:

Գորիսի անկումով սկսվում է զանգեզուրյան հերոսապատումի նոր փուլը (1920 թ. հուլիս – 1921 թ. հուլիս), որը գլխավորում է Կապարգողթի արծիվը՝ Գարեգին Նժդեհը: 1920 թ. հուլիսի վերջին ռուս-թաթարական զորամասերի կողմից գրեթե ամբողջությամբ գրավված էր Արցախը, Սյունիքն ու Նախիջևանը, սակայն Սիսիանի, Կապանի ու Արևիքի առանձին վայրերում շարունակվում էր պայքարը զավթիչների դեմ: Հայաստանի դեմ բացահայտ ագրեսիան ու հայկական երկրամասերի բռնազավթումը Մոսկվան շարունակում էր հիմնավորել հայ-թաթարական բախումները կանխելու պատճառաբանությամբ:

ՀՀ բռնազավթված տարածքներում ծայր առած սոսկալի բռնությունները, բնակավայրերի ավերածությունները, թալանն ու տնտեսական քայքայումը, մարդկանց առևանգումներն ու աքսորը դարձել էին սովորական երևույթ: Հայ մտավորականության ու զինվորականության լավագույն ներկայացուցիչներին ձերբակալում ու տեղափոխում էին Գանձակ, Շուշիի ու Բաքվի բանտերը, ուր նրանք ենթարկվում էին աննկարագրելի խոշտանգումների ու նվաստացումների: Բազմաթիվ հայ սպաներ, զինվորներ, բժիշկներ, պետական ծառայողներ, մարտերին չմասնակցած անմեղ գյուղացիներ, այդ թվում՝ երեխաներ, առանց դատ ու դատաստանի գնդակահարվում էին: Այդ մասին Օհանջանյանը բողոքի հեռագիր է հղում Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Գ. Չիչերինին, վերջինս էլ բացատրություն է պահանջում Կովկասի բոլշևիկյան ռազմաքաղաքական ղեկավարությունից: Գերության տարվածներին ստիպում էին մտնել ադրբեջանական զորամասերի մեջ ու կռվել Հայաստանի Հանրապետության դեմ: Երևանից շարունակվում էր բողոք-հեռագրերի տարափը Մոսկվա:

Խորհրդային Ադրբեջանը բոլոր ուժերը կենտրոնացրել էր Զանգեզուրը Ադրբեջանին կցելու վաղեմի երազանքն իրողություն դարձնելու գործին: Խորհրդային Ադրբեջանի հակահայ քաղաքականության էությունը բնութագրող ուշագրավ փաստերից է Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի դրածո՝ Ղարաբաղի հեղկոմի նախագահ Ասադ Կարաևի 1920 թ. հուլիսի 21-ի հույժ գաղտնի նամակը՝ բոլշևիկյան կուսակցության Գորիսի գավառային հեղկոմի մուսուլման անդամներին. «Եկած ընկերները պատմում են, որ միչև այժմ զինաթափված չէ Զանգեզուրի հայկական գյուղերի 90%-ը: Դա ցավալի է: Բայց առավել ցավալին այն է, որ մինչ օրս գլխատված չէ Զանգեզուրի հայությունը: Նրա մտավորականությունը և ռազմական պարագլուխները գտնվում են գյուղերում: Վաղը նրանք կդառնան ապստամբության ղեկավարներ և մեր ուժերը դուրս կքշեն Զանգեզուրից: Նորից ու նորից կրկնում եմ՝ ժամանակը չի սպասում: Աշխատեցեք գիշեր-ցերեկ: Ջանացե՛ք, որպեսզի բոլոր նշանավոր ու պետքական հայերը կալանավորված լինեն: Մեծ բան չեն աքսորն ու առևանգումը: Մի կողմ թողեք մարդասիրությունը: Դրանով անհնար է պետություն ստեղծել, երկրներ նվաճել, ապրել խաղաղության մեջ: Աշխատեք վերընտրել հեղկոմը և այդ ընթացքում ընտրել միայն մուսուլմանների և մեզ հայտնի ռուսների: Մոտ օրերս Գորիս կժամանի Արմենակ Ղարագյոզյանը: Նա ուշանում է փողի պատճառով: Մինչև չստանա 22 միլիոն ռուբլին՝ չի մեկնի: Հարստանալու լավ ժամանակ է, ինչու՞ չօգտվի դրանից: Նա խոստանում է յոթ օրվա ընթացքում Զանգեզուրը միացնել Ադրբեջանին: Չենք կասկածում, որ շուտով մեզ կուրախացնեք Ղափանը միացնելու լուրով: Եթե չունեք ուժ, ապա ունեք փող: Ինչու՞ եք

ուշացնում այդ ապստամբած շրջանի միացումը Ադրբեջանին՝ արդարանալով մի ինչ-որ Աժդահ (Նժդեհ) փաշայի գոյությամբ: Ձեռք առեք օրինված միջոցներ: Այն որ հային երեք միլիոն ռուբլի տաս, որ չբերի այդ մարդու գլուխը: Եթե փողի կարիք ունեք՝ հեռագրեք, կուղարկենք: Զինվորականներով հարուստ որոշ տեղերում, հայերին թուլացնելու նպատակով, մի ռուս զինվոր սպանեք և դրանում մեղադրեք հայերին: Գիտեք, թե ինչ կանեն ռուսները: Զանգեզուրում մի թողեք ոչ որևէ կարգին մարդու, ոչ էլ՝ հարստություն, որպեսզի այդ անիծյալ ցեղը այլևս չկարողանա ոտքի կանգնել: Ռուսաստանում այդպես են վարվել, այդպես պիտի անեք նաև դուք»:

Արցախի ու Զանգեզուրի գրավման կապակցությամբ ՀՀ իշխանությունները բողոքի նոտաներ են հղում Մոսկվա ու Բաքու՝ պահանջելով ռուս-ադրբեջանական զորամասերը դուրս բերել ՀՀ տարածքներից:

Խորհրդային Ռուսաստանը նպատակ ուներ ՀՀ տարածքով, հնարավորության դեպքում՝ երկրի հյուսիսային մասով (երկաթուղով), կապ հաստատել դաշնակից քեմալականների հետ՝ ոսկի, զորք, զենք ու զինամթերք առաքելով նրանց, ինչին դեմ էր Հայաստանի կառավարությունը, որը տեղեկություններ ուներ այն մասին, որ քեմալականները պատրաստվում են այդ զենքն ուղղել նաև ՀՀ-ի դեմ:

1920 թ. ամռանը բռնազավթված Սյունիքում մարտերը չէին դադարում: Այսրկովկասում դաշնակից երկրների ներկայացուցիչները մեծ ուշադրությամբ հետևում էին ծավալվող գործողություններին: Հուլիսի 19-ին Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ կապիտան Գրեյսը Երևանում հանդիպում է ունենում ՀՀ վարչապետ Համո Օհանջանյանի հետ: Վերջինս Գրեյսին հա-

վաստիացնում է, որ ինքը չի հավատում Մոսկվայի խոստումներին, որ Հայաստանը հավատարիմ է մնում Մեծ Բրիտանիայի հետ դաշնակցային պարտավորություններին, չի պատրաստվում զիջումներ անել թշնամուն, ավելին՝ հայկական զորամասերը պատրաստվում են գրավել Նախիջևանն ու օգնության հասնել Զանգեզուրի հայությանը: Այս հանդիպումից օրեր անց՝ հուլիսի 26-ին, հայկական զորամասերը մտնում են Շահթախթի ու մոտենում Նախիջևանին:

1920 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում հանդիպում է տեղի ունենում Վրաստանում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Սերգեյ Կիրովի ու ՀՀ կառավարության ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի միջև: Կիրովը պաշտոնական հայտարարություն է անում այն մասին, որ Ռուսաստանը ոչ միայն ճանաչում է Հայաստանի անկախությունը և հայության իրավունքները Թուրքահայաստանի նկատմամբ, այլև իր պարտքն է համարում օգնել հայերին, նույնիսկ զինված ուժերով պաշտպանել անկախ Հայաստանի սահմանները: Եւ սա այն դեպքում, երբ ռուս-ադրբեջանական զինուժը Հայաստանի հարավում ռազմակալում էր նոր տարածքներ: Օգոստոսի 3-ին, Զանգեզուրի շրջանում ռուսական զորամասերի գործողությունների մասին Կիրովի հարցմանն ի պատասխան, 11-րդ կարմիր բանակի ժամանակավոր հրամանատար Վասիլենկոն Բաքվից հաղորդում է. «Մեր բանակի զորամասերը զբաղեցրել են Հայաստանի կողմից գրավված Զանգեզուրի ու Նախիջևանի վիճելի շրջանները: Առաջ ենք շարժվում բարեկամական մտադրություններով, բայց եթե հայկական զորքերն առաջինը հարձակում գործեն, ապա դրա պատասխանը կլինի երկու-երեք դիվիզիաներ Երևան ուղարկելը։ Դրոյին լիկվիդացնելու միջոցներ ձեռնարկված են: Շահ-

թախթիից այն կողմ չենք գնա, եթե իր հերթին հայկական կանոնավոր բանակը այլևս չառաջանա»:

Վիճակը օրհասական էր, բայց Կապարգողթի առանձին շրջաններում ռուս-ադրբեջանական զորամասերի դեմ շարունակում էին առյուծաբար մարտնչել Նժդեհի փոքրաթիվ ուժերը: Դարալագյազ քաշված Դրոյի զորամասը հուլիսի վերջին Սիսիանի ու Գորիսի ուղղությամբ անցնում է հակահարձակման: Հայկական զորքերի առաջխաղացումն անհանգստացնում է ոչ միայն բոլշևիկներինն, այլեւ՝ քեմալականներին: Վերջիններս խնդրում են արագացնել խորհրդային զորքերի առաջխաղացումը և Նախիջևանի գրավումը, ինչը և տեղի է ունենում հուլիսի 28-ին: Երկու օր անց Սիսիանի շրջանի Բազարչայ գյուղի մոտ Դրոյի ուժերը բախվում են ռուսների հետ և նրանց հետ շպրտում Անգեղակոթ: Ձախողվում է կարմիրների ճեղքումը Մեղրիի ուղղությամբ: Այստեղից նույնպես թշնամին ցանկանում էր ճանապարհ բացել դեպի Նախիջևան, բայց Նժդեհի ուժերը հաջողությամբ կասեցնում են գրոհները՝ անառիկ պահելով նաև Կապարգողթի արևելյան դարպասները:

Օգոստոսի 2-ին Դրոն ազատագրում է Սիսիանի շրջանը, իսկ հաջորդ օրը՝ մտնում Գորիս: Նահանջից առաջ բոլշևիկները Գորիսի բանտում գազանաբար խոշտանգում են մի շարք պետական ու ռազմական գործիչների, այդ թվում՝ Հայաստանի խորհրդարանի անդամներ Արշակ Շիրինյանին ու Վահան Խորենուն: Տասնյակ մարդկանց քաղաքից դուրս են բերում ու գնդակահարում: Վանդալիզմի հերթական ակտը մեծ աղմուկ է բարձրացնում Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Կառավարությունը բողոքի հեռագրեր է ուղարկում Մոսկվա, Բաքու և Դաշնակից երկրների կառավարություններին:

Սիսիանի ու Գորիսի ազատագրումն ու հաղթանակի բերկրանքը կարճ է տևում: Կարմիրներն օգոստոսի 8-ին վերագրավում են Գորիսը, հաջորդ օրը՝ Սիսիանը: Այդ օրերին Նժդեհը գրում է. «Ադրբեջանը գործում է: Նրա հարյուրավոր ագենտները՝ իրենց տարած պյուռոսյան հաղթությամբ արբեցած, օրնիբուն չափչփում են բուն Զանգեզուրի և Սիսիանի գյուղերը, և համոզում, հավաստիացնում ժողովրդին, որ «Ռուսաստանը ստիպել է Հայաստանի կառավարությանը ձեռք քաշելու Զանգեզուրից, որ այդ երկիրն արդեն տրված է Ադրբեջանին» և այլն, և այլն: Գլխատված ու ահաբեկված ժողովուրդը լսում է այդ բոլորն ու անզոր կատաղությամբ անիծում և՛ թշնամու կողմն անցած իր տականքը կազմող մի բուռ կաշառված դավաճաններին, և՛ յուր ղեկավարներին, որոնք այնքան հանցավոր հեշտությամբ տեղի տվեցին թշնամու ողորմելի ուժերի առաջ»:

Զանգեզուրում ընթացող ռազմական գործողություններին զուգահեռ Թիֆլիսում վերսկսվում են ընդհատված հայ-ռուսական բանակցությունները: Լեգրանի հետ բանակցելու, զինադադարի, ինչպես նաև հաշտության պայմանագիր կնքելու նպատակով ՀՀ կառավարությունը հատուկ պատվիրակություն է գործուղում Թիֆլիս (Ջամալյան, Բաբալյան, Յուզբաշյան): Արցախից, Սյունիքից ու Նախիջևանից խորհրդային զորքերը հետ քաշելու հայկական պատվիրակության պահանջը՝ բուռն բանավեճի տեղիք է տալիս: Լեգրանը պնդում է, թե ռուսական ներկայությունը ժամանակավոր բնույթ է կրում, չի կանխորոշում այդ տարածքների վերջնական պատկանելության հարցը և ռուսական զորքի տեղաշարժը ազգամիջյան բախումները դադարեցնելու նպատակ է հետապնդում: Ստանալով մեր զին-

ված ուժերի Զանգեզուրում կրած պարտությունների մասին ՀՀ կառավարության հեռագիրը՝ հայկական պատվիրակությունը գնում է զիջման և եռօրյա ծանր բանակցություններից հետո՝ օգոստոսի 10-ին, ստորագրվում է վեց հոդվածից բաղկացած հայ-ռուսական համաձայնագիրը: Խորհրդային Ռուսաստանը ճանաչում է ՀՀ անկախությունը: Ռազմական գործողություններ-ը դադարեցվում են, հստակեցվում է շփման գիծը: Արցախը, Սյունիքն ու Նախիջևանը մնում են Ռուսաստանի վերահսկողության տակ, սակայն դա չէր կանխորոշում բռնազավթված հայկական երկրամասերի պատկանելությունը: Հայաստանի ու Ադրբեջանի միջև եղած տարածքային վեճերը լուծվելու էին հետագայում՝ բանակցությունների միջոցով: Նույն օրը Կ.Պոլսի սուլթանական կառավարությունն իր ստորագրությունն է դնում Սևրի դաշնագրի տակ, որով Հայաստանը ճանաչվում է ազատ ու անկախ պետություն, իսկ հայ-թուրքական սահմանագիծն անցնելու էր նախկին Օսմանյան կայսրության Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթների տարածքով: Ադրբեջանի ու Վրաստանի հետ ՀՀ սահմանները որոշվելու էին այդ պետությունների հետ ուղղակի բանակցությունների միջոցով, իսկ եթե չհաջողվեր համաձայնության գալ, ապա դաշնակից տերությունները խնդիրը պետք է լուծեին հատուկ հանձնաժողովի օգնությամբ:

Օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագիրը ռուսական կողմի դիվանագիտական հաջողությունն էր, քանի որ ՀՀ կառավարությունը տվեց իր համաձայնությունը՝ հայկական երկրամասերը ռուսական ռազմակալման տակ պահելու համար, այլ կերպ ասած՝ օրինականացրեց Կրեմլի բռնազավթումը: Հայաստանին պարտադրվեց նաև Արցախի, Սյունիքի ու Նախի-

ջևանի կարգավիճակի հարցը տնօրինելու Կրեմլի կամքը: Հայ-ռուսական համաձայնագրի 6-րդ հոդվածով Մոսկվան երաշխավորում էր ռուսական զորքերի թիկունքում հայտնված հայկական զորամասերի ազատ տեղաշարժը դեպի հայկական ուժերի հսկողության գոտի: Ի կատարումն սույն հոդվածի նույն օրը՝ օգոստոսի 10-ին, Դրոն հեռագրում է Նժդեհին՝ հաղորդելով ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հրամանը՝ Սյունիքը թողնելու և Երևան վերադառնալու մասին. «Ղափանի զորամասի պետ Նժդեհին: Հաղորդում եմ Ձեզ զինվորական նախարարի հրամանի պատճենը: Կապ պահելով Նժդեհի հետ, տեղեկացնել նրան, որպեսզի համաձայն կնքված զինադադարի, հավաքի իր զորամասերը, նույնպես և բոլոր ցանկացողներին, և նախազգուշական միջոցներ ձեռք առնելով՝ անցնի մեր տերիտորիան, բերելով իր հետ ամբողջ զենքերը»: Նժդեհը պատասխանում է, որ Զանգեզուրից հեռանալու մտադրություն չունի և խնդրում է արագացնել զորքերի ուղարկումը Սիսիան:

Օգոստոսի 20-ին Նժդեհը նամակ է ուղարկում Ռուբեն Տեր-Մինասյանին. «Ո՛չ մի զիջում, զիջումը՝ գերություն է, կոտորած ու մահ մեզ համար: Եթե չպետք է տեր կանգնեք մեզ՝ միացած պահեք մեզ մեր յոթն անգամ սիրած Հայաստանին, թողեք մեզ բարի կամքին՝ մենակ, անկախ: Մենք, որ ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել էլ գիտենք: Աստված և իմ սերը Հայաստանի Հանրապետության հետ»: Մեկ ամիս անց՝ 1920 թ. սեպտեմբերի 23-ին, Գարեգին Նժդեհը ստանում է ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հերթական հեռագիրը. «Համաձայն ենք, որ Ձեր դուրս գալուց հետո Ղափան-Գողթանը ձեռ-

քից կգնան և հրի-սրի կմատնվեն: Համաձայն ենք նույնպես Ձեզ հետ, որ դուք դուրս չպիտի գաք և պիտի զբաղվեք ինքնապաշտպանությամբ՝ հանուն Ղափանի փրկության»:

Հայ-ռուսական զինադադարի համաձայնագիրը մեծ դժգոհություն է առաջացնում Դաշնակից երկրների շրջանում, որոնք Հայաստանին պարտադրված այս փաստաթուղթը համարում են ՀՀ արտաքին քաղաքական կուրսի փոփոխություն՝ մեղադրանքներ և նույնիսկ սպառնալիքներ ուղղելով պաշտոնական Երևանին: Օգոստոսի 24-ին Հայաստան է ժամանում ֆրանսիացի գնդապետ Կորբելը, իսկ մեկ շաբաթ անց՝ Թիֆլիսից Երևան է հասնում Այսրկովկասում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ, արտակարգ կոմիսար Լյուկը: Նրանք հանդիպում են ՀՀ վարչապետ Համո Օհանջանյանի հետ, երկուսն էլ իրենց դժգոհությունն են հայտնում Թիֆլիսում ստորագրված համաձայնագրի կապակցությամբ և փորձում պարզել ՀՀ իշխանությունների դիրքորոշումը Այսրկովկասում Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության նկատմամբ: Լյուկը խորհուրդ է տալիս հրաժարվել հայ-ռուսական համաձայնագրից և Վրաստանի հետ դաշինք կնքել բոլշևիկների դեմ: Նա առաջարկում է Լոռու չեզոք գոտու հարցում համաձայնության գալ Վրաստանի իշխանությունների հետ, ինչը նշանակում էր գավառի հանձնում Վրաստանին: 1920 թ. գարնանը, բացի Բաթումի նավահանգստում գտնվող բրիտանական փոքրաթիվ ուժերից, Այսրկովկասում անգլիական զորամասեր գրեթե չէին մնացել: Չէին իրականացվել նաև բոլշևիկների կողմից Այսրկովկասը գրավելու փորձերին հակազդելու բրիտանական խոստումները: Քեմալական շարժումը նույնպես վերելք էր ապրում և Անտանտն ի վիճակի չէր կասեցնելու այն: ՀՀ կառավա-

ությունը գտնում էր, որ նման պայմաններում զինադադարի պայմանագիրը չեղյալ հայտարարելը Հայաստանի համար հղի է անկանխատեսելի ու ծանր հետևանքներով: Օհանջանյանը դաշնակից երկրների ներկայացուցիչներին փորձում է հիմնավորել հայ-ռուսական համաձայնագրից հրաժարվելու անհնարինությունը՝ միաժամանակ այն համարելով ժամանակավոր փաստաթուղթ, որն առաջին իսկ հնարավորության դեպքում՝ Հայաստանը չեղյալ կհայտարարի: Վարչապետը մեղադրանքի խոսքեր է հնչեցնում դաշնակիցների հասցեին, որոնք նախորդ տարիներին Արցախի ու Սյունիքի պատկանելության հարցում բացահայտ աջակցություն ցուցաբերելով Ադրբեջանին՝ պատասխանատվություն են կրում ստեղծված իրավիճակի համար:

Թիֆլիսյան զինադադարից հետո էլ Զանգեզուրի առանձին շրջաններում շարունակվում էին հայ-ռուսական ռազմական բախումները: 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրվում է ռուս-թուրքական «Արտագին ու անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը, որով Ռուսաստանը ոչ միայն խոստանում է փող, զինվորական մասնագետներ, զենք ու զինամթերք մատակարարել Քեմալի կառավարությանը, այլև ճանաչում է թուրքական «Ազգային ուխտը», որով թրքական պետության անբաժանելի տարածք է համարվում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելահայաստանի որոշ շրջաններ: Արդեն պայմանագրի հաջորդ օրը թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյը հայտարարում է, որ ռուսներն ընդունում են նաև Բաթումի ու Կարսի մարզերի միացումը Թուրքիային: Քեմալականները ստանում են նաև Սարիղամիշն ու Շահթախթին գրավելու համաձայնությունը,

ինչն օգոստոսի 10-ի հայ-ռուսական զինադադարի ևս մեկ կոպիտ խախտում էր:

1920 թ. օգոստոսի 25-ին Կապարգողթի հայությունը հավաքվում է Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Դավիթ Բեկի ու Մխիթար սպարապետի անունով երդվում հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատությանն ու հրամանատար Նժդեհին և կռվել մինչև վերջին շունչը: Հանդիսականների ցնծության տարափի տակ Նժդեհի մեջքին կապում են կարմիր գոտի և հայրենի հողի մեծ նվիրյալին կոչում իրենց Սպարապետը: Սեպտեմբերին բռնկված հայ-թուրքական պատերազմին զուգահեռ Զանգեզուրի առանձին վայրերում կատաղի մարտերը շարունակվում են: Ազատության համար ընթացող պայքարը շուտով վերաճում է համազանգեզուրյան ապստամբության: Փաստորեն, 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Հայաստանը կռվում էր երկու ճակատով՝ արևմուտքում և հարավ-արևելքում:

1920 թ. նոյեմբերի 21-ին Նժդեհն ազատագրեց Գորիսը, իսկ դեկտեմբերի 25-ին, երբ ՀՀ-ն դադարել էր գոյություն ունենալուց, համազանգեզուրյան առաջին համագումարում երկրամասը հռչակվեց անկախ պետություն՝ Ինքնավար Սյունիք անունով, մնալով հայոց պետականության ջահակիրն ու ազատության կղզյակը ողջ տարածաշրջանում: Պայքարը Սյունյաց լեռնաշխարհում շարունակվեց մինչև 1921թ. հուլիսի 12-ը, որի արդյունքում երկրամասը չարժանացավ Նախիջևանի ու Արցախի ճակատագրին և մնաց բռնազավթված Հայաստանի կազմում:

1921 թ. դեկտեմբերի 12-ին, Թեհրանում ապաստանած Համո Օհանջանյանը գրել է. «Սիրելի Նժդեհ, այն ինչ տեսել եմ և գիտեմ՝ ինձ ոչ մի առիթ չի տալիս փոխելու իմ հիացմունքի վե-

բաբերմունքը դեպի այն գործը, որ դու կատարել ես Զանգեզուրում վերջին երկու տարվա ընթացքում և նույնիսկ վերջին դեպքերի ժամանակ, երբ Մայր Հայաստանի մտավորականությունն ու զինվորականությունը քո ստեղծած դրության շնորհիվ կարողացան ազատվել իսպառ բնաջինջ լինելու վտանգից»:

Եթե այսօր Լեռնահայաստանը կանգուն է՝ պարտական ենք Զորավար Անդրանիկի, Արսեն Շահմազյանի, Գարեգին Նժդեհի, Սերգեյ Մելիք-Յոլչյանի, Պողոս Տեր-Դավթյանի, Աշոտ Մելիք-Մուսյանի, Գորիսեցի Արտեմի (Արտեմ Խանզադյան), Յապոնի (Հովհաննես Պարոնյան) և նրանց զինակից ընկերների բացառիկ նվիրումին: Այս հերոսների փաղանգի մեջ առանձնանում է Մեծն Նժդեհի վաստակը, որի կազմակերպչական արտակարգ ունակությունների ու գերմարդկային ջանքերի շնորհիվ պահպանվեց երկրամասի ազգային նկարագիրը և անվնաս մնաց Հայաստանի ողնաշարը:

**Аршалуйс А. Зурабян,** *Ванадзорская старшая школа N 5, учитель истории,* **Зангезур в региональных событиях апрель-августа 1920 года.**

В 1918 году в Закавказье, были сформированы три независимые государства. Взаимное недоверие и отсутствие границ сказывались отрицательно на межнациональных и межгосударственных отношениях. Упорные попытки бакинских властей решить вопрос границ с позиции силы, в 1919 году привели к армяно-азербайджанской войне, путём которой мусаватисты и их приемники – власти Советского Азербайджана, пытались решить вопрос принудительного присоединения Арцаха, Сюника и Нахиджевана и установления прямой коммуникации со сторонниками Кемаля. В 1918 году Ереван не имел возможность про-

тянуть руку помощи данным армянским областям и местное население было вынуждено самоорганизоваться. В апреле 1920-го года после советизации Азербайджана и установления советско-кемалистских отношений, Армения была вынуждена противостоять не только нашествиям Азербайджана, но и агрессии со стороны его союзников: большевитской России и кемалисткой Турции. Борьба против военной коалиции Москва – Баку-Анкара завершилась тем, что Сюник не удостоился судьбе Арцаха и Нахиджевана и вошёл в состав Советской Армении.

**Arshaluys A. Zurabyan,** *Vanadzor High School N 5, Teacher of History,* **Zangezur within the regional developments in April-August, 1920.**

In May 1918 three independent republics were established in the Caucasus. Mutual mistrust and lack of borders had a negative impact on interethnic and interstate relations. The persistent attempts of the Baku authorities to resolve the border issue with a use of force in 1919 resulted in Armenian-Azerbaijani war. This is how Musavat and subsequent Soviet Azerbaijani authorities sought to resolve the occupation of Artsakh, Syunik and Nakhichevan in order to establish direct contact with the Kemalists. In 1918, Yerevan was unable to help or reach out to the above mentioned Armenian territories which is why the local population was forced to organize itself. After the sovietization of Azebiajan in April 1920 and the establishment of Soviet-Kemal political relations, Armenia had to resist not only the attacks of Azerbaijan, but also the military aggression agreed upon by its allies Russia and Turkey. The struggle against Moscow-Baku-Ankara military axis ended with Syunik not suffering the fate of Artsakh and Nakhichevan by becoming a part of Soviet Armenia.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

***ԱՇՈՏ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ***

Սյունիքը հայոց պետականության հոլովույթում (պատմական ակնարկ) ..... 4

***ԿԱՐԵՆ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

Ռազմադիվանագիտական պայքարը Զանգեզուրի համար 1920–1921 թթ. ..... 18

***ՎԱՀՐԱՄ Ռ. ԲԱԼԱՅԱՆ***

Գարեգին Նժդեհը և Արցախահայ պետականության պահպանման հարցը ..... 34

***ԳԵՎՈՐԳ Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ***

Պողոս Տեր-Դավթյան. մի պայծառ անուն Սյունիքի երկնակամարում ..... 52

***ԱՐՄԵՆ Ց. ՄԱՐՈՒՔՅԱՆ***

Գարեգին Տեր-Հարությունյանի (Նժդեհ) դերը Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտում ..... 110

***ԼԻԼԻԹ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Զանգեզուրը ԱՄՆ պետդեպարտամենտի փաստաթղթերում (1919–1920 թթ.) ..... 121

***ԷԴԳԱՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Գարեգին Նժդեհի զանգեզուրյան գործունեության վերաբերյալ մի փաստաթղթի շուրջ ..... 136

***ՀԱՄՈ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ***

Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի կազմակերպման պատմությունից (1921 թ.) ..... 158

*ԷԴԻԿ Գ. ՄԻՆԱՍՅԱՆ*

Գարեգին Նժդեհի գործունեությունը Սփյուռքում 1920–30-ական թթ. ..... 171

*ԽԱՉԱՏՈՒՐ Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

Իրադրությունը Սյունիքում 1921–1924 թվականներին ըստ ընդհատակյա գործչի զեկույցների ..... 189

**Հաղորդում**

*ԱՐՇԱԼՈՒՅՍ Ա. ՋՈՒՐԱԲՅԱՆ*

Զանգեզուրը 1920 թ. ապրիլ – օգոստոս ամիսների տարածաշրջանային զարգացումներում ..... 212

# СОДЕРЖАНИЕ

***АШОТ А. МЕЛКОНЯН***

Сюник в контексте армянской государственности (исторический очерк) ..... 4

***КАРЕН Г. ХАЧАТРЯН***

Военно-дипломатическая борьба за Зангезур в 1920–1921 гг. ..... 18

***ВАГРАМ Р. БАЛАЯН***

Гарегин Нжде и вопрос сохранения армянской государственности Арцаха ..... 34

***ГЕВОРГ С. СТЕПАНЯН***

Погос Тер-Давтян: одно яркое имя на небосклоне Сюника ..... 52

***АРМЕН Ц. МАРУКЯН***

Роль Гарегина Тер-Арутюняна (Нжде) в Каракилисском героическом сражении ..... 110

***ЛИЛИТ Г.ОГАНИСЯН***

Зангезур в документах госдепартамента США (1919–1920 гг.) ..... 121

***ЭДГАР Г. ОГАННЕСЯН***

Документ о деятельности Гарегина Нжде в Зангезуре ..... 136

***АМО К. СУКИАСЯН***

Из истории организации Зангезурского уезда Советской Армении (1921 г.) ..... 158

*ЭДИК Г. МИНАСЯН*

Деятельность Гарегина Нжде в Диаспоре в 1920–30-ых годах ..... 171

*ХАЧАТУР Р. СТЕПАНЯН*

Положение в Сюнике в 1921–1924 гг. по докладам подпольного деятеля ..... 189

**Сообщение**

*АРШАЛУЙС А. ЗУРАБЯН*

Зангезур в региональных событиях апрель-августа 1920 года ..... 212

# CONTENT

***ASHOT A. MELKONYAN***

Syunik in the context of the Armenian statehood (historical overview) ..... 4

***KAREN G. KHACHATRYAN***

The military-diplomatic struggle for Zangezur in 1920–1921 ... 18

***VAHRAM R. BALAYAN***

Garegin Nzhdeh and the issue of preserving the Armenian statehood of Artsakh ..... 34

***GEVORG S. STEPANYAN***

Poghos Ter-Davtyan, a bright name in the sky of Syunik ..... 52

***ARMEN TZ. MARUKYAN***

The role of Garegin Ter-Harutyunyan (Nzhdeh) in the heroic battle of Karakilisa ..... 110

***LILIT G. HOVHANNISYAN***

Zangezur in U.S. State department documents (1919–1920) .. 121

***EDGAR G. HOVHANNISYAN***

Document on Garegin Nzhdeh's activity in Zangezur ..... 136

***HAMO K. SUKIASYAN***

From the history of organization of Zangezur province of the Soviet Armenia (1921) ..... 158

***EDIK G. MINASYAN***

Activities of Garegin Nzhdeh in the Diaspora in the 1920s–30s ..... 171

*KHACHATUR R. STEPANYAN* 189

The situation in Syunik in 1921–1924 according to the reports of the underground activist .....

**Report**

*ARSHALUYS A. ZURABYAN*

Zangezur within the regional developments in April-August, 1920 ..... 212

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

- Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:
- Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10–15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:
- Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:
- Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր
համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

**http://serials.flib.sci.am/openreader/test/index.html**

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
# (ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

# THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
# (A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

# ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
# (СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

## 1 (22)

Ամփոփումների խմբագրումը՝ Հ. Խուդանյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**
**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**
**ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА**
**INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am